ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Վեպ

ապագա Հայաստանի Թագավորության մասին

Գիրք առաջին

երկրորդ հրատարակություն

REBIRTH

a novel about the future Kingdom of Armenia

Book one

ԵՐԵՎԱՆ - 2016

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

«Վերածնունդ» վեպը Դավիթ Միրզոյանի առաջին լայնածավալ գրական ստեղծագործությունն է: Այն նախատեսված է ազգի ճակատագրով խորապես մտահոգված մտավորականների համար:

Նախկինում մի շարք հոդվածներով ու ակնարկներով հեղինակն անդրադարձել է մեր ազգային ճգնաժամին ու դրանից դուրս գալու ճանապարհներին: Վեպում երկխոսությունների միջոցով Դավիթ Միրզոյանը փորձել է հնարավորինս պարզ ու հանրամատչելի ներկայացնել մեր ազգային ուսմունքը, շոշափել նրա հիմնարար դրույթների որոշ սխալ մեկնություններ, պարզաբանել մինչ այժմ անմեկնելի համարվող հասկացություններ, ներկայացնել նահապետական կարգի էությունն ու հատկապես արքայի՝ ազգի գերագույն նահապետի, դերն ու առաքելությունը:

Վեպում դեպքերը տեղի են ունենում մոտ ապագայում, երբ հայ ժողովրդի միահամուռ ջանքերի շնորհիվ Հայաստանում արդեն հաստատվել է նահապետական կառավարում: Ու, ինչպես նախկինում, Հայոց Երկիրն ու անձամբ՝ Համայն Հայոց Արքան, հայտնվել են թշնամական ուժերի ուշադրության կենտրոնում:

Գրքում ընդգրկված են նաև հեղինակի կողմից Արարչական ուսմունքի հիման վրա կազմված ու ազգային արժեհամակարգը ներկայացնող «Արարչական օրենքները» և «Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրությունը»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ 4
ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
Գլուխ առաջին 12
Գլուխ երկրորդ 101
Գլուխ երրորդ 146
Գլուխ չորրորդ 177
Գլուխ հինգերորդ 201
Գլուխ վեցերորդ 216
Գլուխ յոթերորդ 234
ԱՐԱՐՋԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ 262
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ 272

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Առանց ուսմունքի ու անցյալի ժառանգության ազգը նման է անարմատ ծառի։

Դարեր շարունակ՝ կտրված լինելով մեր արմատներից, միայն մասամբ իմանալով մեր ազգի պատմությունը, շարունակաբար ենթարկվելով օտար մշակութային ու գաղափարական ազդեցություններին, մեր ազգը վերածվել էր համատարած խավարում աննպատակ դեգերող սովորական մի ժողովրդի։

Խաչատուր Աբովյանից սկսած՝ շատ ազգանվեր մշակների ջանքերի շնորհիվ, մեր ժողովուրդն աստիճանաբար սկսել էր մոտենալ սեփական արմատներն ու էությունը ճանաչելուն։ Սակայն քսաներորդ դարասկզբի ողբերգական իրադարձությունները որոշ ժամանակով կասեցրին այդ ընթացքը։ Հատկապես խորհրդային շրջանում անհաղթահարելի արգելք կար ազգայինի հանդեպ։ Անգամ Մեծ Եղեռնի մասին շատ քիչ իրազեկություն կար։ Այնուամենայնիվ Խորհրդային Կայսրության փլուզումից առաջ մեր ժողովուրդն արդեն սկսել էր ճանաչել սեփական էությունը, հասկանալ իր շարունակական դժբախտությունների պատճառներն ու մոտավոր պատկերացում կազմել իր իսկական թշնամիների մասին։

Մեր ազգային ինքնության ու մեր դաժան ճակատագրի իրական պատճառների ու մեղավորների որոնումներն էին, որ քսաներորդ դարի ութսունականներին մեզ մոտեցրել էին ազգային վերածննդի շեմին։ Սակայն պայթյունի պես ծավալված ղարաբաղյան շարժումն ու դրան հաջորդած իրադարձությունները հյուծեցին, խլացրին ու կուրացրին մեզ։ Մեծ ձեռքբերումներից հետո կարծես հանգստացանք ու կորցրեցինք մեր զգոնությունը. թույլ տվեցինք, որ ժողովրդավարության, կապիտալիզմի ու լիբերալիզմի օտար ու մահաբեր գաղափարները մտնեն ու կաթվածահար անեն մեզ։

Խոսքի ազատությամբ ոգևորված՝ հատկապես մեր սեփական կարծիքը բոլորին լսելի դարձնելու մոլուցքով տարված, եռանդուն կերպով ու առանց երկմտելու անցանք գործի։ Առանց հաշվի առնելու մեր սեփական տեսակետի ճշմարտացիության ու կարևորության աստիճանը՝ ամեն գնով մեր ձայնը լսելի դարձնելու մղումով լեցուն, սկսեցինք միմյանց խլացնել ու ինքնանպատակ աղմկել։ Այսօր ևս, առաջնորդվելով մեր եսասիրական մղումներով, դեռ շարունակում ենք ամենուրեք՝ հատկապես զանգվածային լրատվության միջոցներով, անկարևոր հարցերի շուրջ աղմուկ-աղաղակ սարքել ու աղտոտել եթերը, արհամարհել դիմացինի տեսակետը, նսեմացնել ու ոտնահարել մեր ազգակցին՝ այդպիսով նպաստելով ներազգային լարվածության խորացմանը։

Շուկայական հարաբերությունների անվան տակ կապիտալիզմի՝ մարդու կողմից մարդու շահագործման, երկրպագությունն ավելի խորացրեց ներազգային լարվածությունն ու պառակտեց մեզ։ Միայն սեփական շահով առաջնորդվելով՝ սկսեցինք խաբել ու կողոպտել միմյանց։ Երկրում սեփականաշնորհման գործընթացն անցավ կազմակերպված հանցագործների նախանշած ծրագրով։ Հետևաբար, հիմնականում նրանք դարձան խոշոր ձեռնարկությունների տերերն ու մինչև հիմա շարունակում են խաբել ու կողոպտել իրենց ազգակիցներին։ Շարունակական անարդարությունը, կողոպուտն ու շահագործումն ավելի պառակտեցին ու թշնամացրին մեզ՝ դառնալով համատարած արտագաղթի հիմնական պատճառը։

Ժողովրդավարական կառավարման համակարգն իշխանության բերեց դրսի ուժերի գործակալներին։ Երկրի արդյունաբերությունը կողոպտվեց ու վաճառվեց օտար պետություններին։ Երկիրը զրկվեց ողնաշարից ու ընկավ անհույս աղքատության գիրկը, որից դուրս գալու համար, ավա՜ղ, գերբնական ջանքեր են հարկավոր։ Ինչպես ամենուրեք, Հայաստանում ևս, առաջին հերթին ու շատ արագ կազմակերպվեցին ստորակարգ արարածները, կենդանական փոխհարաբերություններին հատուկ իշխողների և

իշխվողների հիերարխիկ կառույցներ՝ խմբեր, խմբակցություններ ու կուսակցություններ հիմնելով։ Հմտորեն օգտագործելով ժողովրդավարական կառավարման համակարգի ընձեռած հնարավորությունները՝ հանցագործներն իշխանական ու կառավարման լծակների մոտ բերեցին իրենց ներկայացուցիչներին՝ այդպիսով զրկելով քաղաքակիրթ ու հիմնականում անկազմակերպ մարդկանց պետության կառավարմանը մասնակցելու իրենց իրավունքից։ Հանցագործ իշխանությունների ծավալած աննախադեպ ու համատարած անարդարությունը, կողոպուտը, անբարոյականությունն ու կաշառակերությունը ավելի խորացրեցին ներազգային թշնամանքը, ցրեցին ու տարագիր դարձրեցին մեր ժողովրդին։

Բայց այս ամենը տեղի ունեցավ միայն այն պատճառով, որ մենք դեռևս չունեինք մեր սեփական ազգային արժեհամակարգը։ Խոսքի ազատության, տարակարծության, ժողովրդավարության ու կապիտալիզմի գաղափարներից բացի, ուրիշ ոչինչ չէինք տեսնում, մանավանդ, որ դրանք արդեն վաղուց մտել ու, անվիճելի արժեքների կարգավիճակ ստացած, անդամալուծել էին բոլորիս մտքերը։ Սա էր պատճառը, որ Խորհրդային Կայսրության փլուզումից հետո, միանգամից ընդունեցինք դրանք՝ որպես մեր բոլոր հիմնախնդիրների համադարման՝ միաժամանակ որևէ այլ տարբերակ չտեսնելով։ Հապճեպ ընդօրինակեցինք արևմտյան երկրների ժողովրդավարական կառավարման ու կապիտալիստական տնտեսավարման մոդելն ու կործանարար ուղու վրա դրեցինք մեր երկիրը։

Հետագա զարգացումներն, իհարկե, ցույց տվեցին, որ Հայաստանի համար չափազանց վտանգավոր ճանապարհ էր ընտրված, գուցեև՝ պարտադրված։ Դժբախտաբար, դեռ ոչ ոք չի հասկանում մեր ազգային ճգնաժամի իրական պատճառներն ու ոչ մի ելք չի տեսնում երկիրը դեպի կործանում տանող ճանապարհից հանելու համար։

Ահա, այս կործանարար զարգացումներից խորապես մտահոգված ու սեփական ժողովրդի հնարավոր վախճանից

ահաբեկված, միաժամանակ համոզված, որ խնդրի պատճառների մասին ողջ ճշմարտությունն իմանալը խնդրի լուծման միակ բանալին է, սկսեցի մտորել՝ բացահայտելու մեր համազգային ճգնաժամի պատճառները։ Լուծումը գտնելու իմ երկարատև ու եռանդուն որոնումներն ինձ, ի վերջո, բերեցին այն համոզմանը, որ դարեր շարունակ մեր բոլոր դժբախտությունների պատճառը սեփական ուսմունքի բացակայությունն է եղել։

Այդ ուսմունքի բացակայությունն է եղել մեր ազգային պետության կործանման պատճառը, որն, ի վերջո, բերեց մեր ազգի մեծ մասի բնաջնջմանն ու համարյա մեր ողջ բնօրրանի բռնազավթմանը։ Ազգային միասնական ուսմունքի բացակայությունն է հատկապես մեր օրերի համատարած անարդարության, մեր հրաշքով պահպանված հայրենիքի անորոշ ապագայի և մեր բոլոր շարունակական դժբախտությունների պատճառը։

Ես հասկացա, որ մեր երկիրը թուլացնելու և վերջնականապես կործանելու նպատակով էին մեզ պարտադրում ժողովրդավարական կառավարումն ու կապիտալիստական տնտեսավարումը, խոսքի ազատությունը, տարակարծությունն ու ընդհանրապես լիբերալիզմը։ Նույնիսկ այժմ շատ քչերն են հարցնում, թե ինչո՞ւ, օրինակ՝ արևմուտքի այն երկրները, որոնք մեզ համառորեն հորդորում էին որդեգրել ժողովրդավարական կառավարման ու կապիտալիստական տնտեսավարման համակարգը, իրենք իրենց երկրներում դեռ պահպանում են միապետական կառավարումն ու արդեն հասել են կենտրոնացված տնտեսավարման, հատկապես՝ դրամատիրական ոլորտում։ Ընթացիկ աշխարհաքաղաքական զարգացումները ցույց են տալիս, որ երկրներ կործանելու համար բավարար է միայն տապալել այդ երկրներում միապետությունն ու փոխարենը ժողովրդավարություն ներարկել՝ խոսքի ազատության, տարակարծության, լիբերալիզմի ու հատկապես շուկայական, իրականում կապիտալիստական՝ հակամարտ ու անողոք, անկառավարելի ու անարդյունավետ տնտեսավարման հետ միասին։

Դեմոկրատիայի, կապիտալիզմի ու լիբերալիզմի թունավոր խառնուրդը հատուկ զենք է երկրներ կործանելու համար։

Հզոր երկիր ունենալու համար հարկավոր է վերականգնել այն արժեհամակարգը, որը կար, երբ հզոր երկիր ունեինք։

Ուսումնասիրելով մեր հազարամյակների պատմությունը, նկատեցի, որ ազգովի հզոր էինք, երբ ունեինք նահապետական՝ միապետական, կառավարում։ Նկատեցի նաև, որ մեր ողջ պատմության ընթացքում բացառված է եղել մարդու կողմից մարդու շահագործումը։ Այլ կերպ ասած՝ մեր երկիրը երբևէ չի որդեգրել կապիտալիզմի՝ լեգալացված կողոպուտի, գաղափարախոսությունը. մեր արքաները երբեք չեն ստրկացրել, կամ ճորտի տեղ բանեցրել իրենց հպատակներին։ Նկատեցի նաև, որ մեր երկիրը սկսեց արագորեն թուլանալ, երբ եկեղեցին մտավ ու, հողեր սեփականացնելով, փորձեց ճորտացնել մեր ազատ շինականին, ինչն էլ արդարացիորեն գրգռեց հայ շինականի զայրույթն ու զինված ապստամբության հանեց եկեղեցու դեմ։

Մեր ազգային արժեհամակարգի որոնումների ճանապարհին ես՝ ինչպես բոլորը, երկար ժամանակ չէի կարողանում կողմնորոշվել ժողովրդավարության ու բռնապետության, կապիտալիզմի ու կոմունիզմի միջև։ Շատ ուշ հասկացա, որ ժողովրդավարությունից ու բռնապետությունից բացի կա երրորդ մի ձև՝ միապետությունը, որն իրականում առաջինն է եղել։ Ուշ հասկացա, որ միապետությունն ու բռնապետությունը շատ տարբեր բաներ են։ Այս մասին ավելի մանրամասն ներկայացրել եմ իմ «Միապետություն, բռնապետություն, դեմոկրատիա» հոդվածում (2015 թվականին Երևանում տպագրվել է հոդվածներիս, ակնարկներիս ու աֆորիզմներիս ժողովածուն, որը կարելի է ձեռք բերել Երևանի «Նոյան Տապան» և «Բուկինիստ» գրախանութներից, նաև՝ Գլենդելի «Ապրիլ» գրախանութից. ժողովածուն կա նաև համացանցում անվճար ընթերցման համար՝ davitmirzoyan.com)։ Ուշ հասկացա նաև, որ կապիտալիզմից՝

մարդու կողմից մարդու շահագործումից, ու կոմունիզմից՝ համակենտրոնացված ճորտատիրությունից բացի, կա նաև մեկ այլ ձև՝ նահապետական ազատ տնտեսավարումը։ Այս մասին ավելի մանրամասն ներկայացրել եմ իմ «Նացիոնալ-սոցիալիզմ» հոդվածում և «Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրություն» փաստաթղթում։

Մեր ազգային՝ Արարչական, ուսմունքի հիմնարար դրույթները բացահայտելուց հետո հասկացա, որ այն անխուսափելիորեն բերում է նահապետական՝ միապետական, կառավարման ու ազգայնացված տնտեսավարման։ Կազմեցի «Արարչական օրենքներն» ու անմիջապես ձեռնամուխ եղա «Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրությունը» ստեղծելուն՝ իր զինանշանով, դրոշով ու օրհներգով։ 2012 թվականին երկու փաստաթուղթն էլ ավարտելուն պես շտապեցի քննարկման դնել։ Այլ հնարավորություն չունենալով՝ բացի «Ֆեյսբուք» սոցիալական ցանցից, երկուսն էլ հրապարակեցի իմ ֆեյսբուքյան «Վերնատուն» խմբում։ Ի զարմանս ինձ, առաջին մի քանի հիացական արձագանքից հետո, հետաքրքրությունը Սահմանադրության հանդեպ շատ արագ մարեց՝ ստիպելով ինձ ներկայացնել այն ընկերներիս, ուղղակիորեն՝ անձնական հաղորդակցության ճանապարհով։

Միակ ծավալուն արձագանքը ստացա ճանաչված մտավորական Լիա Ավետիսյանից։ Իր հիացական նամակում նա հորդորում էր ինձ վեպ գրել՝ ներկայացնելու համար ո՛չ միայն Հայոց Արքայի կերպարը, այլ նաև նրա կառուցած երկիրն՝ իր տարբեր շերտերի կենցաղով, նիստուկացով ու փոխհարաբերություններով, Արքայի մերձավորների կերպարներով, Արքայի ընտանիքի անդամների ու նրանց վարքի նկարագրություններով և այլն։ Լիա Ավետիսյանը հատկապես կարևորում էր Հայոց Արքայի վճռական, արդարամիտ ու իմաստուն էության ներկայացումը, նաև, որ ամենակարևորն է՝ «Ի՞նչ է այդ Հայոց տիրությունը, ի՞նչ բարիք է բերում ներսի ու դրսի աշխարհի համար։ Ինչպիսի՞ խնդիրներ է ի զորու լուծել, որպեսզի մարդն ապրի

երջանիկ կյանքով, և այդ մարդը ո՛չ միայն հայն է, և ո՛չ միայն Հայաստանում ապրողը»։

Վերջապես, 2013 թվականին ձեռնամուխ եղա ապագա միապետական Հայաստանի մասին վեպի ստեղծման գործին, հուսալով, որ այն կդառնա մեր ազգային զարթոնքի ճանապարհի ուղեցույցը։ Անհրաժեշտություն կար ներկայացնելու ոչ միայն ապագա միապետական Հայաստանի ու մեր Արարչական ուսմունքի էությունը, այլ նաև Քրիստոնեություն ուսմունքի հիմնարար դրույթների ճշմարիտ մեկնությունները, հատկապես՝ ուսմունք-կրոն տարբերությունը։ Մեկ այլ անհրաժեշտություն էր պարզաբանել առանցքային, գլխավորապես՝ չարի ու բարու շուրջ, վերջին շրջանում արևելյան փիլիսոփայությունների համապատասխան դրույթների թերի ընկալումների հետևանքով ծագած որոշ թյուրիմացություններ։ Բայց ամենակարևորը «հայրենիք» հասկացության պարզաբանումն էր՝ մինչ այժմ լիովին չբացատրված մի հասկացություն, որի անորոշ ընկալումները շատ ու շատ հերոսացումների մղելու հետ մեկտեղ, անտանելի մտատանջությունների ու տառապանքների են մատնել մեր շատ ազնվասիրտ հայրենակիցների։

Միանգամից, հախուռն կերպով անցա գործի՝ սկսելով ուսմունք-կրոն տարբերության, նաև «աստված» հասկացության բացահայտումից։ Աշխատանքի ընթացքում ի հայտ եկան ոչ միայն ուսմունքային, այլ նաև ռազմավարական ու մարտավարական նշանակության նոր խնդիրներ։

Մատուցվող նյութը մատչելի դարձնելու համար, այն հիմնականում ներկայացրել եմ երկխոսությունների միջոցով։ Վեպի վերնագիրն, իհարկե, պատահական չի ընտրված։ Այն Արարչական ուսմունքի միջոցով սեփական մշակույթին վերադառնալու մեր ժողովրդի ընթացքն է խորհրդանշում։

Ի սկզբանե վեպը նախատեսել էի երեք մասից։ Մտահղացում ունեի առաջինով ներկայացնել Արքայի կյանքի

ոդիսականը՝ ազգային ոամունքի որոնումներից մինչև հայտնաբերումը, երկրորդով՝ միապետության վերականգնման գործընթացը և երրորդով՝ արդեն միապետական Հայաստանի կյանքն ու Համայն Հայոց Արքայի գործունեությունը։ Բայց, հաշվի առնելով ծավալվող աշխարհաքաղաքական իրադարձությունների արագացող ընթացքը, որոշեցի միանգամից սկսել միապետական Հայաստանի իրողությունից ու Արքայի գործունեությունից։ Այն, փաստորեն, դարձավ առաջին գիրքը, որում այնուամենայնիվ բավարար ակնարկներ կան միապետության վերականգնման ուղիների մասին։

Ընթերցողն, իհարկե, կնկատի վեպում ծավալվող իրադարձությունների անսպասելի ավարտ։ Վեպը կշարունակվի երկրորդ գրքով, գուցե նաև հաջորդի երրորդը։ Սակայն մեր ազգային զարթոնքի ներկա փուլում առաջին գրքի առկայությունը բավարար է՝ որպես մեր ազգային ոամունքն ու միապետական Հայաստանը պատկերավոր ներկայացնող նյութ և ուղեցույց։

Գիրքն առաջին անգամ հրատարակվել է 2014 թվականի ամռանը։ Գրքի առաջին հրատարակության հարցում ինձ մեծապես օգնել են իմ ամենամտերիմ զինակիցները՝ լոսանջելեսաբնակ Ռոզա Նիյազյանը, երևանաբնակ զինակիցներս՝ Նարինե Բալասբեկյանը, գրքի խմբագրման գործընթացում իր ուսերին վերցրած Արշալույս Դավթյանն ու սրբագրող Սիրանուշ Միրզոյանը։

Երկրորդ հրատարակությունը ներկայացնում է վերանայված ու առավել հղկված «Վերածնունդ» վեպը, «Արարչական օրենքները», «Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրությունը» և «Հեղինակի կողմից» խոսքը, որը բացակայում էր առաջին հրատարակության մեջ։

Խորին շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր իրենց աջակցությամբ հնարավոր են դարձրել «Վերածնունդ» վեպի լույս ընծայումը։



Հայաստանի Թագավորության դրոշը զինանշանով

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

– Ո՛չ մի ներում։ Անհապաղ ի կատար ածել ժողովրդի դատավճիռը՝ երեքին էլ կախել։ Կախել դրանց հենց կենտրոնական հրապարակում ու թողնել այդպես կախված ի ցույց բոլորի։ Ու որքան հնարավոր է երկար։ Բոլորի հիշողության մեջ պիտի խորը հետք մնա այդ տեսարանից։

Արքան մի պահ ընդհատեց իր խոսքն ու խորասուզվեց մտքերի մեջ. «Բայց ինչպե՞ս դիմակայել միջազգային հանրությանը»։ Թե ինչ արձագանքներ էին լինելու, նա լավ գիտեր։ «Ի՞նչ անել։ Առճակատմա՞ն գնալ, թե՞ փորձել ժամանակ շահել»,– մտածում էր Արքան։ Ժամանակ էր պետք։ «Բայց ինչո՞ւ է միշտ այդպես։ Ինչո՞ւ են անկարևոր բաները խլում ողջ ժամանակն ու ներուժը։ Հա՜, դա նրանից է, որ անկարևոր բաների կողմը միշտ էլ ճնշող մեծամասնությունն է կանգնած։ Կախվում են ոտքերիցդ, թևերիցը դ... ու ներքև են քաշում։ Քաշում են ու քաշում։ Քաշում են, որ տանեն ներքև, ուր որ իրենք են՝ դեպի ճահիճը։ Չեն հանգստանա, մինչև վար չբերեն, չբզկտեն ու չխառնեն հողին։ Հրեշնե՛ր։ Մարդասպաննե՛ր։ Բզկտում են ու թունավորում։ Դավում են ու հոշոտում։ Ու այդ ամենը՝ լավ

քողարկված ու ոհմակներ կազմած։ Ողորմելի վախկոտներ։ Բայց մի՞թե չի կարելի առանց դրանց»։

Արքան մտովի մի պահ ավելի հեռուն գնաց։ Նա երկար էր խորհել խնդրի շուրջ ու երբեք չէր համակերպվել այն համատարած կարծիքի հետ, թե անհնար էր առանց դիմադրության, թե ամեն ինչ գորշ ու տաղտուկ կլիներ՝ առանց հակառակորդ ունենալու, կամ թե՝ ոչ մի մտավոր ու հոգևոր առաջընթաց հնարավոր չէր լինի առանց խանգարողների բանակի։ «Ի՞նչ անհեթեթություն։ Իհա՛րկե, կարելի է։ Արարող մարդը չպիտի՛ ստիպված լինի իր ողջ ժամանակն ու ներուժը վատնել՝ ձերբազատվելու շնագայլերի ոհմակների ծանրությունից։ Նա պիտի ժամանակ ու հնարավորություն ունենա զբաղվելու խաղաղ, արարչագործ աշխատանքով»։

Արքան դեռ երկար կմնար իր խոհերի մեջ, բայց կապի նախարար Լրաբյանը խախտեց լռությունը.

– Ի՛մ Արքա, թույլ տուր շարունակել։

Արքան գլխի թեթև շարժումով նշան արեց, որ շարունակի։

– Ի՛մ Արքա, նույնիսկ կաթողիկոսն է այստեղ՝ իր ողջ շքախմբով։ Առավոտվանից սպասում է, որ ընդունես իրեն։ Անձամբ է եկել՝ ներում հայցելու այդ երեքի համար։

– Կաթողիկո՞սը։ Ներում հայցելո՞ւ։ Ասենք՝ զարմանալու բան չկա։ Դրանք բոլորն էլ մի սանրի կտավ են։ Ձեռք ձեռքի տված քանդում էին երկիրը։ Թող էլի՛ սպասի։

Արքան նորից խորասուզվեց մտքերի մեջ. «Ահա՜, սկսվե՜ց։ Միջազգային հանրությունն արդեն բախում է դուռը։ Սրա՛ հետ ինչպե՞ս վարվել։ Ժողովրդի մի ստվար մաս դեռ անհույս հավատում է սրանց անմեղությանն ու ողջ կառույցի «ազգապահպան անհրաժեշտությանը»։ Մոլորյալնե՜ր... Էլի՛ ժամանակ չեղավ դարձի բերելու նրանց բոլորին, էլի՛ ժամանակ չեղավ։ Ժողովրդին միշտ էլ ճընշված ու վախեցած են պահել կրոնավորները, նաև՝ խավարի ու տգիտության մեջ։ Հետն էլ՝ լուսավորչական... Դե, իհարկե... մոլորեցնելու ու մարդկանց միամտությունը շահագործելու դասական օրինակ, որ ոչնչով չի տարբերվում իրենց ճորտատեր հանցակիցների մարտավարությունից։

Հետաքրքիր է՝ ո՞վ է ումից սովորել»։

– Ի՛մ Արքա, թույլ տուր խոսել,– լռությունը խախտեց Արքայի առաջին խորհրդականը՝ մի փոքր բարձրանալով տեղից։

– Խոսի՛ր, Վռամ,– արտաբերեց Արքան՝ հայացքն ուղղելով դեպի նա։

– Ի՛մ Արքա, կարծում եմ՝ կաթողիկոսի հետ հարկ է, որ զգույշ վարվես։ Նա դեռ որոշ կշիռ ունի ժողովրդի մոտ։

– Դու մոռանում ես, որ, ըստ մեր Ազգային Սահմանադրության, այդ կառույցն ընդհանրապես պիտի գոյություն չունենար,– վրա բերեց Արքան։

– Ի՛մ Արքա, բայց եկեղեցին, հատկապես՝ ժողովուրդը, դեռ համոզված են, թե միայն աղանդների՛ ոտքը մեր երկրից կտրելու համար ես մեր Ազգային Սահմանադրության մեջ ամրագրել կրոնների արգելման մասին հոդվածը,– արձագանքեց Վռամը։

– Իհարկե, համոզված են... Բայց հո անվերջ չե՞նք հանդուրժելու եկեղեցու ազգակործան ներկայությունը։ Սրանք չէի՞ն, որ կործանեցին մեր հայրենիքը, մարեցին մեր երկրի լույսը։ Սրանք չէի՞ն, որ ոչնչացրին մեր ուսմունքն ու խավարի մատնեցին ժողովրդին։ Սրանք չէի՞ն, որ դավեցին ու հալածեցին մեր արքաներին, ի վերջո թշնամու ձեռքը հանձնելով ողջ երկիրն ու ժողովրդին։ Սրանք չէի՞ն, որ անողոքաբար հաշվեհարդար տեսան պավլիկյանների, թոնդրակյանների ու իրական ուսմունքի բոլոր կողմնակիցների հետ։ Սրանք չէի՞ն այն սրբապիղծները, որ քանդեցին Խորենացու գերեզմանն ու նրա ոսկորները հանեցին, թափեցին գետը։ Սրանք չէի՞ն, որ հալածեցին Մաշտոցին։ Սրանք չէի՞ն, որ իրենց հակառակորդների դեմ պայքարում աչքները միշտ օտար ուժերի կողմն է եղել։ Սրանք չե՞ն, որ մինչև հիմա... Ու ինչի՞ համար։ Միայն իշխանության ու լափելու։ Միայն լափելու ու իշխանության։ Ասա, տեսնեմ՝ սրանք ինչո՞վ են տարբերվում նրանցից, ովքեր իշխանության ու լափելու մոլուցքով տարված կողոպտեցին ու նվաստացրին մեր ժողովրդին, ու հիմա իրավամբ դատապարտված են մահապատժի։ Ասում ես՝ միայն աղանդների... Մի՞թե մեծ էշն ախոռում թողած... Ասեք, թող ներս գա։ Բայց՝ մենակ։

Արքայական թիկնապահ գնդի հրամանատարը մարտիկներից մեկին նշան արեց, որ գնա ու ներս հրավիրի կաթողիկոսին։

– Ի՛մ Արքա, մեզ հիմա ավելորդ լարում պետք չի,– շտապեց երկրորդ խորհրդականը։– Մեզ հիմա ժամանակ է պետք։ Մի քիչ էլ ժամանակ։ Առանց այդ էլ լարվածությունը շատ մեծ է երկրում։ Երեք նախագահների ողջ դատավարության ընթացքում ժողովուրդը մեծ փորձություններ միջով անցավ, ու դեռ վերջը չի երևում։ Ճիշտ է՝ կրոնավորները շատ խանգարեցին, երբեմն կրակի վրա յուղ լցնելով, բայց հիմա դրանց վերջը տալը ժամանակավրեպ է։

– Ի՛մ Արքա, կարծում եմ՝ կրոնավորներին հիմա մեջտեղից հանելը կխլի ողջ ուշադրությունը երեք նախագահների մահապատժից, կթուլացնի այն ազդեցությունը, որ ինքդ ես ակնկալում, նրանց մարմինները կենտրոնական հրապարակում հնարավորինս երկար կախված պահելով։ Հետո՝ ժողովուրդը մեծ ալեկոծումների միջով անցավ։ Հարկ է, որ մի քիչ դադար առնի, վերաքննի կատարվածն ու համապատասխան եզրակացություններ անի,– հավելեց առաջին խորհրդականը։

– Ժամանակ, ժամանակ... լավ կլիներ,– կարծես ինքն իր հետ խոսելով, արտաբերեց Արքան։– Բայց ո՞վ ժամանակ ունի։ Իսկ դուք գիտե՞ք, թե որքան է շտապում ժողովուրդը։ Գիտե՞ք, թե որքան է համբերել։ Գիտե՞ք, թե ինչ անհամբերությամբ է սպասում փոփոխությունների, կըտրո՛ւկ փոփոխությունների։

Արքան կրկին խորասուզվեց մտքերի մեջ. «Չէ՞, ինչ լինում է, թող որ լինի միանգամից։ Կամ՝ հիմա, կամ՝ երբեք։ Ինչո՞ւ հապաղել։ Ամեն հապաղում հուսալքության է տանում։ Չի կարելի կորցնել ոչ մի րոպե։ Չի կարելի կորցրնել հույսով ու հավատով սպասող մարդկանց վստահությունը։ Մարդիկ ծարավ են անապատում մի ողջ հավերժության դեգերածի պես։ Շնչահեղձ են շիկացած ավազուտներում օդի պակասից։ Քաղցած են ու հուսահատ, խաբված ու կողոպտված։ Ինչո՞ւ հապաղել։ Ի՞նչ տրամաբանությամբ։ Ի՞նչ վերաքննել։ Ի՞նչ վերախմաստավորել։ Էլ ի՞նչ նոր եզրակացություններ։ Մարդիկ լավ էլ ժամանակ

են ունեցել այդ ամենի համար։ Ու ազգովի կայացրին իրենց պատմական դատավճիռը։ Արդա՛ր դատավճիռը։ Բայց կարելի է մի քիչ ձգել։ Թող այդ երեքի մահապատիժն ի կատար ածվի, հետո՝ կտեսնենք...»

***

Քիչ անց դռների մեջ հայտնվեց ինքը՝ կաթողիկոսը։ Սև վեղարի տակից շանթահար աչքերն Արքային ուղղած, գավազանի վրա մերթ ընդ մերթ հենվելով ու պարարտ մարմինը սև սքեմի տակ ծանր-ծանր աջ ու ձախ անելով, մոտենում էր Արքային, իր ամեն քայլն ուղեկցելով գավազանի ծանր ու հատակին սովորականից ուժգին հարվածներով։ Սա, իհարկե, նկատեցին բոլոր ներկաները։ Բոլորն էլ հասկացան, որ կաթողիկոսը չափազանց մոլեգնած էր։ Նա մոլեգնած էր ոչ միայն սպասասրահում առավոտվանից սպասելու ու բոլորի պես անվտանգության նվաստացուցիչ ընթացակարգով անցնելու պատճառով, նաև՝ որ իր շքախմբին թույլ չէին տվել մտնել Արքայի մոտ իր հետ միասին, այլ մեծապես այն պատճառով, որ երկրում հայտնվել էր մեկը, ով իրենից բարձր իշխանություն ուներ։ Քանի դեռ «ժողովրդավարություն» էր, ու միմյանց հաջորդում էին երկրի նախագահները, թեկուզև սահմանադրությամբ թույլատրելի երկու ժամկետն էլ օգտագործելով, միևնույն է՝ երկրում ամենահիմնականն ինքն էր՝ ընտրվում էր ժողովրդի կամքից անկախ ու գահակալում՝ ցմահ։ Իսկ, ահա, ի դեմս Համայն Հայոց Արքայի հայտնվել էր մրցակից, ով գահին էր բարձրացել ժողովրդի միահամուռ որոշումով ու գահակալելու էր ցմահ, ընդ որում՝ համարյա անսահմանափակ օրենսդրական ու գործադիր իրավունքներով։ Կաթողիկոսի սիրտը ճաքում էր, որ ժողովրդի վրա դարեր շարունակ եկեղեցու ունեցած իշխանությունը զիջել էր ուրիշին։ Բոլոր կաթողիկոսների շարքում ինքը եղավ այն թույլ օղակը, որ զիջեց իշխանությունը։ Ու հիմա կատաղությունից իր տեղը չէր գտնում։ Ժողովուրդը վերջապես ուշքի էր եկել ու որոշում ընդունել՝ անցնել նահապետական կառավարման։ Ընդունել էր Արքայի կազմած Ազգային Սահմանադրությունն ու գահ բարձրացրել նրան։

Կաթողիկոսը կանգ առավ Արքայի դեմ դիմաց, նշա-

գծված հեռավորության վրա ու, մի ակնթարթ արհամարհական հայացք գցելով կարմիր նշագծի վրա, գլուխն ուղղեց ու, հպարտ կեցվածք ընդունելով, կանգնեց Արքայի դեմ հանդիման, կարծես եկել էր ոչ թե բան խնդրելու, այլ՝ պահանջելու։

Տեսնելով, որ կաթողիկոսը չի պատրաստվում ողջույնի որևէ խոսք ասել, Արքան խախտեց լռությունը՝ լարվածությունը թուլացնելու համար։

– Կաթողիկո՛ս, ինձ հայտնեցին, որ եկել ես անձամբ ներում խնդրելու երեք դատապարտյալների համար։

– Ա՛յո։

– Իսկ ինչո՞վ է թելադրված մղումդ։

– Հարկավ՝ գթասրտությամբ...

– Գթասրտությա՞մբ,– զարմացավ Արքան։

– Մեր կրոնն ասում է՝ գթասիրտ եղիր նույնիսկ թշնամիներիդ հանդեպ, սիրիր թշնամուդ...

– Կրո՞նը, թե՞ ուսմունքը,– կտրեց նրան Արքան։

– Առանձնապես տարբերություն չեմ տեսնում։

– Իհա՛րկե, չես տեսնում։

Նկատելով, որ լարվածությունն աճում է, Արքայի երկու խորհրդականները համարյա միաժամանակ իրենց հայացքներն ուղղեցին դեպի Արքան, բայց ոչինչ չասելով, միանգամից շրջվեցին դեպի կաթողիկոսը։ Երկրորդ խորհրդականը դիմեց նրան.

– Կաթողիկո՛ս, հավանաբար աճապարանքից, շփոթմունքից, գուցե նաև գործի հրատապությունից դու մոռացար նախ ողջունել Արքային։ Հետո՝ թույլ տուր հիշեցնել, որ Արքային ուղղած ամեն նոր խոսքդ հարկ է, որ սկսես՝ դիմելով նրան ինչպես կարգն է՝ «Ի՛մ Արքա»-ով։

Կաթողիկոսը գլխի թեթև շարժումով հասկացրեց, որ ի նկատի կունենա, այդ ամենը համեմելով կեղծ ժպիտով։

Սա հանդուգն մարտահրավեր էր։ Արքան արդեն գիտեր, թե ինչով էր ավարտվելու կաթողիկոսի հետ իր առճակատումը։ Բայց, ևս մի ճիգ գործադրելով, զսպեց զայրույթն ու դիմեց նրան.

– Կաթողիկո՛ս, Քրիստոսը ուսմունք էր տարածում, այնպես չէ՞։ Ոչ մի տեղ որևէ խոսք չկա այն կրոն դարձնելու, կամ կրոնավորներ, վանքեր ու վանականներ ունե-

նալու մասին։

– Արքան ուսումնասիրե՞լ է սուրբ գրքերը,– դեմքին մի ակնթարթ նենգ ժպիտ տալով վրա բերեց կաթողիկոսը։

– Զարմացա՞ծ ես, կաթողիկո՛ս։

Դարձյալ մի նենգ ժպիտ հայտնվեց կաթողիկոսի դեմքին։ Նա հազիվ էր զսպում իրեն։ Արդեն սկսում էր փոշմանել, որ եկել էր։ Արքային նա երբևէ չէր հանդիպել դեմ առ դեմ։ Չէր ճաշակել Արքայի խորաթափանց հայացքի ողջ ուժը։ Կաթողիկոսն, իր դիրքի ու պերճանքի ազդեցությամբ թելադրված, միայն երկյուղած, խոնարհ ու ներքևից վերև նայող դեմքեր էր տեսել։ Բայց Արքան արտասովոր հայացք ուներ։ Նրա աչքերից կարծես Արարիչն էր նայում։ Հարցերն էլ ուղիղ ու շեշտակի իջնում էին կարծես դատավարության ժամանակ։

Կաթողիկոսը չէր սպասում նման բան։ Նրան թվում էր, թե կկարողանա արագորեն զրույցը տանել իր նախընտրած ուղղությամբ, ճնշում գործադրել Արքայի վրա՝ առաջ քաշելով միջազգային հանրության հնարավոր արձագանքները, նաև՝ երկրի վրա տնտեսական ու քաղաքական հնարավոր ճնշումներն ու համոզել Արքային ներում շնորհել Հայաստանի արդեն նախկին հանրապետության երեք նախագահներին։ Բայց զրույցն այլ ուղղությամբ էր ընթանում։ Ակնհայտորեն Արքան էր կանխորոշում զրույցի ընթացքը, որն էլ սկսեց լրջորեն մտահոգել կաթողիկոսին։ Բայց նա դեռ հույս ուներ փոխել զրույցի ուղղությունը։

Չնայած այն բանին, որ Արքան չէր առաջարկում նստել, որից կաթողիկոսն իրեն ավելի նվաստացած էր զգում, նա, այնուամենայնիվ, փորձեց զսպել իր խոցված արժանապատվությունն ու ճիգ արեց տանել զրույցն իր նախընտրած ուղղությամբ։

– Թող ներողամիտ լինի Արքան,– շարունակեց կաթողիկոսը նենգամիտ ժպիտը դեմքին,– սակայն նա գուցե հաշվի չի առել Հայաստանի Հանրապետության երեք նախագահներին մահապատժի ենթարկելու դեպքում միջազգային հանրության հավանական արձագանքներն ու հնարավոր ճնշումը մեր երկրի վրա։ Ուզում եմ զգուշացնել, որ հնարավոր է պատժամիջոցներ կիրառվեն, խի՛ստ պատժա-

միջոցներ։ Պատժամիջոցներ, որոնք անդառնալի հետևանքներ կարող են ունենալ։ Արքան գոնե մտածե՞լ է իր անձնական ապահովության, կյանքի ու ապագայի մասին…

– Կաթողիկո՛ս, դու ո՞ւմ կողմից ես։ Մե՞ր, թե՞ թշնամու,– ընդհատեց նրան Արքան։

Կաթողիկոսի կեղծավոր ժպիտն անհետացավ։ Արքայի համար անակնկալ չէր կաթողիկոսի դիրքորոշումը, սակայն նրա վերջին խոսքերը թունավորել էին մթնոլորտը՝ ստիպելով Արքային մտաբերել իր պատանեկության տարիները։ Պատանի Արքան բազմիցս էր իրեն ուղղված ճիշտ և ճիշտ նման ահաբեկող խոսքեր լսել իր այն հասակակիցներից, ում դեմ «հանդգնել» էր միայնակ առճակատման դուրս գալ՝ արհամարհելով նրանց ոհմակային պատկանելությունը։ Նրա մեջ ամեն անգամ մի անասելի ցասում էր արթնացել՝ թրատել իրեն նման կերպ ահաբեկող ամեն ճիվաղի ու կոտորել դրանց մեջքին կանգնած ողջ ոհմակը։ Բայց միշտ տեղի էր տվել՝ հաշվի առնելով իր անձնական հնարավորություններն ու բազմաթիվ այլ հանգամանքներ։ Ու հիմա ճիշտ և ճիշտ նույն սպառնալիքներն էր լսում հենց իրենից՝ ամենայն հայոց կաթողիկոսից։ Ու ճիշտ և ճիշտ նույն ցասումն էր արթնացել Արքայի մեջ։ Բայց հիմա, չնայած ուներ ողջ իրավունքն ու բոլոր հնարավորությունները, մի ինչ-որ անբացատրելի ուժ գամել էր նրա աջը գահավորակին։ Առնվազն մի երկու տարի առաջ գուցե զայրույթից անմիջապես վեր կենար տեղից, հաներ թուրն ու գլխատեր սրիկային, բայց հիմա տարօրինակ կերպով անշարժ էր։

Կաթողիկոսը չէր սպասում նման արձագանքի։ Արքան ընդհանրապես զարմացնում էր իր հանդարտությամբ ու զրույցի ընթացքն արագորեն շեղելու իր կարողությամբ։ Կաթողիկոսը ևս մի հիասթափություն ապրեց, բայց դեռ հույսը չէր կտրում։ Ինչպե՞ս էր արդարացնելու իր ձախողումը։

– Արքան ինձ ճիշտ չհասկացավ։ Ես մտահոգված եմ Արքայի կյանքի համար,– վրա բերեց կաթողիկոսը կեղծավոր ժպիտը դեմքին։

«Մտահոգված… կյանքի համար… Սա՛ էլ շատ ծանոթ ձեռագիր է։ Ասում են՝ մտահոգված են, բայց իրականում

ահաբեկում են։ Ոչինչ չի փոխվել սրանց մեջ»,– մտածում էր Արքան։ «Ոչինչ, բացարձակապես ոչինչ։ Նույն ճիվաղները, նույն ոհմակները, նույն համոզմունքները, նույնիսկ՝ նպատակները։ Միայն, թերևս, արտաքին տեսքն է ուրիշ՝ հագուստը, տարիքը։ Ուրիշ՝ ոչինչ։ Հա՜, մեկ էլ՝ լեզուն, լեզուն է փոխվել։ Փողոցային ժարգոնն են թոթափել. գոնե փորձում են թոթափել»։

Արքան ակամա հիշեց քսաներորդ դարի դանիացի հանրահայտ ծաղրանկարիչ Հերլուֆ Բիդստրուպի գործերից մեկը, ուր հաջորդաբար պատկերված է սեփական պոզերն ու պոչը կտրող ու աստիճանաբար սրբի կերպարանք առնող սատանան։ Արքան մեծագույն խորությամբ էր հասկանում ու գնահատում արվեստը։ Ինչպե՞ս կարելի էր չհասկանալ ու չգնահատել իսկական արվեստը։ Իսկական արվեստը չհասկանալու տեղ չի թողնում, խոցում է ակընթարթորեն, ներթափանցում դիտողի սրտի մեջ ու մնում այնտեղ երկար, շատ երկար ժամանակ։

Արքան գուցե միակն էր, ով չէր ընդունում, երբ «արվեստագետն» իր գործի սնանկությունն ու իր սեփական անտաղանդությունը քողարկելու համար դիմում էր անհասկանալի, երբեմն էլ՝ անկապ հանելուկների ու ռեբուսների։ Նա երկրի արվեստում մեծ փոփոխություններ էր նախապատրաստում։ Բայց այդ օրը դեռ շատ հեռու էր։ Հատկապես արվեստագետ հանրությունը դեռ պատրաստ չէր հասկանալու Արքային ու արվեստի ոլորտի նրա ապագա ծրագրերը։

Հիմա, սակայն, մի հսկա խնդիր կար։ Ժողովուրդը ճնշող մեծամասնությամբ մահապատժի էր դատապարտել Հայաստանի երրորդ հանրապետության առաջին երեք նախագահներին։ Սպասվում էր միջազգային հանրության, ավելի ստույգ՝ ուժերի, կամ՝ ոհմակների, միացյալ արձագանք, գուցեև՝ ոտնձգություններ, կաթողիկոսն էլ փեշերը քշտել ու աճապարել է՝ լինելու առաջին խոսնակը։

– Շա՞տ ես մտահոգված,– ակնհայտ հեգնանքով նետեց Արքան անսովոր երկար լռությունից հետո։

Կաթողիկոսը նկատեց Արքայի հեգնանքն ու հասկացավ, որ նրան ահաբեկելու իր փորձն ապարդյուն անցավ։

Սակայն, իր «առաքելությունն» ամեն գնով հաջողելու մոլուցքով տարված, մի վերջին ու չափազանց հանդուգն փորձ ձեռնարկեց։

– Գուցե մեր ազնվասիրտ Արքան պատրաստ է զոհաբերել իր սեփական անձը, բայց արդյո՞ք նա պատրաստ է վտանգել իր զավակների կյանքը,– ասաց կաթողիկոսը։

Ասաց, բայց տեղն ու տեղը փոշմանեց իր ասածի համար։ Զգաց, որ անցել էր ամեն սահման։ Արքայի հայացքն ասում էր. «Վերջ, այ սրա համար քեզ ցցի է պետք հանել»։

«Ու որտեղի՞ց են առաջանում էս տականքները,– մտածում էր Արքան։– Ծնվո՞ւմ են, թե՞ առաջանում»։ Այս հարցի պատասխանը հեշտերից չէր։ «Գուցեև ծնվում են։ Բայց, հիմնականում, առաջանում են։ Ավելի ճիշտ՝ սկզբում ծնվում են, հետո, աստիճանաբար թունավորելով իրենց շուրջն ու հետագայում՝ ողջ շրջապատը, «նպաստավոր» պայմաններ ստեղծում մյուս բոլորին իրենց նման սարքելու համար։ Գործում են բացիլի պես։ Վարակում են օրգանիզմն ու սկսում բազմանալ։ Սկզբում՝ դժվարությամբ, բայց, երբ մի քիչ ոտքի տեղ են անում, սկսում են թուլացնել օրգանիզմի պաշտպանական համակարգը։ Դրանից հետո ավելի արագ են բազմանում ու իրենց թույներն ավելի առատորեն տարածում։ Սա ավելի է թուլացնում օրգանիզմի պաշտպանական համակարգը, թունավորում, սպանում, կամ՝ դուրս մղում առողջ տարրերին։ Ու այդպես շարունակ։ Ի վերջո, բացիլները հասնում են ուղեղին, տեղավորվում բոլոր կառավարման լծակների մոտ, ու՝ առա՜ջ... կե՛ր, խմի՛, քե՛ֆ արա... էլ ի՞նչ կա խանգարող... Թերևս՝ միայն օրգանիզմի սահմանափակ հնարավորությունները։ Երբ ամեն ինչ լափեն, վերջացնեն, մեկ այլ օրգանիզմ կփնտրեն՝ բազմանալու համար։ Չէ՜, սրանց միայն սատկացնել է պետք։ Միայն դա կփրկի մեզ անխուսափելի կործանումից, միայն՝ սատկացնել»։

Երկար դադարից հետո Արքան, մեծ դժվարությամբ զսպելով իր զայրույթը, շարունակեց, կարծես ոչինչ էլ չէր եղել.

– Իսկ ժողովրդի համար չե՞ս մտահոգված, կաթողիկո՛ս։

Զարմացած, բայց միաժամանակ գոտեպնդված, որ ամպրոպն անցավ ու մի փոքր էլ ամբարտավան տոն տալով իր խոսքին, կաթողիկոսը վրա բերեց.

– Ես միշտ էլ մտահոգված եմ եղել ի՛մ ժողովրդի համար,– «իմ»-ը հատուկ շեշտելով։

– Քո՞։ Մի՞շտ։

Արքայի ձախ հոնքը մի փոքր բարձրացավ։ Նա չէր սպասում նման ցինիզմ։

– Այո՛, մի՛շտ։ Ես միշտ իմ հոտի տերն եմ եղել։

Կաթողիկոսն ակնհայտորեն ակնարկում էր իր կորուստը։ Այն, որ կորցրել էր դարերի ընթացքում ձևավորված ու իրեն հասած իշխանությունը ժողովրդի վրա։

– Հոտի՞։

Արքայի շեշտադրումը բոլորովին դուր չեկավ կաթողիկոսին։ Նա արդեն համարյա համոզվել էր, որ ձեռնունայն էր դուրս գալու արքունիքից։ Հիմա լավ կլիներ արժանապատիվ նահանջ կազմակերպել։ Բայց Արքան կարծես մըտադրություն չուներ ավարտելու երկխոսությունը։

– Դու, իրո՞ք, ժողովրդին ոչխարի հոտ ես կարծում,– շարունակեց Արքան։

– Արքան ինձ կրկին ճիշտ չհասկացավ,– փորձեց արդարացում գտնել կաթողիկոսը։– Մեր կրոնում գառնուկների հոտի համեմատությունը Քրիստոսինն է։

– Կաթողիկո՛ս, դու կրկին շփոթում ես կրոնն ու ուսմունքը։ Ես շատ լավ գիտեմ, թե ում է պատկանում գառնուկների հոտի ու ցանկացած գառնուկի համար իր կյանքը զոհաբերելու պատրաստ հովվի համեմատությունը։ Դու շատ լավ հասկացար, թե ինչ էի ակնարկում, այդպես չէ՞։

Կաթողիկոսը մի պահ կարկամեց՝ շփոթված Արքայի ուղղամտությունից։ Նման ուղղամտության ականատես էին եղել միայն Քրիստոսի հակառակորդները։ Կաթողիկոսի մտքով արագորեն անցան «Նոր Կտակարանի» այն բոլոր դրվագները, ուր Քրիստոսը համարձակորեն ու միանգամից ջրի երես էր հանում իր ընդդիմախոսների չարակամ ծրագրերն ու դրանով զինաթափ անում նրանց։ Կաթողիկոսը սկսեց վախենալ։ Արքան և՛ իրավունքն ուներ, և՛

ունակությունը՝ մերկացնելու իր՝ կաթողիկոսի, նաև՝ ողջ եկեղեցական կառույցի էությունն ու միտումները։ Բայց արդյո՞ք կունենա համարձակությունը։ Սրանում կաթողիկոսը համոզված չէր։ «Արքան չի համարձակվի դիպչել ո՛չ ինձ, ո՛չ էլ մանավանդ եկեղեցուն,– մտածեց նա։– Չի՛ կարող։ Ոչ մի արքա չի կարողացել։ Սա՛ էլ չի համարձակվի։ Ով ուզում է լինի...»

– Թող ներող լինի Արքան։ Իհարկե, չկա որևէ բան, որ Արքան չիմանա,– ասաց կաթողիկոսը, գլուխը նենգամիտ կերպով խոնարհելով մի թեթև դեպի առաջ ու այդ ամենը համեմելով կեղծ ժպիտով։

Արքայի աչքից ոչինչ չէր վրիպում։ Դա նկատեցին նաև բոլոր ներկաները։ Նրանց հայացքն անմիջապես ուղղվեց Արքայի կողմը։ Ջարմանալիորեն, սակայն, կաթողիկոսի ամբարտավան վարքը դեռ չէր կարողանում հավասարակշռությունից հանել Արքային։

– Կաթողիկո՛ս, դու ասացիր, որ միշտ քո «հոտի» տերն ես եղել,– շարունակեց Արքան։

– Հարկա՛վ...– ասաց կաթողիկոսը, սակայն սիրտը մի վատ բան էր զգում։

– Ասա՛ ինձ, խնդրեմ, կաթողիկո՛ս, հապա ինչո՞ւ տեղիցդ չշարժվեցիր, երբ շնագայլերը հոշոտում էին նրան։ Ինչո՞ւ չփորձեցիր մի խոսք անգամ ասել։ Ինչո՞ւ թողեցիր, որ օրը ցերեկով, երեսուն տարի շարունակ հոշոտեն «հոտը»։ Չէ՞ որ երեսուն տարին բավական ժամանակ է, համարյա մի ողջ սերունդ, դեռ՝ ավելին։ Աչքիդ առաջ մի ողջ սերունդ են կողոպտում, ու դու ոչինչ չես ձեռնարկում՝ կասեցնելու կողոպտիչների ձեռքը։ Նույնիսկ ընկերանում ես հետները, պարգևներ ընդունում։ Գուցե խնջույքների էլ ես մասնակցել, նրանց հետ հաց կիսել։ Կիսե՞լ ես, թե՞ ոչ։ Պարարտ մարմնիցդ դատելով՝ լա՜վ էլ սնվել ես։ Այդ ընթացքում որևէ վայրկյան մտածե՞լ ես, թե ում դատած հացն ես ուտում, կամ թե ինչո՞վ է սնվում «հոտը»։ Սընվո՞ւմ է, թե՞ չի սնվում։ Ի՞նչ զրկանքներ է կրում սնունդ հայթայթելու համար՝ մտածե՞լ ես։ Դու ընդհանրապես մատը մատիդ տվե՞լ ես՝ բերք ու բարիք արարելու համար։ Ո՞ւմ հացն ես կերել։ Ժողովրդի՞ հացն ես կերել, թե՞ դը-

սից է եկել սնունդդ։

– Արքան մոռանում է, որ իր առջև կանգնած է ամենայն հայոց...

– Դո՛ւ ես մոռանում, ում առջև ես կանգնած,– կտրեց նրան Արքան, ձայնի մեջ նկատելի զայրույթով։

Անսովոր ու չափազանց լարված լռություն տիրեց։

– Հետո՝ դու ի՞նչ ամենայն հայոց,– շարունակեց Արքան մի փոքր հեգնանքով։– Հայերի մի ստվար մաս աթեիստներ են։ Մյուս մասը՝ տարբեր բնույթի բողոքականներ։ Տարբեր երանգի աղանդավորներ էլ կան, նաև՝ հեթանոսներ, նույնիսկ՝ մահմեդականներ։ Էլ չխոսենք հսկա կաթոլիկ համայնքի մասին։ Քո տիտղոսն ընդհանրապես կաթողիկոս չպիտի լիներ։ Դու կարծես ոչ մի կապ չունես կաթոլիկների հետ, այդպես չէ՞։ Դու պիտի կոչվեիր կամ լուսավորիչ, կամ էլ՝ առաքյալ։ Բայց դու հարցերի՛ս պատասխանիր։ Ի՞նչ ես կերել պարարտ մարմինդ ձևավորելու համար, ո՞ւմ հացն ես կերել։

Կաթողիկոսն իրեն ոտնահարված էր զգում, բոլոր ներկաների աչքում միանգամից վարկաբեկված ու ոտնահարված։ Բայց Արքայի զայրույթը ստիպեց նրան մեղմել իր տոնը։

– Մեր կրոնքը հոգևոր սննդի մասին է,– այնուամենայնիվ փորձեց խուսանավել կաթողիկոսը։

– Հոգևոր սնո՞ւնդ։ Կրոնը՝ հոգևոր սննդի՞։ Գուցե ուզում էիր ասել կրոնակա՞ն սննդի,– վրա բերեց Արքան։– Ասենք, դու տարբերությունը չես հասկանում։ Ամեն ինչ խառնել եք իրար ու քանդում եք։ Խավարի եք մատնել ու կողոպտում եք։ Հոգևո՞ր սննդից ես այդպես գիրացել։ Մի փոքր էլ կխսեիր «հոտիդ» հետ։ Բոլոր ոճրագործների հետ միասին ժողովրդին մատնել էիր խոշտանգվելու ու դեռ խոսում ես ինչ-որ «հոգևոր սննդի» ու «հոտիդ տեր կանգնելու» մասի՞ն։ Հետաքրքիր է՝ ամբողջ արածներդ ինչպե՞ս ես կարողանում համատեղել յուրաքանչյուր գառնուկի համար ինքնազոհաբերության պատրաստ հովվի կերպարիդ հետ։

Կաթողիկոսը լուռ էր։ Ասելու ոչինչ չուներ։

– Բայց ասա, տեսնեմ՝ ո՞րն է այդ «հոգևոր սնուն-

դրդ»։ Լուսավորի՛ր։ Ասվածը բաց մի թող։ Ահա, արդեն որքան ժամանակ է երկրում չեն քեզ «խանգարող» աղանդները։ «Հոգեորսության» ասպարեզում որևէ մրցակից չունես։ Քանի՞ հոգի ես որսացել այս ողջ ընթացքում։ Որսի դուրս եկե՞լ ես։

Կաթողիկոսը լուռ էր։

– Դե, իհարկե՝ ոչ։ Ի՞նչ կարիք կա որսի դուրս գալ։ Գոմն արած ոչխարների որսը ո՞րն է։ Գոմից ո՞ւր պիտի փախչեն, այնպես չէ՞,– շարունակեց Արքան։– Բայց ասա, տեսնեմ. բոլոր աղանդների ասելիքը, նաև՝ փաստարկները, լավ գիտես։ Գիտե՞ս, թե՞ չգիտես։ Ասա, տեսնեմ քոնը ո՞րն է։ Ո՞րն է ասելիքդ։ Խոսի՛ր։

Կաթողիկոսն անիմաստ էր գտնում շարունակել, բայց ուրիշ ելք չուներ։

– Մեր կրոնքի ասելիքը միշտ էլ նույնն է՝ հավատքն առ Աստված։ Ով հավատա, նա կփրկվի։

– Դարձյալ ահաբեկում ես։ Ու հետո զարմանում, թե ինչու «հոգեորսությունդ» չի ստացվում։ Բայց դեռ համառորեն չես ընդունում, որ կրոն ընդհանրապես նախատեսված չէր, որ Քրիստոսը ուսմունք էր տարածում, ոչ թե՝ կրոն։ Դու գիտե՞ս՝ որն է այդ ուսմունքի էությունը։

– Ուսմունքի՞... էությո՞ւնը։

– Այո՛, ուսմունքի էությունը։ Ինչո՞ւ ես զարմանում, կաթողիկո՛ս։ Ի՞նչ արտառոց բան կա։

Կաթողիկոսը խորն ընդարմացման մեջ ընկավ։

– Այ, ասենք, եթե քեզ հիմա ընտրության առաջ դնեմ...– շարունակեց Արքան,– եթե չասես, թե որն է Քրիստոսի տարածած ուսմունքի էությունը, ապա կկորցնես գլուխդ։ Կարո՞ղ ես ասել, թե որն է այդ ուսմունքի էությունը։

– Արքան մանկամիտ կատակներ է անում,– խորապես վիրավորված արտաբերեց կաթողիկոսը։

– Արքան ո՛չ մանկամիտ է, ո՛չ էլ տրամադրություն ունի կատակելու,– զայրացած մեխեց Արքան։– Կաթողիկո՛ս, եթե չպատասխանես, թե որն է Քրիստոսի տարածած ուսմունքի էությունը, կամ գտնե ամենակարևոր դրույթը, ապա կկորցնես գլուխդ։

Կաթողիկոսի մարմնով սառը դող անցավ։ Իրավիճակը օրհասական էր։ Գողության վրա բռնվածի պես իրեն պատին էին դեմ տվել, ու հիմա մի ծանր բան էր գալիս գլխին։ Ոչ ոք երբևէ չէր հարցաքննել իրեն, մանավանդ՝ այդպես ուղիղ ու անկաշկանդ, ո՛չ որևէ հայ մտավորական, ո՛չ էլ որևէ կրոնավոր։ Իրենից բարձր երբևէ չէր եղել մեկը, որ հարցաքններ, կամ գոնե հարցներ։ Բայց հիմա կա ու հանդգնում է նույնիսկ ահաբեկել, ընտրության առաջ դնել։ «Սրա՛ն տեսեք... Ոչ մի հայոց արքա երբևէ չի հանդգնել նման բան անել,– մտածում էր կաթողիկոսը։– Սա որտեղի՞ց եկավ»։

Կաթողիկոսը հասկացավ, որ լուրջ վտանգ էր կախված իր և ընդհանրապես իր ողջ կառույցի գլխին։ Զգաց, որ մեծապես սխալվել էր, կարծելով, թե նորընտիր Արքան միայն աղանդներին երկրից վտարելու համար էր իր կազմած Ազգային Սահմանադրության մեջ ամրագրել կրոնների արգելման մասին հոդվածը։ Շա՜տ էր սխալվել։ Դարերի խորքից եկող միակ ազգապահպան կառույցն էր եկեղեցին։ Երբեք մտքով չէր անցնի, որ եկեղեցու դիրքերը կարող էին խարխլվել։ Ու հիմա շատ էր ափսոսում, որ սխալվել էր։ Այ, թե կարողանար դուրս պրծնել, մի կերպ դուրս պրծնել։ «Թքած այդ երեք նախագահների վրա»,– մտածում էր կաթողիկոսը։ Ինչո՞ւ դրանց պատճառով իր անցավ գլուխը դրեց ցավի տակ։ «Անիծվա՛ծ լինեն նրանք։ Հիմա սեփական կաշին է պետք փրկել։ Չէ՜, այստեղից հեշտ չի լինելու դուրս պրծնելը։ Հեշտ չի լինելու։ Եթե նույնիսկ... Չէ՜, չի կարող լիովին վերացնել եկեղեցին։ Դարերի պատմություն կա, վերջապես։ Եկեղեցին խորը արմատներ է գցել ժողովրդի մշակույթի, միս ու արյան մեջ։ Չէ, չի կարող։ Վերջապես, մեր եղբայրական կրոնները կմիջամտեն։ Չեն կարող չմիջամտել։ Իսկ եթե չանե՞ն։ Կամ՝ սա նրանց բանի տեղ չդնի՞»։– Վերջին միտքը սարսափի մատնեց կաթողիկոսին։

– Արքան, իրո՞ք, մտադիր է մտնել աստվածաբանական երկխոսության մեջ,– երկար լռությունից հետո փորձեց խոսանավել կաթողիկոսը։

– Աստվածաբանակա՞ն։ Կաթողիկո՛ս, խոսքը կտուրը

մի՛ գցիր։ Դասը չսովորած աշակերտի պես փորձում ես խուսափել պատասխանելուց։ Մեկ անգամ էլ եմ հարցնում՝ ո՞րն է ուսմունքի ամենագլխավոր դրույթը,– պնդեց Արքան։

«Չէ, սա արդեն անտանելի է,– մտածեց կաթողիկոսը,– բայց պետք է մի բան անել»։

– Արքան արդյո՞ք ժամանակ ունի պետական կարևոր գործերի հորձանուտում զբաղվել դավանաբանական խնդիրներով,– դարձյալ փորձեց խուսափել կաթողիկոսը։

– Կաթողիկո՛ս, դու համառորեն խուսափում ես իմ հարցին պատասխանելուց։ Վե՛րջ։ Սա քո վերջին փորձն էր անպատիժ կերպով խուսափել պատասխանելուց,– ամենայն լրջությամբ ասաց Արքան։– Եթե մի անգամ ևս փորձես շեղվել, ապա անհապաղ կլսես դատավճիռս։ Զմոռանաս, որ ես եմ երկրի գերագույն դատավորն ու իմ որոշումները վերջնական են։

Կաթողիկոսն արդեն մահվան հոտ էր առնում։ Չգիտեր՝ ինչ անի։

Տեսնելով, որ դադարը երկարում է, Արքան շարունակեց.

– Դե՛, լսում եմ։

– Հավատքն առ Աստված,– արագորեն ու վախեցած պատասխանեց կաթողիկոսը։

– Ու վե՞րջ։ Եվ դա ի՞նչ է նշանակում։ Կբացատրե՞ս։

– Բացատրե՞մ,– ձայնը դողալով ու աչքերը դես ու դեն պտտելով, կարծես օգնություն փնտրելիս արտաբերեց կաթողիկոսը։

– Մի՞թե ուրիշ ոչինչ չկա գրված գրքերում։

Կաթողիկոսը չգիտեր՝ էլ ինչ ասի։

– Դու կարդացել ես բոլոր գրքերը։ Նույնիսկ՝ մի քանի անգամ, այնպես չէ՞։ Որևէ այլ բան չե՞ս հիշում։ Ասա, ուրիշ ի՞նչ ես հիշում,– շարունակեց Արքան։

– Ուրի՞շ…

– Դե՛, համարձա՛կ։ Գիտես չէ՞։ Ամեն ինչ էլ կարդացել ես։ Դու պիտի որ անգիր իմանաս բոլոր գրքերը։ Հատկապես՝ «Նոր Կտակարանի» գրքերը։

Կաթողիկոսը դեռ լուռ էր։

– Համարձա՛կ, համարձա՛կ,– շարունակեց Արքան։– Կենտրոնանում ենք «Նոր Կտակարանի» վրա։ Ուրեմն՝ «Նոր Կտակարան», Քրիստոս, ուսմունք…

Արքան մի պահ դադար տվեց։ Հետո, տեսնելով կաթողիկոսի ընդարմացած վիճակը, շարունակեց.

– Կաթողիկո՛ս, ուրեմն մտածում ենք՝ Քրիստոս, ուսմունք… Ամեն ուսմունք ունի դրույթներ։ Սկսենք հիմնարար դրույթներից։ Կամ, ինչպես գրքերում է, պատվիրաններից։ Ո՞րն է առաջին պատվիրանը։

– Առաջին պատվիրա՞նը,– ընդարմացած վիճակից աստիճանաբար դուրս գալով, արտաբերեց կաթողիկոսը։

– Առաջի՛նը։ Համարձա՛կ։ Համարյա հասել ենք։

– Առաջինը՝ «Սիրիր Աստծուն՝ Երկնային Հորդ…»

– Լա՜վ։ Անցնենք առաջ,– ընդհատեց կաթողիկոսին Արքան։– Հաջո՛րդը։ Հաջո՛րդ պատվիրանը։ Ո՞րն է հաջորդ պատվիրանը։ Հիշո՞ւմ ես։

– Հաջո՞րդը,– կմկմալով, հազիվ լսելի արտաբերեց կաթողիկոսը։

– Այո՛, հաջո՛րդը։ Հիշո՞ւմ ես, թե՞ օգնեմ,– շարունակեց Արքան։

Մի ծանր լռություն տիրեց։ Կարծես մի կարևոր բան էր կատարվելու։ Կամ երկինքն էր պատռվելու, կամ էլ՝ գետինը։ Կամ, գուցե, երկուսն էլ միասին։ Բոլորն ինչ-որ կարևոր սպասումի մեջ էին։ Կաթողիկոսի շուրթերը կապտել էին, դեմքը՝ գունատվել։ Լեզուն քարկապ էր ընկել։ Նա գիտեր, թե ինչ էր Արքայի ուզածը, սակայն լեզուն չէր պատվում արտասանել։ Բայց հապաղելը վտանգավոր էր։ Արքայի համբերությունն անսահման չէր։ Վերջապես որոշ հնչյուններ սկսեցին սպրդել կաթողիկոսի կապտած շուրթերից։

– Սի…սիրիր…

Կաթողիկոսին կարծես ստիպել էին կարդալ իր իսկ մահապատժի դատավճիռը։

– Այո՛, համարձա՛կ։ Կարծես ճիշտ ուղու վրա ես,– փորձեց նրան առաջ մղել Արքան։

– Սիրիր մերձավորիդ…

Բառերը դժվարությամբ էին դուրս գալիս կաթողիկոսի բերանից։

– Այո՛, շարունակի՛ր,– պնդեց Արքան։

Կաթողիկոսը դժվարանում էր ասել ավելին։ Բայց Արքան նահանջողներից չէր։ Միայն առաջ ու մինչև վերջ։ Նա մտադիր էր երկրորդ պատվիրանի ողջ տեքստը դուրս բերել կաթողիկոսի բերանից։

– Սիրիր մերձավորիդ... այնպես, ինչպես քեզ ես սիրում,– վերջապես, բայց համարյա անլսելի արտաբերեց կաթողիկոսն ու հասկացավ, որ ինքն իր ոտքով մտավ թակարդը։

– Կաթողիկո՛ս, կարո՞ղ ես ավելի բարձրաձայն ու առանց ընդհատումների, խնդրում եմ,– արդեն մի փոքր հանդարտված առաջարկեց Արքան։

Կաթողիկոսը հանձնված գերու պես արդեն կախել էր գլուխն ու հայացքը հառել անհուն հեռուն, իր անխուսափելի վախճանն աչքի առաջ։

– Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում,– կրկնեց կաթողիկոսը։ Այս անգամ՝ ավելի բարձրաձայն ու ավելի անտարբեր։ Բոլորը հասկացան, որ առճակատումն արդեն ավարտված է, որ հիմա լսելու են մեղադրականն ու դատավճիռը։ Բայց Արքան դեռ չէր շտապում։ Նա մտադիր էր խոստովանություններ լսել նախքան որևէ մեղադրական կամ դատավճիռ հրապարակելը։

– Շատ լավ, կաթողիկո՛ս։ Կարող ես հաջորդ պատվիրաններին չանդրադառնալ, քանի որ մնացածը նախ հիմնված են առաջին երկուսի վրա ու հիմնականում արգելքներ են, իմաստնություններ ու խորհուրդներ ավելի՛, քան պատվիրաններ։ Դու, իհարկե, ամենայն բծախնդրությամբ ու խստությամբ ու քեզ հետ միասին քո ողջ եկեղեցին, հետևել ես չգողանալու, չշնանալու և հաջորդ բոլոր պատվիրաններին,– ձայնի մեջ ակնհայտ հեգնանքով ասաց Արքան։– Դու գուցե նույնիսկ համոզված ես, թե ամենամեծ նվիրումով պահել ես առաջին պատվիրանը։ Բայց ասա, տեսնեմ, դու իրո՞ք համոզված ես, թե ապրել ես ըստ երկրորդ պատվիրանի։ Ես նույնիսկ չեմ էլ լսել, որ եռանդուն կերպով քարոզես այն։ Բայց՝ սկսենք առաջինից։

Մի փոքր դադարից հետո Արքան շարունակեց.

– Երկրպագել նշանակում է ընդունել որպես բացարձակ արժեք ու զոհաբերել ամեն ինչ նրա համար։ Ասա,

տեսնեմ, դու իրո՞ք զոհաբերել ես ամեն ինչ Աստծո համար։

Կաթողիկոսը մի փոքր հետ եկավ կիսամեռ վիճակից։ Սա կարծես այն տիրույթն էր, ուր ինքն իրեն որպես ձուկը ջրում էր կարծում։

– Հարկավ,– հազիվ լսելի ասաց նա։

– Բայց գոնե գիտե՞ս՝ ով է Աստվածը։

Կաթողիկոսը մի զարմացած հայացք գցեց Արքայի կողմը, իրոք անկեղծորեն զարմացած, որովհետև նույնիսկ ինքն իրեն երբևէ նման հարց չէր տվել։ «Ի՞նչ է նշանակում՝ ո՞վ է Աստվածը,– սկսեց մտորել կաթողիկոսը։– Հա՜, սա երևի ի նկատի ունի եբրայեցոց աստվածին։ Ես այդպես էլ գիտեի։ Սրա մտադրությունն է օտար որակել մեր եկեղեցին ու, նույն օրենքի տակ մտցնելով, արգելել այն։ Ես այդպես էլ գիտեի»։

– Ինչո՞ւ ես զարմանում, կաթողիկո՛ս։ Դու երբևէ չե՞ս մտածել ո՞ւմ ես երկրպագում, եթե իրոք երկրպագել ես։ Երկրպագե՞լ ես, թե՞ ձև ես արել։ Ես համոզված եմ, որ հավատացյալներն ավելի անկեղծ են իրենց երկրպագության մեջ, քան դու, կամ որևէ մեկը ձեր... կրոնավորների շարքում։ Ասա, տեսնեմ, դու ճանաչո՞ւմ ես նրան, ում երկրրպագում ես, կամ ձև ես արել, թե երկրպագել ես։ Կարո՞ղ ես մի քանի բառով, ասենք, բնութագրել նրան։ Փորձի՛ր։ Աստվածաբանության մեջ պիտի որ բավականին ճարտար լինես։

– Աստված մեծ է,– արագորեն վրա բերեց կաթողիկոսը։

– Դա դեռ ամբողջը չի։ Շարունակի՛ր։

– Անբացատրելի են նրա ուղիները։

– Նրա ուղիները հանգիստ թող։ Բնութագրիր նրա էությունը։

– Աստված մեծ է ու անսահման։

– Դա արդեն ասել ես։

– Նա սիրում է բոլորին։

– Բոլորի՞ն, նույնիսկ ոճրագործների՞ն։ Չլինի՞ ակնարկում ես, թե Աստծո պատվիրակն ես, որ եկել ես ներում հայցելու այդ երեք ոճրագործների համար։ Գուցե մյուս բոլորի համար է՞լ ես ուզում ներում խնդրել, որ գը-

նան ու շարունակեն իրենց ոճիրները։ Բայց անցնենք առաջ։ Ասացիր՝ Աստված մեծ է ու գթասիրտ։ Հետո՞։ Ի՞նչ գիտես Նրա էության մասին։

– Նա ամենազոր է։

– Կաթողիկո՛ս, դու դեռ շարունակում ես թվարկել Նրա էությունից բխող հատկությունները։ Անցնենք էությա՛նը,– զայրացած մեխեց Արքան։

Կաթողիկոսն անկեղծորեն շփոթվել էր։ Դա նրա ինտելեկտից դուրս էր արդեն։ Արքայի մտադրությունը չէր մերկացնել Աստծո իբր եբրայական լինելը։ Արքան այլ բան ի նկատի ուներ։ Բայց՝ ի՞նչ։

– Կաթողիկո՛ս,– շարունակեց Արքան,– հիշո՞ւմ ես, թե ինքն ինչ է ասել իր մասին։ «Ես եմ...» Մնացածը կարո՞ղ ես շարունակել։

– Ալֆա՞ն և Օմեգա՞ն։

– Վատ չի։ Ահագին բան ես հիշում,– ակնհայտ հեգնանքով վրա բերեց Արքան,– ավելի հասկանալի ոչինչ չի՞ ասել։

Կաթողիկոսն իրոք փակուղու առաջ էր։ «Էլ ի՞նչ,– մտածում էր նա։– Սա ո՞ւր է գնում, ի՞նչ է ուզում ինձանից։ Սա ի՞նչ դատավարություն է։ Դատավորի՛ս տեսեք»։

– Կաթողիկո՛ս, հապա հիշո՞ւմ ես՝ «Ես եմ ճշմարտությունը, լույսն ու ճանապարհը»։

Կաթողիկոսը կարծես մտաբերեց նման բան, բայց դեռ ոչինչ չէր հասկանում։

– Հասկանո՞ւմ ես, կաթողիկո՛ս, Աստված ասվածը հենց ճշմարտությունն է, ցանկացած ու ողջ ճշմարտությունը. և՛ գիտական, և՛ հոգևոր, և՛ անձնական։ Դրանից է, որ այն մեծ է, անսահման մեծ։ Աստված ասվածը նաև լույս է, որովհետև այն, այսինքն՝ ճշմարտությունը, լույսի շողի պես բացահայտում, մերկացնում ու վեր է հանում ամեն քողարկված, չարակամ միտում, ծրագիր ու գործ։ Աստված ասվածը, այսինքն՝ ճշմարտությունը, նաև միակ ճանապարհն է արդարության հասնելու համար։ Ի դեպ, ճշմարտության հոմանիշը արդարությունն է համարյա բոլոր լեզուներում։ Առաջին հերթին՝ մեր։ Հիմա հասկացա՞ր՝ ով է Աստվածը, կամ՝ ո՞րն է Աստված ասվածի էությունը։ Չեմ

կարծում, որ ճշմարտությունն ու արդարությունը քո Աստվածն են եղել, կաթողիկո՛ս։ Դու ուրիշ աստված ես երկրրպագել։ Ուրիշ աստվածի ես ծառայել։ Գուցե դրանի՞ց է, որ եկել ես ներում հայցելու Հայաստանի Հանրապետության երեք գլխավոր ոճրագործների համար։ Գթասրտությո՛ւնը չի, որ քեզ բերել է այստեղ։ Դու փորձում ես կախաղանից փրկել ոճրագործ հանցակիցներիդ, որ հերթը քեզ չհասնի, այդպես չէ՞։

– Դա անհիմն մեղադրա՛նք է,– պոռթկաց կաթողիկոսը։

– Անհի՞մն։ Դու իրո՞ք այդպես ես կարծում,– բացահայտ հեգնանքով արձագանքեց Արքան։

Բոլոր ներկաները չորացել էին տեղներում։ Ամեն ինչ այնքան էր խորացել, որ էլ ոչ մի հույս չկար որևէ խաղաղ կարգավորման վրա։

Կաթողիկոսը կատաղությունից կարմրել էր, սակայն անհույս էր համարում հակաճառելը։

Որոշ դադարից հետո Արքան շարունակեց.

– Անցնենք երկրորդ պատվիրանին։ Կաթողիկո՛ս, մեկ անգամ ևս հիշեցրու մեզ բոլորիս՝ ի՞նչ է ասում երկրորդ պատվիրանը։

– Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում,– ակնհայտորեն անձնատուր լինելով, արտաբերեց կաթողիկոսը մի փոքր հանդարտվելուց հետո։

– Իսկ հիշո՞ւմ ես, թե ինչ է ասել Քրիստոսը առաջին և երկրորդ պատվիրանների մասին։

Կաթողիկոսի դեմքին դարձյալ մի ապուշ արտահայտություն հայտնվեց։

– Չես հիշում։ Դու վերջին անգամ ե՞րբ ես կարդացել «Նոր Կտակարանը», կաթողիկո՛ս։

Կաթողիկոսի ապշահար դեմքն այլայլվեց։

Չսպասելով նրա պատասխանին, Արքան շարունակեց.

– Նա ասել է, որ այդ երկու պատվիրանները նման են։ Համարյա՝ նույնն են։

Սա նորություն էր կաթողիկոսի համար։

– Չես հասկանում, այնպես չէ՞։ Հիմա ուշադիր լսիր։ Գուցե գլխումդ չտեղավորվի, բայց լսիր,– շարունակեց Ար-

քան։

Նա մի փոքր շունչ առավ ու շարունակեց.

– Առաջին պատվիրանն ասում է՝ «Սիրիր Աստծուն...»։ Աստված ասածը քիչ առաջ տեսանք, որ ճշմարտությունն է ու արդարությունը։ Ուրեմն, առաջին պատվիրանը պատգամում է սիրել ճշմարտությունն ու արդարությունը, երկրպագել այն։ Այսինքն՝ պատրաստ լինել ամեն զոհաբերության հանուն ճշմարտության ու արդարության։ Հասկացա՞ր։

Կաթողիկոսը դարձյալ ընկավ ընդարմացման մեջ։

Արքան նկատեց դա, բայց շարունակեց.

– Ոչինչ, եթե չհասկացար։ Սա միայն ազնվարյուն մարդկանց է հասու։

Եվս մի փոքր դադարից հետո Արքան նորից դիմեց կաթողիկոսին.

– Խնդրում եմ մեկ անգամ ևս հիշեցրու մեզ երկրորդ պատվիրանը։

Կաթողիկոսն արդեն ակնհայտորեն ծաղրի առարկա էր դարձել։ Նրա կատաղությանը չափ ու սահման չկար, սակայն գլուխն ամեն գնով թակարդից պրծացնելու մղումը ստիպեց նրան կատարել Արքայի պահանջը։ Սրտից արյուն կաթելով, ու ձայնի մեջ ակնհայտ դող ու արհամարհանք խառնած, արտաբերեց.

– Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում։

– Շատ ապրես, կաթողիկո՛ս։ Կա՞ ավելի արդար մոտեցում, քան երկրորդ պատվիրանն է կոչում։

Տեսնելով, որ կաթողիկոսը արձագանքելու որևէ միտում չունի, Արքան շարունակեց.

– Ուրեմն, առաջին պատվիրանը կոչ է անում սիրել ճշմարտությունը, կամ՝ որ նույնն է՝ արդարությունը։ Իսկ երկրորդ պատվիրանը առաջինի կիրառման ձևն է ցույց տալիս. ապրել արդարաբար՝ հարգելով, կամ, որ նույնն է, սիրելով մեր մերձավորներին այնպես, ինչպես ինքներս մեզ։

Արքան մի փոքր էլ դադար առավ ու ասաց.

– Իսկ հիմա ասա, տեսնեմ, դու ապրե՞լ ես այնպես, ինչպես պատգամում է երկրորդ պատվիրանը։ Գոնե քա-

րոզե՞լ ես ապրել ըստ այս երկու հիմնարար պատվիրանների։

Կաթողիկոսն ասելու ոչինչ չուներ։

– Կաթողիկո՛ս, դու ո՛չ քարոզել ես, ո՛չ էլ ապրել ըստ Քրիստոնեության ուսմունքի հիմնարար դրույթների։ Դու միայն կույր հավատ ու հնազանդություն ես քարոզել անհայտ ու անբացատրելի մի էության հանդեպ։ Դու ահաբեկել ես ժողովրդին նրա հայտնի, մանավանդ անհայտ ու հանկարծահաս պատիժներով, միաժամանակ, սակայն, պնդելով, թե նա սիրում է բոլորին, նույնիսկ՝ ոճրագործներին։ Դու շեշտել ես իշխանավորներին հնազանդ լինելու անհրաժեշտությունը։ Կոչ ես արել ժողովրդին սիրել նրանց ու չըմբոստանալ իրենց տերերի դեմ, իբր «Աստված չի սիրում ըմբոստներին», ու նման այլ անհեթեթություններ։ Դու իրականում Քրիստոնեություն չես քարոզել։ Դու խաբել ու մոլորեցրել ես ժողովրդին, խավարի մեջ պահել նրանց՝ հլու ու հնազանդ։ Քո կեղծ քարոզների պատճառով է, որ մեր ժողովուրդը զոհ դարձավ անասելի հալածանքների, չիմանալով ի՞նչ անի՝ սուր վերցնի ու պաշտպանի իր և իր մերձավորների կյանքն ու արժանապատվությո՞ւնը, թե՞ ենթարկվի իր կողոպտիչներին, մատուցի մյուս այտը, հանի ու զոհաբերի վերջին շապիկը, նույնիսկ՝ իր ու իր մերձավորների կյանքը։ Դու և քո ողջ կառույցը միայն դեպի կործանում եք տարել մեր ազգին։ Իշխանավորների հետ համագործակցած, կեղեքել ու նվաստացրել եք երբեմնի արիասիրտ մեր ազգին։ Մեր ազգի հոգևոր ու ֆիզիկական կործանման ողջ մեղավորը դո՛ւ ես ու քո կեղծ կառույցը։ Քո եկեղեցում ոչի՛նչ չկա Քրիստոսի ուսմունքից։

Կաթողիկոսի ծնկները թուլացան ու նա ծնկի իջավ գլուխը կախ, ասես կյանք աղերսելիս։ Ձեռքի գավազանը թափով ընկավ հատակին ու ավելի ցնցեց առանց այդ էլ խորապես ցնցված ներկաներին։ Արքայի նշանով թիկնապահները մոտեցան ու, կաթողիկոսին ոտքի հանելով, դրեցին բազկաթոռի մեջ։ Նրա գավազանն այդպես էլ մնաց հատակին։ Սպասավորներից մեկը ջուր հասցրեց։ Կաթողիկոսն ագահորեն խմեց ջուրն ու, մի փոքր ուշքի գալով, դիմեց Արքային.

– Ի՛մ Արքա, բայց կան տերերին հնազանդ լինելու, հարստահարողներին մյուս այտն էլ մատուցելու, իշխանավորներին հնազանդվելու պատվիրաններ։ Ու Աստված իրո՛ք չի սիրում ըմբոստներին։ Ասում է, չէ՞ «սուր վերցրնողը սրով էլ կընկնի»։

– Իհարկե... Հիշում ես միայն այն, ինչ քեզ ու քո հանցակիցներին է ձեռնտու։ Բայց արի ու տես, որ բոլորովին մոռացել ես ամենահիմնարար պատվիրանները։ Մոռացել ես նաև, որ Քրիստոսն անձամբ մի քանի անգամ ճիպոտը ձեռքին, ջարդուփշուր անելով սեղանները, վտարել է բոլոր վաշխառուներին տաճարի հրապարակից։ Ամեն առիթով կշտամբել, վիրավորել ու պախարակել է բոլոր կրոնավորներին։ Ընդ որում, դա արել է անկախ նրանից, թե որտեղ է եղել՝ տաճարո՞ւմ, թե՞ փողոցում, նույնիսկ այն իրավաբանի տանը, ում մոտ հյուրընկալվել էր ու՝ հենց նրա հացի սեղանի վրա։ Սրանից էլ լավ ըմբոստությո՞ւն։ Նա պախարակել ու վատաբանել է ողջ եկեղեցական կառույցը, որի համար էլ սպանեցիք խեղճին։ Ըստ քեզ մյուս այտը պիտի մատուցեր, այնպես չէ՞։ Հնազանդ լիներ... Այո՛, սուր վերցրեց ու սրով էլ ընկավ։ Երբևէ չէ՞ս զարմացել, թե ինչու, քարոզելով, իրականում՝ խորհուրդ տալով մարդկանց մատուցել մյուս այտը, կամ ինքնակամ հանձնել վերջին շապիկը, ընդհանրապես՝ հնազանդվել տերերին ու չըմբոստանալ, ինքն անձամբ առճակատման դուրս եկավ, ըմբոստացավ։ Չե՞ս զարմացել։ Ընդհանրապես մտածե՞լ ես այս խնդրի շուրջ։ Գուցե չես էլ նկատե՞լ... Կաթողիկո՛ս, դու ընդհանրապես մտածո՞ւմ ես։

– Սա արդեն չափազա՛նց է,– փորձեց տեղից վեր կենալ կաթողիկոսը։

– Տե՛ղդ նստիր, ազգադա՛վ,– մեխեց Արքան։– Դու մեղադրվում ես քո՝ որպես ազգի հոգևոր առաջնորդի, դերը չկատարելու, քո ազգակիցներին լքելու, ավելի ճիշտ՝ միտումնավոր կերպով նրանց հոշոտման հանձնելու համար։ Ժողովրդին զանգվածաբար խաբելու ու մոլորեցնելու համար, հատկապես՝ որ Քրիստոնեությունն ուսմունքի փոխարեն նրանց մոլորեցրել ես ուսմունքի հետ կապ չունեցող ինչ-որ կրոնական դոգմաներով ու հնարովի ծիսակատա-

րությունններով։ Վախեցրել ես իբր Աստծո կողմից սահմանված պատիժներով, որ կերել ու խմել ես նույն այն ժողովրդի հացը, ում որ դավաճանել ես։ Վերջապես՝ որ անհարգալից վարք դրսևորեցիր Համայն Հայոց Արքայի հանդեպ, դրանով մեծագույն վիրավորանք հասցնելով ոչ միայն Արքային, այլ նաև նրան գահ բարձրացրած ժողովրդին։ Այսքանը բավական է քեզ ձերբակալելու համար։

Կաթողիկոսը չէր հավատում իրողությանը։

– Ձերբակալե՛լ սրան,– հրամայեց Արքան՝ դիմելով իր թիկնապահ գնդի հրամանատարին։

– Դու չես կարող, դու իրավունք չունես, դու...– չանչերն Արքայի կողմը պարզած՝ փորձեց տեղից վեր կենալ կաթողիկոսը։– Անիծվե՛ս դու... դժոխքի բաժին դառնաս, դո՛ւ էլ, երկի՛րդ էլ։

Կաթողիկոսի այս խոսքերի վրա, Արքայի թիկնապահ գնդի մարտիկները մոտեցան ու անմիջապես ձերբակալեցին նրան։

Ողջ տեսարանին լուռ հետևելուց հետո Արքան շարունակեց.

– Ձերբակալե՛լ նաև սրա հետ ժամանած բոլոր կրոնավորներին։ Եկեղեցու ողջ ունեցվածքը բռնագրավել։ Այդ ամբողջը կդառնա մեր ազգային ուսմունքն ուսուցանող ուսումնական համակարգի համար անհրաժեշտ տարածք։ Սկսել Էջմիածնի վանքից։ Բռնագրավել դրանց գաղտնի արխիվը, նաև՝ գրադարանն ու գանձարանը։ Բոլոր պատասխանատուներին ու սպասավորներին հատուկ առանձնացնել հարցաքննության։ Նրանցից ով կհամագործակցի, կըշարունակի աշխատել իր նախկին աշխատատեղում։ Ովքեր ոչ՝ մյուս բոլոր վանականների ու քահանաների հետ միասին հավաքել ու ցրել սահմանամերձ գյուղերում՝ որպես հողագործ ազատ շինականներ։

– Ի՛մ Արքա,– շտապեց առաջին խորհրդականը,– բայց եկեղեցում գույնե անմեղներ էլ կան։ Չարժի նրանց էլ պատժել մյուս բոլորի հետ միասին։

– Պատի՞ժ։ Դու իրո՞ք պատիժ ես համարում հողագործ ազատ շինականի կարգավիճակը։ Ուրեմն մեր գյուղերում ապրող բոլոր ազատ շինականներն ըստ քեզ իրենց պատի՞ժն են կրում։ Հետաքրքիր է։ Գույնե գիտե՞ս՝

ինչի համար...

– Ի՛մ Արքա, ներող եղիր, խնդրում եմ։ Ես ուրիշ բան ի նկատի ունեի,– անմիջապես փորձեց արդարանալ Վռամը։

– Եվ... Ի՞նչ։

– Ի՛մ Արքա, ես ուզում էի ասել, որ հողագործի աշխատանքը ծանր կլինի դրան անսովոր կրոնավորների համար։

– Գուցե... Բայց դու մոռանում ես, որ մեր ազատ շինականներն, իրոք, ազատ են։ Ազատ են հարկերից։ Ստիպված չեն վճարել ո՛չ հողօգտագործման համար, ո՛չ էլ՝ ջրի։ Ապրում են, ազատորեն օգտվելով մայր բնության բոլոր բարիքներից։ Ազատ են որևէ պարտավորությունից։ Թերևս, բացի մի բանից. մեր բանակի համար սննդի ապահովման նրանց սրբազան պարտքն ի նկատի ունեմ։ Մեր շինականներն իրենց սրբազան պարտքն են համարում կյանքում գոնե մեկ անգամ աշխատել մեր բանակի համար սննդի արտադրության Արքայական տնտեսություններում, կամ գոնե մեկ անգամ սննդամթերք նվիրաբերել մեր զինվորների համար։

– Ի՛մ Արքա, դա իրոք այդպես է։ Սակայն ես ուզում էի ասել, որ շատ կրոնավորների համար դա գուցե ուժից վեր աշխատանք կլինի։

– Աշխատա՞նք։ Ուժից վե՞ր։ Մի՞թե մայր բնության բարիքներից ազատորեն օգտվելը աշխատանք է, այն էլ՝ ուժից վեր։ Նրանցից ոչ մեկը պարտավոր չէ աշխատել Արքայական տնտեսություններում։ Մեր զինվորների լիարժեք սննդի ապահովման հարցն արդեն վաղուց լուծված է։ Մեր շինականները մեծ սիրով ու պատվով են կատարում իրենց սրբազան պարտքը։ Վերջապես, դա անում են իրենց զավակների համար՝ երկրի պաշտպանների։ Նրանց համար, ովքեր ապահովում են բոլորիս անդորրն ու խաղաղությունը։

– Բայց...

– Իզուր ես մտահոգվում, Վռամ,– կտրեց նրան Արքան։– Բոլոր կրոնավորներն, իհարկե, սկզբում կդժգոհեն իրենց նոր կարգավիճակից։ Բնական է, սովոր չեն սեփական ձեռքերով սնունդ հայթայթել։ Էլ չեմ ասում բանջա-

բանոցի կամ այգու խնամքի մասին։ Բայց հավատա՝ որոշ ժամանակ անց կզգան, որ չկա դրանից ավելի մեծ բերկրանք։ Այ, կտեսնես՝ էլ չեն ուզի վերադառնալ իրենց նախկին պորտաբույծ կյանքին։ Դու լավ գիտես, թե անձամբ ես ու իմ ողջ ընտանիքն ինչպիսի բերկրանքով ենք աշխատում մեր բանջարանոցում։ Իմ բոլոր երեխաները մի առանձնակի ոգևորությամբ են սպասում, թե երբ ենք գնալու մեր ամառանոցը՝ հողի վրա աշխատելու, կամ սարերի գրկում անցկացնելու գոնե մի երկու օր։ Դու շատ լավ գիտես՝ ինձ որ մնար հետ չէի վերադառնա այնտեղից։ Եվ ինձ պես իմ ողջ ընտանիքն ու շատ շատերը։ Տեսա՞ր, հենց ազատեցինք շինականին բոլոր տեսակի հարկերից, քաղաքները համարյա դատարկվեցին։ Մարդիկ ինքնակամ ու զանգվածաբար դուրս եկան քաղաքներից, վերադարձան իրենց հայրենի ոստանները։ Վտարանդի մեր ազգակիցները վերջապես տուն վերադարձան։ Ընտանիքներ միավորվեցին, գերդաստաններ ամբողջացան, ու բոլորն էլ ապրում են ազատ ու երջանիկ։ Ասա, տեսնեմ, սա պատի՞ժ ես համարում, թե՞ պարգև։

– Ի՛մ Արքա...

– Իզուր ես անհանգստանում։ Նրանց մեծամասնությունը շինականների զավակներ են,– դարձյալ կտրեց Արքան,– գիտեն ինչ է պետք անել։ Կան, իհարկե, նաև այնպիսիներն, ովքեր քաղաքային կյանքից բացի բան չեն տեսել, անհույս գիրացել ու հոռացել են։ Դրանց հետ, անկասկած, դժվար է լինելու։ Դրանց կցեք մի շինականի գերդաստանի՝ որպես օգնական, թող սովորեն։ Եթե համառեն ու չսովորեն, կամ փորձեն փախչել, բռնեք ու պատժեք ամենայն խստությամբ։ Առաջինի պատիժը դաս կլինի բոլոր նրա նմանների համար։

– Ի՛մ Արքա, կարվի այնպես, ինչպես կամեցար,– համարյա միաժամանակ ասացին երկու խորհրդականները։

– Ի՛մ Արքա, իսկ կաթողիկոսին ի՞նչ է լինելու,– հարցրեց Սարգիսը՝ Արքայի երկրորդ խորհրդականը։

– Դրա հետ դեռ չեմ վերջացրել։ Դրան հարկավոր է հիմա մեկուսացնել։– Ու, շրջվելով դեպի նախարարների խորհրդի նախագահն, հրամայեց.

– Աթոյա՛ն։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Երբ ավարտվի մյուս բոլոր կրոնավորների ձերբակալումն ու եկեղեցու ողջ ունեցվածքի ազգայնացումը, ազգային հեռատատեսությամբ կհեռարձակես իմ ու կաթողիկոսի այսօրվա երկխոսությունը։ Հուսով եմ այն տեսագրվել է առանց ընդհատումների,– ասաց Արքան՝ միաժամանակ հայացքն ուղղելով արքայական արխիվի կառավարչի կողմը։

– Ի՛մ Արքա, ամեն բան կարգին է։ Ինչպես միշտ, ամեն բոպեն տեսագրված է,– ասաց վերջինս, իր պատասխանը տեսագրող խմբի պատասխանատուի հետ հեռակա կապի միջոցով արագորեն ճշտելուց հետո։

– Հեռարձակման ընթացքում տեսագրված ժապավենի ոչ մի կտոր չկտրել։ Ցույց կտաս ողջ ժապավենը։ Մարդկանցից որևէ բան թաքցնելը մեծագույն անպատվություն է, վիրավորանք՝ նրանց հասցեին։ Մենք ազգովի միմյանցից թաքցնելու ոչինչ չունենք՝ չհաշված անվտանգության ոլորտի որոշ մանրամասներ, բնականաբար,– շարունակեց Արքան՝ հայացքը դարձյալ ուղղելով դեպի Ամոյանը։– Իսկ ժապավենը, մի քանի անգամ Ազգային հեռատատեսությամբ ցույց տալուց հետո, կհրապարակես դատավճիռս։

Ամեն ինչ շատ արագ էր կատարվում։ Արքայի առաջին խորհրդականը կամուկացի մեջ էր։

– Ի՛մ Արքա, թույլ տուր խոսել,– դիմեց Արքային նա։

– Խոսիր, Վռա՛մ։

– Ի՛մ Արքա, իսկ գուցե դատավարությո՞ւն կազմակերպենք, ինչպես կարգն է,– անհանգիստ տոնով վրա բերեց նա։

– Դատավարությո՞ւն։ Էլ ի՞նչ դատավարություն։ Հանցանքի վայրում տեսագրված հանցագործի դատը ո՞րն է։ Նա, ով անիծում է Արքային ու ողջ երկիրը, հենց տեղում էլ պիտի գլխատվեր,– ասաց Արքան,– այդպես չէ՞։

Առաջին խորհրդականը համոզված չէր։ Նա մի հայացք գցեց երկրորդ խորհրդականի կողմը։ Սարգիսը մըտքերի մեջ էր ու չնկատեց իր կողմը նայող Վռամին։

Արքան, տեսնելով, որ իր երկու խորհրդականները միաձայն չեն կաթողիկոսի հարցում, փորձեց բացատրել

իրավիճակի էությունը։

– Հասկանո՞ւմ եք, բարեկամնե՛րս, հետաքննություն անցկացնում են, երբ առկա է որևէ դիպված, մանավանդ՝ հանցանք, բայց դեռ պարզ չեն բոլոր հանգամանքները, դեռ անհայտ են հանցագործության դրդապատճառները, հատկապես՝ հանցագործի ով լինելը։ Հետաքննությանը հաջորդող դատավարության ողջ ընթացքում էլ կրկին անգամ քննվում, վերաքննվում ու համեմատվում են հետաքննության բոլոր բացահայտումները, մանավանդ՝ բացթողումներն ու սխալները։ Տվյալ դեպքում ո՛չ հետաքննության կարիքը կա, ո՛չ էլ որևէ դատավարության։ Ամեն բան տեսագրված է ու պարզ։ Իսկ ինչ վերաբերում է եկեղեցական ողջ կառույցին, ապա այն հակասահմանադրական է ու վաղուց պիտի լուծարվեր։ Բայց, եթե մտածում եք դատ կազմակերպել, անցկացնել համաժողովրդական հանրաքվե այնպես, ինչպես Հայաստանի երրորդ հանրապետության երեք նախագահների դեպքում արեցինք՝ ներկայացրեք, խնդրեմ, ձեր փաստարկները՝ ինչո՞ւ։

Բոլորը մտքերի մեջ էին։ Մի փոքր դադարից հետո Արքան շարունակեց.

– Քանի դեռ մտածում եք... Երեք նախագահների դեպքում ամեն ինչ դեռ պարզ չէր։ Կային բաներ, որ ինքս էլ չգիտեի։ Այդ ոճրագործներն ամեն բան թաքուն էին արել, հատուկ ուշադրություն դարձնելով իրենց ոճիրները սքողելու վրա, մասնավորապես՝ խճճելու բոլոր հետքերը։ Բացի դրանից ներկա, հատկապես երիտասարդ սերունդը, բացարձակապես ոչինչ չգիտեր մանավանդ առաջին նախագահի ու նրա թիմակիցների գործած բոլոր ոճիրների մասին։ Հետևաբար, հետաքննությունն ու հատկապես բաց դատավարությունն անհրաժեշտ էին երրորդ հանրապետության առաջին երեսուն տարվա անցքերն ու հանգամանքները վեր հանելու ու մարդկանց, հատկապես երիտասարդ սերնդին ամենայն մանրամասնությամբ ներկայացնելու համար, այլապես հնարավոր չէր լինի նրանցից արդար դատավճիռ ակնկալել։ Բայց սրա դեպքն ուրիշ է։– Արքան ի նկատի ուներ կաթողիկոսին։– Սրա բոլոր խոսքերը տեսագրված են, հատկապես՝ անեծքները, իմ ու ողջ երկրի հասցեին։ Իսկ ինչ վերաբերում է եկեղեցուն, ապա, ինչ-

պես գիտեք, այն հակասահմանադրական է ու վաղուց պի-տի լուծարվեր։ Ի դեպ, մեր պատմագրությունն ավելի, քան բավարար, նյութ է բացահայտել եկեղեցու հազար յոթ հարյուրամյա ազգադավ ու ազգակործան գործունեության մասին։ Ոչ մի լրացուցիչ հետաքննության կարիքը չկա, ոչ էլ՝ որևէ դատավարության։ Ոչ մի նոր հանգամանքի կամ փաստարկի վերաճշտման կարիքը չկա։ Ամեն բան արդեն փաստված ու հայտնի է՝ ի շնորհիվ մեր պատմաբանների բազմամյա ջանքերի։ Երեք հարյուր մեկից սկսած սրանք դավել են ու թունավորել մեր արքաների կյանքը, սպանել նրանց։ Երկիրը մատնել խավարի ու թշվառության, այն, ի վերջո, հանձնելով թշնամուն, միայն թե իրենցից բարձր հայազգի ոչ մեկը չլինի երկրում։ Բարեկամնե՛րս, ամեն բան փաստված է ու պարզ։ Մարդիկ շատ վաղուց էին սպասում եկեղեցու հարցում իմ որոշմանը։ Նույնիսկ զար-մացած էին՝ եկեղեցուն դեռ իր տեղում տեսնելով։ Վաղուց էր ժամանակը՝ վերացնելու բացիլների այդ օջախը մեր մարմնից։ Ամեն դեպքում, ըստ մեր Ազգային Սահմանա-դրության, երկրում ոչ մի կրոնական կառույց չի կարող գործել։ Մեր երկրում պիտի ուսուցանվի միայն մեր ազ-գային՝ Արարչական, ուսմունքը։

Բոլորը լուռ էին։ Տեսնելով, որ ոչ ոք որևէ ընդդի-մադիր կարծիք չունի, Արքան շարունակեց.

– Կաթողիկոսի մեղադրականն արդեն կա տեսագրր-ված ժապավենի վրա։ Իսկ դատավճիռա՝ մահապատիժ։ Սրան կկախեք այն երեքի հետ միասին. նույն օրը, նույն ժամին, նույն տեղում։ Չնայած, սրան կարելի էր ցցի հա-նել։

Կաթողիկոսը կիսամեռ ընկած էր բազկաթոռին։ Նա նույնիսկ չէր էլ լսում՝ ինչ են խոսում իր շուրջը։

– Իսկ հիմա մեկուսացնել սրան,– ասաց Արքան՝ հա-յացքը չկտրելով կաթողիկոսից,– ու անհապաղ անցնել մյուսներին ձերբակալելու և եկեղեցու ողջ ունեցվածքը ազգայնացնելու գործին։ Միայն՝ զգույշ, ու շատ արագ։

– Ազա՛տ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– անմիջապես արձագանքեց Արքայի թիկնապահ գնդի հրամանատարը։

– Ազա՛տ, կաթողիկոսին հենց հիմա մեկուսացնել

առանձին սենյակում ուշադիր հսկողության տակ, սա դեռ ինձ պետք է ողջ և առողջ, ու անցնել սրա հետ ժամանած մյուս կրոնավորներին ձերբակալելուն։

– Ի՛մ Արքա, հասկացա,– արձագանքեց Ազատն ու նշան արեց, որ թիկնապահ գնդի մարտիկներից երկուսը ստանձնեն կաթողիկոսի «խնամակալությունը»։

Արքայի թիկնապահ գնդի մարտիկները կիսամեռ կաթողիկոսին մեծ դժվարությամբ հանեցին բազկաթոռից ու դուրս տարան Արքայի ընդունարանից։

***

Արքան, լինելով Համակարգի անվտանգության ծառայության գերագույն հրամանատարը, դիմեց այդ կառույցի ընդհանուր հրամանատարին.

– Արշա՛կ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– արձագանքեց վերջինս։

– Արխի՛վը, Էջմիածնի գաղտնի արխիվը,– մեծ անհանգստությամբ շեշտեց Արքան։– Արխիվն առաջին հերթին։ Գրադարանը, նաև՝ եկեղեցու ողջ համակարգչային ցանցն ու համացանցային հաղորդակցությունը։ Ամեն, ամեն ինչ։

Արքան ակնհայտորեն մտահոգված էր։ Նույնիսկ ամենաբծախնդիր ու փոխհամաձայնեցված գործողությունների ընթացքում կարող էին վրիպումներ լինել։ Իսկ վրիպումներ չէր կարելի թույլ տալ։ Եկեղեցին դարերի փորձ ունեցող ճիզվիտային կառույց էր, խարդավանքների ու գաղտնի գործունեության հսկայական փորձ ունեցող ցանց։ Կրոնավորները չափազանց զգուշավոր մարտավարություն ունեին ու վտանգի հոտը շատ հեռվից էին առնում։

– Արշա՛կ, դու ես այս հույժ կարևոր գործողության պատասխանատուն։ Ինչպես միշտ՝ կապն անմիջապես ինձ հետ։ Ի գո՛րծ։ Հա՛, դրանց բանկային հաշիվները։ Չմոռանաս դրանց բանկային հաշիվները, նաև՝ բոլոր կրոնավորների անձնական հաշիվները, մասնավոր սեփականությունն ու անձնական ունեցվածքը։

– Ի՛մ Արքա, մի անհանգստացիր։ Քո նվիրյալ սպաները վաղուց են սպասում այս օրվան, որպեսզի ի կատար

ածեն ծրագիրդ։ Եկեղեցու և՛ ներսի, և՛ դրսի բանկային հաշիվների ու սեփականության մասին լիարժեք տեղեկություններ ունենք։ Արդեն երկար ժամանակ է հետևում ենք նրանց ամեն քայլին։ Ծրագրի ամեն փոկ վաղուց արդեն ունի իր փոխհամաձայնեցված տեղն ու պատասխանատու սպան։ Ողջ օպերացիան շատ անգամ ենք պարապել։ Ամեն ինչ կարվի, ինչպես ասում են, ժամացույցի ճշգրտությամբ։ Անակնկալները բացառվում են։

– Չգիտեմ, Արշակ, չգիտեմ,– ասաց Արքան՝ կիսով չափ մտքերի մեջ խորասուզված,– անակնկալներ միշտ էլ կլինեն։ Ո՞վ կմտածեր, որ կաթողիկոսն իր ոտքով կգա մեզ մոտ, հետն էլ՝ մի ողջ շքախումբ։ Կարծես Արարիչն անձամբ հանձնեց սրանց մեր ձեռքը, ահագին հեշտացնելով մեր գործը։ Բայց ամեն դեպքում անակնկալ էր, ծրագրից դուրս։

– Ի՛մ Արքա, եկեղեցու արտասահմանյան բանկային հաշիվների հարցն է դժվար լինելու, նաև՝ շինությունների։ Հետո՝ կրոնավորներից ոմանք օտարերկրյա քաղաքացիներ են,– հավելեց Արշակը։

– Սրիկանե՛ր։ Դրանք օտարության մեջ մի՛շտ են իրենց լավ զգացել,– չդիմացավ Արքան։

Նա կրկին խորասուզվեց մտքերի մեջ. «Բայց ինչո՞ւ են դրանք միշտ իրենց լավ զգում դրսում։ Հա՜, որովհետև դրսում համայնքի ամենաբարձր մարմինն են եղել միշտ։ Դրսում միշտ էլ դուրս են եղել հայոց արքաների տիրապետության ոլորտից։ Սրիկանե՛ր»։

Վերջին մտքի վրա Արքան սթափվեց.

– Արշա՛կ, ի գո՛րծ։ Չի՛ կարելի հապաղել։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Թույլ տուր գնալ։

– Գնա, Արշա՛կ։ Միայն՝ զգույշ։

Արշակն անմիջապես գլուխ տվեց Արքային ու դուրս եկավ նրա ընդունարանից։

***

– Ի՛մ Արքա, հիմա կհրամայե՞ս ձերբակալել սպասասրահում հավաքված կրոնավորներին,– խոսեց Ազատը՝ Արքայի անձնական թիկնապահ գնդի հրամանատարը։

– Հա, Ազա՛տ, անցիր գործի։ Միայն այնպես, որ չը-

հասցնեն որևէ ուղերձ դուրս ծնգացնել։ Թե չէ՝ ողջ օպերացիան կարող է վտանգվել։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Թույլ տուր կատարել։

– Հա, Ազա՛տ։ Դրանց բոլորին առանձին-առանձին կմեկուսացնես մինչև օպերացիայի ավարտը։

Ազատը գլուխ տվեց ու, համապատասխան հրահանգներ տալով, մի խումբ մարտիկների հետ միասին անցավ գործի։

Արքան դարձյալ խորասուզվեց մտքերի մեջ։ «Աստված իմ, միայն առանց անակնկալների։ Օգնի՛ր։ Հազար յոթ հարյուր տարի այս օրվանն ենք սպասել։ Դո՛ւ էլ ես սպասել։ Օգնի՛ր ժողովրդիդ։ Տեսա՞ր՝ ոտքի կանգնեց, ուշքի եկավ, որոշում ընդունեց։ Ճիշտ է, կան դեռ որոշ մորթապաշտ սրիկաներ, բայց մեծամասամբ սթափվել են, վերածնունդ ապրել։ Հասկացան խոնարհ մշակիդ ասելիքը, ընդունեցին օրենքներդ։ Շատ են փոխվել։ Դու էլ ես տեսնում, որ փոխվել են։ Դեպի լավն են փոխվել։ Քո զավակներն ենք, չէ՞։ Ո՞ր ծնողը չի ուրախանա իր զավակների առաջընթացով։ Ու դեռ շատ բան կարող ենք անել։ Ինձ լուրեր են հասնում, որ մեր օրինակով ոտքի են կանգնում մեր հարևան ժողովուրդները։ Սառույցը շարժվում է։ Չնայած դեռ շատ բան կա անելու, բայց մեր ժողովուրդն արդեն ավելի երջանիկ է, քան առաջ։ Վերջապես, դա է, չէ՞, ամենակարևորը։ Մարդը ծնվել է երջանիկ ապրելու համար, չէ՞։ Եթե մարդը երջանիկ չի ապրում, ուրեմն ընդհանրապես չի ապրում։ Չէ՞ որ երջանկությունն է մարդու բնական վիճակը։ Մարդը ծնվում է երջանկությունից ու երջանկության մեջ։ Դո՛ւ ես այդպես սահմանել։ Մեզ էլ կերտել ես քո նմանությամբ։ Ա՜, ուրեմն դու էլ չես կարող առանց երջանկության։ Ուրեմն դու էլ... Բա երջանկություն չի՞ տեսնել զավակներիդ լավ գործերը։ Ուրեմն՝ օգնի՛ր։ Ասել ես, չէ՞, որ եթե մենք մի քայլ անենք դեպի քեզ, ապա դու երկու քայլ կանես դեպի մեզ։ Ասել ես, չէ՞, որ եթե ապրենք ըստ քո սահմանած օրենքների, ապա երկնքի դռները կբացես մեր առաջ։ Ճիշտ է, մեծ դժվարությամբ, հսկայական դիմադրություններ հաղթահարելով, բայց ժողովուրդդ ընդունեց օրենքներդ։ Տեսար, չէ՞, ինչպես վերացրեցինք կապիտալիզմը՝ կողոպուտն ու անար-

դարոփթյունը։ Ձավակներդ ապրում են ազատ՝ այնպես, ինչպես Նահապետ Հայկի ժամանակներում։ Թոթափեցինք Բելի լուծը։ Բայց ի՞նչ եմ էսքան քաշքշում փեշերիցդ։ Ո՞վ ձեռքս հանձնեց կաթողիկոսին ու նրա ողջ շքախումբը, ասես՝ սկոտեղի վրա։ Բա դրանից առաջ... Չէ՜, բողոքելու տեղ չունեմ։ Գոհ եմ ու համոզված, որ կօգնես Արշակին։ Բացիլների այդ օջախը պիտի վերացվի, ու նո՜ր հանգիստ շունչ կքաշենք։ Քաղաքներից ու գյուղերից կհավաքենք ամենարնդունակ պատանիներին, կուսուցանենք նրանց մեր նախնյաց ճշմարիտ ուսմունքը, կվերականգնենք մեր կորցրածը։ Որքա՜ն եմ ափսոսում, որ այս ամենը շուտ չեղավ։ Որքա՜ն արիասիրտ մարդ խելագարվեց ու կորավ։ Նրանց համար շատ մեղավոր եմ զգում ինձ։ Ամեն անգամ աչքիս առաջ են, երբ ուրախ եմ։ Հանկարծ գալիս են ու մնում։ Գուցե ուզում են, որ սթափվեմ, չթուլանամ... Գիտեմ՝ պետք է զգոն մնալ։ Դեռ թշնամիներ շատ կան և՛ ներսում, և՛ դրսում»։

***

Արքայի այս վերջին մտքի վրա ներս մտավ Ազատը։

– Ի՛մ Արքա, թույլ տուր զեկուցել։

– Ասա, Ազա՛տ։

– Ի՛մ Արքա, ամեն բան կարգին է։ Կաթողիկոսի շքախումբը ձերբակալված է։ Նրանց վարորդներին նույնպես... շատ քաղաքավարի հրավիրեցինք մեքենաները ներս քաշել ու ձերբակալեցինք։ Բոլորը մեկուսացված են։ Մնում է Արշակից լուր առնենք։

– Շա՛տ ապրես, Ազատ։ Դրանց վարորդների մասին չէի մտածել։ Հո չհասցրեցի՞ն ձեռքները հեռախոսներին տանել։ Ստուգեցի՞ր դրանց վերջին ուղերձները։

– Ի՛մ Արքա, ոչ ոք չհասցրեց ձեռքը հեռախոսին տանել։ Միայն վարորդներից մեկն էր հեռախոսով խոսում, երբ սկսեցինք ներս հրավիրել։ Բայց ոնց որ բան չկասկածեց։ Ընդհատեց խոսակցությունն ու մեքենան հանգիստ ներս քաշեց։ Ի՛մ Արքա, ուզո՞ւմ ես ստուգենք ում հետ էր խոսում։

– Չէ, դա երկար կտևի։ Արշակն արդեն սկսել է։ Դրանց ճամբարում արդեն խլրտում է։

Օպերացիան, իրոք, ընթացքի մեջ էր։ Արշակի հրամանով Վաղարշապատի գունդն անցել էր գործի։ Վանքի հեռախոսային ու համացանցային կապը կտրելուն պես, գնդի սպաները ներս էին մտել ու անմիջապես ձերբակալել բոլորին։

Այդ պահին զանգահարեց Արշակը։ Թիկնապահ գնդի մարտիկները հեռախոսը փոխանցեցին Արքային։

– Ասա, Արշա՛կ։ Ի՞նչ կա։

– Ի՛մ Արքա, ամեն բան գնում է ըստ ծրագրի։ Եկեղեցու բանկային հաշիվները սառեցված են, նաև՝ բոլոր կրոնավորների անձնական հաշիվները։ Կտրել եմ նրանց կապը դրսի հետ։

– Իսկ արխի՞վը։ Արխի՛վը,– անհանգստացավ Արքան։

– Արխիվը վերցված է։

– Փառք Աստծո,– մի փոքր հանդարտվեց Արքան։– Լավ… Մնացածը հետո կզեկուցես։ Իսկ դրանց արտասահմանյան շինությունների, բանկային հաշիվների ու ողջ ունեցվածքի հարցերը կլուծես արտաքին գործերի նախարարի հետ միասին։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Ես նրան կասեմ, որ օպերացիան արդեն սկսված է, ու որ ամեն ինչում աջակցի քեզ։ Նա քեզ կզանգի։ Առայժմ։

Արքան ընդհատեց կապն ու, շրջվելով դեպի նախարարների խորհրդի նախագահն, հրամայեց.

– Աթոյա՛ն, արտաքին գործերի նախարարին կցիր գործին։ Թող Արշակի հետ համագործակցի։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Աթոյանն ու անցավ գործի։

Արքան մի քիչ թեթևացած հետ ընկավ, բայց էլի լիովին հանգիստ չէր։ Կրկին խորասուզվեց մտքերի մեջ. «Դրսի ուժերը մի բան էլ ունեցան ասելու, մի մեծ բան։ Լավ չի»,– մտածեց Արքան։ Բայց, մի փոքր մտորելուց հետո. «Չէ, ինչո՞ւ լավ չի… Չկա չարիք առանց բարիք։ Եկեղեցու վերացման շուրջ աղմուկ-աղաղակն իր վրա կվերցընի ողջ ուշադրությունը։ Լա՜վ էլ ժամանակին եղավ, լավ

էլ՝ ժամանակին։ Ո՞նց չհավատաս, որ Արարչի մատն էր խառը։ Իհա՛րկե, Նրա մատն էր խառը։ Ու ինչպե՞ս գոհ ու շնորհակալ չլինես։ Նա մեր կողմից է կռվում ու շատ անգամ՝ մեր փոխարեն։ Նույնն է արել մեր նախնյաց համար։ Մեր բոլոր արքաներն ունեցել են Նրա աջակցությունը։ Բայց չէ, թերևս՝ ոչ բոլորը ու ոչ միշտ... Եղել է ժամանակ, երբ չնայած ճիշտ որոշումներ ու ծրագրեր են ունեցել, այնուամենայնիվ խարդավանքների զոհ են դառել։ Ինչո՞ւ»։ Այս հարցը միշտ էր մտահոգել Արքային։ Նա դեռ հստակ պատասխանը չգիտեր։ «Ինչո՞ւ Արարիչը մենակ թողեց Արշակ արքային, Պապին...» Պատասխանը չկար։ Չէր գալիս։ «Ինչո՞ւ հիմա համատարած անարդարություն կա աշխարհում։ Ինչո՞ւ ազնվասիրտ, տաղանդավոր ու բարի մարդիկ տեղ չունեն այս աշխարհում։ Ինչո՞ւ են ստիպված տառապել ու հետապնդվել, ճնշվել ու խելագարվել, խոշտանգվել ու սպանվել»։ Պատասխանը չկար։ Ոչ մի պատասխան չէր տեղավորվում Արքայի գլխում։ «Ինչո՞ւ են ոճրագործներն իշխում ողջ աշխարհում»։ Արքան արդեն զայրանում էր, որ չէր գտնում պատասխանը։ «Ո՞րն է Արարչի նպատակը։ Պիտի որ մի նպատակ ունենա, չէ՞։ Աննպատակ ոչինչ չկա, այնպես, ինչպես որ չկան պատահականություններ։ Ամեն ինչ պատճառ ունի, չէ՞։ Ի՞նչ փոխվեց, որ Նա երես թեքեց մեզնից։ Դարեր շարունակ պահում, պահպանում էր, կռվում էր նույնիսկ մեր փոխարեն։ Դարեր շարունակ ամեն բան լավ էր։ Բայց հանկարծ մի բան փոխվեց։ Ամեն ինչ սկսեց ճախ գնալ։ Ինչո՞ւ։ Երբվանի՞ց։ Ա՜, էլի էն չարաբաստիկ երեք հարյուր մեկից։ Կրոնավորները մտան ու քանդեցին, ավերեցին ամեն բան, ամայացրին երկիրը։ Բայց հետո ոտքի կանգնեցինք, ապաքինվեցինք... Թե՞ չապաքինվեցինք։ Դե, իհարկե, չապաքինվեցինք։ Վիրավոր ու խոշտանգված, բացիլը մարմնում՝ ի՞նչ ապաքինվել։ Հիվանդությունը խորացավ։ Բացիլները բազմացան ու տարածվեցին։ Տարածվեցին ու հզորացան։ Խեղեցին մարմինը։ Թունավորեցին ու բզկտեցին։ Երբեմնի արիասիրտ ազգը դարձավ խառնամբոխ՝ աննպատակ ու անկազմակերպ մի ժողովուրդ։ Թունավորված ու բզկտված մարմնին գլուխն ի՞նչ աներ։ Ինչ էլ

աներ, բան չէր փոխի, նույնիսկ ինքը զոհ կդառնար։ Ու հենց այդպես էլ եղավ։ Քանի՜, քանի՜ արքայի կյանք թունավորեցին։ Քանի՜, քանիսին սպանեցին։ Մարմինը գըլխից զրկելուց հետո մագլցեցին վեր, գլխի ձև ընդունեցին ու... Անգլուխ ու բզկտված մարմինն ի՞նչ աներ։ Ոչինչ՝ բացի մեռնելուց ու ավելի ծանրացնելուց վիճակը։ Ասենք՝ չէ, ապաքինման փորձեր միշտ էլ արել է, երբ նպաստավոր պայմաններ են եղել։ Փորձել է վերականգնվել։ Գըլուխներ են եղել։ Բայց կտրել են բոլորին։ Չեն թողել, որ հզորանան, չեն թողել, որ մարմինն ապաքինվի։ Թունավորել են ու խժռել։ Խժռել են առողջ տարրերին կամ դուրս մղել երկրից։ Բայց, երբ շատ շատացան բացիլները, սկսեցին արդեն միմյանց խժռել։ Ահա և մեր ներազգային գզվռտոցի ողջ պատկերը։ Մտել էինք ինքնաոչնչացման ռեժիմի մեջ։ Սրա վերջը մարմնի լիակատար մահն էր։ Բայց, փառք Աստծո, վերագտանք մեր կորցրած արժեհամակարգը։ Թեկուզ դանդաղ, բայց հաստատուն քայլերով այն սկսեց մաքրել մարմինը, պաշտպանեց առողջ տարրերին։ Թույլ չտվեց, որ թունավորվեն ու փչանան։ Մեծացան ու հզորացան նրանք, հզորացան ու շատացան։ Մարմինն ապաքինվեց։ Բացիլների շարքերը նոսրացան։ Ըրանց ոհմակը փոքրացավ։ Հիմա գլուխ ունենք, ազգ ենք՝ մեջք-մեջքի, ուս-ուսի։ Էլ չենք բզկտում իրար, կամ՝ խաբում ու լափում։ Ազատվել ենք Բելի գերությունից։ Ու, առաջվա պես, Արարիչը մեր մեջքին է։ Առաջվա պես կըռվում է մեր կողքին, երբեմն էլ՝ մեր փոխարեն։ Հազար յոթ հարյուր տարի պահանջվեց, որ նորից ազգ դառնանք, վայելենք Նրա օգնությունը։ Ուրեմն, այդ օգնությունը մեզնի՞ց էր կախված։ Դե, իհարկե... Փոքր Մհերը հենց դա՛ էր ասում։ Ինչո՞ւ շուտ չհասկացանք։ Ինչքա՜ն ազնվասիրտ մարդ խելագարվեց, անհետ կորավ ու գնաց։ Չէ՛, անհետ չգնաց։ Հազար յոթ հարյուր տարի շարունակ նրա՛նք են ողջ պահել մարմինը, որ հասնի այս օրվան, ընդունի դեղամիջոցն ու սկսի ապաքինվել՝ ազգ դառնալ։ Մեզ այլևս ոչինչ չի սպառնում։ Չէ՛, սպառնո՛ւմ է։ Բացիլներ միշտ էլ կան ու կլինեն։ Դրանց միայն կոտորել է պետք, մաքրել մարմինը, անընդհա՛տ, օր ու գիշե՛ր. չթողնել, որ շատանան ու ոհմակներ կազմեն։ Ոհմակների դեմ դժվար է, շատ

դժվար։ Դեղամիջոցը կորցնել չի կարելի։ Առանց մեր ուսմունքի, առանց մեր ազգային արժեհամակարգի ամեն ինչ կփլվի»։

***

– Ի՛մ Արքա, թույլ տուր խոսել,– երկար լռությունը խախտեց առաջին խորհրդականը։

– Ասա, Վռա՛մ,– արձագանքեց Արքան, դեռ մտքերի մեջ խորասուզված։

– Ի՛մ Արքա, բայց կաթողիկոսի փաստարկները կարծես սխալ չեն...

– Որո՞նք։

– Այն, որ կան տերերին հնազանդ լինելու, վերջին շապիկն էլ զոհաբերելու, մյուս այտն էլ դարձնելու, թշնամիներին սիրելու և այլ պատվիրաններ։ Ի՞նչ վատ բան կա, երբ ժողովուրդը հնազանդ է։ Վերջապես, ասված է՝ սուր վերցնողը սրով էլ կընկնի։

Արքան սթափվեց։

– Նախ՝ դրանք պատվիրաններ չեն, Վռա՛մ, իմաստնություններ են ու խորհուրդներ։ Իհա՛րկե, սուր վերցնողը սրով էլ կարող է ընկնել։

– Իմաստնությունն՞ը։

– Բա իհարկե։ Իմաստնություններ, խորհուրդներ, նախազգուշացումներ։ Ասենք օրինակ՝ «Ինչ չափանիշով որ դատես, նույն չափանիշով էլ քեզ են դատելու»։ Նախազգուշացո՛ւմ է։ Հո չի՞ ասել՝ մի դատիր ընդհանրապես։ Ասել է՝ մի դատիր, որ չդատվես։ Այսինքն, եթե ուզում ես, որ չդատեն քեզ, առաջինը դու մի դատիր ուրիշին։ Սա մի՞թե պատվիրան է, կամ՝ արգելք։ Սա առաջին հերթին կյանքի դիտարկումների վրա հիմնված իմաստնություն է ու խորհուրդ-նախազգուշացում։ Մարդը զգուշացնում է։ Ասում է, եթե դատես, ապա քեզ էլ կդատեն, ընդ որում՝ նույն չափանիշով։

– Այո։ Թերևս, նախազգուշացում է,– մտքերի մեջ խորասուզված, արտաբերեց Վռամը։

– Վռա՛մ, եղբա՛յրս, պատվիրանները, կամ՝ ուսմունքի դրույթները, «եթե»-ով չեն սկսվում։ Բայց հետաքրքիր

է, որ դրա հետ մեկտեղ ինքն անձամբ դատել է։ Ասել է՝ «Դիմացինի աչքի փուշը տեսնում եք, ձեր աչքի գերանը չեք տեսնում»։ Սա քննադատել կամ դատել չի՞։ Մի կողմից քարոզում է՝ մի դատեք, մյուս կողմից ի՞նքն է դատում։ Տարօրինակ չի՞, որ ուսուցիչն իր քարոզների հակառակն է անում։

– Իրոք, որ իր քարոզների հակառակն է արել։ Շատ հետաքրքիր է,– արձագանքեց Վռամը դեռ մտքերի մեջ խորասուզված։

– Կամ՝ քարոզել է սուր չվերցնել, բայց ինքն է վերցրել...

Մի փոքր դադարից հետո Արքան շարունակեց.

– Ասում ես՝ հնազանդ... Իշխանավորներին հնազանդվելն ավելի շատ խորհուրդ է։ Դա՛ էլ պատվիրան չի։ Խորհուրդ է տվել ինքնակամ վերջին շապիկն էլ հանել, տալ, որովհետև հակառակ դեպքում ոչնչի առաջ չեն կանգնի՝ կաշիդ էլ հետը կհանեն։ Մարդը շատ լավ ճանաչել է իշխանավորների տմարդի բնույթն ու զգուշացրել, համապատասխան խորհուրդ տվել։ Ի դեպ, չըմբոստանալու կոչերն էլ նույն պատճառով է արել՝ զգուշացնելու համար, խորհրդի կարգով։ Բայց ինքն ըմբոստացա՛վ, սո՛ւր վերցրեց։ Վերցրեց, չէ՞։ Դարձյալ տարօրինակ չի՞, որ քարոզում է չըմբոստանալ, բայց ինքն անձամբ ըմբոստանում է։ Խորհուրդ է տալիս չհակառակվել, բայց ինքն անձամբ հակառակվում է կրոնավորներին։ Ասում ես՝ հնազանդ։ Չկա՛ նման բան՝ ընդհանրապես հնազանդ։ Հնազանդվում են կամ միայն բարուն, կամ միայն չարին։ Չնայած, չարի ու բարու բաժանարար սահմանի փշալարերին թառածներ էլ կան։ Արարիչը հատկապես սրա՛նց չի սիրում։ Չի սիրում, որ ո՛չ էն ա բացահայտ բարու կողմն են, ո՛չ էն ա բացահայտ՝ չարի։ Կեղծավորնե՛ր։ Ո՞ւմ են ուզում խաբել, Արարչի՞ն։ Ավելի են զայրացնում։ Դու գիտե՞ս ում դեմ էր այդքան զայրացած Քրիստոսը։ Հենց՝ կեղծավորների։ Նա երբեք չի վատաբանել ո՛չ գողերին, ո՛չ ավազակներին, ո՛չ էլ մարմնավաճառներին։ Դիմելով փարիսեցիներին ու սադուկեցիներին՝ հենց այդպես էլ ասել է. «Դո՛ւք, կեղծավորնե՛ր, իժի ծնունդնե՛ր...»։ Ամենազզվելին նրանք են, ով-

քեր առերևույթ պարկեշտ մարդու դիմակ են կրում, բայց տակից ոճրագործ են։ Գողերը չեն ասում, թե գող չեն, ոչ էլ՝ մարմնավաճառները, թե մարմնավաճառ չեն։ Դա չի նշանակում, իհարկե, որ Արարիչը սիրում է նրանց, բայց ամենազզվելին կեղծավորներն են։ Դրա՞նք են հենց այն ըմբոստները, ում մասին ասված է, որ «Աստված չի սիրում ըմբոստներին»։ Ու այնպես, ինչպես հնազանդությունը, չկա նման բան՝ ընդհանրապես ըմբոստ։ Ըմբոստանում են կամ միայն բարու, կամ միայն չարի դեմ։ Արարիչը չի սիրում իր՝ ճշմարտության, արդարության ու բարու, դեմ ելածներին։ Նա ոչ մի խոսք չի ասել չարի դեմ պայքարողների մասին, ո՛չ մի։ Կրոնավորները դարեր շարունակ մոլորեցրել են բոլորին իրենց մեկնաբանություններով։

Ներկաները լուռ լսում էին Արքայի բացատրությունները։

– Ասում ես՝ հնազանդ ժողովուրդ։ Չէ՛, մեզ հնազանդ ժողովուրդ պետք չի,– շարունակեց Արքան։– Կուրորեն հընազանդ ժողովուրդ պետք է եղել միայն ոճրագործ իշխանավորներին։ Մենք իշխանություն չենք։ Մենք պետություն ենք։ Մեզ պետք է մեր ազգային արժեհամակարգի՝ մեր ուսմունքի, շուրջ համախմբված ազգ, ում կարելի է վստահել ցանկացած պատասխանատու գործ, ում կարիք չկա հրահանգներ տալ ու հետևել, կամ պատժամիջոցներով ահաբեկել, որ կատարեն հրահանգը։ Մեզ պետք է ազգ, որին պետք չեն ո՛չ կառավարիչներ, ո՛չ էլ նույնիսկ արքաներ՝ ճշմարիտ ուղու վրա մնալու համար։ Այլապես ոչինչ չի ստացվի։ Այլապես չենք կարողանա վերամիավորել մեր պատմական տարածքները, չենք կարողանա կրթել մյուս բոլոր ազգերին ու ժողովուրդներին։ Նույնիսկ չենք կարողանա պահել մեր պատմական հայրենիքի հրաշքով պահպանված այս վերջին բեկորը։

Արքան դարձյալ խորասուզվեց մտքերի մեջ։ Մեր պատմական տարածքների հարցը հեշտերից չէր։ Սակայն դրա լուծման բանալին, անկասկած, մեր ազգային արժեհամակարգի շուրջ համախմբված ազգն է։ Ուրիշ տարբերակ չկա։ «Բայց ինչպե՞ս բացատրեմ մարդկանց, որ ուժով չի կարելի վերցնել,– մտածում էր Արքան,– որ մեր

արքաները ուժ են գործադրել մեր հարևան ժողովուրդնե-
րին իրենց բռնակալներից ազատագրելու համար միայն։
Արդար կարգ ու կանոն են հաստատել ու հետ վերադար-
ձել։ Ինչպե՞ս բացատրեմ, որ միայն ազատագրված ժողո-
վուրդների խնդրանքով են միացրել նրանց մեր երկրին։
Ճիշտ է, մեր կորցրած տարածքները մերն են, բայց ուժով
չի կարելի վերցնել։ Միայն անձնական օրինակով է պետք,
միայն սեփական երկրում արդար կարգ ու կանոն, հե-
տևաբար նաև երջանիկ կյանք հաստատելով։ Միայն այդ
դեպքում բոլոր ժողովուրդների ցանկությունը կլինի մի-
նալ մեր երկրին, ապրել մեզ հետ միասին, այն ազգի
հետ, ով գիտի արդար ու երջանիկ կյանքի գաղտնիքը։
Ինչպե՞ս բացատրեմ, որ արիասիրտ չի նշանակում ռազ-
մատենչ, որ արիասիրտ նշանակում է միայն արդարու-
թյան, բարու ու գեղեցիկի համար ինքնազոհաբերության
պատրաստ։ Ինչպե՞ս բացատրեմ, որ մեր արևխաչը ոչ մի
ռազմական առընչություն չունի։ Որ այն միայն Արարչա-
կան է, ու որ հենց տիեզերքի արարման խորհրդանշանն
է»։

– Ի՛մ Արքա, բայց ոչ ոք երբեք այլ մեկնաբանու-
թյուններ չի պատկերացրել,– լռությունը խախտեց Վռամը։

Արքան սթափվեց իր մտքերից։

– Ու ամենակործանարարը մեզ համար «Սիրիր թշնա-
մուդ» պատվիրանն է եղել։ Դարեր շարունակ դրա պատ-
ճառով ենք քանդվել ու քայքայվել,– շարունակեց նա։

– Իհարկե... Միանգամայն ճիշտ է։ Ավելի ճիշտ, դրա
սխալ ընկալման պատճառով։ Նույնիսկ հիմա դեռ շատ,
շատերը պատվիրանների ճշմարիտ ընկալում չունեն։

Մի փոքր շունչ առնելուց հետո Արքան շարունակեց.

– «Սիրիր թշնամուդ», ասացի՞ր։ Անշուշտ, այն շատ
վնասներ է տվել։ Հիմա էլ շատերը չեն կռահում՝ ինչի մա-
սին է խոսքը։ Նրանք համարյա ոչինչ չեն նկատում։ Չեն
նկատում, որ ընդհանրապես Քրիստոսի խոսքն ուղղված է
եղել միայն իր հետևորդներին՝ իր աշակերտներին, նը-
րանց, ովքեր մկրտվել, կնքվել ու խոստացել էին ապրել՝
ըստ իր ուսմունքի հիմնարար պատվիրանների։ Չեն նկա-
տում, որ նրա ուսմունքի բոլոր դրույթներն ու ենթադրույթ-

ները, «Սիրիր թշնամուդ» պատվիրանը ներառյալ, վերաբերում են միայն նրանց՝ իր ուսմունքի հետևորդներին։ Այսինքն՝ «թշնամի» ասելով, Քրիստոսն ի նկատի չունի իր հետևորդների համայնքից դուրս որևէ անհատի, տոհմի, ժողովրդի կամ ազգի։ Խոսքը միայն իր ուսմունքի հետևորդների նեղ շրջանակի մասին է, միայն իր հետևորդների համայնքի անդամների մասին։

– Ի՛մ Արքա, բայց այդ դեպքում ի՞նչ թշնամի,– զարմացավ Վռամը։– Փաստորեն, եթե միևնույն ուսմունքի հետևորդ եղբայրների համայնք է, էլ ի՞նչ թշնամու մասին է խոսքը։

– Պատվիրանի մեջ «թշնամի» չի նշանակում չարակամ մրցակից կամ ախոյան։ Ինչ բառ էլ որ գործածվել է բնօրինակում, ի նկատի չի ունեցել ամբարիշտ, չարամիտ ախոյան։ Տես... Սովորաբար, մեզ խրատողին, կամ մեր մասին ճակատներիս ճշմարտությունն ասողին, մենք թշնամի ենք համարում, այդպես չէ՞,– ասաց Արքան։

– Ճիշտ է։ Ամեն դեպքում հաճույքով չենք լսում,– համաձայնեց Վռամը։

– Ա՛յ, հենց նրանց էլ ի նկատի է ունեցել Քրիստոսը՝ «թշնամի» ասելով։ Ով էլ խրատի մեզ, կամ թեկուզ ճշմարտությունն ասի մեզ մեր մասին, ապա միանգամից մեր աչքի փուշն է դառնում՝ մեր «թշնամին»։ Ով ուզում է լինի՝ պապդ, հայրդ, հորեղբայրդ, եղբայրդ, թե որևէ հասակակից։ Միանգամից մեր «թշնամին» է դառնում, երբ խրատում, կամ մեր մասին ճշմարտությունն է ասում մեզ։

– Ի՛մ Արքա, իսկ սիրե՞լը,– անմիջապես հետաքրքրվեց Սարգիսը՝ Արքայի երկրորդ խորհրդականը։

– Սարգի՛ս, որոշ թարգմանություններում «սիրել»-ուն համարժեք գործածվում են «գնահատել» ու «հարգել» բառերը։ Փաստորեն, «սիրիր» ասելով, ի նկատի ունի գնահատելն ու հարգելը։ Տվյալ դեպքում, ըստ էության, կոչ է անում գնահատել ու հարգել մեր մասին ճշմարտությունն ասող ու մեզ խրատող համայնքի անդամին, մեծահասակ լինի նա, թե՝ հասակակից։

– Ի՛մ Արքա, բայց որոշ տեղերում կոչ է արել սիրել նույնիսկ նրանց, ովքեր փորձում են խաբել մեզ, մոլորեց-

նել ու շահագործել,– շարունակեց Սարգիսը։– Այս դեպքում և՞ս խոսքը իր հետևորդների նեղ խմբի մասին է։

– Մի զարմացիր, Սարգի՛ս։ Նրա խոսքը երբեք օտար մարդկանց չի վերաբերել։ Նրա բոլոր պատվիրանները, խրատներն ու խորհուրդները միայն իր հետևորդների նեղ խմբին են վերաբերել։

– Այդ դեպքում չեմ հասկանում։ Ուրեմն, նույնիսկ, իր հետևորդների նեղ խմբի մեջ հնարավո՞ր է համարում խաբեբաների գոյությունը։

– Սարգի՛ս, նույնիսկ կատարյալ մարդիկ երբեմն կարող են սայթաքել, սխալվել՝ տեղի տալ որոշ կենդանական բնազդների՝ եսասիրություն, ագահություն և այլն,– պատասխանեց Արքան։

– Ի՛մ Արքա, Քրիստոսը, փաստորեն, կոչ է արել սիրե՞լ դրանց, հարգե՞լ,– շարունակեց Արքայի երկրորդ խորհրդականը։

– «Սիրել» չի ասել, Սարգի՛ս։ Հիշո՞ւմ ես՝ ինչպես է պատգամել վարվել նման դեպքերում։

– Լավ չեմ հիշում...

– Այն դեպքերում, երբ միևնույն համայնքի մարդիկ փորձում են խաբել, մոլորեցնել, եսասիրաբար շահագործել և այլն, Քրիստոսը կոչ է արել կրկնակին տալ։ Ասում է, չէ՞, իհարկե փոխաբերական իմաստով. «Եթե ուզում են, որ մի մղոն գնաս հետները, երկուսը գնա»։ Այսինքն՝ եթե որևէ քանակի նյութական բարիք են ուզում, կամ՝ ժամանակ, որ տրամադրես իրենց՝ կրկնակին տրամադրիր։

– Բայց ինչո՞ւ, ի՛մ Արքա,– զարմացավ Սարգիսը,– ա՛յ, դա արդեն չեմ հասկանում։

– Ճիշտ է։ Սա մի փոքր դժվար է, բայց պատասխանը հետևյալն է՝ որ ամաչեն իրենց արածից, որ ամաչեն ու փոխվեն։ Որովհետև դա է միակ ճանապարհը։ Բայց միայն միևնույն համայնքի մարդը, թոնդ Արարչական գենակիրը կարող է ամաչել ու փոխվել, իր ուզածի դիմաց կրկնակին ստանալով։ Օտարը չի կարող։ Օտարն անհույս է։ Օտարը, որքան էլ վերցնի, չի հասկանա իր արածի հրեշավորությունը։ Քեզ միամիտ հիմար կհամարի ու կշարունակի ավելին պոկել։

– Հասկացա,– բարձրաձայն մտորելով՝ արձագանքեց

Սարգիսը։

– Ի դեպ, օտարներին Քրիստոսն անձամբ ուսմունքից ոչինչ չի բացատրել։ Չի էլ օգնել։ Քանանացի կնոջ դեպքը հիշեք... Նույնիսկ, երբ այդ կինը խնդրում է Քրիստոսին իր տուն գալ ու բուժել իր դստերը, Քրիստոսը հրաժարվում է, ասելով, որ ինքը շների համար չի եկել։

– Ի՛մ Արքա, հիշեցի։ Ընդհանրապես քարոզել է. «Խոզերի առաջ մի՛ փռեք ձեր մարգարիտները»,– ասաց Վռամը։

– Այո՛։ Այսինքն, օտարներին մի՛ բացատրեք ուսմունքը, որովհետև այդ ուսմունքն օտարների համար չի։ Ուսմունքը միայն թունդ Արարչական գենակիրների համար է, միայն աղնվասիրտ մարդկանց համար։ Միայն արդարամիտ մարդը կարող է հասկանալ ու ընդունել ուսմունքը։ Միայն թունդ Արարչական գենակիրը կարող է ապրել ըստ ուսմունքի։ Հիշո՞ւմ եք՝ ինչ է ասել. «Եթե մի գյուղում կամ քաղաքում ձեզ չեն լսում, չեն հասկանում, թափ տվեք փոշին ձեր ոտքերի ու հեռացեք այդտեղից»։ Բայց խոզերի առաջ մարգարիտներ չփռելու պատգամը նաև ուրիշ միտում ունի։ Նա պատգամել է խոզերին ուսմունքից ոչինչ չասել ոչ միայն, որովհետև նրանց չի վերաբերում, ոչ միայն, որովհետև անհույս է, որ ժամանակի անտեղի կորուստ է, այլ նաև, որովհետև կթքեն ձեր սրտի մեջ, կվիրավորեն, կծաղրեն։ Կհավաքվեն ողջ ոհմակով ու կպախարակեն։ Գուցեև, խոշտանգեն, նույնիսկ՝ սպանեն։ Իր հետ ինչպե՞ս վարվեցին։ Չգիտե՞ր, որ այդպես են վարվելու, կհարցնեք։ Գիտե՛ր, իհարկե։

– Ի՛մ Արքա, հապա, ինչո՞ւ արեց,– հարցրեց Վռամը։

– Չէր կարող չանել, Վռա՛մ։ Արիացու սիրտ ուներ։ Ո՞նց կարող էր տեսնել անարդարությունը, մանավանդ՝ կեղծավորությունն ու լուռ մնար, սուր չհաներ։ Սուր վերցրեց ու սրով էլ ընկավ, արիաբա՛ր։

– Ի՛մ Արքա, բայց չեմ հասկանում, թե մահվանից առաջ, խաչի վրա ինչո՞ւ ասաց. «Ներիր նրանց, որովհետև չգիտեն՝ ինչ են անում»,– փորձեց շարունակել Վռամը։

– Վռա՛մ, էդ խոսքերը չեն վերաբերում նրանց, ովքեր իրեն մահապատժի էին դատապարտել՝ ջհուդ կրոնավոր-

ներին, ում դեմ, որ սուր էր հանել, ում դեմ, որ զայրացած էր։ Այդ խոսքերն իրեն մահապատժի ենթարկող հռոմեացի զինվորներին էին վերաբերում, ովքեր չէին լսել ուսմունքը ու չգիտեին իր ով լինելը։

Մի փոքր մտորելուց հետո, Արքան շարունակեց.

– Ի դեպ, «Սիրիր մերձավորիդ...» պատվիրանը, նույնպես, վերաբերում է իր հետևորդների նեղ խմբին, այլ ոչ թե՝ բոլորին։

– Ինչպե՞ս,– զարմացավ առաջին խորհրդականը։ Նրա հետ միասին նաև՝ երկրորդը, ու, երկուսը միասին, ապշահար ու կլանված սկսեցին հետևել Արքայի խոսքին։

– Մի՛ զարմացեք, բարեկամնե՛րս, Քրիստոսը բոլորի տեղն էլ գիտեր, համապատասխան բառն էլ։ Զարմանալի չի՞, որ գործածել է «մերձավոր» բառը, ամեն տեղ՝ «մերձավոր» բառը։ Նույնիսկ, երբ իրեն լսող հրեաներից մեկը, ի դեպ՝ աշխարհում դեռ միակ մարդը, վերջապես հարցնում է՝ «Ուսուցիչ, իսկ ո՞վ է իմ մերձավորը», Քրիստոսը չի պատասխանում, թե՝ «բոլորը»։ Հիշո՞ւմ եք՝ ինչպես է պատասխանում։

– Ի՛մ Արքա, հիշում եմ բարի սամարացու պատմությունը,– արձագանքեց Վռամը,– բայց...

– Այո, սկսում է պատմություն պատմել մի բարի սամարացու մասին։ Այն սամարացիների, ում հրեաներն ատում էին։ Պատմությունը պատմել վերջացնելուց հետո հարցնում է՝ «հիմա, ո՞վ է քո մերձավորը»։ Այսինքն՝ հասկացա՞ր պատմության ուղերձը, որ բոլորը չեն, այլ՝ միայն նա, ով բարի է դիմացինի հանդեպ, ով նույնիսկ անծանոթ մեկին վերաբերվում է այնպես, ինչպես կուզեր, որ իրեն վերաբերվեին։

– Ի՛մ Արքա, բայց հարցը տված հրեան, կարծեմ, ոչինչ չի պատասխանում։

– Իհարկե, չի պատասխանում։

– Բայց ինչո՞ւ։

– Որովհետև ճիշտ պատասխանից կերևար, որ հասկացել է պատմության ուղերձը։ Իսկ ցանկացած ճշմարիտ գիտելիք պարտավորեցնող է։ Իր վրա որևէ պարտավորություն չվերցնելու համար ձևացնում է, թե չի հասկացել։

Դա, իհարկե, ենթագիտակցաբար բոլորն են անում։ Պարտադիր չի հրեա լինել՝ այդքան խորամանկ լինելու համար։ Փաստորեն, իր պատմությամբ Քրիստոսն ասում է, որ բոլորը չեն մեր մերձավորները, այլ միայն նրանք, ովքեր մեզ պես բարի են դիմացինի հանդեպ, թունդ Արարչական գենակիրներ են՝ իր ճշմարիտ հետևորդները։

– Ի՛մ Արքա, բայց պատմության մեջ սամարացին օգնում է իրենց թշնամի ժողովրդից մեկին...– փորձեց պարզաբանում ստանալ Վռամը։

– Այսինքն, ուզում ես ասել, թե Քրիստոսն, այնուամենայնիվ, կոչ է արել սիրել բոլորի՞ն, նույնիսկ՝ հակառակորդ ազգի մարդկա՞նց։

– Չգիտեմ։ Գուցե... Չեմ կարող հաստատ ասել,– մտքերի մեջ խորասուզված արտաբերեց Վռամը։

– Չէ, ուշադրություն դարձրու, որ պատմության մեջ ավազակների կողմից կողոպտված, ծեծված ու ճամփեզրին անօգնական թողնված հրեան անգիտակից վիճակում է մնում պատմության ողջ ընթացքում։ Կարող էր, չէ՞, օրինակ, կեսից ուշքի գալ ու... Պատկերացնո՞ւմ ես, եթե նա անգիտակից վիճակում չլիներ ու տեսներ, որ իրեն օգնում է հակառակորդ ազգի մարդը։ Ասենք, օրինակ՝ այդ հրեայի փոխարեն դու ես։ Ուշքի ես գալիս ու տեսնում, որ քեզ օգնում է թուրքը, այլ ոչ թե՝ քո ազգակիցներից որևէ մեկը։ Պատմությունը միանգամայն ուրիշ ուղերձ կունենար։ Ավելի ճիշտ՝ երկու ուղերձ կխառնվեին իրար։

– Ի՛մ Արքա, բայց ինչո՞ւ է պատմության մեջ ծեծված ու անօգնական ճամփեզրին ընկածը հրեա, օրինակ, այլ ոչ թե՝ սամարացի,– հարցրեց Սարգիսը։

– Որովհետև, հարցնողը հրեա է։ Պատմությունը պատմվում է հարցը տված հրեային։ Եթե հարցը տված լիներ մի որևէ սամարացի, ապա պատմության մեջ ծեծված ու ճամփեզրին անգիտակից ընկած զոհը կլիներ սամարացի, իսկ օգնողը՝ հրեա։ Քրիստոսն ամեն դեպքում կերտել է չեզոք զոհի կերպար՝ հարցնողին ազգակից ու անգիտակից։ Նրա միակ նպատակն է եղել ցույց տալ օգնողի՛ կերպարը, այլ ոչ թե օգնող-զոհ փոխհարաբերությունը։

– Ի՛մ Արքա, համոզիչ էր։ Հիրավի, խորաթափանց ու

ճշգրիտ մեկնաբանություն,– ասաց երկրորդ խորհրդականը։

– Սարգի՛ս, դու փորձում ես միավորներ հավաքել,– կատակեց Արքան։

Սարգիսն Արքայի ամենամտերիմ խորհրդականն էր, ու ժպիտով ընդունեց Արքայի կատակը։

– Ի՛մ Արքա, այնուամենայնիվ, հակասություն եմ տեսնում նրա մյուս ասածի հետ, «Ի՞նչ մի մեծ բան եք անում, որ սիրում եք նրանց, ովքեր սիրում են ձեզ։ Դա հեթանոսներն էլ են անում։ Ես պատգամում եմ ձեզ սիրել բոլորին»,– փորձեց շարունակել նա։

– Շա՜տ տեղին հիշեցիր, Սարգի՛ս։ Դա ավելի հետաքրքիր է,– ուրախությամբ արձագանքեց Արքան։– Այստեղ ամենակարևորն այն է, որ տարբերենք «մեզ սիրողներին» բարի ու առաքինի մարդկանցից։ Այս երկուսը միշտ չի, որ նույնն են։ Մեզ կարող են սիրել, այսինքն՝ մեր հանդեպ հարգանք, կամ, ավելի ճիշտ, շողոքորթ ու կեղծավոր վերաբերմունք ունենալ ամբարիշտ, չար ու կեղծավոր մարդիկ։ Իր պատգամի առաջին մասում Քրիստոսը հենց սրանց կողմնակալ մոտեցումն ի նկատի ունի՝ «դու՝ ինձ, ես՝ քեզ» մշակույթը՝ ընծաներով, կաշառքով ու քծնանքով մեկը մյուսին սիրաշահելու հեթանոսների արատավոր վարքը։ Այսինքն, ասել կուզի՝ մի՛ արեք այն, ինչ նրանք են անում։ Մի՛ եղեք նրանց պես կողմնակալ։ Մի՛ սիրեք նրանց, ովքեր նվերներով ու քծնանքով փորձում են շահել ձեր սիրտը։ Ինքներդ մի՛ փորձեք սիրաշահել նրանց նույնպիսի նվերներով, քծնանքով, կաշառքով կամ կեղծավորությամբ։ Փաստորեն, ասում է՝ վերացրեք ձեր միջից նվերին նվերով, հաճոյանալուն հաճոյանալով, կամ քծնանքին քծնանքով պատասխանելու արատավոր հեթանոս սովորույթը։ Հեթանոս ասելով, ի դեպ, ի նկատի ուներ այն ժամանակ տարածված հունա-հռոմեական մշակույթի կրողներին։ Քրիստոսի պատգամի երկրորդ մասը հասկանալու համար պետք է չմոռանալ, որ նրա ամեն պատգամ ուղղված է իր հետևորդների նեղ խմբին։ Փաստորեն, այստեղ պատգամում է սիրել այդ խմբի բոլոր անդամներին՝ անկախ մեր հանդեպ նրանց ցուցաբերած վերաբերմուն-

քից, կողմնակալ լինի այն, թե՝ անկողմնակալ։ Կամ, այլ կերպ ասած, պատգամում է միևնույն վերաբերմունքն ունենալ և՛ նրանց հանդեպ, ովքեր կողմնապահությունն անելով, մեզնից թաքցնում են մեր մասին ճշմարտությունը, և՛ նրանց հանդեպ, ովքեր առանց կողմնապահության մեզնից չեն թաքցնում մեր մասին ճշմարտությունը։ Կամ, ավելի պարզ ասած, պատգամում է ավելի սիրով չվերաբերվել նրանց, ովքեր մեզ սիրաշահում են այս կամ այն կերպ։ Քրիստոսը, հավատացած եմ, պատգամել է՝ հեռու մնացեք, նույնիսկ հեռացրեք ձեր համայնքից բոլոր կեղծավորներին, ձեզ քծնողներին ու սիրաշահողներին, նաև՝ բաժակաճառեր ասողներին ու կենացներ խմողներին, սակայն այս մասին չեն գրել։

– Հետաքրքիր է։ Իսկ ես կարծում էի, թե, այնուամենայնիվ, պատգամել է սիրել բոլորին, այն էլ՝ հավասարապես,– շարունակեց Սարգիսը։

– Ոչ, Սարգի՛ս, միայն բոլոր իր հետևորդների համայնքի անդամներին։ Մի մոռացիր, որ այդ համայնքի անդամները՝ իր հետևորդները, իր պես մկրտված մարդիկ էին՝ եղբայրների ու քույրերի համայնք։ Հետևաբար, Քրիստոսը պատգամել է սիրել նրանց, ովքեր թոմդ Արարչական գենակիրներ են, հոգեհարազատ էակներ։

– Բայց, արդյո՞ք, մեծ բան է սիրել հոգեհարազատ մարդկանց։ Չէ՞ որ դա այդքան էլ դժվար չէ։ Բոլորն են անում դա՝ առանց որևէ պատգամի,– շարունակեց Սարգիսը։

– Ա՜… Վերջապես, հասանք ամենահետաքրքիր հարցին՝ Քրիստոնեությունն ուսմունքի բուն էությանը։ Որն, ի դեպ, հենց մեր նահապետական ուսմունքի բուն էությունն է,– արձագանքեց Արքան մեծ խանդավառությամբ։– «Դըժվար չի», ասում ես։ Տեսնենք… Հասկանո՞ւմ ես, ամբողջ գաղտնիքն այն է, որ «սիրել» բառը ուսմունքի հիմնարար՝ «Սիրիր մերձավորիդ այնպես, ինչպես քեզ ես սիրում», պատվիրանում չի նշանակում միայն քաղաքակիրթ ու հարգալից վերաբերմունք ունենալ։ Այն ավելի՛ մեծ բան է նշանակում։ Ու հենց դա են մեզնից գաղտնի պահել կրոնավորները երկար ու ձիգ դարեր շարունակ։ Կրոնավոր-

ների հրեշավորությունը հենց այն է, որ, թաքցնելով ուսմունքի ողջ իմաստը, ամբողջովին խեղաթյուրել են այն։ Բավական չի, որ ուսմունքը կրոնի են վերածել, դեռ կարողացել են իրենց կրոնական քարոզներն այնպես կազմակերպել, որ դրանց մեջ բացարձակապես ոչինչ չհուշի ուսմունքի բուն էության մասին։

– Ի՛մ Արքա, իսկ ո՞րն է դա,– անսահման հետաքրքրությամբ առաջ թեքվեց Արքայի առաջին խորհրդականը, նրա պես նաև՝ երկրորդ խորհրդականն ու մյուս բոլորը։

– Դա՞... Հավասարությունը,– ասաց Արքան։

Բոլորի համար անակնկալ էր Արքայի պատասխանը։

– Բարեկամնե՛ր, եթե դուք իսկապես սիրում եք ձեր մերձավորին՝ ձեզ հոգեհարազատ՝ ձեզ պես բարի ու ազնիվ, թունդ Արարչական գենակիր մեկին այնպես, ինչպես ինքներդ ձեզ, ապա չեք շահագործի նրան, թույլ չեք տա, որ նա ունենա ավելի քիչ, քան դուք։ Ասենք, օրինակ՝ եթե դուք այսօր ունեք երկու լավաշ, իսկ ձեր եղբայրն ունի միայն մեկը, ի՞նչ կանեք, եթե սիրում եք նրան այնպես, ինչպես ինքներդ ձեզ,– հարցրեց Արքան։

Բոլորը լուռ էին։

– Եղբայրնե՛ր, դուք ձեր երկրորդ լավաշի կեսը կտաք նրան։

– Ի՛մ Արքա, բայց դա կոմունիզմ է,– արտահայտվեց Սարգիսը։

– Վախեցա՞ր... Միանգամից հիշեցիր գաղափարի բոլշևիկյան՝ բռնի, իրականացումը։ Բայց հիշենք, որ ուտոպիստ-սոցիալիստների մոտ ոչ մի բռնի մոտեցում չկար։ Նրանք, ի դեպ, իրենց գաղափարները վերցրել են հենց Քրիստոնեություն ուսմունքից։ Փաստորեն, կարողացե՛լ են դուրս գալ կրոնական կառույցի ծանր բեռի տակից ու տեսնել ուսմունքի բուն էությունը, որն, ի դեպ, շատ դժվար չէր։ Բավական էր կարդալ «Նոր Կտակարանի» «Գործք առաքելոց» գիրքը։ Այնտեղ մանրամասն նկարագրված է եղբայրաբար ապրող առաջին դարի Քրիստոնյա համայնքների կյանքը,– շարունակեց Արքան։– Բայց մեզ համար ամենակարևորն այն է, որ հենց նույնպիսի համայնքներով ու նույն ուսմունքով են ապրել մեր նախնիները Հայկ Նահապետի ժամանակ, նրանից առաջ ու նրանից հետո։

Մեր նախահայր Նահապետ Հայկը կռվի ելավ Բելի՝ կապիտալիզմի, դեմ՝ պաշտպանելու մեր նահապետական ուսմունքն ու կարգը։ Նահապետական Հայաստանում հարուստ ու աղքատ չի եղել։ Չի եղել ճորտ ու ճորտատեր։ Հին Հայաստանում մարդիկ ապրել են այնպես, ինչպես առաջին դարի Քրիստոնյա համայնքները, եղբայրաբար՝ միմյանց հետ հավասարապես կիսելով իրենց ունեցած-չունեցածը։ Հենց այդ հավասարության շնորհիվ է, որ հզոր ու անպարտելի ազգ ենք եղել։ Աղքատը, կեղեքվածը, հարբստահարվածն ու ստորացվածը հարուստի համար զենք չէր վերցնի, կռվի չէր ելնի։ Մենք եղել ենք եղբայրների ու քույրերի, իրավահավասար ու հավասարազոր անհատների հասարակություն։ Հենց այդ ժամանակներից էլ մեզանում մնացել են միմյանց «եղբայր»-ով, «հայրիկ», «մայրիկ»-ով, «քույր» ու «մորաքույր»-ով, «տատիկ», «պապիկ»-ով դիմելու ձևերը։ Մեր նախահայրերի հասարակությունը կարելի է անվանել նահապետական սոցիալիզմ, եթե կուզեք, կամ՝ միապետական սոցիալիզմ։ Մեր Ազգային Սահմանադրության մեջ հենց այդպես էլ ամրագրված է՝ «Հայաստանի Թագավորությունը սոցիալական միապետություն է»։ Ու հենց դա՛ է մեր նպատակը՝ «Ոսկի քաղաք»-ը։ Հիշո՞ւմ եք։ Ա՛յ, հենց այդպիսի «ոսկի քաղաք», ավելի ճիշտ՝ «ոսկի պետություն» պիտի կառուցենք։ Մեր նախնյաց նահապետական սոցիալիզմը, ուր չկար մարդու կողմից մարդու շահագործում ու նվաստացում։

***

Այդ պահին ներս մտավ Արքայի անձնական քարտուղարության գլխավոր քարտուղարն ու դիմեց Արքային.

– Ի՛մ Արքա, թույլ տուր դիմել։

– Ասա, Պարգև՛։

– Ի՛մ Արքա, ներող եղիր, բայց մի շարք երկրների դեսպաններ ընդունելություն են հայցում, հավանաբար, երեք դատապարտյալների մահապատիժը կանխելու միտումով։ Ի՞նչ ենք անելու։

– Սկսվե՞ց։ Ինչպես միշտ, նրանց բոլորին կընդունի նախարարների խորհրդի նախագահ Աթոյանը։ Ես դես-

պաններ ընդունում եմ միայն, երբ նոր են նշանակվել ու գալիս են ներկայանալու։ Դրանից հետո՝ ոչ մեկին։

– Ի՛մ Արքա, բայց շատ են անհանգստացած։ Անընդհատ հեռախոսազանգեր են հնչում։ Շահագրգիռ երկրների նախագահներն են ուզում խոսել քեզ հետ։

– Պարգև՛, սիրելիս,– իր գլխավոր քարտուղարին դիմեց Արքան,– մենք ոչ մեկի համար, ոչ մի դեպքում ու ոչ մի պատճառով չենք փոխելու մեր սկզբունքները։ Համայն Հայոց Արքան զրուցում է միայն իր հպատակների հետ։ Ոչ մի իշխանավոր կամ նրանց ներկայացուցիչ, որքան էլ որ խոշոր երկրի թե՛ տնտեսական առումով, թե՛ ռազմական, դեռ ոչ մի կշիռ չունի մեզ համար։ Մեզ համար կշիռ ունի միայն նա, ով կիսում է մեր արժեհամակարգը։

– Ի՛մ Արքա, բայց դա կարող է հունից հանել որոշ երկրների ղեկավարների,– միջամտեց Արքայի առաջին խորհրդականը։

– Ուրեմն պատրաստվեք պաշտպանել ձեր արժեքներն ու սկզբունքները,– մի փոքր զայրացած վրա բերեց Արքան ու շարունակեց։– Մեր բոլոր դժբախտությունները սկսվեցին այն պահից, երբ մեր հարմարության համար սկսեցինք հրաժարվել մեր որոշ սկզբունքներից։ Երբ բռնեցինք փոխզիջումների ուղին ու դադարեցինք կռվի դուրս գալ պաշտպանելու ճշմարտությունն ու արդարությունը մեր շուրջը։ Երբ անտարբերություն որդեգրելով՝ ներփակվեցինք մեր երկրի սահմաններում ու փորձեցինք բարի դրացիական հարաբերություններ հաստատել մեր հարևան բռնապետությունների հետ։ Ի վերջո, թույլ տալով, որ բռնապետության բացիլը թափանցի ներս ու քանդի մեր արժեհամակարգը։ Այն արժեհամակարգը, որը կար մեր նախահոր՝ Հայկի, ժամանակ։ Հայկն ի՞նչ արեց։ Դուրս չեկա՞վ կռվի։ Հաշվի առա՞վ Բելի հզորությունն ու նրա ոհմակի թվաքանակը։ Խելահեղություն չէ՞ր առճակատման դուրս գալ հաղարապատիկ գերազանցող ուժերի դեմ։ Բայց արժեր, չէ՞։ Նրա և նրա հետ միասին իր ողջ ազգի անձնվիրաբար կռվի դուրս գալը վճռեց հետագա դարերի մեր ազգակիցների ճակատագիրը։ Հենց մեր՝ բոլորիս, ճակատագիրը։ Ազգի բախտը կախված է ազգովի ընդունած որոշումներից, ճիշտ այնպես, ինչպես ամեն մարդու

բախտը կախված է իր անձնական որոշումներից։ Ղարաբաղյան շարժումը քեզ օրինակ։ Ազգովի կանգնեցինք՝ գերան կոտրեցինք։ Բայց հետո մեր «առաջնորդների» մորթապաշտությունը քանդեց ամեն ձեռքբերում։ Ամեն մեկս ներփակվեցինք, մեկուսացանք, փսորվեցինք ու մի չոփն ի՞նչ է՝ չէինք կարողանում կոտրել։ Ամենքս մեր անձնական կյանքը կարգավորեցինք՝ անձնական որոշումներ ընդունելով։ Մի մասը հարմարվեց։ Մյուս մասը հեռացավ։ Մի ավելի դժբախտ մաս ո՛չ կարողացավ հեռանալ, ո՛չ էլ՝ հարմարվել։

– Ի՛մ Արքա, բայց մեր արքաները միշտ էլ հմուտ քաղաքականություն են վարել՝ մեր հարևան հզորների միջև ազգը պահելու համար։

– Չէ՛, Վռա՛մ,– ավելի զայրացավ Արքան։– Ո՛չ միշտ, ո՛չ բոլորը։ Հայկից սկսած, դեռ Հայկից էլ առաջ, մեր արքաները ոչ մի քաղաքականություն էլ չեն վարել, մանավանդ՝ հմուտ, իրականում՝ անողնաշար։ Անողնաշար քաղաքականությամբ ազգ չեն պահում։ Ազգը ողնաշար ունի։ Ազգը չի՛ կարող անողնաշար քաղաքականություն վարել։ Անողնաշար միայն ժողովուրդն է լինում։ Անողնաշար կամ, ինչպես ասացիր, հմուտ քաղաքականությամբ, միայն ժողովուրդ կարելի է պահել։ Դա՛ չի մեր առաքելությունը։ Մենք ի ծնե ազգ ենք՝ մեր ուրույն ու Արարչական գենետիկ կոդով։ Մենք այլ կերպ չենք կարող։ Հայկը գնա՞ց փոխզիջման։ Փոխզիջումների գնալն ու դրանով սեփական սկզբունքներին ու արժեքներին դավաճանելը մեզ համար ընդունելի տարբերակ չի։ Արիասիրտ մարդու համար դա անպատվաբեր է։ Ավելի լավ է մեռնել, քան փոխզիջումների գնալ թշնամու հետ։ Նույնիսկ սեփական ազգակցի հետ չի կարելի փոխզիջումների գնալ։ Ոչ մի դեպքում չի կարելի դավաճանել ճշմարիտ սկզբունքներին՝ զոհել ազգային արժեհամակարգի որևէ մասնիկ։ Հետևանքը միայն թշնամու հզորացումն ու մեր արժեհամակարգի շարունակական քայքայումը կլինի, մեր ազգի մահը։ Դա էլ հենց պատահեց մեզ, երբ վերացավ մեր ուսմունքը։ Ազգն ազգ է՝ իր ուրույն ուսմունքով, արժեհամակարգով ու սկզբունքներով։ Չկա ուսմունք՝ չկա ազգ։ Չկա ազգ՝ չկա պետություն։ Մենք ա՞զգ ենք, թե՞ ազգ չենք։ Պետությո՞ւն ենք,

թե՞ պետություն չենք։ Ուրեմն ցույց տվեք, որ ազգ ենք։ Վարվեք այնպես, ինչպես վարվեց մեր Նահապետ Հայկն ու իր ազգը։

– Ի՛մ Արքա, բայց մենք փոքր ենք,– մի փոքր ահաբեկված ասաց երկրորդ խորհրդականը։

– Ամեն խոշոր անասուն էլ վախենում է մոծակի խայթոցից,– մեխեց Արքան։

– Ի՛մ Արքա, լավ օրինակ ես բերում։ Բայց և՛ Հայկի, և՛ Բելի մարդիկ գոնե միևնույն սպառազինությունն ունեին։ Հայկի բախտն էլ բերեց՝ հենց առաջին նետով միանգամից տապալեց ոսոխին,– ասաց առաջին խորհրդականը։

– Բա՞խտը,– ցնցվեց Արքան։– Դու, իրո՞ք, կարծում ես, որ դա բախտի՛ բան էր։ Կամ, որ նույնն է՝ պատահականություն։ Դա պատահականություն չէր։ Նման բաները պատահական չեն լինում։ Հայկն իր նետը չէր արձակում այն մտայնությամբ, թե սա որ չկպավ՝ մյուսը կարձակեմ։ Նա գիտեր, որ հենց առաջին նետով սատկացնելու է հրեշին։ Նախօրո՛ք գիտեր։ Ինչպե՞ս։ Որովհետև իր ողջ էությունն էր դրել հենց առաջին նետի մեջ։ Նա միայն մարմնով մնաց նույն տեղում կանգնած։ Իր ողջ էությամբ նետի հետ գնաց ու մխրճվեց չարի կուրծքը՝ նրան մեջտեղից պատռելու միտումով։ Ու այդ ամենն՝ անսահման համոզմունքով։

– Ի՛մ Արքա, հասկանում եմ, բայց մեր ախոյանների սպառազինությունը հազարապատիկ գերազանցում է մերին։ Մենք չունենք միևնույն սպառազինությունը։

– Ունե՞նք։

– Չհասկացա։ Ներող եղիր, ի՛մ Արքա։ Չհասկացա, ճիշտ լսեցի՞, ունե՞նք, ի՞նչ,– զարմանքով լի աչքերն Արքային ուղղեց առաջին խորհրդականը, ու նրա հետ միասին՝ երկրորդը, նաև՝ բոլոր ներկաները։

Արքան խոսքի վրա բռնվածի պես մի փոքր հետ տարավ գլուխն ու, մի որոշ դադարից հետո, փորձելով շեղել զրույցի ուղղությունը, ասաց,– մեր խելքը, մեր զենքը մեր խելքն է։ Դարեր շարունակ ուրիշներին է ծառայել, հիմա հարկ է, որ մեզ ծառայի։

– Ի՛մ Արքա, բայց ի՞նչ ի նկատի ունես, ինչպե՞ս,– հարցրեց երկրորդ խորհրդականը։

Բոլորը դեռ ապշահար հետևում էին Արքայի արձագանքին։

– Սիրելինե՛րս, մենք դեռ աշխարհասփյուռ հայություն ունենք։ Նրանց մեծ մասը ներկայումս բնակվում են հենց այն երկրներում, որոնք մեր ախոյաններն են ու հիմա փորձում են միջամտել մեր երկրի ներքին գործերին։ Փառք Աստծո, մեր ազգակիցներից շատերն, ովքեր այդ երկրներում բարձր դիրքի են հասել թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական ոլորտում, դեռ չեն մոռացել, որ հայ են։ Նրանցից շատերը թոնդ հայրենասերներ են։ Մենք մշտապես կապի մեջ ենք նրանց հետ։ Հարկ եղած դեպքում մեր ազգակիցները կօգտագործեն իրենց քաղաքական, հատկապես տնտեսական հնարավորությունները՝ այդ երկրներին զսպելու համար։ Դուք գիտեք, իհարկե, թե որքան անկայուն է կապիտալիստական տնտեսավարման համակարգը։ Մի թեթև քամուց կարող է փլվել։ Կապիտալի մի թեթև անցանկալի շարժում այս կամ այն ոլորտում շղթայական ռեակցիա կառաջացնի ու ծնկի կբերի այդ երկրների տնտեսությունները։ Նրանք շատ լավ գիտեն այդ վըտանգի մասին։ Դա նրանց «Աքիլեսյան գարշապարն» է։ Նրանց պետք է հասկացնել, որ մենք էլ գիտենք։ Հետո՝ մենք միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ ենք։ Ձեզ պահեք ամենայն արժանապատվությամբ։ Դո՛ւք եք ներկայացնում մեր ազգի դեմքը։ Դո՛ւք եք մեր ազգի առաջամարտիկները։

– Ի՛մ Արքա, հիմա ի՞նչ պատասխանեմ դեսպանների դիմումներին,– անհանգստացավ Արքայի գլխավոր քարտուղարը։

– Պարգև՛, հիշեցրու նրանց մեր սկզբունքներն ու դիվանագիտական լեզվով հասկացրու, որ չխառնվեն մեր երկրի ներքին գործերին, որ մենք թույլ չենք տա որևէ միջամտություն ու ամեն ինչ կանենք կանխելու որևէ ոտընձգություն։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Թույլ կտա՞ս գնալ։

– Գնա, Պարգև՛։ Վախի ոչ մի նշույլ։ Ոչ մի զիջում։ Ոչ մի նահանջ։ Ոչ մի խուսանավում կամ խորամանկություն։ Խորամանկությունը թույլերի մարտավարությունն է։ Դրանց հետ խոսեք իրավահավասար կողմի դիրքերից,

նույնիսկ՝ մի փոքր բարձրից։ Թող հասկանան, որ մենք ստորաքարշ ենթարկվողներից չենք։ Հասկացրեք, որ ոչ մի բանում ոչնչով չենք զիջում նրանց ու հարկ եղած դեպքում հակահարված կտանք։

Արքան շրջվեց ու դիմեց նախարարների խորհրդի նախագահին.

– Աթոյա՛ն, արտաքին գործերի նախարարին հանձնարարիր համապատասխան դիվանագիտական աջակցություն ապահովել։ Պարգևին մենակ չթողնել։ Արտաքին գործերի նախարարության հետ միասին լուծեք բոլոր կընճռոտ հարցերը։ Մեր ազգի պատիվը ձեր ձեռքերում է։

Պարգևը գլուխ տվեց ու դուրս եկավ։

– Ի՛մ Արքա, ամեն բան կարվի ինչպես կամեցար,– ասաց Աթոյանը,– թույլ տուր անցնել գործի։

– Իհա՛րկե,– ասաց Արքան՝ միաժամանակ գլխով նշան անելով։

Աթոյանն իսկույն անցավ ներգրավելու արտաքին գործերի նախարարությանը Պարգևին աջակցելու գործին։

Լրաբյանի կարիքը նույնպես կար։ Լինելով նաև միջնախարարական կապերի պատասխանատուն՝ նա դիմեց Արքային.

– Ի՛մ Արքա, էս գործում ես էլ անելիք ունեմ։ Եթե այստեղ իմ կարիքը չկա, թույլ տուր անցնեմ գործի։

– Շատ լավ, Լրաբյան։ Բոլոր նախարարությունների միջև կապը կենսական նշանակություն ունի։ Ի գո՛րծ։

Լրաբյանը գլուխ տվեց ու արագորեն դուրս եկավ Արքայի ընդունարանից։

***

Որոշ դադարից հետո լռությունը խախտեց Արքայի առաջին խորհրդականը.

– Ի՛մ Արքա, համենայն դեպս ինձ թվում է, որ կան բաներ, որ մեզնից թաքուն ես պահում։

– Ի՞նչ ի նկատի ունես։ Ի՞նչ կա մտքումդ։

– Ի՛մ Արքա, գուցե մենք որևէ զենքի տեսակ ունենք, որ միայն դո՞ւ գիտես։

– Վա՛յ, մեր զենքը մեր խելքն է, նաև՝ մեր սփյուռքի բոլոր ազգակիցները, ովքեր տնտեսական ու որոշ քա-

ղաքական լծակների տեր են։

– Ի՛մ Արքա, բայց մեզ վրա էլ կարող են նույն լծակները կիրառել։

– Ճիշտ է, մեզ վրա էլ կարող են նման լծակներ կիրառել, բայց իրենք ավելի խոցելի են, քան՝ մենք։ Այդ երկրների ժողովուրդները մինչև կոկորդները կուշտ են ցնցումներից։ Դժգոհության ալիքներ կբարձրանան։ Այդ երկրների իշխանությունները խուսափում են իրենց ժողովուրդներին ավելի մեծ լարվածության տակ դնելուց, քան ներկայումս արդեն դրել են։ Երբ մարդիկ սկսեն կորցնել իրենց աշխատանքը, հետևաբար նաև՝ տունն ու ապրուստի որևէ միջոց, անպայման դժգոհությունների ալիքներ կբարձրանան։ Սա ոչ մի կողմին էլ ձեռնտու չի։ Կապիտալիզմն, առանց այդ էլ, չափազանց լարված վիճակում է պահում բոլորին՝ և՛ աշխատավորներին, և՛ գործատերերին, և՛ իշխանավորներին։ Մեկը մյուսից փոխադարձ կախվածության մեջ են ու շատ լարված։ Աշխատավորները չգիտեն վաղը աշխատանք կունենա՞ն, թե՞ ոչ։ Գործատերերը նույնպես նման լարվածության մեջ են։ Չգիտեն վաղն իրենք մրցունակ կմնա՞ն, թե՞ կհայտնվի մեկ ուրիշն ավելի մրցունակ ծառայությամբ կամ արտադրանքով։ Կապիտալիստական, կամ, ինչպես հիմա ընդունված է անվանել՝ շուկայական տնտեսավարման, համակարգում ամեն ինչ անկանխատեսելի է։ Կապիտալիզմի պայմաններում բոլորն ապրում են ասես հրաբխի վրա։ Չգիտեն՝ երբ կըժայթքի ու ինչ թափով։ Իսկ դրա համար մի թեթև ցնցումն էլ բավական է։ Կապիտալիզմը շատ խոցելի է։ Այնպես որ, այդ երկրների իշխանավորները շատ են զգուշանում։ Իսկ, ի տարբերություն նրանց, մեզ մոտ տնտեսությունն ազգայնացված է։ Անկանխատեսելի բաներ չեն կարող լինել։ Բոլորն ապրում են վաղվա օրվա հանդեպ մեծ վստահությամբ։ Ոչ ոք չի կքում վարկերի կամ հարկերի ծանր բեռի տակ։ Մեր ձեռնարկությունների արտադրանքն էլ կամ արտահանում ենք մեզ հետ բարեկամ, կամ՝ չեզոք երկրներ, կամ էլ՝ հենց նույն մեր թշնամական համակարգի երկրները, որ եթե կտրենք արտահանումը, ապա այդ երկրների տնտեսությունները մեծ ցնցում կապրեն։ Մենք էլ ունենք մեր ձեռքում տնտեսական լծակներ։

– Ի՛մ Արքա, հիրավի, ճշմարիտ են փաստարկներդ։ Բայց դու լավ գիտես, որ մեր դեմ կարող են ռազմական ոտնձգություն հրահրել ու, ռազմական տեխնիկայով աջակցելով մեր անմիջական հարևաններին, իրականում իհարկե իրենք վարելով պատերազմը մեր դեմ, շատ արագ ավարտել այն իրենց օգտին՝ մինչև միջազգային հանրության իրար անցնելը, կամ էլ մինչև մեր ազգակիցները կկարողանան տնտեսական կամ քաղաքական որևէ լծակ կիրառել ու որևէ կերպ ազդել մեր Թշնամի երկրների տնտեսությունների վրա։

– Ճի՛շտ ես, Վռամ։ Գիտե՛մ,– ասաց Արքան ու խորասուզվեց մտքերի մեջ։

Չգիտեր ինչպե՞ս ասի... Ասի՞, թե՞ չասի։ Այդ մասին միայն ինքը գիտեր, Արշակն ու գիտնականների մի փոքր խումբ։ Դեռ վերջնական ոչինչ չկար։ Անհրաժեշտ հեռահարության հարցը դեռ լիովին լուծված չէր։ Մոտիկ թիրախների վրա փորձարկումները շատ լավ էին անցել, բայց ավելի հեռու չէր ստացվում։ Թշնամի երկրների արբանյակային ցանցը չէր թողնում ազատորեն աշխատել ծրագրի վրա։ Ամեն բան արվում էր ծածուկ, խիստ գաղտնի ու ավելի մեծ զոհաբերությունների գնով... Մարդիկ աշխատում էին օր ու գիշեր՝ անմնացորդ նվիրումով, սակայն մի հրաշքով ուժ էին գտնում՝ շարունակելու աշխատանքները։ «Ո՞րն էր այդ հրաշքը։ Ո՞րն էր նրանց ոգևորության աղբյուրը»,– մտածում էր Արքան։ Շատերն աշխատում էին ամիսներով կտրված իրենց ընտանիքներից՝ իրենց կանանց ու երեխաներին չտեսնելով։ Գիտնականների որոշ մասն աշխատում էր գետնի տակ, նաև՝ բնական լույսի շող չտեսնելով։ Բայց նրանցից և ոչ մեկի ոգևորությունը չէր մարում։ «Ինչպիսի՜ նվիրում։ Մի՞թե հնարավոր է նման հայրենանվեր ինքնազոհաբերություն,– մտածում էր Արքան։– Ինչո՞ւ չէ։ Մեր ազգակիցները բազմիցս են ցույց տվել հայրենիքին անմնացորդ նվիրումի վառ օրինակներ։ Թեկուզ՝ հենց ղարաբաղյան պատերազմում։ Ե՛վ ներսից, և՛ դրսից առաջ եկան նրանք։ Եկան ու հաղթեցին։ Շատերը նահատակվեցին։ Գիտեին՝ ինչի էին գնում։ Ի՞նչն էր նրանց մղում անձնազոհության։ Հայրենիքը։ Հայրենիքի կարոտը։ Այն, ինչը մեր մեջ է ու երբեք հանգիստ չի տա-

լու։ Ի՞նչ առեղծվածային բան է՝ հայրենիքը, հայրենասիրությունը։ Մարդ նույնիսկ իր սիրելիների՛ն էր զոհում հանուն հայրենիքի։ Ի՞նչ անբացատրելի ու հզոր ուժ է դա, ներուժի ու խանդավառության ինչպիսի՞ անսպառ աղբյուր։ Նույնպիսի հայրենասիրություն է մեր այսօրվա հերոսների արածը։ Ա՛յ, եթե բոլորն իմանային նրանց մասին։ Որքա՞ն սրտեր կջերմանային։ Ի՞նչ խանդավառություն կտիրեր ողջ երկրում։ Բայց, ափսոս, չի կարելի։ Այս մասին, բացի Արշակից, էլ ոչ ոք չպիտի իմանա, միայն Արշակը։ Արշակն էլ անասելի ծանրաբեռնված է։ Ընտանիքի երեսը մի կարգին չի տեսնում։ Երեխաները համարյա առանց հորը տեսնելու են մեծանում։ Լավ չի։ Բայց ի՞նչ արած։ Արշակի երեք աղջիկները ահագին մեծացել են՝ Անահիտը, Աստղիկն ու Շողերը։ Երեքն էլ լավ երեխեք են՝ համեստ, հնազանդ ու խելացի։ Արշակը լավ ընտանիք ունի։ Արշակի հետ վաղուց չեմ խոսել գործի մասին։ Տեսնես՝ ի՞նչ առաջընթաց կա»։

Արքան սթափվեց. «Արշակը տեսնես ի՞նչ արեց»։

***

– Ինձ միացրեք Արշակին։

Արքայի հրամանն իսկույն կատարվեց։

– Արշա՛կ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Ի՞նչ կասես։ Ի՞նչ նոր բան կա։

– Ի՛մ Արքա, ամեն բան կարգին է։ Բոլոր վանականներին ու վանքի աշխատակիցներին փակել եմ ճեմարանում։ Այնտեղ մի շաբաթվա սնունդ կա, կդիմանան։ Բայց, դրանից հետո...

– Դրա մասին մի անհանգստանա։ Դրանց սահմանամերձ գյուղերում տեղավորելու հարցը կլուծեն մարզպանները՝ ներքին գործերի նախարարության հետ միասին։ Իսկ արխիվի աշխատակիցների՞ հարցը...

– Իմ Արքա, արխիվի աշխատակիցներին հավաքել եմ հարցազրույցի։ Բոլորն էլ համագործակցում են։ Արխիվի դռան կողը, սակայն, դեռ չեմ կարողացել փոխել։ Դա կախված է կաթողիկոսից։ Նրա մոտ է կողի պակասող մասն ու բանալին։ Եկեղեցու բանկային հաշիվները բռնա-

գրավված են։ Բայց արտերկրներում դրանց հաշիվների հարցը հեշտ չի։ Արտգործնախարարությունն ամեն երկրով առանձին պիտի զբաղվի։ Դրա համար ժամանակ է պետք։ Վախենամ մինչև կարողանանք որևէ բան անել, դրանք դատարկեն հաշիվները։

– Ոչինչ... Եթե կհասցնեն, թող դատարկեն, գնան կորեն ու էլ չերևան։ Եթե նույնիսկ մի որոշ ժամանակ մնան ու գործեն դրսի եկեղեցիները, այդքան էլ վատ չի լինի։ Դրանք մեր սփյուռքահայության համար դեռ որոշ հենարան են։ Մեր ազգային ոամունքն այնտեղ հասցնելու համար դեռ երկար ժամանակ կպահանջվի։ Իսկ բանալին կաթողիկոսից ես կվերցնեմ։ Կոդն էլ կտա։ Դրա մասին մի մտածիր,– ասաց Արքան։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Դե, առայժմ։ Մնացած մանրամասները՝ հետո,– ասաց Արքան ու ընդհատեց կապը։

– Կանչե՛լ Պարգևին,– հրամայեց Արքան։

Արքայի գլխավոր քարտուղարն իսկույն ներս մտավ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Պարգև՛, հենց հիմա կապվիր բոլոր մարզպանների հետ։ Տեղեկացրու եկեղեցու վերացման, կրոնավորների ձերբակալության ու նրանց սահմանամերձ գյուղերում տեղավորելու անհրաժեշտության մասին։ Ասա, որ անհապաղ ցուցակներ ներկայացնեն՝ որ գյուղում քանի մարդ կարող են տեղավորել,– հրահանգեց Արքան։ Հետո, շրջվելով դեպի նախարարների խորհրդի նախագահը.

– Աթոյա՛ն։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Աթոյա՛ն, ներքին գործերի նախարարության միջոցով կազմակերպել բոլոր քաղաքների ու գյուղերի քահանաների ու վանականների ձերբակալումն ու բոլոր ձերբակալվածների տեղափոխումը դեպի սահմանամերձ գյուղերը։ Զմոռանաք կազմակերպել բոլոր դատարկված շինությունների ու դրանցում գտնվող ողջ գույքի ապահովությունը։ Կողպել բոլոր շինությունները։ Թույլ չտալ որևէ ոտնձգություն։ Եկեղեցու ողջ ունեցվածքը համազգային սեփականություն է ու գտնվում է անձնապես իմ պատասխանատվության տակ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Ի գո՛րծ։

Ամիոյանը գլուխ տվեց ու անցավ համապատասխան հրահանգներ տալուն։

– Պարգև՛, դու էլ...

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Պարգևը, գլուխ տվեց ու դուրս եկավ։

Արքան շրջվեց դեպի իր թիկնապահ գնդի հրամանատարը.

– Ազա՛տ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– արձագանքեց Ազատը։

– Անմիջապես խուզարկել կաթողիկոսին, գտնել արխիվի բանալին, նաև՝ կոդը։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Ես անձամբ կզբաղվեմ էդ հարցով։

– Հա, Ազա՛տ, արխիվը շատ կարևոր է։ Ի գո՛րծ։

– Ազատը գլուխ տվեց ու դուրս եկավ։

***

Քիչ հետո լռությունը խախտեց Վռամը.

– Ի՛մ Արքա, ամեն դեպքում կարծում եմ կան որոշ բաներ, որ մեզ չես ասում։

– Վռամ, դուք՝ երկուադ,– Արքան ի նկատի ուներ իր երկու խորհրդականներին,– իմ զինակիցներն եք եղել հենց սկզբից։ Դուք իմ խորհրդականներն եք։ Ես հարգում եմ ձեր կարծիքն ու հաշվի եմ առնում որոշումներ ընդունելիս, սակայն իրադարձությունները հաճախ այլ կերպ են զարգանում։ Մենք չենք կարող դավաճանել մեր սկզբունքներին։ Անողնաշար քաղաքականությունը չի սազում մեր ազգին։ Քաղաքականություն խաղում են միայն վախկոտները։ Ուժեղս պատում է, թե՝ ոչ, նշանակություն չունի։ Մենք պիտի մնանք մեր դիրքերում՝ որպես ազգ, որպես մեր նախահայրերի արժանի զավակներ։ Մեր ազգի համար անպատվաբեր է գլուխ խոնարհել ուժի առջև, որքան էլ մեծ լինի այն։ Մենք արիասիրտ ազգ ենք ու գլուխ ենք խոնարհում միայն ճշմարտության ու արդարության առջև։

Արքան, մի պահ մտորելուց հետո, շարունակեց.

– Թող փորձեն, եթե ուզում են։ Դրանք համարյա ար-

նաքամ են եղել իրենց նախորդ պատերազմներում։ Ճիշտ է, հույսերն իրենց տեխնիկայի վրա է, բայց շատ զինվորներ են կորցրել։ Շատ ու շատ զինվոր էլ հաշմանդամ ունեն, նաև հոգեկան խանգարումներով ունեն շատ։ Հազարավոր ընտանիքներ են քանդվել ու դժբախտացել իրենց վարած պատերազմների պատճառով։ Այդ երկրների ժողովուրդները հոգնել են պատերազմներից։ Դրանց քարոզչամեքենան, որքան էլ ջանա հայրենասիրական տրամադրություններ գրգռել, միևնույն է՝ չի կարողանա ամոքել մարդկանց վերքերը։ Չի կարողանա հետ բերել նրանց կորցրած առողջությունը, խեղված հոգեկանը։ Չի կարողանա վերականգնել նրանց քանդված ընտանիքներն ու առաջվա կյանքը, մանավանդ՝ նրանց երջանիկ կյանքի հույսերն ու ծրագրերը։ Առանց վարձատրության կռվող չկա կապիտալիստական երկրներում։ Տեխնիկան ամեն ինչ չի որոշում։

– Ի՛մ Արքա, բայց մեզ վրա անձամբ գուցե չհարձակվեն։ Փոխարենը մեր հարևաններին հրահրեն մեր դեմ։

– Վռամ, դու ինձնից լավ գիտես, որ նրանք ևս բոլորի պես վախենում են մահից։ Ճոխ ու բարեկեցիկ կյանք վայելելու իղձը սրտում, ո՞վ իր կյանքը կտա հանուն ինչոր ուրիշ բանի։ Ճիշտ է, մեր հարևանները մեր հանդեպ ատելություն շատ ունեն, բայց ավելի շատ վախ ունեն։

Մի փոքր մտորելուց հետո Արքան շարունակեց.

– Տեխնիկան ամեն ինչ չի որոշում։ Տեխնիկայի հետ վարվելու շնորհք է պետք, որ մեր հարևանները չունեն։ Դանակը վախկոտի ու ապաշնորհի ձեռքում ոչինչ չի կարող անել անզեն, բայց անվախ ու հմուտ մեկին։ Վերջապես մենք մեզ ենք պաշտպանում, մեր հայրենի՛քը ու նահանջելու տեղ չունենք։

Արքան խոսում էր, բայց նույնիսկ ինքը չէր հավատում իր ասածներին։

«Տեխնիկան հիմա շատ է զարգացել, հատկապես՝ լրտեսականը։ Վերևից ամեն բան տեսնում են սրիկաները։ Մի քանի ճշգրիտ հարվածը բավարար կլինի մեր մեջքը կոտրելու համար,– մտածում էր նա։– Ա՜խ, թե հասցընեինք։ Արշակի հետ անհապաղ պետք է խոսել։ Տեսնես մի բեկում կա՞ գործի մեջ»։

Արքան շուտով սթափվեց ու շարունակեց.

– Ընկերովի մեռնելը հարսանիք է, չէ՞: Ես պատրաստ եմ: Դու պատրա՞ստ ես:

– Ի՛մ Արքա, ես նույնպես պատրաստ եմ: Դու լավ գիտես՝ ինչերի միջով եմ անցել: Բայց ժողովո՞ւրդը...,– տարակուսեց Վռամը:

– Մի՛ տարակուսիր, Վռա՛մ, ազգը նմանվում է իր առաջնորդներին: Ինչպիսին առաջնորդն է, այնպիսին էլ ազգն է: Անձնվեր ու խիզախ առաջնորդի օրինակով ողջ ազգը կվերափոխվի: Արդեն վերափոխվել է: Հիշի՛ր Հուլիոս Կեսարի օրինակը: Նա առաջնորդ էր, ոչ թե՝ ղեկավար: Գերմանացիների դեմ արշավանքի ժամանակ հիշո՞ւմ ես ինչ արեց: Գետն անցնելուց հետո հրամայեց վառել սարքած կամուրջը: Մնաց իր զորքի հետ՝ նրանց հետ միասին հավասարապես կիսելու բոլոր դժվարություններն ու վտանգները: Առաջնորդի օրինակը վարակիչ է զինվորների համար: Քեզ թվում է՝ հենց այնպե՞ս եմ մեր Ազգային Սահմանադրության մեջ ամրագրել Արքային, Արքայի ընտանիքին, ողջ առաջնորդող վերնախավին ու նրանց ընտանիքներին երկրի սահմաններից դուրս գալն արգելող հոդվածը: Մեր երկրի վերջին տասնամյակների ղեկավարները մորթապաշտ սրիկաներ էին, ոչ թե՝ առաջնորդներ: Նույնն էլ ժողովուրդն էր դառել: Մեր ազգին մատների արանքով մի նայիր: Մենք արժանապատվություն ու պատիվ ճանաչող ազգ ենք: Ոչ մեկս ոչ մեկիս չենք ուզում զիջել ոչ մի բանում, նույնիսկ, եթե այդ մեկը երկրի արքան է, կամ՝ ողջ առաջնորդող վերնախավը: Մի՛ կասկածիր: Մեր ազգն իր պատիվը գետնով չտալու համար ամեն ինչ կանի: Հնարավորություն էլ չունենա՝ կանի: Ինձնից լավ գիտես, նույնիսկ իր երեխաների բերանից կտրում, հյուրին էր հյուրասիրում, պարտքով հարսանիք անում: Էլ ո՞րն ասեմ: Հա, մի քիչ ցուցամոլության էր հասնում, բայց մղումը հարևանից հետ չմնալն էր: Մի՛ կասկածիր: Առաջնորդող վերնախավի կողմից անձնվեր հայրենասիրության օրինակներ տեսնելով՝ ձեռքերը ծալած չի նստի: Այ, կտեսնես, եթե պատերազմը բախի մեր դուռը, ազգովի ոտքի ենք կանգնելու: Իսկ ազգովի ոտքի կանգնածների դեմ ոչ մի տեխնոլոգիա չի աշխատի: Մեր

ազգի գլխին գալիքն աչքիս առաջ էր, երբ Սահմանադրության մեջ ամրագրեցի բոլոր հպատակների զենք կրելու իրավունքը։ Ու հիմա մենք ավելի մեծաթիվ բանակ ունենք, քան մեր թշնամիներն են կարծում։ Ասենք՝ չէ, նրանք էլ գիտեն։ Գիտեն ու վախենում են։ Գիտեն, որ մեզ հետ հեշտ չի լինելու։

– Ի՛մ Արքա, բայց պատերազմում ամեն միջոց էլ կարող են կիրառել մեր դեմ։ Պատերազմից կեղտոտ խաղ չկա։ Կարող են փակել դրսից մեզ համար կենսական նշանակության ապրանքների ճանապարհները։ Պաշարման մեջ առնել մեզ ու սպասել։ Պաշարման մարտավարությունն ամենաապահովն է մեր թշնամիների համար։ Ղարաբաղյան շարժման հենց սկզբից դա էին կիրառում մեզ վրա։

– Բայց չստացվեց, չէ՞։ Մենք հաղթեցինք, չմեռանք,– կտրեց Արքան։– Վռա՛մ, եթե ընկերովի մեռնելը հարսանիք է, ապա ազգովի մեռնելը երջանկություն է։ Ես ու դու զգացել ենք դժվարություններին, նույնիսկ վտանգներին, մանավանդ մահվանը դեմ հանդիման ընկերովի, ուս-ուսի ու անդրդվելի կանգնելու բերկրանքը։

Մի փոքր մտորելուց հետո, Արքան շարունակեց.

– Վռա՛մ, պատվով ապրելը մեծ սխրանք չի։ Ամենամեծ սխրանքը պատվով մեռնելն է։ Բայց մենք, իհարկե, չենք պատրաստվում մեռնել։ Մենք դեռ կռիվ ունենք։ Ազգովի կռվի ելնելն ամենամեծ բերկրանք է։ Մեծ Հայկը ազգովի էր կռվի ելել, ու նրա օրինակը վարակիչ էր բոլոր հաջորդ սերունդների՝ նրա հետնորդների համար, մե՛զ համար։ Չի՛ կարող վարակիչ չլինել։ Մենք նույն միս ու արյունն ունենք։ Չենք փոխվել։ Քամիներ շատ եկան ու գնացին, բայց մեր արյունը փոխել չկարողացան։ Ճիշտ է, խոտան էլ կա, բայց դա որոշիչ չի։ Իսկ ճանապարհները փակելու ու մեզ պաշարման մատնելու մասին շատ մի անհանգստանա։ Մեր համակարգը համարյա ինքնաբավ համակարգ է։ Մեր շինականները լիովին ապահովում են մեր բանակին լիարժեք սննդով։ Մեր առողջապահության ոլորտի մշակների շնորհիվ համարյա կիսով չափ կրճատել ենք անհրաժեշտ հացի, ընդհանրապես անհրաժեշտ սննդամթերքի քանակը։ Մեր բանակն ու մեր բոլոր ազգակիցները

հիմա ավելի առողջ են սնվում, քան առաջ։ Համարյա վերացել են մարդու մարմինը սպանող խելահեղ կեր ու խումերը։ Վերացել է ցուցամոլության մրցավազքը։ Հիմա մեր համակարգում ոչինչ անտեղի չի վատնվում, ինչպես առաջ էր՝ կապիտալիզմի պայմաններում, երբ ամեն փողատեր անհատ իր քմահաճույքով կարող էր մի հսկա կարողություն վատնել դես ու դեն, մանավանդ խաղատներում, այն էլ՝ դրսի։ Մեր տնտեսությունն արդեն վաղուց ազգայնացված է։ Անօգուտ վատնումների բոլոր ճանապարհները փակ են։ Միակ խնդիրն, իհարկե, էներգակիրների ներկրումը կարող է լինել։ Բայց դա էլ արդեն համարյա լուծված է։ Մենք գազ ու այլ անհրաժեշտ նավթամթերքներ ներմուծում ենք մեր հարավի հարևանից, որն, ինչպես գիտես, մեր թշնամիների թշնամին է։ Իսկ մեր թշնամու թշնամին, եթե մեր բարեկամն էլ չի, գոնե չի խանգարի մեզ իր թշնամիների դեմ կռվում։ Գուցեև՝ փորձի աջակցել։

– Ի՛մ Արքա, բայց մեր թշնամիները կարող են հարվածել այդ գծերին,– շտապեց Վռամը։

– Կարող են, իհարկե... Դժվար կլինի պաշտպանելը։ Բայց ամենալավ պաշտպանությունը հարձակումն է։ Մենք էլ կարող ենք հարվածել իրենց գծին, որը հենց մեր քթի տակով է անցնում։ Ճիշտ է, մենք ավելի շատ կվնասվենք, քան իրենք, բայց հիշիր՝ նրանք շատ են վախեցած։ Կապիտալիստական տնտեսավարման համար ամեն փոքր խաթարում կարող է մեծ հետևանքներ ունենալ։

Արքան դարձյալ իր ասածներին շատ չէր հավատում։ «Ա՜խ, եթե հասցնեինք։ Բայց դրա համար ահագին էլեկտրաէներգիա է պետք, երևի։ Գուցե դա է պատճառը, որ չի ստացվում։ Ափսոս, չենք կարող մեր ատոմակայանի հզորությունն ուղղել այդ գործին։ Կերևա։ Միանգամից կերևա։ Եթե հեռու չլիներ, գուցե չերևար։ Ի՞նչ անենք։ Իսկ եթե առանց փորձարկումների միանգամից սարքենք ավելի մեծն ու տեղափոխենք ատոմակայանի մոտ... Կամ՝ հենց ատոմակայանի տարածքում կառուցենք այն։ Իսկ, եթե չաշխատի՞... Փորձարկելու թիրախ էլ չկա։ Ստիպված պիտի սարքենք ու պատրաստ պահենք։ Ոչինչ, եթե չաշխատի։ Գոնե կտեսնեն, կկարծեն աշխատող է ու կզգուշանան, մանավանդ՝ շատ լավ գիտեն, որ ընդունակ ենք

նման բանի։ Լավ գիտեն, որ նախկինում սարքել ենք նման զենք ու շատ ավելի մեծ հզորության, քան իրենցը։ Վատ միտք չի։ Պետք է փորձել։ Արշակին պետք է տեսնել ու խոսել հետը»։

Արքան, տեսնելով, որ բոլորն իրեն են սպասում, թե էլ ինչ կասի, շարունակեց.

– Ինչպես գիտեք, բարեկամներ, մենք լիովին ինքնաբավ համակարգ ենք։ Նույնիսկ մեր ատոմակայանի կարիքը շատ չենք զգում։ Ամեն տուն իր համար էլեկտրաէներգիա է ստանում։ Էլ կարիքը չունենք էլեկտրահաղորդման նախկին համակարգի՝ իր հսկա աշտարակներով, հաղորդալարերով, սպասարկման ծախսերով և այլն։ Մեր ֆիզիկոսները վերակերտեցին էլեկտրականության հանճարի՝ Նիկոլա Տեսլայի, ավելի քան մեկ դար մոռացության մատնված, ավելի ստույգ՝ արգելված, գյուտը։ Շնորհիվ այդ գյուտի մեր ազգակիցները չեն վճարում էլեկտրականության համար, ինչպես նախկինում էր։ Չկա ո՛չ հաշվիչների, ո՛չ էլ համապատասխան ծառայությունների կարիքը։ Մեր ատոմակայանը միայն մեր գործարաններին է էլեկտրականություն մատակարարում, որոշ մասն էլ վաճառում ենք։ Ա՛յ, եթե մեզ վրա ոտնձգություն լինի, կդադարեցնենք մատակարարումը։ Լծակներ ունենք, այն էլ՝ ինչպիսի՜։

***

Այդ պահին ներս մտավ Ազատն ու դիմեց Արքային.

– Ի՛մ Արքա, բանալին գտանք։ Բայց կոդը չի ասում։

– Սրիկա՛։ Ես այդպես էլ գիտեի,– պոռթկաց Արքան։

– Ի՛մ Արքա, կհրամայես մո՞տդ բերել նրան։

– Անմիջապե՛ս։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

Ազատը գլուխ տվեց ու հեռակա կապի միջոցով հրահանգ տվեց թիկնապահներին՝ ներս բերել կաթողիկոսին։

Կաթողիկոսին ներս բերեցին Արքայի երկու հաղթանդամ թիկնապահները, թևերի տակից բռնած, կքալով նրա մարմնի ծանրությունից։ Բերեցին ու դրեցին այն նույն բազկաթոռին՝ Արքայի դիմաց։

Արքան, իր համառ ու անթարթ հայացքը կաթողիկոսին հառած, մտածում էր՝ ինչպես համոզի նրան հանձնել արխիվի կողը։ Կաթողիկոսը համարյա կիսամեռ, գլուխը կախ նստել էր բազկաթոռին։ Արքան դեռ ոչինչ չէր ասում։ Բոլորը լուռ սպասում էին, թե ինչ է լինելու։

Լռությունը երկարում էր։ Արքան իր սևեռուն հայացքը չէր կտրում կաթողիկոսից։ Սա, իր հերթին, գլուխը չէր բարձրացնում։ Իհարկե, ամոթի զգացումից չէր դա։ Կաթողիկոսը պարզապես հրաժարվում էր համագործակցել։

– Լսի՛ր, կաթողիկո՛ս, դու այսօր բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորեցիր իմ՝ Համայն Հայոց Արքայի, հանդեպ, հենց սկզբից որևէ ողջույնի խոսք չասելով։ Հետևաբար, վիրավորեցիր ոչ միայն ինձ, այլ նաև ինձ գահ բարձրացրած հայ ազգին։ Ես անտեսեցի դա, իսկ դու մեր ողջ երկխոսության ընթացքում շարունակեցիր քո անհարգալից վերաբերմունքը, երբևէ չբարեհաճելով դիմել ինձ, ինչպես հարկն է։ Դու նույնիսկ անիծեցիր ինձ ու մեր երկիրը,– սկսեց Արքան։– Դու հիմա հնարավորություն կունենաս քավելու մեղքդ։

Կաթողիկոսը դեռ լուռ էր։ Նա դեռ չէր հավատում իրողությանը։ Հույս ուներ, թե կմիջամտեն իր թիկունքում կանգնած ուժերն, ու ամեն բան կհարթվի։

Լռությունը երկարում էր։

– Դու երևի մոռացել ես, կաթողիկո՛ս, բայց մեր այսօրվա ողջ երկխոսությունը տեսագրված է,– շարունակեց Արքան։– Այն կհեռարձակվի ազգային հեռուստատեսությամբ։ Ինքդ շատ լավ գիտես, որ իմ գահակալության օրվանից սկսած մենք ազգովի միմյանցից թաքցնելու ոչինչ չունենք։ Ուրեմն, մեր երկխոսությունը կհեռարձակվի ու մեր դատավորը կլինի ողջ հայ ազգը։

Կաթողիկոսը ցնցվեց՝ տեսագրության մասին լսելով։ Ակնհայտորեն մտքից թռել էր։ Սա ահագին բարդացրեց նրա դրությունը։

– Կաթողիկո՛ս, արխիվը քո սեփականությունը չի,– շարունակեց Արքան։– Այն երբեք քո, նույնիսկ՝ եկեղեցուդ սեփականությունը չի եղել։ Այն միշտ էլ եղել է ողջ հայ ազգի սեփականությունը։ Եկեղեցին բացարձակապես ոչ մի իրավունք չուներ սեփականացնելու այն, մանավանդ՝

ազգից թաքուն։ Դա գողություն է օրը ցերեկով։ Իսկ, եթե հաշվի առնենք, որ հենց նույն օրը ցերեկով արգելում է ազգի մշակներին՝ ազգի մտավորականներին ու գիտնականներին, ուսումնասիրել կամ գոնե կարդալ արխիվի նյութերը, դա արդեն կողոպուտ է։ Ի՞նչ է նշանակում գաղտնի պահել, կամ՝ թույլ չտալ ազգի մտավորականներին ուսումնասիրել արխիվի նյութերը։ Կաթողիկո՛ս, դու որևէ այլ բացատրություն ունե՞ս։

Կաթողիկոսը լուռ էր։

– Կաթողիկո՛ս, չե՞ս կարծում, որ հենց եկեղեցին՝ ինքը, պիտի ուսումնասիրեր ու հրապարակեր արխիվի նյութերը։ Ի՞նչ կա այդքան վտանգավոր, որ դարեր շարունակ խնամքով թաքցրել եք ժողովրդից։ Կարծում եմ կհամաձայնես, որ եկեղեցին թշնամական կառույց չի. թե՞ չես համաձայնի…

– Արխիվը եկեղեցունն է։ Բոլոր նյութերը գրվել ու ծաղկվել են մեր վանականների ձեռքերով,– վերջապես խոսեց կաթողիկոսը։

– Վանականներն էլ նույն ժողովրդի զավակներն են ու կերակրվել են այդ ժողովրդի կողմից։ Ով կերակրել է վանականներին, նա էլ արդյունքի սեփականատերն է, այդպես չէ՞, կաթողիկո՛ս,– վրա բերեց Արքան։

– Արխիվը եկեղեցունն է։ Այնտեղ մեր ներքին նամակագրությունն ու հրամաններն են։

– Ա՜… Ուրեմն, դա՞ եք այդպես խնամքով թաքուն պահել ժողովրդից։ Ամեն դեպքում ինչ-որ բան ունեք թաքցընելու։ Հենց արխիվի գոյության փաստը ժողովրդից թաքուն եք պահել։ Անկեղծ ասած, ես ինքս չեմ իմացել արխիվի գոյության մասին մինչև հիսուներկու տարեկան դառնալս։

Կաթողիկոսը լուռ էր։

– Հետաքրքիր է։ Հայ եկեղեցին հայ ժողովրդից թաքցընելու բան ունի։ Շա՛տ հետաքրքիր է։ Ժողովրդի հոգևոր առաջնորդները սեփական ժողովրդից ինչ-որ բան են թաքցընում։ Ուրիշ ի՞նչ կա արխիվում, կաթողիկո՛ս, բացի ձեր գաղտնի նամակագրություններից ու հրամաններից։

– Արխիվը եկեղեցու սեփականությունն է։ Ոչ մի մահկանացու չի կարող իր կեղտոտ մատներով…

– Դո՞ւք եք անմահները,– կտրեց նրան Արքան։– Կեղտոտ մատներո՞վ։ Ինչպիսի՜ արհամարհանք ու ատելություն։ Մի՞թե հոգևոր առաջնորդն ու գերագույն հովվապետն այդչափ ատելություն կունենա իր «հոտի» հանդեպ։ Ո՞ւր մնաց ամեն գառնուկի համար անձնազոհության պատրաստ հովվի կերպարդ, կաթողիկո՛ս։ Թե՞ դա միայն դիմակ է եղել։ Ասենք՝ անձամբ դու շատ չես էլ թաքցրել իսկական դեմքդ։

Կաթողիկոսը համառորեն լռում էր։

– Կաթողիկո՛ս, հանձնի՛ր արխիվի կոդը,– ասաց Արքան ամենայն լրջությամբ։

Կաթողիկոսը շարունակում էր լռել, որը միայն բացահայտ հրաժարում էր նշանակում։ Լռությունն անտանելի էր դառնում։ Բոլորը քար կտրած սպասում էին որևէ հանգուցալուծման։ Արքայի համբերությունը վերջացել էր։ Զայրույթն էլ գնալով աճում էր։ Սա բոլորն էին զգում։ Մի քանի վայրկյան ևս, ու նա կպայթեր ամպրոպի պես։ Բոլորի անթարթ ու լարված հայացքը Արքայի կողմն էր՝ որևէ արտառոց բանի ակնկալիքով։

– Կաթողիկո՛ս, հանձնի՛ր արխիվի կոդը,– կրկնեց Արքան ձայնի մեջ նկատելի զայրույթով։

– Արխիվը եկեղեցուն է պատկանում,– համառեց կաթողիկոսը։

«Վերջ, արդեն վերջ,– մտածեցին ներկաները։– Սա արդեն վերջն է»։ Արքայից ամեն ինչ արդեն սպասելի էր։ Նրա զայրույթին չափ չկար, սակայն, ոչ ոք չգիտեր՝ ինչ կանի Արքան։

Տարօրինակ կերպով, սակայն, դադարը երկարում էր։ Լռությունը ճնշող էր դառնում։ Արքան դեռ անշարժ էր։ Նա, իր թափանցող հայացքը կաթողիկոսին հառած, մտածում էր՝ ինչպե՞ս վարվի հետը։ Ուժով վերցնելը տարբերակ չէր։ Զայրույթի ոչ մի դրսևորում չէր օգնի։ Մահապատժից էլ բարձր պատիժ չկար։ Ի՞նչ անել...

Բոլորի համար անսպասելի, սակայն, Արքան շարունակեց շատ հանդարտ՝ առանց որևէ զայրույթի։

– Կաթողիկո՛ս, եթե կարծում ես, թե քեզ օգնության կհասնեն հովանավորներդ, կամ՝ «հավատակից ընկերնե-

ըրդ», ապա շատ ես սխալվում։ Ամեն մեկն իր շահն ունի։ Ոչ մեկն իր սեփական մաշկը վտանգելու մտադրություն չունի քեզ համար։ Դու և քո ողջ եկեղեցին կոպեկի արժեք չունեք։ Նրանք, ի դեպ, շատ վաղուց են մտմտում վերացնել եկեղեցիդ։ Կհարցնես ինչո՞ւ։ Շատ պարզ։ «Հավատակից ընկերներդ» երբեք չեն հանդուրժել եկեղեցուդ առաջնայնությունը, ժամանակային առումով, իհարկե։ Ամենահզոր ու ամենամեծաքանակ եկեղեցիներն երբեք չեն համակերպվել այն մտքի հետ, որ իրենք չեն առաջինը։ Ամեն կերպ լոմթյան են մատնել եկեղեցուդ առաջնայնության, նույնիսկ գոյության փաստը։ Կարծում եմ կհամաձայնես, եթե ասեմ, որ անպատվաբեր է նրանց համար մի աննշան եկեղեցու, ինչպիսին քոնն է, առաջնայնությունը։ Չես պատկերացնի, թե նրանք ինչպիսի ուրախությամբ կընդունեն եկեղեցուդ վերացման լուրը։ Մի խոսքով, անհույս է նրանցից օգնություն սպասելը։ Ով էլ որ փորձի փրկել քեզ, կամ նույնիսկ՝ ողջ եկեղեցիդ, միևնույն է, ոչինչ չի ստացվի։ Ես ոչ մեկի թելադրանքով չեմ առաջնորդվում, մանավանդ՝ հորդորներով։ Ցանկացած հորդորի միայն հակառակն եմ արձագանքում։ Ու, ընդ որում, շատ արագ, որ հետո ստիպված չլինեմ արդեն տեղի ունեցած դեպքերի պատճառով փոխել որոշումս։ Ես միշտ ամեն ինչ արագ եմ անում, որ բոլորից միշտ մի քանի քայլ առաջ լինեմ, որ իմ թշնամիներն իրե՛նք ստիպված լինեն հարմարեցնել իրենց քայլերը իմին։ Հասկացա՞ր։ Ես մյուս բոլոր երկրների ղեկավարներից տարբերվում եմ հենց նրանով, որ չեմ վախենում սխալվելուց։ Սխալներ բոլորն են գործում ու՝ միշտ։ Բայց, քանի որ ուրիշները զգուշավորությամբ են անում իրենց սխալները, ապա միշտ ինձնից մի քանի քայլ հետ են մնում։ Ես առանց որևէ երկյուղի ու առանց հապաղելու եմ անում սխալներս ու միշտ, մի քանի քայլ առաջ լինելով, ստիպում եմ բոլորին հարմարվել ինձ՝ իրենց մարտավարությունը հարմարեցնել իմ սխալների հետևանքով ծագած նոր իրավիճակներին։ Մարդուս բնույթն է այդպիսին, որ միշտ սխալներ է գործում։ Մարդուս բնույթն է նաև մոռանալ և՛ լավը, և՛ վատը։ Բոլոր սխալներն ու դրանց բոլոր հետևանքներն, ի վերջո, կմոռացվեն, կգնան կյանքի արագացող հորձանուտում։ Մարդիկ

ժամանակ չունեն հետ նայելու, մեղավորներ կամ անմեղներ ջոկելու։ Նրանք միշտ զբաղված են իրենց նախորդների կատարած սխալների հետևանքները մեղմելով ու այդ ընթացքում նոր սխալներ գործելով։ Բայց հիմնականում մտահոգված են սեփական կյանքը վայելելով։ Այն, վերջապես, մեկ անգամ է տրվում մարդուս, այդպես չէ՞։ Թե՞ դու կարծում ես՝ հավիտենական կյանք կա, Աստված... որ նա քեզ իր մոտ կտանի, տաքուկ տեղ կտա՝ շրջապատված բազմաթիվ կույսերով... Դո՛ւ էիր ահաբեկում մարդկանց Աստծո պատիժներով։ Նրա պատիժներից չե՞ս վախենում։ Չե՞ս վախենում հայտնվել այնտեղ, ուր հավիտենական այրվել կա, այն էլ՝ ծծումբի ծովում, ատամների կրճտոց... Չէ՞, դու իհարկե նման մանկական պատմությունների չես հավատում։ Ի՞նչ հավիտենական կյանք, ի՞նչ այրվել... Դու լուրջ, աթեիստ մարդ ես, այդպես չէ՞։ Քեզ համար այս կյանքից այն կողմ ուրիշ ոչինչ չկա։ Դու, եթե հավատայիր դժոխքի բոլոր պատմություններին, ապա չէիր գործի այն բոլոր մեղքերը, որ գործել ես։ Ու քեզ հետ միասին՝ հավատակից գործընկերներդ։ Եթե դժոխք լիներ, դուք բոլորդ դժոխքի բաժին էիք դառնալու՝ ձեր գործած բոլոր մեղքերի համար։ Չէ՞, դուք ոչ մեկդ էլ չեք հավատում ո՛չ դժոխքի, ո՛չ էլ դրախտի գոյությանը։ Գուցե ոչ մեկն էլ չկա... Մահից հետո ոչ ոք հաստատ չգիտի՝ ինչ կա, ինչ չկա... Ոչինչ էլ չկա, երևի։

Կաթողիկոսը լուռ լսում էր, սիրտը՝ դող։

– Լսի՛ր, կաթողիկո՛ս, եթե, իրոք, արխիվը համարում ես եկեղեցու սեփականությունը, ապա իմացիր, որ եկեղեցիդ այլևս չկա։ Ես վերացրել եմ այն՝ որպես կառույց։ Եկեղեցու ողջ սեփականությունն արդեն համազգային սեփականություն է ու գտնվում է անձնապես իմ իշխանության տակ։ Հետևաբար, նաև՝ եկեղեցու գաղտնի արխիվը։ Դու պարտավոր ես ինձ հանձնել արխիվի կողը։ Հրաժարումդ միայն ավելի կծանրացնի հանցանքդ հայ ազգի հանդեպ։

Կաթողիկոսը համառորեն շարունակում էր լռել։

– Եթե չհամագործակցես, միևնույն է՝ ոչինչ չես փոխի։ Միայն կստիպես ինձ մեծ ծախսերի գնով փոխել դրոները։ Դա, իհարկե, ազգային գանձարանի վրա ահագին

գումար կնստի, հետևաբար՝ կգրգռի ազգակիցներիդ զայրույթը քո և ողջ եկեղեցուդ հանդեպ։ Իսկ դա կավելացնի եկեղեցիդ վերացնելու իմ որոշման կողմնակիցների քանակը ու ահագին կմեղմի ընդդիմադիրների վրդովմունքը,– շարունակեց Արքան։

Կաթողիկոսը դեռ ոչ մի համագործակցելու նշան ցույց չէր տալիս։

– Կաթողիկո՛ս, վերջին անգամ եմ կրկնում։ Եկեղեցիդ արդեն չկա։ Նրա ու նաև նրա բոլոր սպասավորների ողջ ունեցվածքն արդեն համազգային սեփականություն է, արխիվը՝ ներառյալ։ Դու ոչ մի իրավունք չունես չտալու կոդը։ Դրսից օգնություն ակնկալելն անիմաստ է։ Նախ՝ չի գա, հետո, եթե գա էլ, միևնույն է՝ օգուտ չունի։ Քեզ հենց նոր բացատրեցի իմ մարտավարությունը։

Կաթողիկոսը ոչինչ չէր ասում։ Դեռ շարունակում էր համառել։ Ընդարմացած, դեռ ոչինչ չէր կարողանում կշռադատել։ Չէր հավատում իրողությանը։

«Ինչպե՞ս թե եկեղեցին չկա։ Սա արդեն խորը անպատվություն է։ Բա հետո ի՞նչ է լինելու։ Ի՞նչ մահապատիժ։ Էս խելագարը որտեղի՞ց բսնեց։ Գժվե՛լ է։ Դատավորի՛ս տեսեք։ Հետն էլ ուզում է՝ կոդը տամ։ Չէ՛, չե՛մ տա։ Կմեռնեմ՝ չե՛մ տա։ Թող չարչարվի, տանջվի։ Դուռ փոխելը հեշտ բան չի։ Չգիտի ինչի հետ գործ ունի։ Թող չարչարվեն, տանջվեն ազգովի։ Ապերախտնե՛ր։ Քոսոտնե՛ր։ Սա էլ՝ շնորհակալությունը, հա՞։ Դարեր շարունակ... Էս ո՞նց եղավ։ Ո՞նց սխալվեցի։ Ո՞նց չհասկացա՝ ինչ էր գալիս գլխիս։ Բա սրան իշխանության մոտ կթողնեի՞։ Ասենք՝ չէ, մի ձայն միշտ ասում էր՝ մի՛ թող սա գա իշխանության։ Բայց արդեն ուշ էր՝ ժողովրդական ալիք էր բարձրացել։ Ո՞նց շուտ չնկատեցինք սրան։ Օրորոցում կըխեղդեի։ Ե՞րբ էր սկսել։ Անիծվի համացանցը։ Ա՛յ, թե այն ժամանակ ձեռքս կընկներ։ Չէ՞, սա գիտեր՝ ինչ է անում։ Օգտվեց համացանցից։ Տարածեց իր մտքերը։ Մինչև գլխի ընկանք, արդեն ուշ էր։ Վարակն արդեն մտել ու տարածվել էր ժողովրդի մեջ։ Հաշվի չառա, որ էլ Քրիստոսի ժամանակները չեն։ Չզգացի, որ գլխիս սև ամպեր են կուտակվում։ Անիծյալ օգնականներս էլ բան չհասկացան։ Տհասնե՛ր։ Բայց սա անխելք չի։ Չէ՞, ո՛չ կաթոլիկները, ո՛չ

էլ ուղղափառները ոչինչ չեն անի՝ ինձ փրկելու համար։ Ե՛վ կաթոլիկները, և՛ մանավանդ ուղղափառները միշտ քամահրանքով են վերաբերվել մեզ։ Ո՞վ կուզի տեսնել իրենցից հին եկեղեցի, մանավանդ՝ աննշան, կորած-մոլորած մի երկրում, այն էլ՝ արևելյան։ Ի՜հա՛րկե, նույնիսկ կուրախանան սրա արածի համար։ Իսկ միջազգային հանրությո՞ւնը... Է՜, ի՞նչ միջազգային հանրություն։ Ամբողջ իշխանությունն էն անիծվածների ձեռքերում է։ Նրանք էլ թքած ունեն ինձ վրա։ Սա նրանց հեչ բանի տեղ չի դնի, եթե նույնիսկ միջամտեն էլ։ Խելագար է։ Միանգամից հակառակը կանի։ Իր ազգի պես ծուռ է։ Իր պես ծռերի էլ հավաքել է գլխին... Բայց սա ինձ դեռ չի ճանաչում։ Խև՛, միամի՛տ, ծո՛ւռ։ Չե՛մ տա»։

Կաթողիկոսը դողում էր կատաղությունից։ Ակներև էր, որ ահավոր մտատանջություններ մեջ էր խեղճը։

– Կաթողիկո՛ս, քեզ մեկ ժամ ժամանակ եմ տալիս՝ մտածելու համար,– երկար լռությունը խախտեց Արքան։– Կամ հոժարակամ կտաս կողը, միաժամանակ անկեղծորեն ու հրապարակավ ներում խնդրելով՝ Արքային ու երկիրը անիծելուդ համար, ու գուցե մահապատիժդ փոխարինեմ ցմահ աքսորով, կամ մյուս երեք ոճրագործների հետ միասին կախաղան կբարձրանաս։ Հասկացա՞ր։

Այս ասելուն պես, Արքան դիմեց Ազատին.

– Ազա՛տ, հետ տարեք սրան։ Այնպես արեք, որ չկարողանա ինքն իրեն վնասել։ Մեկ ժամից ողջ և անվնաս կբերեք մոտս։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Ազատն ու արագորեն նշան արեց, որ նույն թիկնապահները կատարեն Արքայի հրամանը։

Արքան այնուհետև շրջվեց իր բժշկի կողմը։

– Բժի՛շկ, խնդրում եմ, քննիր կաթողիկոսին։ Տես՝ ի՞նչ առողջական վիճակում է։ Բժշկիր, եթե կարիքը կա։ Նա ինձ ողջ և առողջ է պետք։

– Ի՛մ Արքա, թույլ տուր նկատել, որ չափազանց մեծ ճնշումների ու լարվածության մատնեցիր կաթողիկոսին։ Զարմանում եմ, որ դեռ առույգ է։

– Ճիշտ ես, բժիշկ։ Բայց մի զարմանա։ Սրանց չոռը չի կպնում։ Սրանք իրենց ողջ կյանքում ո՛չ աշխատել են,

ո՛չ էլ մտահոգվել որևէ բանի մասին։ Սրանք միշտ անհոգ կյանք են վայելել՝ ժողովրդին հանձնած իշխանավորների հոշոտմանը։ Սրանց կաշին հաստ է, մի անհանգստանա։

Բժիշկը ժպտաց այնպես, ասես Արքայի ասածն իր սրտովն էր։ Գլուխ տվեց նրան, ու Ազատի հետ միասին թիկնապահների թևերից կախ ընկած կաթողիկոսին տարան դուրս։

***

Բոլորը կարկամել էին։ Լռությունն առաջինը խախտեց Սարգիսը՝ Արքայի երկրորդ խորհրդականը։

– Ի՛մ Արքա, դու ասացիր, որ նաև եկեղեցու բոլոր կրոնավորների անձնական ունեցվածքն ես ազգայնացրել։

– Այո՛, հապա էլ ինչպե՞ս։

– Ի՛մ Արքա, դա գուցե մի քիչ շատ է։ Մարդիկ դեռ անձնական սեփականության իրավունք ունեն։ Ըստ մեր Ազգային Սահմանադրության՝ մարդկանց տունն ու ողջ անձնական ունեցվածքը չի կարող ազգայնացվել՝ առանց համարժեք փոխհատուցման։

– Ճիշտ է, Սարգի՛ս, ճիշտ է։ Բայց դու մոռանում ես, որ դա վերաբերում է միայն այն դեպքերին, երբ մարդիկ իրենց սեփական քրտինքով, իրենց կամ իրենց զավակների ժամանակի ու առողջության գնով, վերջապես, իրենց սեփական ձեռքերով են կերտել այդ սեփականությունը. տուն լինի այն, թե՝ անձնական անհրաժեշտության պարագաներ։ Բայց տվյալ դեպքում կրոնավորներից և ոչ մեկը երբեք մատը մատին չի տվել՝ բերք ու բարիք արարելու համար։ Դրանք միայն կլանել են, խժռել ու լափել։ Պարտադրել են մեր ազգակիցներին վճարել իրենց «հոգևոր» ծառայությունների համար։ Պարտադրել են, չնայած իրականում ոչ մի պարտադրանք չպիտի լիներ, այդպես չէ՞։ Իրականում տերտերը ոչ մի վարձատրություն չպիտի ակնկալեր։ Եկեղեցու եկամուտները պիտի գոյանային միայն մարդկանց հոժարակամ ու գաղտնի նվիրատվությունների հաշվին։ Ասա, տեսնեմ, ինչպե՞ս են գոյացել եկեղեցու և եկեղեցու սպասավորների անձնական գումարները։ Այցելուների հոժարակամ, մանավանդ՝ գաղտնի նվիրատվություններո՞վ, թե՞ պարտադրանքով կամ՝ այլ զարտուղի

ճանապարհներով։ Ո՞ր մեկս չգիտեինք տերտերին վճարելու անհրաժեշտության ու մանավանդ վճարի չափի մասին։ Ո՞ր մեկս չենք երկյուղել, թե՝ «Տերտերն անվարձ մնաց, կբարկանա, կանիծի»։ Ո՞ր մեկս չենք վրդովվել մանավանդ մոմավաճառության կապակցությամբ։ Ասա, տեսնեմ, ինչպե՞ս կարողացան սրանք հարստություն դիզել՝ առանց չարչարվելու։ Զարմանալի չի՞, որ սրանք ավելի շատ հարստություն ունեն, քան մեր բազմաչարչար ազգակիցները։ Ինչո՞ւ չես զարմանում, որ կրոնավորներն ընդհանրապես հարստություն ունեն, ճոխ տներ, ավտոմեքենաներ, պերճանքի առարկաներ, ոսկի, նույնիսկ՝ սեփական բիզնեսներ, իհարկե ուրիշների անուններով գրանցված։ Չե՞ս զարմանում, որ կրոնավորը ոսկու սեր ունի, մանավանդ՝ ագահություն ու հարստություն կուտակելու մարմաջ։ Չե՞ս զարմանում, որ այդ նույն կրոնավորները թքած ունեն, թե ինչպես են ապրում մյուսները։ Իհարկե, չես զարմանում։ Ի՞նչ զարմանալու բան կա։ Լսիր, թե ինչ են պատմել ինձ Կալիֆորնիայում։ Մի հայ երիտասարդ, հավանաբար ոչ հարուստ ընտանիքից, որոշում է ամուսնանալ մի մեքսիկուհու հետ։ Ինչո՞ւ ոչ հայի հետ։ Չգիտեմ։ Գուցե, որովհետև հայերի մեջ աղքատ հայ երիտասարդին աղջիկ տըվող չէր գտնվել։ Չգիտեմ... Մեքսիկուհին առանց որևէ ընդդիմության համաձայնվում է ամուսնանալ ապագա ամուսնու հարազատ հայ եկեղեցում՝ նրա բոլոր օրենքներով և այլն։ Բայց, երբ գալիս են տերտերի մոտ, սա հազար հինգ հարյուր ամերիկյան դոլար է պահանջում՝ ամուսնական ծիսակատարությունն անցկացնելու համար։ Պատկերացնո՞ւմ ես։ Միջին խավի ամերիկացու մեկ ամսվա աշխատավարձի չափով գումար։ Մեր երիտասարդը գուցեև վճարեր, եթե կարողանար։ Բայց ո՛չ գումար ունենալով, ո՛չ էլ արդեն ցանկություն, որոշում է ամուսնանալ հարսնացուի հարազատ կաթոլիկ եկեղեցում, որտեղ վարձավճար չեն պահանջում։ Բնականաբար, այս դժբախտ պատմության խեղճ ու կրակ հայ երիտասարդն իր ապագա երեխաների մկրտությունը նույնպես կանի նույն՝ կաթոլիկ եկեղեցում։ Զարմանո՞ւմ ես։ Իհարկե՝ ոչ։ Վրդովեցնող պատմություն է, նույնիսկ՝ զայրացնող, բայց ոչ՝ զարմացնող, այդպես չէ՞։ Հիմա ասա, բա սրանք արժանի

չե՞ն պատժի՝ ժողովրդի արյունը ծծելու, իրենց «հոտին» ոչ միայն արնաքամ անելու, այլ նաև ուծացման մղելու համար, որին իբր կոչված էին պահել ու պահպանել, մանավանդ՝ օտարության մեջ։ Բա չարժի՞ հետ վերցնել սրանցից ողջ գողունը, ժողովրդից կողոպտված ողջ հարստությունը։ Ո՞ր մեկիս պարզ չի սրանց հանցագործ էությունը։ Դե ասա, էլ ի՞նչ դատ ու դատաստան... մանավանդ՝ հետաքննություն...

Երկու խորհրդականներն էլ կախել էին գլուխները։ Արքան, տեսնելով, որ նրանք ասելու ոչինչ չունեն, շարունակեց.

– Ես անձամբ ներկա եմ եղել Լոս-Անջելեսի մեջ հայկական եկեղեցում ամուսնական մի արարողության։ Չես պատկերացնի՝ ի՞նչ նողկալի էր։ Ի դեպ, առաջինը մեծ որդիս նկատեց։

Արքան մի փոքր առաջ թեքվեց ու հայացքն ուղղեց Տիգրանին՝ իր ավագ որդուն, որն օրվա թեժ անցուդարձի ողջ ընթացքում ուշի-ուշով հետևում էր դեպքերի աննախադեպ զարգացումներին։ Տիգրանը գլխով արեց ու հոր նշած տեսարանը մտաբերելուց հետո աչքերն ակամայից ներքև հառեց՝ նորից վերապրելով ողջ ամոթն ու զայրույթը, որ զգացել էր այդ օրը։

Արքան շարունակեց.

– Սարգի՛ս, արարողությունն անցկացնում էին մի քանի տերտեր։ Բոլորն էլ, իհարկե, պարարտ մարմիններով ու գոռոզ, ինքնահավան, նույնիսկ ամբարտավան կեցվածքով։ Նրանցից մեկը, որ գուցե իր բաժին վարձավճարը քիչ էր համարել, կամ գուցե դեռ չէր ստացել այն գլխավոր տերտերից ու չգիտեր էլ, թե որքան էր լինելու, բայց, կռահելով, որ շատ չէր լինելու, ամենաանհոգ կեցվածքով՝ մի ուսով պատին հենված, էր արտասանում արարողության տեքստերը։ Ես նման բան չէի տեսել։ Որքան էլ աչքները փողի, միևնույն է, նման անհոգ պահվածք չէի տեսել։ Իմ տեսած բոլոր տերտերները մեծ վարպետությամբ են խաղացել իրենց դերը՝ առերևույթ մեծագույն արժանապատվություն ցուցադրելով ու համապատասխան հարգանք ու խոնարհում պահանջելով։ Այս մեկը, սակայն, արտառոց բան էր։ Դու պիտի տեսնեիր...

Երկու խորհրդականները դեռ կախել էին գլուխները։ Ամոթի հետ միախառնված վրդովմունքի ու զայրույթի անասելի զգացումը բոլոր ներկաներին ընկղմել էր խոր մտքերի մեջ, հայացքները հատակին հառած ու՝ անհուն հեռուն։

«Ի՞նչ է լինելու հիմա, եկեղեցու վերացումից հետո»,– մտածում էին նրանք։ Ամեն ինչ շատ արագ էր կատարվում։ Ազգովի զրկվում էինք մի բանից, որը թեկուզ անցանկալի ուռուցք էր մեր մարմնում, բայց մերն էր։ Միշտ մեզ հետ էր եղել, ու մեր կյանքը չէինք պատկերացնում առանց դրա։ «Ախր, ինքներս ենք սնել, պահել։ Համարյա հարազատ բան կա դրա մեջ։ Ճիշտ է, շատ է թունավորել մեր մարմինը, բայց մեր միս ու արյունն է մեջը, մեր գենետիկ կոդը։ Համարյա մեր ինքնությունն է եղել։ Ինչպե՞ս կարելի է կտրել ու դեն շպրտել։ Արքան մի քիչ շատ չի՞ շեղվել,– մտածում էին բոլորը։– Կարծես վատ բան չկար նրա որոշման մեջ, բայց... Ճիշտ է, եկեղեցու վերացմանը շատերն էին սպասում, ոմանք նույնիսկ անհամբեր ու զարմանում էին, որ դեռ կար այդ կառույցը։ Բայց հիմա ի՞նչ է լինելու»։

Արքան լուռ զննում էր ներկաներին։ Նրա խորաթափանց ու ամենատես աչքից ոչինչ չէր վրիպում։ Նա մի աներևակայելի կարողություն ուներ տեսնելու անտեսանելին, լսելու չասվածը, նույնիսկ՝ գուշակելու դեպքերի հետագա ընթացքը. գուցե որովհետև հաճախ ի՞նքն էր թելադրում այդ բոլորը... Բայց՝ ոչ միայն։ Դեռ մանկությունից ինքն իր մեջ նկատել էր դեռևս տեղի չունեցած իրադարձությունները կանխագուշակելու մի անպատմելի ունակություն։ Նա նույնիսկ նկատել էր, որ կարողանում էր ըստ իր ցանկության կանխորոշել, շեղել ծավալվող իրադարձությունների ընթացքը, նույնիսկ՝ մարդկանց ճակատագրերը։ Զարհուրելի էր, սակայն մի քանի անգամ նույնիսկ կանխորոշել էր որոշ չարամիտ մարդկանց մահը։ Գուցե տարիքի հետ... կամ գուցե սեփական ունակությունների ահարկու բնույթը ինքնակամ զսպելու մղումը թուլացրել էին նրա կարողությունները։ Բայց հիմա՝ ժողովրդի կողմից գահ բարձրացվելու ու երկրում ողջ իշխանությունն իր ձեռքում ունենալու օրվանից սկսած, այդ

ունակությունները սկսել էին զարթնել ու զորանալ։ Արքան խորությամբ զգում էր ներկաների հավաքական միտքը։ Բոլորը լուռ էին, պատասխանի ծարավ ու գլուխները կախ՝ սպասումի մեջ։

– Սիրելինե՛րս, վհատվելու կարիք չկա,– լռությունը խախտեց Արքան։– Եկեղեցու վերացումը կարիք չկա կորուստ համարել։ Այն մեզ միայն խանգարում էր։ Հիշո՞ւմ եք՝ Քրիստոսն ինչ է ասել. «Եթե ձեռքդ խանգարում է քեզ, ապա կտրիր ու դեն նետիր»։ Դա, իհարկե, փոխաբերական իմաստով է ասել։ Համատիեզերական օրինաչափություն կա. եթե որևէ բան չի օգնում, ուրեմն՝ խանգարում է։ Իսկ, եթե խանգարում է, ուրեմն պետք է ձերբազատվել, առանց տարակուսելու կտրել ու դեն նետել։ Այնպես, ինչպես օդապարիկի ավազով լի պարկերն են կըտրում ու դեն նետում վեր բարձրանալու համար։ Այլապես՝ կշարունակի ներքև քաշել ու խոչընդոտել վերընթացին։ Քրիստոսն իմաստուն ու արիասիրտ մարդ էր, մարգարե։ Տեսնում էր անտեսանելին, գուշակում, նույնիսկ՝ կանխորոշում ապագան։ Ասում էր, որ կգա ոգու սով։ Գիտեր՝ մեզ ինչ է սպասվում։ Ոգու սովն էր մեր դժբախտությունների պատճառը, բոլոր դժբախտությունների։ Ոգու սով ասելով, ի նկատի ուներ ուսմունքի բացակայությունը, իր իսկ ուսմունքի բացակայությունը։ Այդ ուսմունքն, իրոք, չկար։ Այն վերացրել ու տեղը կրոն էին վաճառում։ Մեղրի տեղ թույն էին տալիս, այն էլ՝ փողով։ Ինչպե՞ս կարելի էր հանդուրժել։ Դժվարությունն այն էր, որ դարեր շարունակ մեղրը թույնի աստիճանաբար ու աննկատ էին փոխել։ Այդ պատճառով, աստիճանաբար մարեց մեր ազգային մշակույթը։ Ամեն նոր սերունդ մի փոքր այլ կերպ էր մտածում ու գործում։ Ցնցումային փոփոխություններ էլ եղան։ Վերջին հարյուր-հարյուր քսան տարվա ընթացքում բազմաթիվ նոր ու հիմնականում մոլորեցնող ուսմունքներ ու փիլիսոփայություններ մտան, այն էլ՝ ահագնացող տեմպերով ու ոտի տակ տվեցին մերը՝ մեր արժեհամակարգը, մեր մշակույթը։ Մենք շատ փոխվեցինք՝ կորցնելով մեր ազգային ուսմունքը, կորանք՝ որպես ազգ։ Դառանք անուսմունք, անգաղափար, աննպատակ ու անկազմակերպ, սովորական մի ժողովուրդ։ Խոցում ու հոշոտում էինք իրար, խաբում ու

կողոպտում։ Ընդ որում, եկեղեցին, համարվելով մեր ազգի միակ «հոգևոր» կառույցը, ոչինչ չարեց ազգապահպանության համար։ Ոչինչ չարեց՝ կասեցնելու ներազգային գրզվրտոցն ու արտագաղթը։ Հանձնեց ժողովրդին իշխանավորների հոշոտմանը։ Հատկապես անկախության երեսուն տարիների ընթացքում, իշխանավորների թիկունքին կանգնած ու, նրանց հետ համագործակցելով, հալածեց մեր մըտավորականներին։ Խոսքս արվեստի գործիչների մասին չէ, կամ որոշ գիտնականների։ Մտավորականն ազգի մասին մտահոգված մարդն է՝ անկախ ճանաչումից, մասնագիտությունից ու տարիքից։ Որքա՜ն երիտասարդ մարդ իրեն պատեպատ տվեց՝ արդարությունը վերականգնելու մղումով։ Եկեղեցին որևէ բան արե՞ց նրանց կողքին կանգնելու, նրանց սատարելու համար։ Փոխարենը՝ իշխանավորներին ու հարստացած խուժանին սատարեց, դրանով նպաստելով արտագաղթի տեմպերի արագացմանը։ Սրանի՞ց էլ ազգակործան բան։ Համարյա հայություն չէր մնացել երկրում, մեծամասնությունը՝ դրսում, ուծացման վըտանգի տակ։ Իսկ իրենք մարդկանց կյանքը, հատկապես ութսունութի երկրաշարժից ավերված գյուղերի ու քաղաքների բնակիչների կյանքը բարելավելու փոխարեն, միլիոններ էին ծախսում նորանոր եկեղեցիներ կառուցելու վրա և՛ ներսում, և՛ հատկապես՝ դրսում։ Ի՞նչ փողերով։ Իհարկե՝ նույն ժողովրդից կողոպտված ու հարստացած խուժանի ձեռքերում հայտնված փողերով, այդպես չէ՞։

Բոլոր ներկաներն ինքնաբերաբար գլխով արեցին։

– Իրավ չե՞մ ասում,– շարունակեց Արքան։

– Իրավ է,– միաձայն շշնջացին բոլորը։

– Եկեղեցին, ամեն սրբություն ոտնահարած, սատարեց իշխանավորների գայլային ախորժակը։ Թույլ տվեց, որ ստրկացնեն շինականին, դնեն նրան անհաղթահարելի հարկերի, վարկերի ու պարտքերի տակ, ստիպեն վճարել ոռոգման ջրի համար։ Այն ջրի, որն Արարիչն էր երկնքից առատորեն ցած բերել ու նվիրել ամեն հայի։ Ու ինչի՞ համար։ Որ թույլ չտան շինականին սննդամթերք արտադրել ներսում, որ իրենք դրսից բերեն այն, որ անկաշկանդ կառավարեն գները։ Կա՞ ավելի ազգադավ ծրագիր։ Դա ստիպեց շինականին լքել իր հայրենի ոստանը, հեռանալ երկ-

րից։ Ծվարել հեռուներում, ուր ավելի տանելի պայմաններ կկարողանար գտնել։ Մեր հայրենիքն արդեն մեր հայրենիքը չէր։ Ինչո՞ւ։ Որովհետև չկար մեր արժեհամակարգը։ Որովհետև օտար արժեհամակարգ էր տիրում մեր երկրում, Բելի արժեհամակարգը՝ կապիտալիզմը, ստրկացնելու, կողոպտելու, աշխատավորի վերջին շապիկն էլ հանելու արժեհամակարգը։ «Էս սարն իմն է, էս ծառն իմն է»։ Ի՞նչ իրավունք ունի որևէ մեկը սեփականացնել հայրենի բնաշխարհի որևէ հատված։ Մեր նախնյաց օրենքով ամեն ինչ համազգային սեփականություն է՝ պատկանում է ամեն հայի հավասարապես։ Սա՛ է մեր ազգային արժեհամակարգը, մեր ուսմունքը։ Սա ու սրանից բխող շատ ու շատ այլ դրույթներ ենք ուսուցանելու մեր աճող սերնդին։ Նոր ազգ ենք կերտելու։ Այն, որ կար Նահապետ Հայկի օրոք ու դեռ նրանից էլ առաջ։ Նաև՝ նրանից հետո, իհարկե։

Արքան մի փոքր դադար առավ ու շարունակեց.

– Եկեղեցու բոլոր հողերն ու շինությունները կօգտագործվեն մեր ազգային Արարչական ուսմունքն ուսուցանելու ու սերմանելու համար։ Ի դեպ, Քրիստոսի տարածած ուսմունքը մեր ազգային ուսմունքի հետ շատ ընդհանուր դրույթներ ունի։ Նա անձամբ ուսանել է Հայաստանում, բայց ոչ՝ հունա-հռոմեական՝ հեթանոս, ուսմունքի սպասավոր քրմերի մոտ։ Իր ժամանակ Հայաստանում դեռ կային մեր ազգային, անապական ուսմունքի կրողներ։ Հենց նրանց մոտ էլ ուսանել է Քրիստոսը։ Ճիշտ է, իր շատ կարճ՝ երեք տարվա, քարոզների ընթացքում չհասցրրեց ուսուցանել այն ամենն, ինչ սովորել էր։ Ժամանակից բացի, ուրիշ խանգարող բան էլ կար՝ լսողների ունակությունը։ Ասողին լսող է պետք։ Ամեն դեպքում, իր քարոզչության երեք տարվա ընթացքում նա չհասցրեց սովորեցնել ամեն ինչ։ Ոճրագործ կրոնավորները շատ արագ ձերբակալեցին ու սպանեցին խեղճին։ Ոչ ոք չպաշտպանեց նրան, ոչ ոք։ Սակայն նրանից հետո իր աշակերտները շարունակեցին իր գործը։ Առաջին դարի ընթացքում հիմնվեցին Քրիստոսի ուսմունքի հետևորդների համայնքներ։ Նրանք էլ հալածվեցին, հետապնդվեցին ու ոչնչացվեցին չարի ուժերի կողմից։ Բայց, բարեբախտաբար՝ ոչ բոլորը։ Հիշո՞ւմ եք՝ Քրիստոսի աշակերտներից երկուսը ապաս-

տան գտան մեր Աբգար Արքայի մոտ։ Աբգար Արքան ընդունեց մեր նախնյաց ուսմունքը։ Ինքն՝ անձամբ, մկրտվեց, ու իր հետ միասին նաև՝ իր ողջ ժողովուրդը։ Չնայած հալածանքներին՝ Քրիստոսի գործն առաջ էր գնում նրա բոլոր հետևորդների ջանքերով։ Ուսմունքի հետևորդ համայնքներ հետագայում կազմավորվեցին Մեծ Հայքի այլ վայրերում ևս։ Մեր ժողովուրդն արագորեն ճանաչում ու ընդունում էր ուսմունքը, որն, ինչպես ասացի, հենց մեր ազգայինն էր, որ դարեր շարունակ մոռացության էր մատնվել օտար ազդեցությունների, հատկապես՝ հունա-հռոմեականի պատճառով։ Սկզբում՝ ասորա-բաբելական, հետո՝ պարսկական, իսկ վերջում արդեն հունա-հռոմեական ազդեցությունները խարխլել էին մեր ազգային ուսմունքը։ Քրիստոսը գտավ մեր անապական ուսմունքն ու վերականգնեց այն մեզ համար։ Բայց, ավա՜ղ, ոչինչ հավերժական չէ։ Շուտով դա էլ սկսեց փոփոխվել։ «Նոր Կտակարանի» գրքերը գրվել են Քրիստոսի մահից քառասուն-հիսուն տարի հետո։ Ու հիմա, համարյա երկու հազար տարի անց, դժվար է իմանալ՝ գուցե «Նոր Կտակարանում» չի գրվել այն ամենն, ինչ նա ասել է, կամ գուցե գրվել են բաներ, որ չի էլ ասել։ Բայց իմանալով հիմնականը, մեր գենետիկ հիշողության ուժով կարողացանք վերականգնել չասվածը կամ՝ գրի չառնվածը, նաև՝ ուղղել թերի, երբեմն էլ՝ սխալ մեկնաբանությունները։ Բայց ամենաողբալին այն եղավ, որ չարի ուժերն աղավաղեցին ու աստիճանաբար կրոնի վերածեցին Քրիստոսի կողմից պեղված ու վերականգնված մեր իսկ Արարչական ուսմունքը։ Մեղրը թույն դարձրին չարի ուժերն ու սկսեցին վաճառել այն՝ որպես մեղր։ Համանուն կրոնի մեջ համարյա ոչինչ չէր մնացել Քրիստոսի քարոզած ուսմունքից։ Ինչ էլ որ մնացել էր, կամ լռության էր մատնված, կամ խեղդված էր մոլորեցնող մեկնաբանություններով։ Քրիստոսի տարածած ուսմունքը, կամ գոնե այն, ինչ գրավոր մեզ է հասել, հենց մեր՝ ազգային, Արարչական ուսմունքի մի մասն է։ Մենք վերականգնեցինք ամբողջը, որի հիման վրա էլ գրեցինք մեր Ազգային Սահմանադրությունը։ Այսուհետև մեր ամբողջական Արարչական ուսմունքը կուսուցանվի կրոնավորների ճիրաններից ազատագրված տարածքներում։ Այնտեղ

կուսուցանեն մեր ազգի իսկական հոգևոր մշակները՝ մեր մտավորականները։ Այնտեղ կզարգանա նաև մեր ազգային արվեստը, հատկապես՝ գորգագործությունն ու կարպետագործությունը։ Բա էլ որտե՞ղ։ Մի՛ տարակուսեք, բարեկամնե՛րս։ Ե՛վ ազգային ուսմունքը, և՛ ազգային արվեստներն ու արհեստներն անբաժանելի ամբողջի մասերն են։ Չի՛ կարելի տարանջատել ազգային ուսմունքն ազգային արվեստից։ Դրանք մեկը մյուսից բխող ու միմյանց փոխլրացնող մեր ազգային աշխարհճանաչողության տարբեր դրսևորումներն են միայն։ Ամեն բան, վերջապես, կվերադառնա իր տեղն ու կունենա իր տունը։ Մեր ուսմունքի ուսուցիչներն ու ուսանողները ուսմունքի հետ միասին կըպահպանեն ու կզարգացնեն մեր ազգային արվեստներն ու արհեստները։ Եկեղեցին միայն մեր ճարտարապետներին, նկարիչներին, քանդակագործներին ու գրքեր նկարազարդող մեր հանճարներին էր օգտագործում ու միայն՝ կրոնական քարոզչության համար։ Այն էլ՝ դեպքից դեպք։ Նրանց ձեռքի գործերն էր պահում ու պահպանում ու միայն կրոնական՝ պաշտամունքային, առընչություն ունեցողները։ Այլևս այդպես չի՛ լինի։ Մեր բոլոր արվեստներն ու արհեստները մեր ազգային ուսմունքն ուսուցանող մշակների հետ միասին իրենց մշտական տունը կգտնեն։ Կրոնի ճիրաններից ազատագրված շինությունների համակարգը կդառնա մեր ազգային՝ Արարչական, ուսմունքի ու արվեստների ուսուցման, պահպանման ու ցուցադրության կենտրոն։ Այդ բոլորը կլինի անձնապես իմ պատասխանատվության ու հսկողության տակ։

***

Այդ պահին զանգահարեց Արշակը։ Լսափողը տվեցին Արքային։

– Ասա՛, Արշա՛կ։

– Ի՛մ Արքա, տղաները պարապ են։ Սպասում ենք կոդին։

– Համառում է սրիկան։ Ես նրան մեկ ժամ ժամանակ եմ տվել մտածելու։ Շուտով պարզ կլինի։ Ես քեզ կզանգեմ։ Մի բան էլ… Շուտով այդտեղ կլինեն ներքին գործերի նախարարության սպաները։ Նրանց հանձնիր առգրավ-

ված շինությունների ու ձերբակալված քահանաների պահ-պանությունը։ Ես նրանց վրա եմ դրել նաև բոլոր կրոնավորներին գյուղերում տեղավորելու գործը։ Դու զբաղվիր միայն արխիվով, համակարգչային ցանցով ու գրադարանով։ Կոդը փոխելուց հետո մի ընտիր ջոկատ կդնես համակարգիչների վրա հերթապահելու։ Եղա՞վ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Ներքին գործերի նախարարության սպաներն արդեն այստեղ են։ Անցել են գործի։ Հենց այդպես էլ անում ենք։

– Շա՛տ ապրեք։ Դե՛, առա՛յժմ։

Կապն ընդհատելուն պես, Արքան շրջվեց դեպի Ազատը.

– Ազա՛տ, դեռ ինչքա՞ն ժամանակ ունի էդ սրիկան։

– Ի՛մ Արքա, դեռ մի կես ժամ էլ կա։ Բժիշկը տղաների հետ դեռ մոտն են։ Ամեն ինչ նորմալ է։ Պնդաճակատն է։ Բժիշկն ասաց՝ քարի պես պինդ առողջություն ունի։

– Ասում էի, չէ՞, դրանց չոռը չի կպնում։ Հա, իսկ անակնկալներ չե՞ն լինի։ Հուսալի՞ եք կապկպել։

– Ի՛մ Արքա, նեղացնում ես։ Տղերքն էլ երկուսով աչքները չորս արած հսկում են,– ասաց Ազատը, մի փոքր կարմրելով ու գլուխը երեխայի պես կախ գցելով։

Ազատն Արագածի հեռավոր գյուղերից էր։ Կարմիր մազերով ու մազերից էլ կարմիր դեմքով։ Ու, երբ ամաչելուց կարմրում էր, դեմքի գույնը մազերի գույնից չէր տարբերվում համարյա։ Արքան սիրում էր Ազատի հոգու հետ խաղալ։ Արքային դուր էր գալիս Ազատի ամաչկոտությունը, մանավանդ, երբ դեմքի գույնն ու մազերի գույնը խառնվում էին իրար։ Ու, երբ դա տեղի էր ունենում, Ազատն ավելի էր նմանվում այլմոլորակային էակի՝ իր պիրկ ու հաղթանդամ մարմնով, մանավանդ Արքայի թիկնապահ գնդի հրամանատարի կարմիր համազգեստի մեջ։

Մարտերում կոփված, սակայն անպաճույճ ամոթխածությունը չկորցրած մի հրաշք երևույթ էր Ազատը։ Արքային անմնացորդ նվիրված։ Ու իր հետ միասին՝ իր ողջ գունդը, որոնք հիմնականում իր գերդաստանի ջահելներն էին ու իրեն լիակատար վստահող համագյուղացիներ։ Արքան իրեն լիովին ապահով էր զգում, երբ Ազատը կողքին

էր իր գնդով։ Նվիրյալների այդպիսի կուռ միությունը դժվար էր պատկերացնել։ Նրանցից մի հատուկ լուսապսակ էր ճառագում։ Ի՞նչ բերկրանք էր լույսի այդպիսի աղբյուր ունենալը։ Արքան իր կյա՛նքը կտար նրանց համար։ Աշխարհի դեմ կռվի՛ կելներ՝ առանց վարանելու։

– Ազատ ջան, կատակում եմ։ Մի քիչ լիցքաթափվենք։ Էսօր շատ ծանր ա գործդ,– ասաց Արքան։

Ազատն ավելի կարմրեց։ Ամոթից ոչինչ չկարողացավ ասել ու գլուխն ավելի կախեց։

Արքան զմայլվում էր Ազատի ամոթխած, անպաճույճ կերպարով։ Բայց հանկարծ բան հիշեց.

– Հա՛, Ազա՛տ։

– Ի՛մ Արքա, ի՞նչ կա,– հանկարծակիի եկավ Ազատը սթափվելով, կարծես բան էր վրիպել ու հիմա մեղավոր էր զգում։

– Ազա՛տ ջան, մոռացա՛նք։ Բանալի՛ն։ Արխիվի դռան բանալին հասցրու Արշակին։ Կաթողիկոսը կտա կողը։ Ուրիշ ելք չունի։ Ժամանակ չկորցնենք։

– Վա՜յ, հենց հիմա մարդ կուղարկեմ Էջմիածին,– ասաց Ազատն ու անցավ համապատասխան հրահանգներ տալուն։

Արքան սիրում էր Ազատի անկեղծ տնավարի վարքն ու միայն նրան էր թույլ տալիս խստորեն չպահպանել իրեն դիմելու կարգը։

***

Կաթողիկոսը խորը մտքերի մեջ էր։ Տղաները նրա ձեռքերն ամուր կապել էին բազկաթոռի թիակներին, իրենք էլ տեղավորվել նույն սենյակում՝ աչքները նրանից չկտրելով։ Բժիշկը կաթողիկոսին զննելուց հետո մի քառասուն կաթիլ կատվախոտի ոգեթուրմ էր տվել նրան մի քանի կում ջրով։ Կաթողիկոսի առողջականը տեղն էր։

Նրա մտքերն արդեն ավելի հանդարտ էին հոսում։ «Էս ո՞նց եղավ։ Ի՞նչ անեմ,– մտածում էր նա։– Իմ ոտքով թակարդն ընկա։ Այն էլ՝ երկու ոտքով։ Ճիշտ են ասում, որ փորձված աղվեսն երկու ոտքով է թակարդն ընկնում։ Մեկ է՝ չեմ տա։ Տամ, հետն էլ ներում խնդրե՞մ։ Էդ քոստի՞ց։ Արքայի՛ս տեսեք։ Ձեռքս ընկներ... Բայց հիմա ուշ է, շատ

ուշ։ Բանը բանից անցել է։ Անիծվածը ոտիթը բաց չթո-
ղեց, երկար-բարակ չի մտածում։ Չգիտես՝ հաջորդ քայլով
ինչ կանի։ Խև է, ծո՛ւռ։ Ե՛ս էշացա, ե՛ս։ Սրան վաղուց
պիտի սպանել տայի։ «Դապ թագավոր» է դառել գլխիս,
հետն էլ՝ զգուշավոր է։ Ոչ մեկին չի վստահում։ Ոչ մի երկ-
րի ղեկավարի չի հանդիպում։ Իր պալատից դուրս չի գա-
լիս, երկրից էլ... Էս ծռերին որտեղից էլ հավաքել, թիկնա-
պահ գունդ է սարքել։ Նվիրյալների գունդ։ Չէ մի... Սրանք
էլ՝ ոտով գլխով նվիրված... Բա ի՞նչ անեմ։ Տա՞մ, թե՞
չտամ։ Մի՞թե ոչ մեկը չի օգնի։ Եթե նույնիսկ փորձեն էլ՝
չեն հասցնի։ Սրա վրա բան չի ազդում։ Ծուռ է։ Իր
ասածի։ Չտամ՝ վերջս լավ չի։ Տամ, հետն էլ ներում
խնդրե՞մ... Ի՞նչ աքսոր։ Չնայած, ուրիշ էլ ի՞նչ անեմ։ Գո-
նե կյանքս կփրկեմ։ Հետո կերևա, գուցե հետո մի բան
կարողանամ անել։ Տեսնես օգնող կլինի՞։ Դժվա՜ր։ Ոնց
հաշվում եմ, ուրիշ ելք չի թողել»։

Կաթողիկոսի միևնույն մտքերն անընդհատ կրկնվում
էին։ Ելքը չէր գտնում։ Անելանելի իրավիճակի մեջ էր։
Ամեն բան կանխորոշված էր կարծես։ Փրկության դուռ
չկար։ Անցան էն ժամանակները, երբ իշխանավորների
հետ ձեռք-ձեռքի տված ինչ ուզում՝ անում էին։ Ինչ շենք
ուզում՝ քանդում էին։ Որտեղ ուզում՝ եկեղեցի սարքում,
սարերի մեր հրաշք ու կիսաքանդ կոթողները «մոռացած»։

Ժողովրդին մատնած ինքնահոսի, դրսի ուժերի աջակ-
ցությունը գրպաններում, ոտում, խմում, քեֆ էին անում։
Անհնազանդներին վտարել էին երկրից։ Ով էլ մնացել էր,
կամ հլու հնազանդ ծառայում էր, կամ էլ՝ ատամները սեղ-
մած դիմանում։ Չէին կարող կռահել, որ «վտանգը» հենց
դրսից կգա։ Կգա աննկատ՝ համացանցի միջոցով, առանց
գոռում-գոչոնների, առանց լոզունգների ու կոչերի, առանց
հանրահավաքների ու վանկարկումների, առանց հռետորա-
կան արվեստի կիրառման։ Ամենագլխավորը՝ առանց որևէ
դրսի ուժի դրամական աջակցության։ Որ կգա՝ առանց
որևէ կուսակցական կամ խմբակային ջանքերի։ Չէին կա-
րող կռահել, որ մեկ անհատի մտքերը բավական կլինեն
սկսելու ու ավարտին հասցնելու հիվանդածին բացիլների
կոտորածն ու ողջ մարմնի ապաքինումը։ Սխալվեցին։ Թե-

բագնահատեցին։ Չհասկացան, որ ամենախսկական հեղափոխությունը գաղափարական հեղափոխությունն է, իսկ ամենախսկական առաջնորդը՝ գաղափարը, որ առաջնորդում է նույնիսկ առանց առաջնորդի։ Ու հիմա շատ էին ափսոսում, որ ժամանակին չնկատեցին։ Թողեցին, որ ժողովրդական ալիք բարձրանա։ Ու, երբ այն երևաց, արդեն ուշ էր։ Շա՜տ ուշ։

***

Կաթողիկոսի մեկ ժամը սպառվել էր։ Թիկնապահները տեղեկացրին հրամանատարին հեռակա կապի միջոցով։ Ազատը դիմեց Արքային.

– Ի՛մ Արքա, կաթողիկոսին տվածդ մի ժամն անցավ։ Ասե՞մ բերեն։

– Հա, Ազա՛տ ջան։ Ասա, թող բերեն։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Ազատն ու հեռակա կապի միջոցով թիկնապահներին հրահանգ տվեց, որ կաթողիկոսին բերեն Արքայի մոտ։

Շուտով թիկնապահները ներս բերեցին կաթողիկոսին ու դրեցին Արքայի դիմաց, բազկաթոռի մեջ։

Մի որոշ դադարից հետո, Արքան դիմեց նրան.

– Հուսով եմ բավական ժամանակ ունեցար մտորելու, կաթողիկո՛ս։

Կաթողիկոսը քարի պես լուռ ու անշարժ նստել էր բազկաթոռի մեջ գլուխը կախ, հայացքը հատակին հառած։

– Կաթողիկո՛ս, դու ժամանակ չունես։ Հովանավորներդ ու հնարավոր պաշտպաններդ լրիվ անտեղյակ են իրավիճակից։ Նրանք հիմա զբաղված են երեք նախագահներին ձեռքից ազատելու անհույս փորձերով։ Նրանց մահապատժի լուրն այնպիսի աննկարագրելի իրարանցում, աղմուկ ու աղաղակ է առաջացրել և՛ ներսում, և՛ հատկապես դրսում, որ նույնիսկ հնարավոր պաշտպաններդ ուրիշ բան չեն լսում։ Առավոտվանից հեռախոսազանգերը չեն դադարում։ Շահագրգիռ երկրների դեսպանները բախում են դռներս։ Այդ երկրների ղեկավարները համառորեն խնդրում են անձամբ խոսել ինձ հետ։ Ու պատկերացրու՝ ոչ ոք դեռ չի նկատել բացակայությունդ։ Ոչ ոք դեռ չի նկատել եկեղեցուդ վերացումը։ Եթե որևէ լուր էլ հասնի

ականջներին՝ չեն հավատա։ Կմտածեն՝ խաբկանք է։ Մոքներով չի անցնի, որ երեք նախագահների մահապատժի շուրջ աղմուկ-աղաղակի մեջ կարելի է նման բան անել։ Իսկ ես արեցի։ Տեսնո՞ւմ ես։

Դեռ սառույցը չէր շարժվում։

– Իսկ, եթե մտածում ես ժամանակ ձգել, որ հովանավորներդ ուշքի գան ու գուցե օգնության հասնեն... Ասենք, գուցե համոզված ես, թե հետաքննություն կլինի, հետո՝ դատավարություն, կամ գուցե նաև՝ համաժողովրդական հանրաքվե, նախքան քեզ մահապատժի ենթարկելս, ապա շատ ես սխալվում։ Արքային ու ողջ երկիրն անիծելդ, ինչպես ասացի, տեսագրված է։ Էլ ոչ մի հետաքննության կարիքը չկա։ Հանցագործությանդ թիրախը, նաև՝ մեղադրողն ու դատավորը ես եմ։ Ընդ որում՝ գերագույն դատավորը։ Կյանքդ ամբողջովին կախված է ինձնից։ Իսկ ես, արդեն նկատել ես, հապաղել չունեմ։ Եթե հապաղեմ, ապա ոչինչ էլ չեմ հասցնի անել։ Հավատա, ես դեռ շատ բան ունեմ անելու։

Կաթողիկոսի մարմնով ահավոր դող անցավ։ «Սա խելագար է»,– մտածեց նա։

– Կաթողիկո՛ս, հիմա, ավելի ճիշտ, ամեն ինչ կախված է քեզնից։ Հիշում ես առաջարկս։ Կամ հոժարակամ կտաս կոդը՝ միաժամանակ ներում խնդրելով Համայն Հայոց Արքային վիրավորելու ու ողջ երկիրն անիծելուդ համար, ու գուցե մահապատիժդ փոխարինեմ ցմահ աքսորով, կամ կախաղան կբարձրանաս հանցակից ընկերներիդ կողքին։

Կաթողիկոսն ուրիշ ելք չէր տեսնում։ Մի ողջ հավերժություն թվաց, բայց մի քանի վայրկյան հետո ինքնաբերաբար ձեռքը բարձրացրեց ու գրելու նշան արեց։ Արքայի նշանով թիկնապահներից մեկը գրպանից հանեց մի ծոցատետր ու գրիչ և մեկնեց կաթողիկոսին։ Կաթողիկոսը մի որոշ դադարից հետո սկսեց գրել։

Ներկաներն իրենց աչքերին չէին հավատում։ Երբ կաթողիկոսը վերջացրեց գրելը, նույն թիկնապահը վերցրեց ծոցատետրն ու գրիչը նրա ձեռքից։ Գրիչն արագորեն դրեց գրպանն ու ծոցատետրը մեկնեց Արքային։

Արքան հանդարտորեն վերցրեց ծոցատետրն ու, մի

քանի վայրկյան այն զննելուց հետո, հրամայեց.

– Միացրեք Արշակին։

Արքայի հրամանն իսկույն կատարվեց։ Նա վերցրեց լսափողն ու...

– Արշա՛կ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Կարծես սառույցը շարժվեց։ Գրի՛ր կոդը։

– Ի՛մ Արքա, պատրաստ եմ։

– ՎԱՋԳԵՆ2010։ Փորձի՛ր։ Եթե աշխատեց, ժամանակավոր կոդ դիր, հետո կփոխենք հիմնականով։ Ես մնում եմ գծի մեջ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Բանալին մոտս է։ Արխիվի գլխավոր աշխատակիցը կողքիս է։ Հիմա կփորձենք։

Հեռախոսի մեջ լսվում էին Արշակի հրահանգները։ Արքան անհամբերությունից այլևս ոչինչ չէր նկատում իր շուրջը։ Ողջ էությամբ այնտեղ էր՝ Էջմիածնի գաղտնի արխիվի դռան մոտ։

Մի քանի րոպե հետո, որն Արքային մի ողջ հավերժություն թվաց, վերջապես լսվեց Արշակի ձայնը։

– Ի՛մ Արքա, բացվեց։

Արքան թեթևացած խորը շունչ քաշեց։ Չէր էլ զգացել, որ արդեն մի քանի րոպե շունչը պահել, մի կարգին շունչ չէր առել։

– Փա՜ռք քեզ, Տեր Աստված,– ինքնաբերաբար արտաբերեց Արքան։– Ժամանակավոր կոդ դիր։ Մի ընտիր ջոկատ դիր՝ պահպանելու արխիվը, գրադարանն ու ողջ համակարգչային ցանցը։ Դրանց բոլոր նյութերի, հատկապես վերջին շրջանի հրահանգների, հրամանների ու հաղորդագրությունների ուսումնասիրությունը կսկսեք վաղվանից։ Տղաները թող հանգստանան։ Ներքին գործերի սպաների հետ միասին համաձայնեցրու վանքի ողջ տարածքի պահպանությունը։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Դու էլ շատ լարված օր ունեցար։ Գնա տուն։ Երեխեքիդ տես քնելուց առաջ։ Մարինեին էլ՝ բարևներ։ Առավոտյան կխոսենք։ Առայժմ։

Արքան ընդհատեց կապն ու մի փոքր հետ ընկավ։ Բայց մի որոշ ժամանակ այդպես մնալուց հետո, դարձավ

կաթողիկոսին.

– Կաթողիկո՛ս, տեսնո՞ւմ ես, մինչև քեզ նեղը չեն գը-ցում, ոչ մի օգուտ չկա քեզնից։ Քեզ այնպես ես պահում, ասես թշնամի երկրի գործակալ լինես։

Մի փոքր շունչ առնելուց հետո, Արքան նորից դիմեց կաթողիկոսին.

– Բայց փառք Աստծո, ահագին բան հասցրեցինք այսօր։ Տեսնո՞ւմ ես՝ արագությունն ինչ լավ բան է։ Ջնա-յած, ինձ երևի ճիշտ չհասկացար, երբ բացատրում էի մարտավարությունս։ Հատկապես, երբ խոսում էի իմ սխալների մասին։ Հասկանո՞ւմ ես, սխալներ ասելով, ես ի նկատի ունեի իմ հակառակորդների կարծիքը միայն, նրանց գնահատականը։ Ես սխալներ չեմ անում։ Ինչո՞ւ եմ համոզված։ Որովհետև բոլոր որոշումներս հիմնված են մեր Արարչական ուսմունքի հենքի վրա։ Գուցե մի քիչ ժա-մանակավրեպ են, այսինքն՝ շատերը պատրաստ չեն հաս-կանալ ու ընդունել։ Բայց, եթե ոչինչ չանեմ, ապա երբեք էլ պատրաստ չեն լինի։ Ինչևէ... Դու ուրիշ ոչինչ չունե՞ս ասելու։ Ամեն բան տեսագրվում է։ Ազատորեն կարող ես արտահայտել զղջումդ՝ հատկապես Արքային ու ողջ եր-կիրն անիծելուդ համար, որպեսզի մեղմես վաստակածդ պատիժը։ Միայն՝ արագ։ Բոլորս հոգնել ենք։ Ծանր օր էր այսօր։

Կաթողիկոսը լուռ էր։ Լեզուն չէր պտտվում որևէ խոսք ասել։ Դեռ չէր կարողանում համակերպվել իր անե-լանելի իրավիճակի հետ։ Նաև՝ որ արդեն չկար ո՛չ իր կա-ռույցը, ո՛չ էլ իր տիտղոսն ու դիրքը երկրում։ Անհնար էր համակերպվել միանգամից ներքևում հայտնվելու փաստի հետ, այն էլ՝ հանցագործի կարգավիճակում, մահապա-տիժն աչքի առաջ։ «Սա ինչպե՞ս ստացվեց»,– մտածում էր նա։ Իրադարձությունների արագությանը անսովոր լինե-լով՝ վրիպումներ թույլ տվեց ու ընկավ։ Վրիպեց, քանի որ երկար էր վայելել անպատժելիության պտուղները։

Արքան առերևույթ՝ անողոք, սակայն շատ կարեկից սիրտ ուներ։ Անկեղծորեն ցավում էր նեղն ընկած ծերուկի համար։ Կաթողիկոսի ամայացած վիճակն ամեն ինչ ասում էր։ Արքան նրա դեմքին դեռ պահպանված գոռոզության տակ նշմարում էր տրտմագին, զղջացող սրտի կայծեր։

– Լա՛վ, կաթողիկո՛ս,– լռությունը խախտեց Արքան։– Տես՝ ինչ եմ առաջարկում։ Մահապատիժդ հետաձգում եմ մի տարով։ Առայժմ բոլոր քահանաների պես կաքսորվես սահմանամերձ գյուղերից որևէ մեկը։ Մշտապես կլինես ողջ համայնքի ու հատկապես գյուղի գլխավոր նահապետի հսկողության տակ։ Կաշխատես շինականներից մեկի մոտ՝ որպես օգնական։ Մի տարվա ընթացքում կապաշխարես։ Տարվա վերջում, կամ գրավոր, կամ բանավոր, կներկայացնես զղջումդ։ Ու, եթե հավատամ՝ կշարունակես ապրել՝ որպես ազատ շինական։ Եթե ոչ՝ կախաղան կբարձրանաս։ Վե՛րջ։

Արքան շրջվեց դեպի նախարարների խորհրդի նախագահը.

– Աթոյա՛ն, բոլոր աքսորյալների գտնվելու վայրերը՝ հույժ գաղտնի։ Սա ու մյուս բոլոր բարձրաստիճան կրոնավորները դեռ կմնան Արշակի տրամադրության տակ։ Սրանք դեռ կարող են շատ կարևոր տեղեկություններ ունենալ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Աթոյանը, միաժամանակ գլխով անելով։

– Ազա՛տ, սրան տար իր տեղը։ Վաղն Արշակը բոլորին կտանի իր մոտ,– ասաց Արքան՝ դիմելով Ազատին։

– Լսո՛ւմ եմ, ի՛մ Արքա,– ասաց Ազատն ու գլխով նշան արեց թիկնապահներին։

Նույն թիկնապահները մոտեցան կաթողիկոսին, հանեցին տեղից ու թևերի տակից բռնած տարան դուրս։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Արշակը, հաջորդ առավոտյան շուտ, արդեն Արքունիքում էր։ Արքան իր առանձնասենյակում էր, երբ Ազատը հաղորդեց Արշակի գալու մասին։

– Ազատ ջան, ասա թող բարձրանա վերև՝ ինձ մոտ,– ասաց Արքան։

Երբ Արշակը ներս մտավ, Արքան նոր էր ավարտել իր առավոտյան հարդարանքը, բայց դեռ խալաթի մեջ էր։

– Ի՛մ Արքա, թույլ տուր զեկուցել։

– Կհասցնես, Արշա՛կ։ Երեխեքը ո՞նց են... Մարինեն... Տանն ամեն ինչ լա՞վ է։ Երեխեքը երեսդ համարյա չեն տեսնում։ Մարինեն էլ... Հո շատ լարվածություն չկա՞։ Կանայք լավ չեն տանում ամուսինների երկար բացակայությունը։

– Ի՛մ Արքա, ամեն ինչ լավ է։ Երեխեքը կարոտում են, իհարկե, բայց Մարինեն հասկանում է։ Նեղվելու ոչ մի նշան չեմ տեսել։

– Կանայք շատ հաճախ թաքցնում, թաքցնում են, հետո միանգամից դուրս են նետում։ Բայց Մարինեն խելացի աղջիկ է։ Հուսով եմ՝ այս ամենը երկար չի տևի, չնայած ամեն անգամ մի նոր պատմություն է բացվում։ Ասում ես՝ երեկ ամեն բան լավ անցա՞վ։

– Ի՛մ Արքա, շատ լարված էր, բայց ամեն բան անցավ յուղի պես։ Արխիվի աշխատակիցները լիովին համագործակցեցին։ Հիմա, չնայած, իմ մարդիկ են վերցրել ողջ հսկողությունը, բայց նախկին աշխատակիցների հետ միասին արխիվի պարունակությունը մի լավ սանրելուց ու նյութերի էլեկտրոնային պատճենները վերցնելուց հետո, մտածում եմ հենց նույն աշխատակիցներին թողնել իրենց տեղերում։ Մանավանդ, որ կոդը փոխել եմ։ Բնօրինակներն ապահով են։ Երբ դու՝ ինքդ, փոխես այն հիմնականով, բացի քեզնից էլ ոչ ոք չի կարողանա ներս մտնել։

– Շատ լավ, դա կանենք վաղը։ Ընտանիքդ կվերցնես, ու բոլորս միասին կգնանք Ամբերդ։ Ճանապարհին կմըտնենք արխիվ։

Արշակը հասկացավ, որ Արքան առանձին էր ուզում խոսել իր հետ։ Կռահում էր՝ ինչի մասին։ Արքան Արշա-

կին ամեն անգամ ընտանիքով հրավիրում էր Ամբերդի իր ամառանոցը, երբ պետք էր խոսել իրենց գաղտնի ծրագրի մասին։

***

Ամբերդում վերականգնման աշխատանքներ էին ընթանում ու դրա քողի տակ ընթանում էին նաև Արքայի գաղտնի ծրագրի աշխատանքների մի մասը։ Ծրագրի վրա աշխատանքները ցրված էին Համակարգի տարբեր շրջաններում։ Վտանգավոր էր ամեն բան կենտրոնացնել մի տեղում։ Կնկատվեր։ Շուտ կնկատվեր։ Ցրված, իհարկե, գործը շատ դանդաղ էր ընթանում, բայց գոնե նկատելի չէր։ Արագածի փեշերին դեռ սովետական տարիներին կառուցված բոլոր շինություններն օգտագործվում էին ծրագրի համար՝ Ալիխանյանների լաբորատորիաները, աստղադիտարանները, նույնիսկ՝ Հերունու հսկա անտենան։

Բայց փորձարկումների հիմնական մասն ընթանում էր Արփա-Սևան թունելում, որը կառուցվել էր սովետական տարիներին ջրաքամ լինող Սևանա լիճը փրկելու համար։ Սևանից դուրս եկող միակ գետի՝ Հրազդանի, վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների շարքը հսկայական քանակությամբ ջուր էր պահանջում Սևանա լճից։ Սևանը դատարկվում էր ահագնացող տեմպերով ու հայտնվել էր ճահճացման՝ ոչնչացման, վտանգի առաջ։ Համարյա հիսուն կիլոմետրանոց Արփա-Սևան թունելը նախատեսված էր Արփա գետի ջուրը Սևանա լճին հասցնելու համար։ Հսկայական ներդրումների գնով ու երկար ժամանակ հետո կառուցվեց ու շահագործման հանձնվեց թունելը։ Այն փրկեց Սևանա լիճը ոչնչացումից, նաև՝ ջուր ապահովեց Հրազդանի հիդրոէլեկտրակայանների համար։ Այլապես, լճի մակարդակի իջեցման հետևանքով, Հրազդանի հիդրոէլեկտրակայանները չէին կարողանա աշխատել ու կենսական էլեկտրաէներգիա ապահովել Սովետական Հայաստանի, իսկ հետագայում նաև անկախացած Հայաստանի Հանրապետության համար։ Բայց հիմա թունելի կարիքն այլևս չկար։ Նիկոլա Տեսլայի ավելի քան հարյուր տարի կապիտալիստական աշխարհի կողմից արգելված գյուտի վերականգնումը հնարավորություն էր տվել էլեկտրաէ-

ներգիա ստանալ ամեն տան հարևանությամբ։ Հետևաբար, Հրազդան գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանների կարիքն ընդհանրապես չկար։ Սևանը չէր դատարկվում։ Միայն ամռան ամիսներին էր որոշ քանակությամբ ջուր բաց թողնվում, հիմնականում Արարատյան դաշտի այգիների ու բանջարանոցների ոռոգման համար։ Ատոմակայանն իր հերթին ավելի քան անհրաժեշտ էլեկտրաէներգիա էր մատակարարում Համակարգի բոլոր գործարաններին։ Արքան մտադիր էր ատոմակայանի արտադրած էլեկտրաէներգիայի մի մասն օգտագործել իր ծրագրի իրագործման համար։ Արագածի փեշերին դեռ սովետական ժամանակներում կառուցված ու գործող գիտահետազոտական լաբորատորիաները, մոտ լինելով ատոմակայանին, շատ հարմար էին Արքայի ծրագրի համար։

Ամբերդի ամրոցն Արքայի ամենասիրելի վայրերից էր։ Ամրոցի հարկաբաժինները լիովին վերականգնվել էին ու հարմարեցվել գիշերելու համար։ Արքան ամրոցի հարևանությամբ մի փոքր այգի էր հիմնել։ Նա չէր կարող առանց այգի հիմնելու ու խնամելու։ Արքան գտնում էր, որ այգի հիմնելն ու խնամելը Արարչի կողմից ամեն մարդու համար ի վերուստ նախասահմանված առաքելություն է, որ ամեն մարդու կյանքի գործն է՝ այգի հիմնել ու խնամել այն։ Ըստ նրա՝ ուրիշ ոչ մի բան այդքան արժեք չուներ։ Դրանից էր, որ Արքան դժկամությամբ էր վերադառնում պետական կառավարման իր գործին, դա համարելով միայն չարի ուժերի կողմից պարտադրված անհրաժեշտություն։ Պետական գործերն այնքան էին հյուծում Արքային, որ նա ամեն առիթ օգտագործում էր՝ քաղաքից դուրս պրծնելու համար։ Արքայի ընտանիքը ամառանոցներ ուներ նաև Գառնիում ու Սևանում. մեկը՝ Լաստիվերում, մյուսը՝ Տաթևում։ Մի նոր ամառանոց էլ կառուցվում էր Շուշիում։

***

– Աղջիկներիդ անպայման կբերես,– ասաց Արքան՝ նայելով Արշակի կողմը։ Մեր ջահելները, կարծում եմ, ուրախ կլինեն միմյանց տեսնել։

– Ի՛մ Արքա, ինչպես կամենաս։

– Մարինեին կասես, որ ես եմ պնդել։ Դու լավ ընտանիք ունես։

– Ի՛մ Արքա, շնորհակալ եմ։

– Ե՛ս եմ շնորհակալ։

– Ինչի՞ համար, ի՛մ Արքա։

– Շատ բաների... որ քեզ պես զինակից ունեմ, այլապես ոչինչ չէր ստացվի, որ դու լավ ընտանիք ունես։ Դա շատ կարևոր է։ Մեզ են հառած բոլորի աչքերը։ Հոետորական ոչ մի հնարք իր ազդեցության ուժով չի համեմատվի անձնական օրինակի հետ։

Այդ պահին ներս մտավ Ազատը։

– Ի՛մ Արքա, բոլորն արդեն հավաքվել են։ Քեզ են սպասում։

Արքան արդեն հասցրել էր կապել զրահաբաճկոնը, հագնել արքայական պատմուճանն ու դնել թագը։

– Պատրաստ եմ։ Իջանք,– ասաց Արքան և, Ազատի ու Արշակի ուղեկցությամբ, դուրս եկավ իր առանձնասենյակից։

Միջանցքում նրանց դիմավորեցին Արքայի թիկնապահ գնդի յոթ մարտիկ բարև բռնած ու, անմիջապես իրենց մշտական դիրքերը գրավելով՝ երեքը՝ դիմացից, չորսը՝ հետևից, սկսեցին ուղեկցել նրանց դեպի խորհրդակցության սրահը։

Արքայական խորհրդի խորհրդակցությունները տեղի էին ունենում ամեն շաբաթվա վերջում։ Իսկ շաբաթվա սկզբում Արքան սովորաբար ընդունում էր բոլոր նախարարներին նախարարների խորհրդի նախագահի գլխավորությամբ ու լսում նրանց բոլորի հաշվետվությունները անցած շաբաթվա ընթացքում արված գործերի ու խնդիրների մասին։

Այսօր սովորականից թեժ խորհրդակցություն էր սպասվում։ Դժվար էր, չնայած, հիշել որևէ հանդարտ օր։ Արքայի գահակալության օրվանից սկսած բոլոր խորհրդակցությունները միշտ էլ լարված էին անցել։

Արքայական խորհրդի բոլոր անդամներն ու Արքայազններն արդեն իրենց տեղերում էին ու վաղուց էին սպասում Արքային։

Երբ Արքան իր շքախմբով՝ Արշակի ու Ազատի ուղեկ-

ցությամբ, ներս մտավ խորհրդակցության սրահ, բոլորը ոտքի կանգնեցին բարև բռնած։

– Բարին ընդ ձեզ, ի՛մ եղբայրներ,– ասաց Արքան ու արագորեն գրավեց իր տեղը սեղանի գլխին։

Արշակն իր տեղը գրավեց զինված ուժերի նախարար Ռազմիկ Դարբինյանի կողքին։ Ազատն իր ջոկատով դիրք գրավեց Արքայի թիկունքում՝ ինչպես միշտ։

– Զաքարյա՛ն, սկսենք ամենահրատապ խնդիրներից,– ասաց Արքան՝ դիմելով Արքայական խորհրդի նախագահին։

– Ի՛մ Արքա, ամենահրատապը երրորդ հանրապետության նախկին նախագահների մահապատժի շուրջ ծագած իրավիճակն է։ Արդեն երեկվանից շահագրգիռ պետությունները բախում են մեր դռները։ Ամպեր են կուտակվում, սև ամպեր, այն էլ՝ ահագնացող տեմպերով։ Հարկավոր է մի բան մտածել՝ դրանց բերանը փակելու համար։ Մեր հորդորները՝ չմիջամտել մեր երկրի ներքին գործերին, կարծես, չեն աշխատում։ Դեռ սպառնալիքներ չեն հնչել, բայց շուտով վախենամ կհնչեն։

– Պե՛տք չի վախենալ, Զաքարյա՛ն։ Ինչից որ վախենում ես, հենց գլխիդ է գալիս,– կտրեց Արքան։– Բայց շարունակիր։

– Ի՛մ Արքա, ճիշտ ես, կա նման բան, սակայն իրականությունից չենք փախչի,– պատասխանեց Զաքարյանը։

– Ճիշտ է, իրականությունից չենք փախչի, սակայն կարող ենք փոխել իրականությունը, գոնե՝ ազդել դեպքերի ընթացքի վրա։ Ի՞նչ կարծիքներ կան, եղբայրնե՛ր,– հարցրեց Արքան՝ միաժամանակ հայացքով զննելով խորհրդի անդամներին։

Բոլորը լուռ էին, համարյա՝ գլխիկոր, հայացքները՝ անորոշ հեռուն, որևէ վատ շրջադարձի ակնկալիքով։

Մի քանի վայրկյան որևէ առաջարկ չստանալով ու խորապես զգալով բոլորի անհանգստությունն ու ընդհանուր լարվածությունը, Արքան շարունակեց.

– Եղբայրնե՛ր, համատիեզերական օրինաչափություն կա՝ նմանը նմանին է ձգտում, լավը՝ լավին, վատը՝ վատին։ Նմանապես էլ վախն իրեն է ձգում այն, ինչից որ վախն է։ Վախեցողին նախ ծաղրում են, հետո՝ խփում։

Միշտ այդպես է եղել ու այդպես էլ կա գազանների, շնագայլերի աշխարհում։ Բոլորդ էլ գիտեք այդ օրինաչափության մասին։

Քար լռություն էր։ Խորհրդի անդամներից ոչ մեկը դեռ որևէ հստակ կարծիք չուներ։ Արտաքին աշխարհի ճնշումը խիստ անհանգստացրել էր նրանց։ Շատերը նույնիսկ երկյուղած էին։

– Ի՛մ Արքա, մեր պատասխանատվությունը մեծ է ազգի առջև։ Մենք պարտավոր ենք զգույշ ու կշռադատված քայլեր կատարել։ Իրավունք չունենք սխալվելու։ Մեր ազգի բախտն է կշեռքին։ Դու էիր ասում, որ ազգովի համատիեզերական առաքելություն ունենք։ Եթե տանով տանք ու վերանանք, ո՞վ կանի մեր գործը,– ասաց Զաքարյանը։

Արքան հայացքով ուշադիր զննում էր խորհրդի մյուս անդամներին։ Կարծես շատերը համամիտ էին Զաքարյանի հետ։ Ոմանք, սակայն, դեռ անորոշ իրավիճակում էին։

Որոշ դադարից հետո Արքան շարունակեց.

– Առաքելությո՞ւն, ասացիր... համատիեզերակա՞ն... Ճիշտ էլ ժամանակին հիշեցիր մեր առաքելության մասին։ Վախենալով, մանավանդ դրսի ուժերի ճնշմանը ենթարկվելով, ինչպե՞ս ենք կատարելու մեր առաքելությունը, համատիեզերակա՛ն առաքելությունը։

– Ի՛մ Արքա, բայց, եթե ժամանակից շուտ ներքաշվենք ընդհարումների մեջ, կվերանանք, կկորենք...

– Չե՛նք վերանա,– համարյա բղավեց Արքան՝ երկու ձեռքը սեղանին խփելով ու մի փոքր տեղից վեր բարձրանալով։

Ազգովի վերանալու մասին Զաքարյանի երկրորդ հիշատակումը հունից հանեց Արքային։ Թշնամիների հետ դեռ կարելի էր հանդարտ ու կշռադատված, բայց երբ զինակիցներն են շեղվում ու սկսում շեղել մյուսներին՝ արդեն անտանելի է։

Քար լռություն էր։ Բոլորը տարակուսել ու կարկամել էին։ Նրանց բոլորին զարմացրել էր Արքայի զայրույթը Զաքարյանի սովորական զգուշավորության վրա։ Ոչ ոք չէր հասկանում Արքայի անհամաչափ թվացող արձագանքի պատճառը։ Կարելի էր մտածել՝ Արքան զայրացած էր մեկ այլ, գուցե՝ անձնական, պատճառով ու հիմա իր զայրույթն

էր թափում սովորական հարցի ոգիթով։

Բոլորի հայացքն Արքայի կողմն էր՝ մի որևէ պարզաբանման ակնկալիքով։ Բայց Արքան դեռ մտքերի մեջ էր։ Ամեն բան փլվում էր շուրջը։ Իր համախոհներն ու զինակիցները տարակուսած ու երկյուղած էին։ Արքան թևաթափ ու սպառված էր զգում իրեն։ «Ի՞նչ անեմ,– մտածում էր նա։– Ինչպե՞ս բացատրեմ, որ կործանարար է քաղաքականություն խաղալը, որ դա մեզ կկործանի՝ որպես ազգ ու պետություն, կդարձնի սովորական մի ժողովուրդ, բոլորի նման անողնաշար ու ճորտացված։ Ինչպե՞ս բացատրեմ, որ քաղաքականություն խաղալը անպատվաբեր է մեզ համար, որ դա համահունչ չի մեր ազգային նկարագրին, որ դա բանտարկում է մեր ազատ ու անբռնազբոս էությունը։ Ինչպե՞ս բացատրեմ... Ինչպե՞ս բացատրեմ, որ, քաղաքականություն խաղալով, չենք կատարի մեր առաքելությունը։ Ինչպե՞ս»։

Դեռ քար լռություն էր։ Արքան խորը մտքերի մեջ էր։ Իր զինակիցները հետ էին ընկել։ Հեռվում խմբվել, կանգնել ու տարակուսած նայում էին իրեն։ Վերջին շաբաթվա բուռն ու անակնկալ իրադարձությունները խուճապի էին մատնել նրանց։ Շատերն ընդարմացած կանգ էին առել ու չէին հասկանում՝ ուր գնալ, ինչ անել։ Ոմանք էլ հակված էին հետ գնալ։ Ձայրույթը մթագնել էր Արքայի միտքը։ Ծանր, շատ ծանր լռություն էր։ Անորոշությունն արդեն ճնշող էր դառնում։ Դժվար էր կռահել, թե ինչով կավարտվի խորհրդակցությունը։ Արքան չէր հավատում իրողությանը։ Ինչպե՞ս կարող էին իր ամենամոտ զինակիցները այսքան ճանապարհ իր հետ միասին՝ ուս-ուսի, անցնելուց հետո իրեն միայնակ թողնել ու հետ քաշվել։ Դա համարյա դավաճանություն էր նրանց կողմից։ Ուրիշ էլ ի՞նչ։ Մի փոքր էլ, ու Արքան գուցե վեր կենար տեղից ու... Մութ ու ծանր մշուշ էր պատել Արքային։ Նա ոչինչ չէր հասկանում։ Չէր հավատում իրողությանը։

Համարյա նույն թանձր ու սև ամպն էր պատել խորհրդի անդամներին։ Նրանք տարակուսած չէին հասկանում, թե ինչո՞ւ է զայրացած Արքան։ Ո՞ւր է գնում։ Ո՞ւր է ուզում տանել իրենց։ Գուցե սխալվո՞ւմ է։ Ինչպե՞ս կարելի է զայրանալ սովորական զգուշավորության վրա։ Ինչպե՞ս

կարելի է գործել՝ առանց իրականությունը հաշվի առնելու։ Ճիշտ է, ջուրը մտնողը թրջվելուց չի վախենա, բայց նախքան ջուրը մտնելը գոնե պետք է իմանալ ու հաշվի առնել ջրի խորությունը։ Մի՞թե Արքան այդ հասարակ բանը չգիտի։

Արքան դեռ զայրացած էր։ Իր ու իր զինակիցների միջև վիհը գնալով խորանում էր։ Նրանց միջև սև մշուշը՝ թանձրանում։ Մի քանի վայրկյան էլ, ու Արքան գուցե կորցներ նրանց՝ իր վաղեմի զինակիցներին։ Նրանք հեռանում էին։ Մի փոքր էլ, ու նրանք այլևս չէին երևա։ Իր զինակիցներին կորցնելու մի զարհուրելի մտավախություն համակեց Արքային։

Բայց հանկարծ մութը սկսեց ցրվել։ Մի անբացատրելի ջերմություն իջավ, իջավ ու մեղմեց Արքայի զայրույթը։ Նրա սիրտը սկսեց լցվել անսահման սիրով, կարոտով ու կարեկցանքով բոլոր ներկաների հանդեպ։ Նրանց մեջ նա նկատեց տարակուսած ու երկյուղած իր զավակներին։ Հարկավոր էր հետ գնալ, հետ գնալ ու գրկել բոլորին։ Մեկիկ-մեկիկ հավաքել նրանց մեկտեղ՝ ուս-ուսի, թև-թևի, գլուխ-գլխի, ու միասին հանգիստ մտորել։

– Ի՛մ եղբայրներ, մի՛ երկյուղեք,– վերջապես սկսեց Արքան։– Ձեր երկյուղը ուզեք, թե՝ ոչ, կփոխանցվի մեր ազգին։ Ոչինչ անհետևանք չի մնում։ Մարդու գործը, անգամ՝ միտքը, իր դրոշմն է թողնում շրջապատի, նաև՝ տիեզերքի վրա։

Լռություն էր սրահում։ Բոլորը դեռ մտքերի մեջ էին։

– Ի՛մ Արքա, բայց մենք հսկա պատասխանատվություն ունենք,– շտապեց Զաքարյանը։

– Ես չունե՞մ։ Ես ավելի՛ մեծ պատասխանատվություն ունեմ մեր ազգի առջև,– վրա բերեց Արքան։

– Ի՛մ Արքա, ամենևին չէի ակնարկում, թե քո պատասխանատվությունն ավելի մեծ չի...

– Գիտեմ, գիտեմ,– փորձեց իրավիճակը մեղմել Արքան,– բոլորդ էլ մեծ ճնշման տակ եք։ Շատ դժվար է չկորցնել հավասարակշռությունը, երբ ոչ միայն սեփական կյանքն է վտանգված, այլ նաև՝ սեփական երեխաների, սեփական ազգի... Ա՛յ, դո՛ւ, Զաքարյա՛ն, մասնակցե՞լ ես քվեարկությանը։ Հանրաքվեին, ի նկատի ունեմ։

– Ի՛մ Արքա...– կմկմաց Զաքարյանը։

– Զաքարյա՛ն, հանրաքվեն բաց ու թափանցիկ է եղել։ Դու թաքցնելու պատճառ չունես։ Պատասխանի՛ր քո Արքային՝ մասնակցե՞լ ես հանրաքվեին ու ինպե՞ս ես քվեարկել։

– Ի՛մ Արքա, մասնակցել եմ ու կողմ եմ քվեարկել մահապատժին,– պատասխանեց Զաքարյանը։

Արքան շրջվեց ու դիմեց խորհրդի բոլոր անդամներին։

– Ձեզնից ո՞վ է դեմ քվեարկել մահապատժին։

Բոլորը լուռ էին։

– Լավ... ուրեմն բոլորդ միաձայն կողմ եք քվեարկել մահապատժի ենթարկել այդ ոճրագործներին։ Պարզ է։ Բայց գիտեիք, չէ՞, թե դրանք ով են ու ինչ ուժեր են խառնվելու գործին։ Դա նույնիսկ դատավարության ողջ ընթացքում էր պարզ։ Փաստորեն, կշռադատված որոշում եք ընդունել, հաշվի առնելով, որ դուք, ձեր ընտանիքներով հանդերձ, չեք կարող դուրս գալ Համակարգի սահմաններից։

– Ի՛մ Արքա, մենք մտահոգված ենք ժողովրդի համար,– արտահայտվեց խորհրդի անդամներից Վանեցյանը։

– Շատ լավ, լիովին հասկանալի է։ Ուրիշ ո՞վ է ուզում արտահայտվել։

Տեսնելով, որ ուրիշ ոչ ոք արտահայտվելու մղում չունի, Արքան շարունակեց.

– Ի՛մ եղբայրներ, դուք գիտեք, որ՝ ըստ մեր Ազգային Սահմանադրության ո՛չ անձամբ ես, ո՛չ էլ արքայական ընտանիքի անդամներից որևէ մեկը չի կարող մասնակցել հանրաքվեներին։ Ինձ համար մեր ազգի միասնական որոշումը անբեկանելի ուժ ունի։ Բայց սա չի կարևորը։ Կարևորն այն է, որ մեր ազգը կշռադատված որոշում է ընդունել ու մտադիր չի խուսափել հետևանքներից։

– Ի՛մ Արքա, իսկ եթե ժողովուրդը չի պատկերացրել հետևանքների ողջ ծանրությունը,– շարունակեց Վանեցյանը։

– Գուցեև չի պատկերացրել ողջ ծանրությունը։ Բայց դուք հո պատկերացրե՞լ եք...

– Ի՛մ Արքա, գուցե մենք էլ լավ չենք պատկերաց-

րել...

– Ճիշտ ես, Վանեցյան, դժվար էր կանխագուշակել, թե կոնկրետ ինչ արձագանքներ կլինեին, ինչ ամպեր կկուտակվեին։ Բայց կարիք էլ չկար կանխագուշակել։ Հասկանո՞ւմ ես, արդարադատություն իրականացնելիս չի կարելի մտահոգվել, թե ինչ հետևանքներ կլինեն։ Պատահական չի, որ արդարադատությունը պատկերվում է սուրը ձեռքին, աչքերն էլ՝ կապած։ Այլապես արդարադատություն չի լինի...

– Ի՛մ Արքա, հասկանում եմ միտքդ, բայց գոնե կարո՞ղ ենք որևէ բան անել մեղմելու հետևանքները,– փորձեց Արքային համոզել Վանեցյանը։

– Լավ, իսկ ի՞նչ կոնկրետ առաջարկ ունես, Վանեցյան,– հարցրեց Արքան ու, դառնալով բոլորին,– խնդրեմ, եղբայրնե՛ր, եթե կոնկրետ առաջարկ ունեք, արտահայտվեք՝ քննարկենք։ Համամիտ եմ, որ լրջագույն իրավիճակում ենք հայտնվել ազգովի։

Բոլորը լուռ էին։ Մթնոլորտը հանդարտվել էր։ Էլ չկար սկզբի լարվածությունը։ Արքային կարծես հաջողվել էր մոտենալ ու գրկել իր զինակիցներին՝ թև-թևի, ուսուսի։

– Ի՛մ եղբայրներ, արել ենք՝ ինչ որ արել ենք ու ճիշտ ենք արել։ Գուցե ոչ մեկս էլ լիովին չենք պատկերացրել մեր որոշման հետևանքները։ Ճիշտ էլ արել ենք, որ չենք պատկերացրել, այլապես մեր որոշումը արդարադատություն չէր լինի։ Հիմա ամպեր են կուտակվել։ Դա բոլորս ենք տեսնում։ Բնականաբար, որպես ազգի մասին մտահոգ ու պատասխանատու նահապետներ, բոլորս մտահոգված ենք՝ մեղմելու մեր ազգի գլխին կախված վտանգը։ Եկեք խելք-խելքի տանք, մտածենք՝ ի՞նչ կարելի է անել։

Արքան մի փոքր դադար առավ։ Կարծես սպասում էր, որ արտահայտվողներ լինեն։ Բայց ոչ ոք մտադիր չէր որևէ բան ասել։ Բոլորը սպասում էին լսելու Արքայի միտքը։ Նա, կարծես, ինչ-որ բան ուներ մտքում, բայց ի՞նչ։

– Ի՛մ եղբայրներ,– շարունակեց Արքան,– մեր թշնամիների գուցե պետքն էլ չեն այս սրիկաները, սակայն նրանք փորձում են ամեն առիթ օգտագործել մեր դեմ։ Նրանք վաղուց ատամ ունեն մեզ վրա։ Սա՛ էլ եք տեսնում։

Բոլորը կարծես դեռ համամիտ էին Արքայի հետ։

– Մենք ճոխ ընտրություն չունենք, սակայն։ Կա՛մ պիտի տեղի տանք՝ կատարենք մեր թշնամիների պահանջն ու չեղյալ հայտարարենք մեր՝ ազգովի, ընդունած դատավճիռը, կամ պիտի առճակատման գնանք ու դիմակայենք բոլոր հետևանքներին։ Էլի՛ եմ ասում՝ այս սրիկաների կյանքը, գուցեև, ոչ մի արժեք չունի մեր թշնամիների համար։ Եթե նույնիսկ կատարենք նրանց հորդորը, իրականում՝ պահանջը, կփոխվի միայն այն, որ մենք կնսեմանանք, կստորացվենք, բայց առաջին հերթին ինքներս մեր աչքում կարժեզրկվենք։ Սեփական արժեքն ու արժանապատվությունը կորցրած ազգն այլևս ազգ չի։

Արքան կարծես համոզում էր, բայց դեռ տարակուսողներ կային։

– Եթե առաջարկություն ունեք չեղյալ հայտարարել մեր ազգի ընդունած դատավճիռը, խնդրեմ, արտահայտվեք։

– Ի՛մ Արքա, իսկ եթե կախաղանը փոխարինենք գընդակահարությամբ...– արտահայտվեց խորհրդի անդամներից Դոնոյանը,– դա գոնե ավելի մարդասիրական է։

– Մարդասիրակա՞ն... գուցե, բայց դա ամեն դեպքում փոխզիջում է։ Իսկ դա նշանակում է տեղի տալ, ընկրկել։ Անպատվություն...– հակադարձեց Արքան։

– Ի՛մ Արքա, արդյո՞ք խոհեմ կլինի մեր կողմից սովորական փոխզիջման չգնալ ու դրանով կործանման վտանգի տակ դնել ժողովրդին։

Արքան զայրացավ՝ լսելով ազգի կործանման մասին Դոնոյանի միտքն, ու արդեն ուզում էր... Բայց միանգամից զսպեց իրեն ու շարունակեց հանդարտ ու կարեկից տոնով.

– Ի՛մ եղբայրներ, պատկերացրեք թշնամու լակոտները մտել են ձեր այգին ու կողոպտում են։ Դուք բռնացնում ու սատկացնում եք մեկին։ Մյուսները փախնում են, հարայ-հրոց դնում ու լրացուցիչ ուժերով գալիս են ձեր դեմ։ Այսինքն՝ կողոպուտը միայն պատրվակ էր ձեր դեմ գալու համար։ Ի՞նչ կանեք։

– Ի՛մ Արքա, բայց սա անհատական դեպք չի։ Սա մեր անհատական կռիվը չի։ Մենք պատասխանատվու-

թյուն ունենք ողջ ազգի առջև,– արտահայտվեց Զաքարյանը։

– Հասկանում եմ, Զաքարյան։ Բայց նկատիր, որ հիմա դու առանձնացնում ես քեզ քո ազգից։ Ազգին դրել ես անպատասխանատու անչափահասի, իսկ քեզ՝ նրա խնամակալի տեղը։ Մեր ազգը անգիտակից անչափահաս չի։ Մենք նահապետների ազգ ենք. ամեն մեկս՝ մի արքա։ Ամեն նահապետ կարող էր լինել ձեզնից յուրաքանչյուրի աթոռին, նույնիսկ՝ իմ։

– Ի՛մ Արքա, ճիշտ ես, բայց՝ ըստ մեր նահապետական կարգի, տոհմի կամ ազգի նահապետը պատասխանատվություն ունի իր տոհմի առջև։ Նահապետն իր տոհմի՝ իր շառավղի, հարատևման ու բարեկեցության պատասխանատուն է,– ասաց Զաքարյանը։

– Ճիշտ է, բայց դու մոռանում ես, որ ամեն նահապետ առաջին հերթին իր տոհմի, իր ողջ ազգի պատվի ու արժանապատվության պահապանն է։ Ի՞նչ իմաստ ունի ապրել անպատիվ կյանքով՝ առանց արժանապատվության։ Որևէ իմաստ ունի՞ տեսնել սեփական շառավղի անպատիվ հարատևումը։ Էլ ի՞նչ տոհմ կամ ազգ, եթե ապրում է անարգված ու սողեսող։ Բերածս օրինակը շատ հեռու չի, Զաքարյա՛ն։ Պատասխանի՛ր՝ ի՞նչ կանես։

– Ի՛մ Արքա, դե՜, պարզ է՝ զենք կվերցնեմ ու կռվի դուրս կգամ՝ պաշտպանելու իմ տոհմը, նրա պատիվն ու արժանապատվությունը,– պատասխանեց Զաքարյանը։

– Լա՜վ... Իսկ հետո՞։ Ասենք՝ պարտվեցիր. ու միայնակ անպայման կպարտվես կազմակերպված թշնամուն։ Հետո՞...

Զաքարյանը չէր սպասում նման շրջադարձի։ Նրա պես տարակուսել էին բոլոր ներկաները։ Նրանք, նույնպես, կարծում էին, թե ամեն բան արդեն ավարտված էր։ Պատասխանը պարզ էր՝ առճակատում։ Ոչ ոք դեռ չէր հասկանում, թե Արքան ուր էր տանում։ Ոմանց մոտ բուռն հետաքրքրություն առաջացավ։

– Ի՛մ Արքա, ուրիշ ի՞նչ էր պետք անել,– զարմացավ խորհրդի անդամներից Նազարյանը։

– Ի՛մ եղբայրներ, չէ՞ որ հենց սկզբից պարզ էր, որ ոտնձգությունը միայն պատրվակ էր, կանխամտածված

պատրվակ՝ մեզ վրա հարձակվելու համար, որ մեր թշնամու միտքը մեր այգու կողոպուտը չէր միայն, որ մեր թշնամու միտքը մեր վերջը տալն էր, նաև՝ որ մեր թշնամին նախապատրաստված էր,– ասաց Արքան։

– Ի՛մ Արքա, պարզաբանիր, խնդրում եմ, ո՞րն է ճիշտ պատասխանը,– բոլորի հետաքրքրությունն արտահայտեց Նազարյանը։

– Ի՛մ եղբայրներ, միայնակ կռվի դուրս գալով՝ անպայման կպարտվենք կազմակերպված թշնամուն։ Նույնիսկ մեր զինված որդիների մասնակցությունը շատ բան չի փոխի։ Իսկ, եթե պարտվենք, ապա մեր կանայք, մեր աղջիկներն ու հարսները կանարգվեն ու կստրկացվեն։ Անպատվություն կգա մեր ողջ ազգի գլխին։ Ճիշտ պատասխանը, հետևաբար, ողջ գերդաստանով կռվի դուրս գալն է։ Այնպես, ինչպես արել են մեր նախահայրերը։ Հիշենք Նահապետ Հայկին։ Ազգովի՛ են կռվի ելել։ Նա մենա՞կ գնաց Բելի դեմ։ Չէ՛... Իր ողջ տոհմն էր իր հետ՝ մեծով, փոքրով։ Ինչո՞ւ։ Որ հաղթեն։ Որ, եթե նույնիսկ պարտվեն, գոնե բոլորն ընկնեն մարտում, չանարգվեն, չստրկացվեն հետո։ Մեր պատմության մեջ քիչ չեն մեր կանանց, մեր հարսների ու աղջիկների հերոսական օրինակները։ Նրանք զենքը ձեռքին կռվի են ելել, թև ու թիկունք եղել իրենց կռվող տղամարդկանց։ Հաճախ ոչնչով չեն զիջել։ Հիշենք մեր լեգենդար թագուհի Փառանձեմին, հերոս Այծեմնիկին, մեր հեքիաթների հերոսներից՝ Անահիտին, որ զորքի գլուխ անցած արշավեց՝ իր ամուսնուն գերությունից ազատելու։ Մեր էպոսի քաջ Խանդութին, որ զենք ու զրահ կապել, ելել էր Դավթին գտնելու։ Գոհարին, որ հավասար մենամարտի էր ելել Փոքր Մհերի դեմ։ Զմոռանանք զարաբաղյան կռվի մեր հերոս կանանց։ Որդիներով, թոռներով, մանավանդ՝ կանանցով, աղջիկներով ու հարսներով կռվի դուրս գալը մեր նախնյաց մարտավարությունն է եղել, մանավանդ, երբ թշնամին մեզ գլխովի կոտորելու ծրագիր ունի։ Ասածս այն է, որ եթե պարտվենք, գոնե բոլորս կռվում կմեռնենք։ Ոչ ոք չի անարգվի ու ստրկացվի։ Եթե նույնիսկ մեր ազգը չի գիտակցում ու պատրաստ չի դրան՝ մե՛նք պիտի գիտակցենք։

Բոլորն ուշադիր լսում էին։ Արքան, տեսնելով, որ դեռ

լիովին չի համոզել իր զինակիցներին, շարունակեց.

– Եղբայրնե՛ր, եկեք նախ վերջ տանք օտարամուտ մտածելակերպին։ Ո՛չ մի քաղաքականություն։ Քաղաքականություն խաղալը վախկոտների, իսկ փոխզիջումների գնալը՝ թույլերի բանն է։ Մեր հպարտ ու խրոխտ ազգի համար անպատվաբեր է քաղաքականություն խաղալը։ Մի՛ երկյուղեք։ Մենք արդեն հզոր ու անպարտելի ազգ ենք։ Չկա էլ նախկին անուամունք ժողովուրդը՝ կապիտալիզմին գերի, միմյանց թշնամի ու փսորված։ Հիմա մենք մեր ազգային ուամունքն ունենք՝ մեր պինդ ողնաշարը։ Էլ տարանջատված չենք նեղ անձնական շահերի պատճառով։ Մենք հիմա մեր ազգային ուամունքի շուրջ միավորված ազգ ենք։ Բոլոր ներկայիս գերտերություններում բնակչությունը տարանջատված է աշխատավորների, լափողների ու վարձու զինվորների։ Դա շատ թույլ համակարգ է։ Մեր մշակույթն ուրիշ է։ Մենք նրանց պես տարանջատված չենք։ Մենք՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, և՛ աշխատավոր ենք, և՛ զինվոր։ Մեզանում շերտավորում՝ տարանջատում, չկա։ Ճիշտ է, կան ազատ շինականներ ու զինված ուժեր, բայց Արքայական զինված ուժերում ծառայությունը մեր ջահելների համար մարտական հմտություններ ու կորով ձեռք բերելու շրջան է միայն։ Հետագայում ոչ մեկս չենք կորցրնում մարտիկի մեր առաքելությունը՝ մինչև մեր կյանքի վերջը։ Ըստ մեր հիմնական օրենքի՝ ամեն հպատակ, նույնիսկ՝ մեր կանայք, զենք կրելու իրավունք ունեն։ Այսուհետև ես դա պարտադիր եմ դարձնելու։

– Ի՛մ Արքա, ի նկատի ունես աղջիկներին բանակ զորակոչե՞լը,– հարցրեց Դոնոյանը։

– Ո՛չ, բարեկամս, կանանց զենքի գործածության հըմտություններ կսովորեցնեն իրենց տղամարդիկ։ Ըստ մեր ազգային ուամունքի՝ տղամարդը կնոջ ուսուցիչն է։ Նա է կնոջ և՛ հոգևոր, և՛ մտավոր, և՛ ռազմական գիտելիքների ու հմտությունների ուսուցիչը։ Այր ու կին՝ մի մարմին։ Մեր ընտանիքներում չկա խիստ տարանջատում։ Եվ՛ կինը, և՛ տղամարդը հավասար պատասխանատվություն ունեն, մանավանդ՝ արտաքին խնդիրների շուրջ։ Դա մեր նախապատմական ժառանգությունն է։ Նույնն է տոհմի, նաև՝ ողջ ազգի, դեպքում։ Նահապետն ու իր ազգը մեկ

են, անջատ չեն։ Նահապետն իր տոհմի, իր ազգի ուսուցիչն է։ Տոհմում չկան տարբեր շահեր ու միտումներ։ Բոլորի շահն ու միտքը մեկ է։ Նահապետը չի պարտադրում տոհմին իր կամքը։ Նա անում է այն, ինչ բոլորի համոզմունքն է։ Չէ՞ որ տոհմի անդամներն իր միս ու արյունն են, հետևաբար միևնույն էությունն ու համոզմունքն ունեն։

– Ի՛մ Արքա, բայց ներկա պայմաններում տղամարդկանցով ու կանանցով կռվի չեն ելնում։ Հիմա ուրիշ է,– խոսեց զինված ուժերի նախարարը։

– Չէ՛, Դարբինյա՛ն, ուրիշ չի։ Ինչպես առաջ, այնպես էլ հիմա, մեզ ուզում են վերացնել։ Ձևերի տեսակներն են փոխվել, բայց մեր թշնամիների միտումները՝ ոչ։

– Ի՛մ Արքա, բայց հիմա շատ վտանգավոր է։ Զանգվածային ոչնչացման զենքեր կան։ Կանանց տեղ չի ռազմի դաշտը,– պնդեց Դարբինյանը։

– Բա զանգվածային ոչնչացման զենքը տղամարդու զենք է՞,– ակնհայտորեն կատակեց Արքան։

Մթնոլորտը լիցքաթափվեց մի փոքր։

– Ի՛մ Արքա, բայց կանայք թող չգան կռվի,– ժըպտալով փորձեց Արքայի հոմորին համահունչ շարունակել Դարբինյանը։

– Ինչո՞ւ չգան։ Ուրեմն, մեր թշնամուն կարելի է զանգվածային ոչնչացման զենք գործածել, մեզ՝ ո՞չ։

Արքայի վերջին խոսքի վրա խորհրդի անդամները լիաթոք ծիծաղեցին։ Արքան ուրախ էր, որ կարողացավ մի պահ լիցքաթափել լարվածությունը։ Դա օդի պես անհրաժեշտ էր հիմա, բայց բուն նյութից շատ չէր կարելի շեղվել։ Արքան փորձեց արագորեն հետ հավաքել բոլորին։

– Ի դեպ, հենց նոր հիշեցի Բրիտանիայի ցեղերից մեկի լեգենդար թագուհի Բոուդիկայի ապստամբությունը Հռոմի դեմ։ Հռոմեացիք ծեծում ու անարգում են նրան ամուսնու մահից շատ չանցած։ Նա էլ, ի պատասխան, մի հսկա ապստամբություն է բարձրացնում Հռոմի դեմ։ Ու բոլո՛րն են կռվի ելնում՝ մեծ, թե՝ փոքր, տղամարդ, թե՝ կին։ Գրավում ու այրում են քաղաք քաղաքի հետևից։ Ո՛չ մի Հռոմեական տաճար չեն թողնում կանգուն։ Գրավում ու այրում են Հռոմեական Բրիտանիայի մայրաքաղաքը,

սարսափի մատնում հռոմեացիներին։ Բա Ժաննա Դ'արկը։ Մի խոսքով, պատմությունը լի է ռազմատենչ ու հերոս կանանցով։ Նախանձել կարելի է։ Հիմա էլ կան։ Ղարաբաղյան կռվում քիչ չեն եղել զենք վերցրած ու իրենց տղամարդկանց հետևից կռվի ելած կանայք։ Ով ազգովի է կռվի ելնում՝ մեծից փոքր, տղամարդ, թե կին, չի՛ պարտվի։ Մենք ուժեղ էինք, որովհետև կռվում էինք մեր որդիների, մեր կանանց, մեր հայրերի ու մայրերի հետ ուս-ուսի։ Հիշեք թեկուզ Երկրորդ Համաշխարհայինը։ Մինչև ատամները զինված գերմանացիք չկարողացան հաղթել։ Պատճա՞ռը։ Պատճառը միայն Ռուսաստանի անծայրածիր ու անհուն տարածքը չէր, կամ էլ՝ խստաշունչ ձմեռը։ Նապոլեոն Բոնապարտն իր ընդամենը հարյուր հիսուն հազարանոց զորքով հաղթեց ռուսներին։ Հասավ ու մտավ Մոսկվա։ Գերմանացիների պարտության պատճառն այն էր, որ սովետական ժողովուրդը ազգովի էր կռվի ելել, իսկ իրենք՝ ոչ։ Նմանապես՝ Հռոմը։ Կործանվեց, որովհետև կռվում էր միայն իր զինված ուժերով։ Հիշե՛ք, Հայրենական Պատերազմի ժամանակ սովետական կանայք հիմնականում թիկունքում, բայց նաև ճակատի գծում էին... Հիշո՞ւմ եք Մալյանի «Եռանկյունին» ֆիլմը։ Էդ փոքրիկ աղջիկը... անձնվիրության ի՜նչ օրինակ... ամուսնուն մենակ չթողեց։ Հետը ռազմաճակատ գնաց, կամավո՛ր։

Արքայի օրինակները կարծես պարզաբանում էին նրա միտքը։ Բայց Զաքարյանը դեռ կամուկացի մեջ էր։

– Ի՛մ Արքա, հիմա ի՞նչ ենք անելու։

– Զե՛նք վախենալու։

– Առճակատման գնա՞նք։

– Հա՛։

– Ի՛մ Արքա, մենք դեռ ոչինչ, բայց ջահելները դեռ կյանք չեն տեսել... Ափսոս են։

– Զաքարյա՛ն, ի՞նչ ես առաջարկում։ Փոխզիջումների գնալով, փրկենք ազգին ոչնչացումից ու մատնենք աննպատակ գոյատևելո՞ւ։

Զաքարյանը լուռ էր։

– Չկա ավելի կործանարար բան, քան աննպատակ գոյատևելը, մանավանդ՝ օտարի կրնկի տակ, օտարի արժեքները մեջներս,– ասաց Արքան՝ Զաքարյանի պատաս-

խանին չսպասելով։

Մի փոքր դադարից հետո Արքան կրկին շարունակեց.

– Էլի հիշեցի մեր հերոս կանանց։ Սեփական երեխաներին սպանում էին, միայն թե թշնամու ձեռքը չընկնեն։ Ինչո՞ւ... Ո՞նց էր ձեռքները գնում,– ասաց Արքան ու խորասուզվեց մտքերի մեջ. «Որքա՜ն ավեր ու կոտորած ենք տեսել։ Ու դեռ շարունակվում է։ Բայց ամենավտանգավորը ներսի պատճառներն են, ներսի։ Այն, որ մարդ չի ուզում կռվի ելնել ցոփ ու շվայտ կյանքի համը բերանում։ Նույնիսկ ինքն իրեն պաշտպանելու համար չի ուզում։ Սա ի՞նչ ժանտախտ է։ Սրա դեմն առնել է պետք»։

Շուտով Արքան սթափվեց իր մտքերից։ Ահագին բան կար ասելու։

– Եղբայրնե՛ր, միայն գոյատևելու համար չի, որ աշխարհ ենք եկել։ Մենք աշխարհ ենք եկել ապրելու, լիաթոք ու սրտաբաց։ Մարդակործան մի մեծ դավադրություն է տիրում աշխարհում։ Մարդկանց ստրկացրել են, ո՛չ միայն ֆիզիկապես... Խաբել են, թե սրտի ձայնին լսել չի կարելի, թե միտքն է կարևորը։ Խաբել են, թե ազատ ու անբռնազբոս վարքը ստորակարգ է։ Իբր՝ գիտակցությունն է առաջնայինն ու բարձրակարգը։ Ու դա արել են շարունակաբար։ Սպանել են սերը, ջերմությունը, անկեղծ վերաբերմունքը միմյանց հանդեպ։ Թշնամացրել են մարդկանց՝ ստիպելով նրանց ներփակվել ու չարանալ, շերտավորվել ու տարանջատվել, փսորվել ու թոկանալ։ Իսկ ինչպե՞ս են դա արել։ Ծաղրել ու պախարակել են անկեղծ ու սրտաբաց մարդուն։ Նույնիսկ արվեստն է փչացել։ Վերջին հարյուր տարվա «առաջատար» արվեստում բացակայում է սրտի ջերմությունը։ Փոխարենը լավագույն դեպքում միայն մտքի խաղ է՝ ռեբուսներ ու հանելուկներ։ Բայց հիմնականում՝ անկապ ու մոլորեցնող անտաղանդություն։ Ինչևէ...

Արքան նկատեց, որ արդեն անհասկանալի բաներ էր ասում։

– Հիշո՞ւմ եք Թումանյանի մի չքնաղ քառյակ կա։ Միակը, որ վերնագիր ունի՝ «Սիրտ».

Դո՛ւ գիտես մենակ ճամփեն երկնքի,
Դո՛ւ գիտես գաղտնիքն երջանիկ կյանքի,
Դո՛ւ գիտես ամենն ամենից առաջ,
Քու խո՛սքն է օրենքն ամեն օրենքի։

Գիտե՞ք... մահամերձ մարդկանց խնամող մի հետաքրքրասեր բուժքույր գրանցել է, թե մարդիկ ամենաշատն ինչի՞ համար են զղջում մահվան մահճում պառկած։

Բոլորը հետաքրքրությամբ մի փոքր առաջ թեքվեցին։

– Որ քաջություն չեն ունեցել ապրելու իրենց սրտի թելադրանքով, իրենց էությանը համահունչ կյանքով, այլ ապրել են ուրիշներին գոհացնելու համար։ Մենք պիտի ապրենք այնպես, ինչպես ուզում ենք։ Թե ինչպես դա կընկալվի, կարևոր չի։ Մենք չենք փոխելու մեր ապրելակերպը շրջապատի ճնշման տակ։ Չե՛նք հարմարեցնելու մեր արժեհամակարգը նրանց քմահաճույքներին ու պահանջներին։ Մենք ուրիշի դուդուկի տակ պարող ազգ չենք։

– Ի՛մ Արքա, բա հիմա ի՞նչ անենք։ Ինչպե՞ս պատասխանենք դրանց հորդորներին,– Արքային դիմեց նախարարների խորհրդի նախագահ Ամոյանը։

– Իսկ ի՞նչ կուզեիր, որ լիներ։ Այ, ասենք, ամենակարող հրաշագործ ես ու ամեն սրտիդ ուզածը կլինի։ Ի՞նչ կուզեիր, որ լիներ,– հարցրեց նրան Արքան։

– Կուզեի, որ դրանց հորդորները չհասնեին ականջներիս,– ասես երազի մեջ, արտաբերեց Ամոյանը։

– Հենց այդպես էլ արա։ Անջատիր կապը դրանց հետ ու ոչ մեկի զանգին կամ նամակին մի պատասխանիր։ Բայց քեզ օգնելու համար կարող եմ երկրում տոն հայտարարել, ասենք՝ մի շաբաթով, հանրաքվեի հաջող ավարտի կապակցությամբ։ Պետական հիմնարկների բոլոր աշխատողներին արձակուրդ տալ ու վերջ։ Իսկ այդ ընթացքում կհասցնես նախապատրաստել այն, ինչ անհրաժեշտ է դատավճիռն իրագործելու համար։ Ազատվել է պետք գլխից էլ, գլխացավից էլ... Ու որքան շուտ, այնքան լավ։ Մեր թշնամիները դեռ չեն սովորել մեր արագությանը։ Մինչև ուշքի գան, մենք արդեն արած պրծած կլինենք ամեն բան։ Իսկ, երբ ամեն բան արված լինի, էլ իմաստ չի ունենա թակել մեր դռները։ Բայց արագացրու։

Ու առանց ավելորդ ճոխությունների։ Ամեն ինչ իր անհրաժեշտի մեջ է գեղեցիկ, նաև՝ պատշաճ արագության։ Շտապելն, իհարկե, լավ չի, բայց և ավելորդ ձգել էլ պետք չի։ Ամեն դեպքում, որքան շուտ կախենք դրանց, այնքան շուտ կփակվեն դրանց դրսի տերերի բերանները։

– Ի՛մ Արքա, փրկեցիր,– թեթևացած շունչ քաշեց Աթոյանը։

– Մի՛ վախեցեք, եղբայրնե՛ր։ Ուս-ուսի, որ տանք, սարեր շուռ կտանք։

Արքան, սակայն, դեռ չէր ուզում ավարտել զրույցը։ Որքան էլ խոսեր, բացատրեր, բավարար չէր լինի ներկայացնելու մարդուն կաշկանդող ու երջանկությունից զրկող պրագմատիկ, անսիրտ կյանքի կործանարար բնույթը։ Ինչ էլ ասեր՝ բավարար չէր լինի բացատրելու անկեղծ սրտի թելադրանքով ապրելու կարևորությունը։ Ինչպե՞ս հասկացներ, որ հենց դա էր իր նպատակը, որ իր ազգն ապրի սեփական էությանը համահունչ՝ անկաշկանդ ու երջանիկ։ Որ հենց դա է մեր պետության առաքելությունը՝ ազատ ու երջանիկ կյանք ապահովել բոլորի համար. սկզբում՝ ներսում, հետո, իհարկե, նաև դրսում՝ հարևան ազգերի մեջ։ Ի վերջո, նաև՝ ողջ աշխարհում։

Արքան անմիջապես հիշեց Սասունցի Դավթին, ով գլխատելով Բաբը-ֆրենկին, ազատում է նրա ժողովրդին բոլոր բռնակալներից, կարգ ու կանոն է հաստատում քաղաքում, բայց հեռանալուց առաջ պատգամում, որ երբ կրկին բռնակալներ ծագեն, ու նրանց տապալելու հարց առաջանա, ապա իրենք անձամբ կռվի չելնեն, այլ դիմեն իրեն՝ Դավթին։ Փաստորեն, հնուց ենք ունեցել այդ առաքելությունը։

Քանի դեռ Արքան մտքերի մեջ էր, խորհրդի անդամներն անկաշկանդ զրույցի էին անցել։ Արքայի անմիջական ու ջերմ մոտեցումն իր արդյունքն էր տվել։ Ոմանք ոգևորությունից թողել էին իրենց պաշտոնական կեցվածքն ու զրուցում էին՝ ասես տանը։

Արքան նկատեց, որ վերացել էր վախի այն մթնոլորտը, որ կար խորհրդակցության սկզբում։ Դա լավ էր։ Իսկ խորհրդականների տնավարի զրույցից մեծ ջերմություն էր ճառագում։ Արքան գոհ էր, բայց, մի օրինակ հիշելով, դի-

մեց խորհրդի անդամներին.

– Եղբայրնե՛ր...

Բոլորը միանգամից՝ ասես զանցանքի վայրում բըռնըված երեխայի պես, շրջվեցին դեպի Արքան։

– Տեսեք... ասածս հենց մեր լեզվում է երևում։ Մեր լեզվում հսկա տարբերություն կա խոսակցականի ու պաշտոնականի, այսպես ասած՝ գրական հայերենի, միջև։ Երբ փորձում ենք խոսել պաշտոնական, գրական հայերենով, շատ ենք դժվարանում։ Դիմացինն էլ մեզ լիովին չի հասկանում։ Հասկանալը դեռ՝ ոչինչ։ Դեռ կարելի է մի կերպ հասկանալ, բայց խոսելն անհնար է, եթե վարժված չես։ Պաշտոնական՝ գրական, հայերենը համարյա օտար լեզվի չափ բարդ է։ Ա՛յ, հիշում եմ, երբ որևէ բանվորի կամ գյուղացու ստիպում էին խոսել հեռուստացույցով, սովետական տարիների մասին է խոսքս, ոչ ոք չէր կարողանում։ Բոլորի լեզուն ասես քարկապ էր ընկել։ Ի՞նչն էր պատճառը։ Այն, որ նրանց ստիպում էին խոսել պաշտոնական լեզվով, որին սովոր չէին խեղճերը։ Բայց, երբ սովետական շըրջանն ավարտվեց, ամեն ինչ փոխվեց։ Էլ պարտադիր չէր խոսել պաշտոնական հայերենով։ Մարդիկ պրծան էդ ճընշումից։ Ա՛յ, նույն կերպ ես ուզում եմ, որ մեր մարդիկ ձերբազատվեն իրենց կյանքը կաշկանդող օտարամուտ կաղապարներից։ Ես չգիտեմ աշխարհում մի որևէ այլ ազգ, որ նախապատմությունից մինչև հիմա միմյանց դիմի «քույր» ու «եղբայր»-ով։ Օտարամուտ կաղապարներից ձերբազատվելու համար եմ երկրում արգելել միմյանց «պարոն»-ով կամ «տիկին»-ով դիմելը։ Մեզանում չկան տերեր ու ծառաներ։ Մեր արժեհամակարգն ուրիշ է։ Մենք քույրերի ու եղբայրների ազգ ենք։ Մեր ոսմունքն ու օրենքներն էլ մեր բուն էության արտացոլումն են։

Արքան նկատեց, որ բոլորն ուշադիր իրեն էին լսում, միաժամանակ գլխով հավանություն տալով իր ասածներին։

– Կարևորը, եղբայրնե՛ր, սեփական անձի բուն էությունը ճանաչելն է ու գործելն է՝ ըստ սեփական սրտի ձայնի։ Ի դեպ, արդյունքի մասին չմտահոգվելով։ Սա է կարևորը։ Սխալվելուց չի կարելի վախենալ։ Սխալվելն ուսուցանող հատկություն ունի։ Առանց գործելու հաճախ

հնարավոր չի պարզել՝ ճի՞շտ էր մեր որոշումը, թե՝ սխալ։ Շատ հաճախ միայն անելուց հետո ես իմանում ճիշտն ու սխալը։ Իսկ ավելի լավ է իմանալ, թե որն է սխալը, քան չիմանալ, թե որն է ճիշտը։ Վերջապես, մարդը միշտ չի կարող վերահսկել ինքն իրեն ու սեփական վարքը պահել նախասահմանված կաղապարների մեջ։ Կհոգնի ու մի գեղեցիկ օր այնպիսի սխալ թույլ կտա, որ ջուրը կգցի իր ողջ արածը։ Ինքն իրենից էլ կամաչի։ Էլ չեմ ասում, որ գերագույն դժբախտություն է՝ ապրել սեփական էությանը ոչ համահունչ, պարտադրված կաղապարների մեջ։ Եկեք ո՛չ մենք ապրենք այդպես, ո՛չ էլ՝ մեր ժողովրդին ստիպենք։ Մեր՝ ազգի գերագույն նահապետների, անձնական օրինակն ամենազորեղ միջոցն է։ Մի՛ վախեցեք։ Արհամարհեք դրսի ճնշումն ու վերջ։

Բոլորը համաձայն էին Արքայի մտքին։ Միայն Աթոյանն էր մի փոքր անհանգիստ։

– Ի՛մ Արքա, ողջ ծանրությունը, սակայն, ինձ վրա է ընկնելու,– կիսակատակ վրա բերեց նա։

– Աթոյա՛ն, քեզ օգնեցինք, չէ՞։ Մի շաբաթում կհասցընես, կարծում եմ, կազմակերպել մահապատժի իրականացման համար անհրաժեշտ ամեն բան։

– Ի՛մ Արքա, դա կհասցնենք, իսկ եթե հետո ներքաշվենք ռազմական ընդհարումների մե՞ջ...– անհանգստացավ Աթոյանը։

Բոլորի ուշադրությունը ծայրաստիճան լարվեց։ Ռազմական ընդհարումների մեջ ներքաշվելու միտքն էր, որ հենց սկզբից երկյուղի էր մատնել բոլորին։

– Մի՛ անհանգստանա։ Դու լավ գիտես՝ մեր թշնամիները, որքան էլ հզոր, սակայն անխոցելի չեն։ Մենք ահագին լծակներ ունենք նրանց դեմ։

– Ի՛մ Արքա, գիտեմ։ Բայց...

– Պարտվել բառը չասես։ Գեղ, որ կանգնի՝ գերան կկոտրի։ Ազգովի ոտքի որ կանգնենք՝ գերանն ի՞նչ է, դրանց ողնաշարը կկոտրենք։ Մեր թշնամիները հենց դրանից էլ վախենում են։

– Ի՛մ Արքա, բայց կհասցնե՞նք,– միջամտեց Վռամը՝ Արքայի առաջին խորհրդականը։

– Եթե դանդաղենք՝ հաստատ չենք հասցնի։ Մեր

զենքը մեր արագությունն է։

Արքան շրջվեց դեպի զինված ուժերի նախարարը։

– Ռազմի՛կ։

– Ի՛մ Արքա...

– Ռազմի՛կ, զինված ուժերում իրավիճակը ո՞նց է։

– Ի՛մ Արքա, պատրաստ ենք դիմակայել ամեն ոտընձգությանն։

– Չգիտեմ, Դարբինյան... «ամեն»-ը մի քիչ շատ ես ասում։ Բայց գիտեմ, որ զինվորների ոգին տեղն է, ռազմական պատրաստությունը՝ նույնպես։ Դա է կարևորը,– ասաց Արքան ու շրջվելով Զաքարյանի կողմը,– Զաքարյա՛ն, էլ ի՞նչ հարցեր կան քննարկելու։

– Ի՛մ Արքա, առաջիկա մահապատժի հետ կապված... որոշ խմբեր են հայտնվել ու բողոքի ցույցեր են անցկացնում։ Եկեղեցու վերացման շուրջ էլ անհանգստություն է սկսվել մարդկանց մեջ,– պատասխանեց Զաքարյանը։

– Եթե ցուցարարները սովորական պացիֆիստներ են, կարիք չկա անհանգստանալ։ Իսկ, եթե դրսից են ֆինանսավորվում, հայտնաբերել ու ջրի երես հանել։

– Ի՛մ Արքա, շատ հավանական է, որ երկրորդն է,– վրա բերեց Արշակը,– այդ ուղղությամբ աշխատում եմ։

– Շատ լավ, Արշա՛կ,– ասաց Արքան ու շարունակեց։– Եղբայրնե՛ր, իսկ եկեղեցու՝ այդ ազգադավ կառույցի, վերացման հարցը վաղուց պիտի լուծած լինեինք։ Մեր Սասնա Ծռեր էպոսում, կհիշեք, Մատնավանքի տերտերը մատնում է Փոքր Մհերին ու թշնամու կողմն անցնում։ Սա, ինչպես հասկանում եք, շատ խորհրդանշական է։ Լրատվական դիպված չի։ Եկեղեցու ազգադավ գործունեությունն այնքան խորը հետք է թողել մեր ազգի սրտում, որ անխուսափելիորեն հայտնվել է մեր էպոսում, որպես եկեղեցուն հատկանշական դրվագ։

– Ի՛մ Արքա, բայց դեռ շատ են մեզանում մոլեռանդ հավատացյալները,– փորձեց առարկել Վանեցյանը։

– Գիտեմ, Վանեցյա՛ն։ Շատ են նաև նրանք, ովքեր դեռ դիտում են եկեղեցին՝ որպես ազգապահպան, մեր ազգային նկարագիրն իր մեջ կրող ու ներկայացնող կառույց։ Բնական է։ Դարեր շարունակ եկեղեցին է եղել այն հիմնական պատվիրատուն, որ կազմակերպված ձևով շա-

հագործել է մեր ազգի արվեստագետ մշակների ողջ տաղանդն ու եռանդը, այն ուղղելով, սակայն, հիմնականում եկեղեցանպաստ քարոզչության ճանապարհով։ Բայց շուտով մեր բոլոր ազգակիցները կհամոզվեն, որ սխալվում էին՝ եկեղեցին համարելով միակ հնարավոր ազգապահպան կառույցը։ Եկեղեցու վերացման ու փոխարենը մեր ազգային ուսմունքի կենտրոններ հիմնելու հարցով ես մի ծավալուն զեկույց եմ պատրաստում։

Արքան շրջվեց դեպի նախարարների խորհրդի նախագահը։

– Աթոյա՛ն։

– Ի՛մ Արքա...

– Իմ ու կաթողիկոսի երեկվա ընդհարումը կհեռարձակես այդ երեք սրիկաների մահապատժից անմիջապես հետո։ Երեք օր շարունակ։ Դրանից երեք օր հետո կհեռարձակես զեկույցս։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Բայց մի ցավից չպրծած, մյուսն ենք շալակում...– փորձեց կատակել Աթոյանը։

– Մի՛ անհանգստանա, Աթոյա՛ն։ Եկեղեցու վերացման առիթով միամսյա տոն կհայտարարեմ,– կատակեց Արքան։– Իսկ եթե՝ լուրջ, ապա թող սովորեն, մենք ոչ մեկի ճնշմանը չենք ենթարկվում։ Անում ենք այն, ինչ ուզում ենք, երբ և ինչպես ուզում ենք։ Ու ընդհանրապես, կարիք չկա ժամանակից շուտ իրար անցնել։ Գուցե ամեն բան ընթանա առանց ցնցումների... Մեր թշնամիները շատ դանդաղ են մտածում։ Մինչև հասցնում են որևէ դիվանագիտական արձագանք մշակել, մենք մի նոր անակնկալ ենք մատուցում։ Ու այդպես շարունակ...

– Ի՛մ Արքա, իսկ ի՞նչ անակնկալ ունենք Եկեղեցու վերացումից հետո,– փորձեց կատակել Վանեցյանը։

– Դեռ՝ ոչ մի, Վանեցյան։ Բայց, եթե լսենք մեր սրրտի ձայնին, ապա անպայման կունենանք։ Իսկ, եթե լուրջ, ապա ոչինչ պետք չի ծրագրել։ Անօգուտ է։ Երբեք ոչ մի բան ըստ մարդու կազմած ծրագրի չի գնում։ Հայրս ինձ հետևյալ պատգամն է տվել՝ «Մաքուր պահիր սիրտդ, արա ինչ սիրտդ է թելադրում, ու մի մտածիր հետևանքների մասին։ Մնացածն Աստված կանի»։ Հենց այդպես էլ արեք ու ամեն բան լավ կլինի։ Հիշեք՝ որպես նահապետներ,

մենք կոչված ենք, օրինակ ծառայելով, նախ՝ կրթել մեր ազգին ու հետո՝ անել մեր ազգի սրտի ուզածը։ Այնպես, ինչպես անում ենք մեր կանանց ու երեխաների սրտի ուզածը։

– Ի՛մ Արքա, ի նկատի ունես ամե՞ն ուզածը,– զարմացավ Վանեցյանը։

– Վանեցյա՛ն, անհանգստանալու կարիք չկա։ Ճշմարիտ կրթություն ստացած ընտանիքի անդամները վտանգավոր քմահաճույքներ չեն կարող ունենալ։ Խոսքս սրտի ուզածի մասին է։

– Ի՛մ Արքա, բայց դժվար է տարբերել, մանավանդ՝ կանանց, սրտի ուզածը քմահաճույքից։

– Հեշտ չի... Կանայք երբեմն անգերազանցելի խորամանկություն կարող են դրսևորել։

– Ի՛մ Արքա, բա ո՞նց անենք։

– Միակ մոտեցումը մեր անշահախնդիր սերն ու անսահման նվիրվածությունը կարող է լինել։

– Իսկ, եթե չաշխատի՞,– շարունակեց անհանգստանալ Վանեցյանը։

– Ուրեմն, կին չեն։

– Ի՛մ Արքա, բա ի՞նչ են,– փորձեց կատակի տալ Վանեցյանը։

– Ջանգվածային ոչնչացման զենք,– պատասխանեց Արքան։

Բոլորը լիաթոք ծիծաղեցին, Արքան էլ՝ հետները։ Մթնոլորտը ճիշտ Արքայի ուզածն էր՝ լիցքաթափված ու անբռնազբոս։ Արքայի գահակալության օրվանից սկսած ոչ ոք նրա ներկայությամբ դեռ այսքան ազատ ու անկաշկանդ չէր զգացել։ Արքան ամեն անգամ զարմացնում էր իր մարդկային ու ինտելեկտուալ որակներով։

***

Ամենասկզբում, սակայն, հսկայական վախ ու անվստահություն կար անձամբ Արքայի, նաև՝ նրա կազմած Ազգային Սահմանադրության հանդեպ։ Շատ քչերն էին հավատում միապետության անհրաժեշտությանը։ Համարյա բոլորը վախենում էին՝ այն նույնացնելով բռնապետության հետ։ Նահապետական կառավարման գեղեցկությունը ան-

հասանելի էր մարդկանց։

Ժողովրդավարությունը շատ շատերը մարդկության բարձրագույն նվաճումն էին համարում։ Դրա արժեքը կասկածի տակ դնելն իսկ սրբապղծություն էր շատերի համար։ Մեծ ջանքերի գնով միայն հնարավոր եղավ մարդկանց ներկայացնել ժողովրդավարության խոցելի բնույթը։ Մարդիկ դժվարությամբ էին համոզվում նույնիսկ այն համատարած իրողությունն աչքների առաջ, որ համարյա բոլոր ժողովրդավարական համարվող երկրները բռնապետությունների էին վերածված՝ հիմնականում թույլ ու անկազմակերպ բնակչությամբ։ Այն դեպքում, երբ բոլոր ճշմարիտ միապետությունները երջանիկ ու բարգավաճող երկրներ էին։

Առավել դժվար էր բացատրել կապիտալիզմի կործանարար բնույթը։ Այն, որ տնտեսական անարդյունավետության հետ մեկտեղ կապիտալիզմը մրցակցություն, հետևաբար, հակամարտություն ու թշնամանք էր ծնում բոլոր մարդկանց միջև, դրանով պառակտելով ու թուլացնելով հասարակությունը, որ հենց կապիտալիզմն էր մեր երկրի քայքայման ու համատարած արտագաղթի պատճառը։ Դժվար էր բացատրել, որ կապիտալիզմի արժեհամակարգը մեր ազգայինի հակառակն էր։

Մարդիկ ուշ հասկացան, որ մեր նախահայր Հայկի կռիվը հենց կապիտալիզմի դեմ էր։ Շատերի համար անակնկալ էր իմանալ, որ աշխարհում ընդհանրապես գոյություն ունի երկու արժեհամակարգ, մեկը՝ մարդկային, իսկ մյուսը՝ անմարդկային։ Կամ, այլ կերպ ասած, մեկը Հայկ-նահապետական, իսկ մյուսը՝ նրան հակամարտ՝ Բել-կապիտալիստական։

Հայկի ու Բելի կռիվը երկու անհատների, երկու գերդաստանների, կամ նույնիսկ երկու երկրների մենամարտ չէր, այլ՝ երկու իրարամերժ արժեհամակարգերի բախումը։ Մի կողմից՝ Հայկ-նահապետական, իսկ մյուս կողմից՝ Բել-կապիտալիստական, կամ՝ ստրկատիրական։ Բելի նպատակն էր բոլորին ցած բերել սարերից, հավաքել նրանց քաղաքներում ու, աշխատանքից կախման մեջ գցելով, ստրկացնել։

Նույնն էին անում կապիտալիստները՝ մարդկանց

կանխամտածված կերպով հավաքելով քաղաքներում ու կախման մեջ գցելով նրանց աշխատանքից «ով աշխատի, նա կուտի» հնարովի պոստուլատի օգնությամբ։ Մարդիկ ուշ հասկացան, որ կապիտալիստական ստրկությունը հենց մարդու կախվածությունն էր աշխատանքից։ Ուշ հասկացան, չնայած, բոլորն էին տեսնում, որ մարդը կապիտալիզմի պայմաններում շղթայված էր իր աշխատանքին ստրուկի պես։ Կունենար աշխատանք՝ կունենար շնչելու օդ։ Չէր ունենա աշխատանք՝ չէր ունենա շնչելու օդ։

Ուշ հասկացան, որ, ընդհանրապես, կապիտալիզմի պայմաններում փողը մարդու օդն էր։ Մեծագույն դժբախտությունը, սակայն, այն էր, որ մարդիկ այլ կացութաձև չէին պատկերացնում։

Մեր Նահապետ Հայկն ընդդիմացավ Բելի կապիտալիզմին, չիջավ քաղաք ու պահպանեց իր ու իր ազգի իրավունքն ազատորեն՝ անվճար, օգտվել մայր հողի բարիքներից։ Ճիշտ այնպես, ինչպես Արարիչն էր սահմանել։ Սահմանել էր ու առատորեն ապահովում էր մարդուն այն ամենով, ինչ անհրաժեշտ էր նրա կենսագործունեության համար։ Պատահական չի, որ մայր բնությունից ազատորեն օգտվելու մարդու իրավունքը մեր ազգային արժեհամակարգի ամենահիմնարար դրույթներից մեկն է։

Չէ՞ որ, երբ մարդ աշխատում է իր անհրաժեշտի համար, ապա նրան արարելու ուժ ու եռանդ չի մնում, մանավանդ՝ ժամանակ։ Աշխատանքն անհրաժեշտի համար շըղթայում է մարդուն, թույլ չտալով նրան զբաղվել իր հիմնական գործով՝ արարելով, կատարելով Արարչի հիմնական պատվիրանը՝ բարեփոխել աշխարհն ու վերադարձնել այն իր դրախտային վիճակին։

Բայց, ավա՜ղ, ոչ մի հաղթանակ վերջնական չէ։ Մեր նախահայր Հայկի հաղթանակը բացառություն չեղավ։ Մենք, ի վերջո, տանուլ տվեցինք։ Բելը հաղթեց։ Կապիտալիզմը մտավ ու խաթարեց մեր կյանքը։ Բայց նա հաղթեց միայն այն պատճառով, որ մենք չհասկացանք։ Կապիտալիզմն ընդունեցինք՝ որպես փրկարար օղակ, որպես՝ մեր բոլոր հիվանդությունների համադարման։ Չհասկացանք, որ դեղամիջոցի փոխարեն մեզ թույն էին տվել։ Ախորժակով ընդունեցինք այն ու ավելի ծանրացրինք մեր,

առանց այդ էլ ծանր, վիճակը։

Չհասկացանք, որ կապիտալիզմի ու ժողովրդավարության համաձուլվածքն անսահման լիբերալիզմով համեմված ամենաթունավոր ու կործանարար խառնուրդն էր, որ հենց մեզ թուլացնելու համար էին կապիտալիստական տնտեսավարում ու դեմոկրատական կառավարում փաթաթել մեր վզին։ Ուշ հասկացանք, որ հենց դա էր մեր բոլոր դժբախտությունների պատճառը։

Մարդիկ չէին ընդունում, որ կապիտալիզմն իր էությամբ անմարդկային է, որ՝ այն փչացնում է նույնիսկ լավ մարդկանց։ Չէին ընդունում, որ սոցիալիզմն իր էությամբ մարդկային է, որ՝ այն փչացնում են միայն վատ մարդիկ։

Կոմունիզմից ու սոցիալիզմից, իրականում՝ կեղծ կոմունիզմից ու կեղծ սոցիալիզմից, սարսափած սերունդներին դժվար էր ցույց տալ, որ նրանք մի երրորդ ընտրության հնարավորությունն ունեն՝ մեր ազգային, նահապետական կարգի, նահապետական, կամ՝ միապետական սոցիալիզմի։

Մարդիկ ուշ ընդունեցին, որ մեր ազգային արժեհամակարգը հենց նահապետական կացութաձևն է՝ իսկական սոցիալիզմը, որ Հայկ Նահապետի ժամանակ Հայաստանում հողի մասնավոր սեփականություն չի եղել, նաև՝ ընդերքի, լճերի, գետերի, աղբյուրների և այլն։ Ամեն ինչ բնության մեջ պատկանել է բոլորին հավասարապես, ու ոչ ոք չի ասել՝ «էս սարն իմն է, էս ծառն իմն է»։ Հին Հայաստանում ստրկատիրություն կամ ճորտատիրություն չի եղել։ Չի եղել հարուստ ու աղքատ։ Չի եղել մարդու կողմից մարդու շահագործում։

Մարդիկ ուշ ընդունեցին, որ ստրկատիրությունն ու ճորտատիրությունը կապիտալիզմի ձևեր են, հետևաբար՝ մեր արժեհամակարգին անհարիր կացութաձևեր, որ Հայաստանում ճորտատիրություն մտավ եկեղեցու ձեռքով։ Երեք հարյուր մեկին եկեղեցին էր առաջինը, որ մտավ ու սկսեց հողեր սեփականացնել ու ճորտացնել մարդկանց՝ դառնալով առաջին ֆեոդալը։

Դժվար էր նաև բացատրել, որ ժամանակակից աշխարհի սոցիալիզմները ճիշտ սոցիալիզմ չեն, քանի որ կառուցված են կապիտալիզմի հենքի վրա։ Դժվար էր հա-

մոգել, որ սովետականը նույնպես ճիշտ սոցիալիզմ չէր, որովհետև հենց սկզբից առաջ էր տարվում բռնությամբ ու ահաբեկչությամբ։

Դժվար էր բացատրել, որ իսկական սոցիալիզմը նահապետական, կամ, որ միևնույնն է, միապետական սոցիալիզմն է։ Որ միայն իր ազգի մասին մտահոգ նահապետի՝ երկրի հիմնական պատասխանատուի՝ արքայի, առաջնորդությամբ է հնարավոր հաստատել իսկական սոցիալիզմ՝ խարսխված մեր վաղնջական ուսմունքի հենքի վրա։

Ցավոք, շատ ուշացրինք։ Չհասկացանք, որ վաղուց պիտի ընտրություն կատարած լինեինք նահապետական կացութաձևի ու կապիտալիզմի միջև։ Դժվար էր պատկերացնել ու ընդունել, որ, եթե կապիտալիզմը միայն տնտեսավարման ձև է, իսկ դեմոկրատիան՝ միայն կառավարման, որ, ընդ որում, երկուսն էլ մերը չեն, ապա մեր ազգային՝ նահապետական, կացութաձևը և՛ կառավարման, և՛ տնտեսավարման ձև է։

Հատկապես դժվար էր ընդունել, որ նահապետական չի նշանակում հետադիմական, կամ՝ ագրարային։ Դժվար էր պատկերացնել, որ այն միայն կառավարման ու տնտեսավարման ձև է, որն անխուսափելիորեն ենթադրում է մարդկանց բարոյահոգևոր բարձր որակ։

Բայց, այս ամենն արդեն անցյալում էր։ Չնայած դեռ կային որոշ թերահավատներ, նաև՝ որոշ մանր ոճրագործներ, բայց մեր ազգային ուսմունքի ու նրա վրա հիմնված Ազգային Սահմանադրության ընդունումն ու կիրառումն ահագին փոխել էին մարդկանց բարոյահոգևոր նկարագիրը։ Վերջապես դա էր կարևորը։

Արքան միշտ պնդում էր, որ դա էր որոշիչը, որ նույնիսկ ամենակատարյալ կառավարման ու տնտեսավարման համակարգն օգուտ չունի անբարոյական ժողովրդի համար։ Բայց նաև՝ որ բարոյահոգևոր բարձր արժեքներով ժողովրդին վնաս չի տա նույնիսկ ամենաանկատար տնտեսավարման ու կառավարման համակարգը։

Համարյա բոլորն Արքայի ծրագրերն անիրագործելի էին համարում, բայց Արքան համոզված էր, որ դա էր միակ ճանապարհը, որ հարկավոր էր սերմանել մեր Հայկնահապետական ուսմունքն ու հետևել, թե ժողովուրդն ինչ-

պես էր փոխվում դեպի լավը։ Իսկ թերահավատներին Արքան փորձում էր հուսադրել հումորով՝ «Միակ ճանապարհն այն է, որ բոլորը հավատան, որ դա է միակ ճանապարհը»։

Համակարգի ներսում արդեն լուծված էին հիմնական խնդիրները։ Մարդիկ ապրում էին ազատ ու երջանիկ՝ ինչպես Նահապետ Հայկի ժամանակ։ Շինականներն ազատված էին հարկերից։ Ոչ ոք չէր կքում հարկերի ու վարկերի ծանր բեռի տակ։ Մարդիկ ազատորեն օգտվում էին մայր հողի բարիքներից։ Երկրում ամեն ինչ ազգայնացված էր ու գտնվում էր Արքայի հսկողության տակ։ Ամեն ընտանիք կամ գերդաստան վարում էր իր նախընտրած տնտեսական գործունեությունը ընտանիքի կամ գերդաստանի նահապետի գլխավորությամբ։ Ամեն բան կարծես իր տեղն էր ընկել։

Չնայած, դեռ կային խնդիրներ։

***

– Զաքարյա՛ն, ուրիշ ի՞նչ հարցեր կան քննարկելու,– ասաց Արքան՝ դիմելով Արքայական խորհրդի նախագահին։

– Ի՛մ Արքա, մեր հարևան երկրները դեռ շարունակում են բողոքել, որ մեր հանքավայրերի թունավոր թափոններով աղտոտված ջրերն են իրենց հասնում, որ մաքուր ոռոգման ջուր չի հասնում իրենց։

– Որքանո՞վ են հիմնավոր նրանց բողոքները։

– Ի՛մ Արքա, դժվար է ասել։ Մենք կարծես ամեն ինչ արել ենք՝ գետերը մաքուր պահելու համար...– պատասխանեց Զաքարյանը,– բայց Աթոյանն ավելի հանգամանալի կներկայացնի։

– Ի՛մ Արքա, թույլ տուր քարտեզի վրա ներկայացնել,– անմիջապես առաջ թեքվեց Աթոյանը։

– Ինա՛րկե,– ասաց Արքան ու վեր կացավ տեղից։– Եղբայրնե՛ր, դուք էլ մոտեցեք,– ասաց նա, դիմելով խորհրդի բոլոր անդամներին։

Բոլորն արագ վեր կացան ու հետևեցին Արքային։ Խորհրդակցության սրահում Արքայի պատվերով Հայկական բարձրավանդակի ու հարակից շրջանների մի հսկա

ու մանրակրկիտ բարձրաքանդակ քարտեզ էին պատրաստել հայ վարպետները՝ բոլոր լեռներով, դաշտավայրերով, անտառներով, գետերով ու լճերով, պատմամշակութային հուշարձաններով ու բերդամրոցներով, գյուղերով ու քաղաքներով։ Արքան շատ էր հավանում այն ու հաճախ էր միայնակ ժամեր անցկացնում այդ քարտեզի մոտ՝ մտորելու, նաև երազելու հրաշալի տեղ համարելով այն։

Խորհրդակցության հսկա սրահի պատերից մեկին կար նաև ժամանակակից պետությունների սահմանները ներկայացնող աշխարհի մի մեծ քարտեզ՝ պատրաստված կապույտ ու թափանցիկ օրգանական ապակուց։ Մյուս պատին նմանատիպ՝ Հին Աշխարհը ներկայացնող, քարտեզ կար։ Երրորդ կողմն ամբողջովին ապակեպատ էր, ու մի հրաշագեղ տեսարան էր բացում դեպի Մասիսները։ Իսկ չորրորդ կողմի կենտրոնում մեր ոսկեզօծ զինանշանն էր՝ հսկա կարպետագործ դրոշի վրա։ Դրոշի շուրջն Արքայի կողմից վերականգնված ու պալատական կարպետագործների կողմից գործված մի քանի կարպետ էր կախված։

Արքայական խորհրդի անդամները՝ հետևելով Արքային, արագորեն մոտեցան ու խմբվեցին Հայաստանի բարձրաքանդակ քարտեզի շուրջը։

Ամոյանն սկսեց ներկայացնել խնդիրն ու խնդրի հավանական աղբյուրը։

– Ի՛մ Արքա, մեր հարևանների դժգոհությունը, հավանաբար, երրորդ հանրապետության տարիներին շահագործվող ու Արաքսի մեջ թափվող Զանգեզուրի հանքարդյունահանման թափոնների պատճառով է։ Ներկայումս այդ շրջանի հանքերի մեծ մասը չենք շահագործում։ Շահագործվող հանքերում էլ մեծ ծախսերի գնով լիովին վնասազերծում ենք թունավոր նյութերը։ Դրանք չեն հասնում գետին։ Հավանաբար նախկին թունավորվածությունն է, որ դեռ չի մաքրվել մեր գետերից։ Ես մի քանի առիթով մանրամասն բացատրել եմ նրանց, բայց դեռ չեն հավատում։

– Մի պատվիրակություն հրավիրեք։ Թող իրենց աչքերով տեսնեն, եթե ուզում են,– ասաց Արքան։

– Ի՛մ Արքա, արտաքին գործերի նախարարին կհանձնարարեմ զբաղվել այդ հարցով,– պատասխանեց Ամոյա-

նը։

– Շատ լավ,– համաձայնեց Արքան ու, շրջվելով դեպի զինված ուժերի նախարարը.

– Դարբինյա՛ն։

– Ի՛մ Արքա,– զգաստացավ Դարբինյանը։

– Դարբինյա՛ն, ներկայացրու մեր պաշտպանական դիրքերի ներկա դրությունն ու մեր թշնամիների վերջին մի քանի օրվա տեղաշարժերը։

– Ի՛մ Արքա, առանձնապես փոփոխություն չկա։ Ոչ մի միջադեպ չի եղել սահմանին։ Ամեն ինչ հանդարտ է անցել վերջին մի քանի օրը։ Մեր թշնամիների մոտ դիրքային փոփոխություն չենք նկատել։ Նրանք իրենց ներքին խնդիրներն ունեն հիմա։ Վերջին շրջանում նրանց մոտ ազգային փոքրամասնություններն են ոտքի կանգնել։ Մեզ լուրեր են հասնում, որ նրանք այլևս չեն կամենում ապրել նախկին բռնապետության պայմաններում։ Մեր օրինակն աչքների առաջ, բարեփոխումներ են պահանջում իրենց կառավարություններից։ Մեր հարևան երկրների իշխանությունները հիմա լրջորեն զբաղված են այդ շարժումներին դիմակայելով։

– Շատ լավ, ուրեմն, սառույցը շարժվեց։ Արժե՛ր աշխատել այդ ուղղությամբ,– բարձրաձայն մտորեց Արքան։

– Ի՛մ Արքա, մեզ հասած լուրերի համաձայն, այդ ազգային փոքրամասնությունների մտավորականները նույնիսկ վերջնագիր են ներկայացրել իրենց կառավարություններին՝ կատարել բարեփոխումների իրենց բոլոր պահանջները, այլապես անկախություն կհայտարարեն, կամ՝ մեզ կդիմեն մեր երկրին միանալու խնդրանքով,– Արքային տեղեկացրեց Արշակը։

– Շատ հետաքրքիր է։ Պատմությունը կրկնվում է, կարծես։ Կատարվում է այն, ինչ շատ անգամ է եղել մեր պատմության ընթացքում՝ մեր արքաներն արշավել ու ազատագրել են մեր հարևան ժողովուրդներին իրենց բռնակալներից։ Նրանք էլ, կամ լաց ու կոծով հետ են ճանապարհել իրենց ազատարարներին, կամ խնդրել են ազգովի մտնել մեր արքաների հովանու տակ։ Շատ հետաքրքիր է,– ասես մտքերի մեջ խորասուզված՝ շարունակեց բարձրաձայն մտորել Արքան։

– Իսկ ինչպիսի՞ն է մեր գյուղերի, քաղաքների, անտառների վիճակը, մեր սարերում ծվարած պատմամշակութային հուշարձանների վերականգնման գործը,– Աթոյանին դիմեց Արքան։

– Ի՛մ Արքա, ամեն բան կարգին է գյուղերում ու քաղաքներում։ Ճիշտ է, դեռ մանր մունր գժտություններ ծագում են մարդկանց միջև՝ հիմնականում ջրից օգտվելու շուրջ։ Բայց տեղի նահապետները՝ որպես համայնքի և՛ խորհրդատու, և՛ դատավոր, հաջողությամբ լուծում են ամեն խնդիր։ Շատ հազվադեպ է գործը հասնում Արքայական դատարանների քննարկմանը։ Վերջերս թու, թու, թու, մահացու ընդհարումներ չեն եղել։ Իսկ սարերի մեր պատմամշակութային հուշարձանների հարցով՝ վերականգնմանը մասնակցելու ավելի շատ ցանկացողներ կան, քան՝ պահանջ։ Տեղերում վարպետների կացարանի ու սննդի հարցը լուծում են մոտակա գյուղերի նահապետները, բայց ամենահեռավորների հարցը հեշտ չի։ Եվ՛ շինանյութ, և՛ սննդամթերք հասցնում ենք մեր զինված ուժերի մարտասայլերով, երբեմն էլ՝ ուղղաթիռներով,– պատասխանեց Աթոյանը։

– Շատ լավ, Աթոյա՛ն, իսկ ի՞նչ վիճակում է պատմամշակութային թանգարանի գործը։

– Ի՛մ Արքա, շատ ճարտարապետներ են լծվել գործին։ Մրցույթի առաջին փուլից հետո դեռ ահագին ու շատ հետաքրքիր նախագծեր կան սեղանին, բայց տեղի ընտրության հարցը դեռ լուծված չէ։ Ճարտարապետներն, իրենց նախագծերի հետ մեկտեղ, նաև տեղի առաջարկություններ են անում։ Բայց...

– Իսկ, եթե օգտագործենք նախկին Ժողովրդական Տնտեսության Նվաճումների Ցուցահանդեսի տարա՞ծքը,– սկսեց բարձրաձայն մտորել Արքան։– Բայց չէ։ Այդ տարածքը բարեբեր հողով հարթավայր է, շատ հարմար՝ այգու վերածելու համար։ Ուրիշ տեղ է պետք մտածել,– շարունակեց նա։– Հավաքեք բոլոր առաջարկները, ես կորոշեմ։

– Ի՛մ Արքա, կանենք ամեն հնարավոր բան։

– Կարող եք բարձրացնել մրցանակի չափն ու թույլ տվեք առաջին փուլը չանցած ճարտարապետներին նորից

մասնակցել հաջորդ փուլին, եթե կուզեն։ Գուցե ժամանակի սղության կամ շտապողականության պատճառով շատ բան չեն հասցրել։ Բայց արագացրեք։ Չի՛ կարելի հապաղել։ Ահագին արժեքավոր հնագիտական նյութ է կուտակվել վերջին շրջանում՝ լայնածավալ հնագիտական պեղումների արդյունքում։ Բոլոր նյութերը հարկավոր է տեղավորել։ Նախկինում՝ հանրապետության տարիներին, հայտնաբերված շատ արժեքավոր նյութեր անհետացել են։ Հազիվ հասցրեցինք փրկել մնացածը։ Մեր թշնամիների համար մեծ վտանգ են ներկայացնում այն հնագիտական նյութերը, որոնք ապացուցում են մեր ազգի այս լեռնաշխարհի՝ Հայկական Բարձրավանդակի, բնիկ լինելու փաստը, հետևաբար՝ մեր տան նկատմամբ մեր ժառանգական սեփականության լիարժեք իրավունքը։ Արագացրե՛ք։ Ո՛չ մի պեղածո չթողնել հաշվառումից դուրս։ Ես անձամբ կգլխատեմ նրան, ով կհանդգնի վնասել կամ Համակարգից դուրս տանել մեր պատմամշակութային ժառանգության որևէ մասնիկ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Ամոյա՛ն, սա ավելի կարևոր է, քան կարող է թվալ։ Մեր թշնամիների նպատակն է ապրող ազգերի մեջ համարվել հնագույնը։ Հնագույնը լինելը հսկայական իրավունքներ է բերում իր հետ։ Նրանք չեն հանգստանա՝ մինչև մեզ չջնջեն աշխարհի երեսից։ Մեծ Եղեռնով դեռ նոր է սկսվել նրանց հարձակումը։ Մենք դեռ պայքար ունենք։

– Ի՛մ Արքա, լիովին հասկանում եմ։ Մտահոգությունս էլի անժամանակ ռազմական ընդհարումների մեջ ներքաշվելն է։ Դեռ լիովին պատրաստ չենք։

– Գուցե, Ամոյա՛ն։ Գուցե լիովին պատրաստ չենք, բայց չենք կարող թույլ տալ, որ մեզ կողոպտեն ու նսեմացնեն։ Այլապես արնաքամ կլինենք ոչ միայն նյութապես, այլ առաջին հերթին՝ հոգեպես։ Երբեք չենք հզորանա ու երբեք պատրաստ չենք լինի։ Երկիրն ահագնացող տեմպերով դատարկվում էր։ Արտագաղթի նման աղետալի տեմպեր երբեք չէին եղել։ Բայց մի անհանգստանա։ Դու լավ գիտես՝ մենք այդ երկրներում մարդիկ ունենք, ովքեր պատրաստ կանգնած են պատերազմի դեպքում ծնկի բերելու մեր թշնամիների տնտեսություններն ու, առաջին

հերթին, նրանց համակարգչային ցանցը։ Պատերազմում բոլոր միջոցներն էլ կիրառելի են, հատկապես՝ փոքր երկրների համար։ Բայց նրանք անձամբ չեն համարձակվի միջամտել։

– Ի՛մ Արքա, բայց մեր անմիջական թշնամիների ձեռքով կանեն գործը,– վրա բերեց Աթոյանը։– Վերջապես, կարող են գեոֆիզիկական զենք գործածել մեր դեմ։

– Հնարավոր է, բայց՝ ոչ հավանական։ Եթե հանկարծ վնասվի մեր ատոմակայանը, ապա դա ոչ մեկի համար էլ լավ չի։ Ամբողջ տարածաշրջանը կապականվի ու՝ շատ երկար ժամանակով։ Ամեն դեպքում, սկզբում մեր անմիջական թշնամիներին կհրահրեն մեր դեմ։ Դրան մեր զինված ուժերը պատրաստ են։ Իսկ, եթե մեր հիմնական թշնամիները փորձեն միջամտել, ապա մի քիչ կբարդանա իրավիճակը։ Բայց այդ ամենին չի հասնի։

– Ի՛մ Արքա, ինչո՞ւ ես համոզված, որ չի հասնի, – շտապեց Վռամը՝ արքայի առաջին խորհրդականը։

– Չի հասնի։ Նախ՝ ատոմակայան ունեցող երկրի վրա բացառված է որևէ լայնածավալ ռազմական ոտնձգություն։ Բացի դրանից, մենք դեռ հարգում ենք երրորդ հանրապետության ժամանակ կնքված ռազմական համագործակցության ու փոխօգնության պայմանագիրը մեր հյուսիսային գերտերության հետ՝ ըստ որի մեր սահմանների պաշտպանության գործն իրականացնում ենք միասնաբար։ Չմոռանանք, որ այդ երկրում իշխանության են անցել ազգայնամետ տարրերը։ Նրանց հետ շատ ու շատ ընդհանուր բան ունենք, հատկապես՝ միևնույն ընդհանուր թշնամին։ Իսկ, եթե պատահի, որ միայնակ մնանք կռվում, որ չեմ բացառում, մենք սկզբում կպաշտպանվենք միայն։ Առիթ չենք տա մեր հիմնական թշնամուն միջամտել։ Բացեիբաց, առանց պատճառի միջամտելը հավանական բան չի։ Միջազգային հանրություն կա, վերջապես։ Իսկ, եթե որոշեն, այնուամենայնիվ, միջամտել, թեկուզ տեխնիկայով կամ տեղեկատվությամբ օգնելով մեր անմիջական թշնամուն ու լրջորեն սկսեն նեղել մեզ, մենք արդեն կանցնենք հարձակման ու կօգտագործենք մեր բոլոր հնարավորությունները, նույնիսկ՝ մեր գաղտնի զենքը։

– Իմ Արքա, ինչի՞ մասին ես ակնարկում,– միանգա-

մից բոլորի հետաքրքրությունն արտահայտեց Դարբինյանը։

– Այն, որ քիչ առաջ էինք խոսում՝ զանգվածային ոչնչացման...– կատակելով խուսանավեց Արքան։

Բոլորը ծիծաղեցին, ու մթնոլորտը միանգամից լիցքաթափվեց։ Միայն Արշակի սիրտն էր տրոփում՝ ասես մարաթոնյան վազքից հետո։

– Եղբայրնե՛ր, արդեն ճաշի ժամ է։ Անցնենք ճաշելու,– առաջարկեց Արքան, ու նրա հետևից բոլորը շարժվեցին դեպի հարևան սրահը՝ ճաշելու։

***

Արքայական խորհրդի խորհրդակցությունները սովորաբար ավարտվում էին ճաշով։ Ճաշասենյակում Արքային ու Արքայական խորհրդի անդամներին դիմավորեց Արքայի անձնական բժիշկն՝ իր երկու օգնականների ու սպասարկող անձնակազմի հետ միասին, բարև բռնած։

– Բարին ընդ ձեզ, իմ եղբայրներ ու քույրեր,– ասաց Արքան։

Արքայական խորհրդի անդամները բարև բռնած հետևեցին Արքային ու նստեցին սեղանի շուրջը։

– Բժի՛շկ, ամեն անգամ մեզ զարմացնում ես մի նոր պատգամով։ Ի՞նչ պատգամ ունես այսօր մեզ համար,– ասաց Արքան՝ դիմելով իր բժշկին։

– Այսօրվա պատգամը հետևյալն է՝ «խելացի մարդը բուժվում է սննդով, անխելքը՝ դեղորայքով, իսկ խելագարը՝ վիրահատական սեղանին»։

– Հրաշալի՛ է, բժիշկ,– թնդաց Արքան։– Եղբայրնե՛ր, հիրավի, սքանչելի են մեր բժշկի պատգամները, այնպես չէ՞։

Խորհրդի անդամները միաբերան հավանություն տվեցին։

– Դե՛, բժիշկ, ի՞նչ ենք ուտում այսօր՝ մեր մարմինն առողջացնելու համար,– իր բժշկին դիմեց Արքան։

Բժիշկը մոտեցավ սեղանին ու հանգիստ տոնով սկսեց.

– Եղբայրներ, ավելի կարևոր է ինչպես ուտելը, քան՝ ինչ կամ ինչքան ուտելը։ Կրկին անգամ եմ հիշեցնում

դանդաղ ու մանրակրկիտ ծամելու կարևորությունը: Պատառը հարկավոր է փոքր վերցնել ու ծամել որքան հնարավոր է երկար: Այնքան, որ սննդի համը վերանա բերանում: Երբ պատառի համը վերանա ու այն վերածվի համասեռ, ջրիկ զանգվածի, նոր կարելի է այն կուլ տալ: Այլապես, օգուտի փոխարեն վնաս կտա ձեր կերածը՝ չի մարսվի ինչպես հարկն է: Կթունավորի ու կթուլացնի ձեր օրգանիզմը: Իսկ այս առավոտյան սեղանին են Արքայական այգու պտուղները, հիմնականում՝ ծիրան: Կա նաև մոշ ու բալ, սև հաղարջ ու սալոր, Մեղրիից բերված թուզ: Կա նաև վարունգ ու պոմիդոր, կանաչեղեն, հիմնականում՝ թարխուն, դաղձ, սամիթ ու ռեհան: Խմորի սոդայով թրխված լավաշ, ոչխարի պանիր, քնջութի ու կտավատի ձեթ, նաև՝ կարագ ու հալած յուղ: Եղբայրնե՛ր, միրգը պետք է ուտել սոված փորին: Խորհուրդ կտամ ընտրել որևէ միրգ և ուտել միայն այդ միրգը: Չի կարելի շատ տարբեր մրգեր խառնել իրար: Կարող եք ուտել միայն բանջարեղեն, եթե կամենում եք, մի փոքր ոչխարի պանրով: Հիշեք, որ պանիրը հացի հետ չի կարելի ուտել: Ովքեր չեն բավարարվի միայն մրգով, կամ՝ միայն բանջարեղենով, կարող են հավելել նաև լավաշով ձեթ ու կարագ: Բարի ախորժակ:

– Շնորհակալություն, բժի՛շկ,– միաբերան ասացին բոլորն ու անցան ուտելու:

– Հա՜, ինչպես միշտ, սեղանին ոչ մի խմելու բան չկա: Չի կարելի ուտելու ընթացքում որևէ հեղուկ խմել: Ջուր կարելի է խմել ուտելուց միայն ժամ, ժամուկես հետո, այն էլ՝ կում-կում,– հավելեց բժիշկը:

– Բժի՛շկ, նստիր մեզ հետ: Հավանաբար քո ուտելու ժամն էլ է,– առաջարկեց Արքան:– Մեզ բոլորիս համար օրինակ կլինես: Ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան՝ հազար անգամ լսել:

– Սիրով,– համաձայնեց բժիշկն ու նստեց ճաշելու խորհրդի անդամների հետ միասին:

Համատեղ ճաշն անցավ զվարթ ու անբռնազբոս մթնոլորտում: Խորհրդի անդամներից ոմանք սկսեցին բժշկին տարբեր առողջական հարցեր տալ: Բժիշկը մեծ սիրով ու խնամքով պատասխանում էր բոլորի հարցերին:

***

Երբ ճաշն ավարտվեց, Արքան առաջարկեց բոլորին իջնել Արքունիքի ստորին հարկաբաժնում գտնվող Արքայական գորգագործարան։ Արքայի նպատակն էր գորգից, կարպետից ու, ընդհանրապես, գորգագործարանից բխող հարազատ վիբրացիաներ արթնացնել խորհրդի անդամների մեջ՝ նրանց հոգուց խպառ վերացնելու երկյուղի ու անվստահության որևէ զգացում։

Գորգագործարանից լսվում էին գորգագործների ուրախ երգն ու կատակները։ Երբ Արքայի թիկնապահ գնդի մարտիկները բացեցին դուռն ու ներս մտան, մոտ նստածների երգն ու կատակներն իսկույն դադարեցին։ Արքայի ժամանելու լուրն արագորեն տարածվեց։ Գորգագործները հիմնականում տարիքով կանայք էին, սակայն շատ էին նաև գորգագործություն սովորող երիտասարդ կանայք ու աղջիկները։

Արքան իր գահակալության հենց սկզբից Համակարգի վերակառուցման ու պետական կարևորագույն այլ գործերին զուգահեռ հատուկ ուշադրություն էր հատկացրել գորգագործական արհեստանոցի կազմակերպմանը։ Դա, նրա խորին համոզմամբ, ռազմական գործին հավասար դեր ուներ պետության կառուցման ու կայացման գործում։ Արքայի որոշմամբ գորգագործարանը հիմնվել էր հենց Արքունիքի ստորին հարկաբաժնում։ Այնտեղից մի աննկարագրելի շունչ էր բխում ու իր ջերմությամբ լցնում ողջ Արքունիքը։

Արքայի որոշմամբ կառուցվում էր գորգի ու կարպետի մի մեծ թանգարան։ Այնտեղ ցուցադրության պիտի հանվեին հին ու նոր գորգեր ու կարպետներ։ Արքան, ի վերջո, մի մեծ գորգագործարան պիտի հիմներ՝ թանգարանին կից, սակայն երբեք չէր կազմալուծելու Արքայական գորգագործարանը։

Արքան ավելի շատ հակված էր դեպի կարպետը։ Նրա համոզմամբ կարպետն ավելի դժվար էր գործելու համար, քան՝ գորգը։ Կարպետն Արքայի համար ավելի գրավիչ էր՝ իր երկրաչափական կուռ կառուցվածքով, հատկապես՝ հստակ զարդանախշերով։

Երբ Արքան ներս մտավ, բոլոր գորգագործները ոտքի

կանգնեցին, բարև բռնած։

– Բարին ընդ ձեզ, ի՛մ քույրեր,– ասաց Արքան ու սկսեց մեկ առ մեկ մոտենալ ու զննել բոլոր գորգերը, շոշափել հենքն ու ուրախանալ կատարված գործի առաջ-ընթացով, հրճվանքի ու դրվատանքի խոսքեր շռայլել գոր-գագործներին։ Դա, իհարկե, դուր էր գալիս նրանց։ Ար-քան նույնպես մեծապես լիցքավորվում էր դրանից։ Նա հաճախ էր մտնում արհեստանոց։ Այնտեղ գործվում էին հենց իր՝ Արքայի, կողմից վերականգնված մի քանի կար-պետ։

Արքան երիտասարդ ժամանակ ուսանել էր արտա-սահմանում ու հնարավորություն էր ունեցել ուսումնասի-րել օտարների կողմից հրատարակված շատ գրքեր գորգի ու հատկապես կարպետի վերաբերյալ։ Այդ գրքերում տը-պագրված հինավուրց կարպետների պատառիկների լուսա-նկարների հիման վրա նա կարողացել էր ամբողջությամբ վերականգնել մի քանի հայկական կարպետ, այնպիսիներ-ը, որոնց նմանը չկար ողջ աշխարհում։

Որոշ հարևան երկրներ զբաղված էին հայկական գորգերի, նաև՝ կարպետների ընդօրինակմամբ, իհարկե՝ պետական հովանավորությամբ։ Այդ ամենն անկասկած արվում էր մեր կարպետներն ու գորգերը սեփականը հրդ-չակելու միտումով։ Արքան գտնում էր, որ մենք այդ աս-պարեզում տանուլ էինք տվել, ահագին բան բաց թողել։ Հարկավոր էր առանց հապաղելու վերականգնել կորցրած համբավը։ Հենց դա էր պատճառը, որ պետական շինարա-րության հորձանուտում Արքան մեծ ուշադրություն էր դար-ձնում գորգագործության վերականգնմանը։ Իր ընդդիմա-խոսներին Արքան միշտ բացատրում էր, որ ռազմական պատերազմներին զուգընթաց, թեկուզ աննկատ, բայց ան-ընդհատ մղվում են տնտեսական, լրատվական, գաղափա-րական ու պատմամշակութային պատերազմներ։ Ցավալիո-րեն նախկինում բոլոր պատերազմներում մենք տանուլ էինք տվել։ Արքան մտադիր էր, բոլոր ճակատներում միա-ժամանակ մարտնչելով, դուրս բերել երկիրը անհուսալի թվացող իրավիճակից։

Խորհրդի անդամներին վարակեց Արքայի հետաքրքիր-ությունն ու հրճվանքը։ Նրանք ևս սկսեցին խորանալ

գործի էության մեջ։ Հետաքրքրվողներին Արքան հաճույքով բացատրում էր գորգի, հատկապես՝ կարպետի, կարեվորությունը։ Այն, որ անհրաժեշտ էր հետ նվաճել այդ արհեստի ու արվեստի սեփականատիրոջ մեր իրավունքը։

Արքան տարիներ առաջ անձամբ իր ձեռքով գորգագործական հաստոց էր կառուցել, կարպետ գործել։ Տեղյակ էր գործի նրբություններին։ Նրան սկզբում հետաքրքրել էին մեր՝ հայկական, կարպետի երկրաչափական կառուցվածքն ու համաչափությունները։ Բայց, հաստոցը կառուցելով, հատկապես՝ հենքը գցելուց հետո, հասկացել էր, թե որքան նմանություն կար ազգային պետության կառուցման ու կարպետագործության միջև։

– Ի՛մ Արքա, և ո՞րն է այդ նմանությունը,– դիմեց նրան Դոնոյանը։

– Բարեկա՛մս, ինչպես անհնար է կարպետ գործել՝ առանց նախապես հաստոցը կառուցելու, հատկապես՝ հենքը ճիշտ գցելու, այնպես էլ անհնար է ազգ ձևավորել ու պետություն կառուցել՝ առանց ազգային ոսմունքի ու օրենքների։

Դոնոյանը հետագա բացատրության էր սպասում։ Խորհրդի բոլոր անդամները խմբվեցին Արքայի շուրջը։

– Հասկանո՞ւմ եք, եղբայրնե՛ր, ինչպես կարպետն է սկսվում հաստոցից ու հենքից, այնպես էլ պետությունն է սկսվում ազգի գենետիկ կոդից և ոսմունքից։ Ինչպես հնարավոր չի կարպետ գործել օդի մեջ՝ առանց հենքի, այնպես էլ հնարավոր չի ազգ ու պետություն ձևավորել՝ առանց ոսմունքի։ Ինչպես կարպետն է գործվում ճիշտ գցված հենքի վրա, այնպես էլ ազգն է ձևավորվում ու ազգային պետություն կառուցվում՝ ճշմարիտ ազգային ոսմունքի առկայությամբ։ Եթե չկա ոսմունք, ապա չի կարող լինել ազգ, կամ՝ պետություն։ Լավագույն դեպքում կարող է լինել միայն ժողովուրդ ու այդ ժողովրդի վրա իշխանություն բանեցնող մի խումբ բախտախնդիրներ։

Ի դեպ, մեր ազգային ոսմունքն ուսուցանող ուսումնական հաստատություններում ես պարտադիր եմ դարձնելու կարպետագործությունը։ Ա՛յ, հիշո՞ւմ եք Անահիտի հեքիաթը։

– Ի՛մ Արքա, իհարկե, հիշում ենք,– միաբերան արձա-

գանքեցին բոլորը։

– Անահիտն՝ ինքը, գորգ էր գործում ու շատ լավ գիտեր, որ այն գործելու համար անչափ կարևոր էր ճիշտ գցված հենքը։ Նա շատ լավ գիտեր, որ հնարավոր չի կարպետ գործել, առանց հենքը ճիշտ գցելու։ Նմանապես՝ միայն ճշմարիտ ազգային ուսմունքի ու օրենքների հենքի վրա է հնարավոր ազգ ձևավորել ու ամուր պետություն կառուցել։ Ես այսուհետև պետական կառավարման բոլոր թեկնածուների համար պարտադիր եմ դարձնելու կարպետ կամ գորգ գործել իմանալը։ Մեր հեքիաթի մեջ Անահիտի պահանջը, որ արքայազնը գորգ գործել սովորի, այլապես չի ամուսնանա հետը, հասարակ քմահաճույք չէր։ Անահիտը շատ լավ գիտեր՝ ինչ էր պահանջում։ Նրա պահանջն այն չէր, որ արքայազնը գոնե մի արհեստ իմանա։ Կարող էր, չէ՞, պահանջել, որ արքայազնը կոշիկ կամ հագուստ կարել սովորի, կամ՝ դարբնություն, կամ՝ մեկ այլ բան։

– Ի՛մ Արքա, երբեք մտքովս չէր անցել Անահիտի պահանջի իսկական իմաստը։ Ինձ թվում էր, թե նրա պահանջը միայն քմահաճույք էր։ Լավագույն դեպքում՝ որևէ արհեստի իմացություն, որը բարեբախտաբար օգնեց բացահայտել արքայի գտնվելու վայրը,– ասաց Վանեցյանը։

– Ի՛մ եղբայրներ, մեր հեքիաթները դեռ շատ չմեկնաբանված ուղերձներ ունեն իրենց մեջ։ Իսկ գիտե՞ք, որ հենք գցելն առանձին մասնագիտություն է համարվում։ Այնպես, ինչպես գորգագործական հաստոց կառուցելն է առանձին մասնագիտություն։ Բայց իմ արհեստանոցի կանայք իրենք են գցում հենքն ու գործում կարպետը։ Այստեղ են կուտվելու մեր պետության ապագա կառավարիչները։

– Ի՛մ Արքա, իսկ արքայազնները սովորո՞ւմ են գորգ գործել,– հետաքրքրվեց Դոնոյանը։

– Իհարկե, հատկապես մեծ արքայազնը մասնակցում է ամեն հենք գցելուն։ Նա նույնիսկ իր առանձին հաստոցն ունի իր սենյակում ու համարյա ամեն օր աշխատում է իր սիրելի կարպետի վրա։ Նույնը՝ փոքր արքայազնը։ Թագուհին էլ ունի իր սիրելի կարպետը։ Արքայադստեր խելքը գնում է կարպետ գործելու համար։

Կարպետ գործելն ավելի մեծ հմտություն է պահան-

ջում, քան գորգ գործելը։ Կարպետն, ի դեպ, առաջինն է եղել։ Գորգն ուշ է առաջացել որպես գործվածքի տեսակ, երբ մարդիկ ավելի նստակյաց կյանքի են անցել ու ավելի շատ ժամանակ են ունեցել։ Բայց կարպետ գործելն ավելի մեծ հմտություն է պահանջում։ Ես ավելի շատ կարպետ եմ սիրում։ Այն ավելի մոտ է մեր արմատներին, մեր գենետիկ կոդի վիբրացիաներին։

– Ի՛մ Արքա, բայց կա՞, արդյոք, նման բան՝ գենետիկ կոդ, թե՞ ամեն ինչ կախված է կրթությունից,– հարցրեց Վանեցյանը։

– Բարեկամնե՛րս, նախկինում շատ տարածված տեսակետ կար, թե երեխան անգրել տախտակ է, թե դաստիարակությունը վաղ տարիքից սկսելու դեպքում կարելի է ձևավորել մարդուն՝ ըստ դասավանդված ուսմունքի, բայց ես այլ կարծիքի եմ։ Միևնույն միջավայրում, միևնույն ընտանիքում, միևնույն ծնողներից ծնված ու մեծացած հարազատ եղբայրներ կամ քույրեր կարող են շա՜տ տարբեր լինել իրենց բնավորությամբ ու արժեհամակարգով։ Ես համոզված եմ որ գենետիկ կոդով է պայմանավորված մարդու ոչ միայն տաղանդը, այլ նաև նրա արժեքների համակարգը։ Ընդհանրապես ամեն ազգ ունի իր ուրույն գենետիկ կոդն ու այդ կոդից բխող ուրույն մտածելակերպ, ուրույն աշխարհընկալում։ Որքան տարբեր են ազգերն իրենց գենետիկ կոդով, այնքան տարբեր են նրանց աշխարհընկալումներն ու դրանց վրա ձևավորված արժեհամակարգերը, կամ՝ ուսմունքները։

– Ի՛մ Արքա, բայց համապատասխան կրթությամբ կարելի՛ է ձևավորել ցանկացած արժեհամակարգ բոլոր ազգերի մոտ, այնպես չէ՞,– Արքային դիմեց Նազարյանը։

– Գուցե, կարելի է։ Բայց խոսքը ոչ թե պատրաստի ուսմունքով որևէ ազգի կրթելու մասին է, այլ՝ թե այդ ազգերից որ մեկն ինչ ուսմունք կստեղծի ինքնուրույն, լրիվ մեկուսացման մեջ։ Ամեն ազգ իր մեկուսացման մեջ՝ ըստ իր գենետիկ կոդից բխող աշխարհընկալման, բազմաթիվ ու կրկնական դիտարկումներից հետո ստեղծում է համակարգված ուսմունք։ Ամեն ուսմունք ունի հիմնարար դրրոսյթներ ու ենթադրոսյթներ, որոնք փոխանցվում են սերընդե սերունդ։

– Ի՛մ Արքա, իսկ ավելի լավ չի՞ լինի, որ ամեն սերունդ նորովի հայտնաբերի այդ օրենքները,– շարունակեց Նազարյանը։– Մարդ ավելի լավ է հասկանում որևէ բան, երբ ինքնուրույն է հայտնաբերում այն։

– Ոչ, Նազարյա՛ն։ Ամեն անգամ զրոյից սկսելով, ոչ մի առաջընթաց չի ստացվի։ Ամեն նոր սերունդ պիտի յուրացնի նախորդի ավանդածն ու շարունակի հավելել իր նոր բացահայտումները, այդպիսով ավելի հղկելով ուսմունքն ու առաջ մղելով ճանաչողության սահմանները։

– Ի՛մ Արքա, ասելիքս այն էր, որ եթե ամեն ինչ արդեն կա մեր գենետիկ կոդի մեջ, արդյո՞ք կարիք կա որևէ ուսմունքի, մանավանդ՝ գրավոր։ Բավարար չի՞ արդյոք մշակույթը,– փորձեց հավաստիանալ Նազարյանը։

– Ոչ, իհարկե։ Ուսմունքի կարիքը կա։ Առանց ամբողջական ուսմունքի հնարավոր չի ո՛չ մշակույթ ձևավորել, ո՛չ էլ՝ ազգ։ Ուսմունքն անպայման գրավոր պիտի ամրագրված լինի։ Նախքան գրի գյուտն ուսմունքը բանավոր է փոխանցվել։ Բայց գրի գյուտից հետո՝ անպայման գրավոր։ Հետո գրվել են օրենքներ ուսմունքի հիման վրա ձևավորված «կարելի»-ներն ու «չի կարելի»-ները՝ մարդկանց արագ ու պարզ հասցնելու համար։ Ուսմունքի վրա հիմնված օրենքների միջոցով նոր առաջանում է մշակույթը՝ չգրված օրենքների համակարգը, այն ներքին մեխանիզմը, զսպաշապիկը, որ կարգավորում է միջանձնային հարաբերությունները, նաև՝ միջազգային հարաբերությունները։ Մշակույթն, իհարկե, գրավոր չի լինում, բայց ուսմունքն ու օրենքները պետք է գրավոր լինեն, այլապես կարող են կորել։ Մեր դեպքում հենց այդպես էլ եղավ՝ կորան դարերի թոհ ու բոհի մեջ։ Մեզ են հասել օրենքների որոշ պատառիկներ միայն։ Իսկ օրենքների վրա ձևավորված մեր մշակույթը դեռ երկար ժամանակ պահպանվում էր։ Մշակույթը շատ կայուն է ու դժվարությամբ է վերանում։ Բայց, եթե վերացավ, ապա շատ դժվար է վերականգնելը։ Հարկավոր է սկսել սկզբից՝ ուսմունքից ու օրենքներից ու անպայման՝ գրավոր։ Ճիշտ է, թանձր Արարչական արյուն ունեցողների վրա հեշտությամբ չեն ազդում շրջապատի օտար հոսանքները, բայց բոլորը չեն, որ թանձր Արարչական գենակիրներ են։ Օրենքների գրավոր

տարբերակն անհրաժեշտ էր՝ մեր կորած մշակույթը վերականգնելու և ազգ ձևավորելու համար։ Այդ միտումով էլ գրեցինք մեր Ազգային Սահմանադրությունը, որի հիման վրա ձևավորվելու է մշակույթ, ազգ ու պետություն։ Առանց դրա ո՛չ ազգ կձևավորվի, ո՛չ էլ պետություն կունենանք։ Ի՛մ եղբայրներ, հիմա տեսնո՞ւմ եք, թե որքան կարևոր է կարպետագործությունը, հատկապես՝ հենքը։ Իհարկե, կարևոր է նաև գործելը, բայց ամենակարևորը հենքն է։ Բայց այս ամենն ավելի հստակ կպատկերացնեք միայն կարպետ գործել սովորելով։

– Ի՛մ Արքա, այնքան պարզ ու պատկերավոր նկարագրեցիր, որ փորձելու կարիքն էլ չկա,– ասաց Նազարյանը։

– Նազարյա՛ն, չլինի՞ վախեցար։ Չլինի՞ խուսափում ես կարպետ գործելուց,– կատակեց Արքան։

Նազարյանը միամտաբար էր արտահայտվել ու չընկալեց Արքայի կատակելը։

– Ի՛մ Արքա, չեմ վախենում, ես գործից չեմ վախենում։ Ուղղակի ուզում էի ասել, որ շատ պատկերավոր ներկայացրիր։ Կսովորեմ, մեծ հաճույքով,– լրջորեն անհանգստացավ Նազարյանը։

– Կատակում եմ, Նազարյա՛ն։ Խոսքս երկրի առաջնորդների հաջորդ սերնդի մասին է։ Ա՛յ, երբ եկեղեցուց հետ նվաճված տարածքներում կազմակերպենք մեր ազգային ուսմունքն ուսուցանող ուսումնական կենտրոններ ու սկսենք երկրի նահապետներ՝ առաջնորդներ, պատրաստել, այն ժամանակ պարտադիր է լինելու կարպետագործությունը իմանալը՝ երկրի ամեն ղեկավարի համար։ Մենք մեր կարպետի պես ամուր ողնաշար պիտի ունենանք՝ ամուր հենք, ուսմունք։ Այդ հենքի վրա հստակ ու համաչափ կառուցվածքի ուրվանկար՝ սահմանադրություն, իսկ այդ կառուցվածքի մեջ՝ հստակ ու համաչափ զարդանախշեր՝ օրենքներ։ Ու, երբ այդ կարպետը գործենք վերջացնենք, նոր կասենք, որ մշակույթ ունենք, որ ազգ ենք ու պետություն։ Եղբայրնե՛ր, մենք ունենք հաստոցը՝ մեր գենետիկ կոդը, ունենք նաև հենքը՝ ուսմունքը։ Կառուցվածքի ուրվանկարն էլ ունենք՝ մեր Ազգային Սահմանադրությունը, բայց դեռ գործել է պետք մեր ազգային պետության կարպետը։

Արքան կարծես համոզել էր բոլորին։ Կարևորը՝ շեղել էր նրանց միտքը ներկա քաղաքական իրավիճակից, ցրել էր նրանց սրտում ծվարած երկյուղն ու բոլորի ուշադրությունն ուղղել դեպի ապագան։

Խորհրդի անդամների վրա, իրոք, բարերար էր ազդել Արքայական գորգագործարանի մթնոլորտն ու Արքայի խոսքը։

– Ի՛մ եղբայրներ, այսօրվա խորհրդակցությունը համարենք ավարտված, եթե հարցեր չկան։ Միմյանց հետ մշտական կապի մեջ եղեք։ Եթե հրատապ խնդիրներ ծագեն, ես վաղն ու մյուս օրը Ամբերդում եմ լինելու,– ասաց Արքան ու, դառնալով նախարարների խորհրդի նախագահին.

– Աթոյա՛ն։

– Ի՛մ Արքա...

– Երկուշաբթի օրը սպասում եմ քեզ բոլոր նախարարների հետ միասին։ Ինչպե՞ս է ընթանում կրոնավորների տեղավորման գործը։

– Ի՛մ Արքա, դեռ բոլոր մարզպանները չեն ներկայացրել իրենց ցուցակները։ Ըստ եղած ցուցակների՝ ներքին գործերի նախարարը սկսել է հրամանիդ կատարումը,– պատասխանեց Աթոյանը։

– Շատ լավ, երկուշաբթի առավոտյան սպասում եմ ավելի մանրամասն զեկույցի։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Դե, եղբայրնե՛ր, ժամանակ էի ձգում։ Եթե հարցեր չունեք, անցեք ձեր գործին։ Կզրուցենք մի շաբաթից։ Հա՜, միշտ հիշեք, որ մարդ խոցելի է դառնում, երբ չի ապրում ըստ իր գենետիկ կոդի վիբրացիաների, երբ օտար վիբրացիաներին տուրք տալով՝ ճնշում է իր մեջ իր սեփականը։ Նույնը վերաբերում է ազգին։ Եթե մենք ազգովի վերագտնենք ու ապրենք՝ ըստ մեր գենետիկ կոդի էության, կդառնանք անխոցելի։ Մեր լեզուն, մեր ազգային կարպետագործությունը, ազգային երգը, պարն ու, առաջին հերթին՝ մեր ազգային ուսմունքը, մեր գենետիկ կոդի ամենամաքուր վիբրացիաներն են։ Ազգովի խոցելի դարձանք ու, ի վերջո, կործանման եզրին հասանք, երբ սկսեցինք գնահատել օտարի միտքը, լեզուն, ուսմունքն ու կեն-

ցաղն առավել, քան մեր սեփականը։ Պատահական չի, որ Արքայական հրամանով արգելված է որևէ օտար գաղափարախոսություն, երգ ու պար Համակարգի ներսում։ Երբ լիովին վերագտնենք ու վերականգնենք մեր գենետիկ կոդին ներհատուկ վիբրացիաները, ապա ոչ մի ուժ մեզ չի հաղթի։ Որեմն՝ ոչ մի քաղաքականություն։ Մեր էպոսի հերոսները ոչ մի տուրք չեն տվել օտարի մտքին ու կենցաղին։ «Ծուռ-ծուռ» իրենցն են քշել։ Հենց այդպես էլ արեք։ Սասնա խոյերի պես։ Ի գո՛րծ։

Այս ասելով, Արքան հրաժեշտ տվեց բոլորին ու Ազատի ու թիկնապահ գնդի մարտիկների ուղեկցությամբ դուրս եկավ գորգագործարանից։ Խորհրդի անդամները հետևեցին Արքային ու, գորգագործարանից դուրս գալով, դիմեցին դեպի ելքը։ Ամեն մեկն իր հետ տանում էր գիտելիքի մի նոր պաշար։ Դեռ որոշ ժամանակ էր պետք՝ այդ ամենն ըստ արժանվույն վերապրելու ու սեփականը դարձնելու համար։ Բայց Արքայի բոլոր պատգամները ճշմարիտ էին։ Իսկ ճշմարիտ գիտելիքը դժվար է չընդունելը։ Ամեն դեպքում, նրանցից յուրաքանչյուրն իր հետ տանում էր մի նոր լիցք ու եռանդ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Մյուս օրն, առավոտյան շուտ, Արշակն արդեն Արքունիքում էր։ Ամեն բան պատրաստ էր Ամբերդ մեկնելու համար։ Արքան չէր սիրում ճանապարհորդել ուղղաթիռով։ Նա գերադասում էր ճանապարհորդել ավտոմեքենայով։ Արքան, ընդհանրապես, խուսափում էր ճոխ ու աղմկալից երթերից, հատկապես՝ դեպի ամառանոց իր ուղևորությունների ժամանակ, չէր կրում արքայական պատմուճանը, գերադասում էր սովորական հագուստը։

Այս անգամ ևս հագնվել էր ամառանոցում՝ սարերի գրկում, բնության մեջ զբոսնելուն հարմար։ Ասես որսորդության գնալիս, կրում էր իր հնամաշ, բազմաթիվ գրպաններով պատված, բաց հողագույն որսորդական վերնաշապիկն ու համապատասխան տաբատը։ Արևից պաշտպանվելու համար վերցրել էր իր ծղոտե լայնեզր գլխարկը։ Արքայի թիկնապահ գնդի մարտիկները նույնպես սովորական հագուստ էին կրում։ Արքան աշխատում էր ամեն ինչ պահել աննկատ։ Դա և՛ համեստ էր, և՛ ամենագլխավորը՝ ապահով։

Ինչպես նախկինում, այս անգամ ևս նրանք դուրս եկան առանց աղմուկի, մի քանի մեքենայով։ Մեկում Արշակն էր իր ընտանիքով, երկրորդում՝ Արքան իր իննամյա դստեր՝ Անուշի, ու Ազատի հետ։ Մյուսում թագուհին էր՝ Աննան, երկու արքայազնների՝ Տիգրանի ու Արտակի, հետ, իսկ չորրորդում Արքայի անձնական բժիշկն էր՝ իր երկու օգնականների հետ միասին։ Առջևից ու հետևից նրանց ուղեկցում էին թիկնապահ գնդի մարտիկները՝ առանձին մեքենաներով։

Մեքենաները դուրս եկան պալատի տարբեր դարպասներից ու, հասնելով գլխավոր փողոցին, մի շարասյուն կազմած սկսեցին շարժվել դեպի Ամբերդ՝ Երևանի համարյա դատարկ փողոցներով։

Ամռան ընթացքում՝ հատկապես շաբաթ ու կիրակի օրերին, Երևանը ամայի, դատարկ էր թվում։ Ազատ շինականներին բոլոր տեսակի հարկերից ազատելու Արքայի հենց առաջին հրամանից հետո, մարդիկ Երևանից զանգվածաբար հետ էին վերադարձել դեպի իրենց հայրենի ոս-

տանները։ Իսկ շաբաթ ու կիրակի օրերին քաղաքաբնակների մեծ մասը դուրս էր գալիս քաղաքից՝ բնության գըրկում կամ հայրական տանը գոնե մի երկու օր անցկացնելու ու կազդուրվելու համար։

Արքայական շարասյունը շարժվում էր հանդարտ, առանց շտապելու։ Արքան հազվադեպ էր դուրս գալիս պալատից ու ռուիթը բաց չէր թողնում՝ մարդկանց ու նրանց կենցաղը մոտիկից զննելու համար։ Կապիտալիզմի վերացումից ու տնտեսության ազգայնացումից հետո վերացել էր գովազդների ու ճոխ ազդագրերի անհրաժեշտությունը։ Քաղաքը մաքրվել էր կեղտից ու վերադարձել իր նախկին հմայիչ տեսքին։ Էլ չկար կապիտալիզմի շրջանի քանդել-սարքելը, փոշին ու կեղտը։ Արքայի հրամանով ընդլայնվել էր ոռոգման ցանցն, ու վերականգնվում էին անցյալում անխնա անտառահատված տարածքները։ Փողոցները մաքուր էին։ Եռանդուն աշխատանքներ ընթանում էին միայն նախկինում արդյունաբերական թափոններով աղտոտված հողը մաքրելու ուղղությամբ։ Ըստ Արքայի կազմած Ազգային Սահմանադրության՝ մայր հողը գերագույն սրբություններից մեկն էր։ Հողի, նաև՝ ջրերի, ու օդի մաքրությունն Արքայի ուշադրության կիզակետում էր։ Ըստ Ազգային Սահմանադրության՝ շրջակա միջավայրի՝ մայր բնության, անաղարտության պահպանումը յուրաքանչյուրի սրբազան պարտքն էր։

Փողոցներում ամեն քայլափոխի կարելի էր տեսնել մայր հողի բարիքներ վաճառող շինականների։ Արքան բացարձակ ազատություն էր տվել ազատ շինականներին։ Ոչինչ չէր խանգարում նրանց միրգ ու բանջարեղեն վաճառել քաղաքում։ Ոմանք որևէ տեղ մեքենան կայանած, ոմանք էլ՝ փողոցում, ինքնաշեն սայլակներով, բայց հիմնականում շենքերի բակերում տեղավորված, շինականները բերք ու բարիք էին վաճառում քաղաքում։

Արքային ուրախացնում էր այդ եռուզեռը։ Քաղաքաբնակները կարիք չունեին տնից շատ հեռու ճամփորդել՝ սննդամթերք գնելու համար։ Ազատ շինականներն էլ ստիպված չէին ցածր գներով քաղաքաբնակ վերավաճառողներին զիջել իրենց աշխատանքի արդյունքները։ Իհարկե, կային դեռ խանութներ, ու շատ ու շատ ազատ շինա-

կաններ գերադասում էին չզբաղվել վաճառքով՝ այդ գործը թողնելով վերավաճառող ընտանիքների վրա։ Պարզապես չկար նախկին պարտադրանքը։ Ամեն ազատ շինական՝ առանց պարտադրանքի որոշում էր իր անելիքը։

***

Երբ արքայական շարասյունն անցնում էր քաղաքի գլխավոր հրապարակով, Արքայի ուշադրությունը գրավեց ամեն շաբաթ ու կիրակի օրերին այնտեղ անցկացվող գյուղատնտեսական մթերքների տոնավաճառը։ Տոնավաճառից բարձր հնչում էր աննման յարխուշտան։

– Պա՛պ, մեր պարտեզի մորին հասած կլինի՞,– հանկարծ հիշեց արքայադուստրը։

Շարասյունն արդեն դուրս էր գալիս հրապարակից, երբ Արքայի մտքով անցավ կանգնել ու մտնել շուկա։

– Ի՛մ Արքա, վտանգավոր չի՞,– առարկեց Ազատը։

– Ազա՛տ ջան, ի՞նչ պիտի լինի որ... Մտնենք մի քիչ մորի առնեմ։ Իմ այգունը դեռ հասած չի լինի։ Անուշիս սիրտն ուզեց, չեմ կարող մերժել։

Ազատը տագնապի մեջ էր, բայց ի՞նչ աներ... Նա արագորեն հեռակա կապի միջոցով հրահանգ տվեց բոլոր վարորդներին կանգնեցնել մեքենաները։ Խեղճերը համարյա խուճապի մեջ, ամեն մեկն իսկույն մի ազատ տեղ գտնելով, կայանեցին իրենց մեքենաները։ Բարեբախտաբար փողոցներն ազատ էին, մայթեզրերին շարված մեքենաներ համարյա չկային։ Շատ էին մեքենաները հրապարակում՝ տոնավաճառի շուրջը։

Երբ շարասյունը կանգնեց, Արքան արքայադստեր ձեռքը բռնած՝ Ազատի ու վարորդի ուղեկցությամբ, դուրս եկավ մեքենայից ու սկսեց շարժվել մայթով դեպի հետ՝ տոնավաճառի ուղղությամբ։ Արշակն ու թիկնապահ գնդի մարտիկներն արդեն դուրս էին եկել իրենց մեքենաներից։ Տագնապահար դեմքով ու արագ-արագ քայլելով, Արշակը մոտենում էր Արքային։ Արքան անմիջապես փորձեց հանգստացնել նրան.

– Արշա՛կ ջան, դու մնա ժողովրդի մոտ։ Ես Անուշի հետ մորի առնեմ ու կգամ. երկար չի տևի։

Երբ անցնում էին թագուհու ու արքայազնների մեքե-

նայի մոտով, Անուշը բաց թողեց հոր ձեռքն ու վազեց դեպի մայրը։

– Մա՛մ, գնում ենք մորի առնենք...

– Հա՜, քաղցր ջան,– մեքենայից դուրս նայելով՝ ասաց թագուհին։

– Մենք չգա՞նք,– ներսից ձայն տվեց Տիգրանը՝ մեծ արքայազնը։

Արքան մոտեցավ մեքենային։ Երկու ձեռքով հենվեց թագուհու կողմի դռան կիսով չափ իջեցված ապակուն ու գլուխը պատուհանին մոտեցնելով՝ ասաց.

– Մի՛ անհանգստացեք, հեսա կգանք։

– Ես քեզ էլ գիտեմ, քո «հեսա»-ն էլ...– ժպտալով արտաբերեց թագուհին ու արդեն ուզում էր ձեռքը տանել ու հպվել Արքայի ձեռքին, երբ Արքան նկատեց, որ Անուշը մոտը չի։ Տագնապած շրջվեց ու տեսավ, որ արքայադուստրն արդեն Ազատի ձեռքը բռնել, պատրաստ սպասում էր իրեն։

– Գնացի՛նք,– ասաց Արքան ու անմիջապես հեռացավ մեքենայից։

Արքան ու Ազատը, արքայադստեր ձեռքը բռնած, սկսեցին շարժվել դեպի տոնավաճառը։ Նրանց ուղեկցում էին թիկնապահ գնդի երկու մարտիկ։

Մայթերին քայլող մարդ համարյա չկար։ Շրջապատի ողջ ուշադրությունը տոնավաճառն էր ու տոնավաճառի կենտրոնում կառուցված բեմի վրա եռացող յարխուշտան։

Արքայադստեր ձեռքը բռնած, Ազատի ու իրենց ուղեկցող թիկնապահ գնդի երկու մարտիկի ուղեկցությամբ, Արքան հատեց փողոցն ու մտավ շուկա։

Նա մոտեցավ հենց առաջին պատահած մորի վաճառողին ու զրույցի բռնվեց։ Վաճառողուհին միջահասակ, արևից խանձված դեմքով, աշխատանքից չորացած մարմնով մի տարեց կին էր։

– Ի՞նչ խոշոր մորի է,– սկսեց Արքան,– որտեղի՞ մորին է, քույրի՛կ ջան։

– Իջևանինն է, եղբա՛յր ջան,– պատասխանեց կինը։

– Վա՜հ, էդքան հեռվից հասել ես Երևա՞ն...

– Ի՞նչ անեմ, եղբայր ջան... մտածեցի մի քիչ թանկ ծախեմ։ Թոռներս ու հարսներս իմ հույսին են... Իմ ձեռ-

քին են նայում։

– Ինչո՞ւ քո,– զարմացավ Արքան,– բա տղանե՞րդ... ամուսի՞նդ...

– Է՜, եղբայր ջան... ամուանուա հետևից տղաներս էլ գնացին խոպան ու...

– Ու ի՞նչ...

– Չգիտեմ... դժբախտ պատահար էր, թե ինչ... Ասեցին ծխախեղդ են եղել դոմիկի մեջ։ Դիակները բերեցինք։ Էս քանի՜ տարի է արդեն... քանդվեցինք...

– Լավ բան չասեցիր, քոչրիկ ջան... ո՞ր գյուղից ես։

– Ենոքավան։

– Մոտիկ եք։ Ես էդ կողմերում հաճախ եմ լինում, ամառանոց ունեմ։

– Ես էլ ասում եմ... դեմքդ ծանոթ ա թվում... որտե՞ղ եմ տեսել...

Այդ պահին նրանց մոտեցավ կարճահասակ, լիքը մարմնով ու կլոր դեմքով մի կին՝ ինչ-որ թուղթ ու գրիչ ձեռքին ու, դիմելով մորի վաճառող կնոջը՝ հրամայական տոնով ասաց.

– Վեցից պակաս չտաս։

Երբ կինը փորձում էր հեռանալ, Արքան չդիմացավ.

– Չհասկացա՛նք...

Կինը, մի արհամարհական հայացք գցելով Արքայի կողմը, հեռացավ նրանցից՝ շարունակելու իր «գործը»։

– Էս ո՞վ էր,– Արքան զարմանքով դիմեց մորի վաճառող կնոջը։

Կինը բազմանշանակ լռեց։

Արքան մի հայացք գցեց Ազատի կողմը։ Ազատի աչքերն ասում էին՝ լավ հոտ չի գալիս։

– Ազա՛տ, երեխուն շուտ մոր մոտ՝ մեքենայի մեջ։ Դու մենակ արի հետևիցս,– հրամայեց Արքան։

Ազատն արագորեն դիմեց իրենց ուղեկցող թիկնապահ գնդի մարտիկներին.

– Անուշին տարեք հետ ու սպասեք իմ կանչին։

Արքայադուստրը չէր հասկանում՝ ինչ էր կատարվում, բայց հոր հայացքից հասկացավ, որ չէր կարելի ընդդիմանալ։

Ազատն իսկույն սկսեց հետևել Արքային։ Արքան քայ-

լում էր հանդարտ, միաժամանակ զննելով այն կնոջը, որը թուղթը ձեռքին մոտենում ու հրամաններ էր տալիս վաճառողներին։ Ազատի բոլոր զգայարանները ծայրաստիճան լարված էին։ Այդպիսի լարվածություն նա նույնիսկ պատերազմական գործողությունների ընթացքում չէր զգացել։ Շատ անգամ էր հայտնվել թշնամու կրակի տակ, բայց այդպիսի տագնապ ու լարվածություն չէր հիշում։

Շուտով հեռակա կապի միջոցով տեղեկացրին, որ արքայադուստրն արդեն թագուհու մոտ էր ու ապահով, բայց Արշակն ու մնացած բոլորը շատ էին անհանգստացած։ Չգիտեին՝ ինչ անել, դուրս գալ ու միանա՞լ Արքային, թե՞...

– Արշակը շատ է անհանգստացած,– Արքայի ականջին կամացուկ շշնջաց Ազատը։

– Ոչի՛նչ, ասա թող բոլորը մնան մեքենաների մեջ,– հրամայեց Արքան՝ շարունակելով հետևել։

Արքան քայլում էր ու միաժամանակ զննում շուրջը, հատկապես՝ այն կնոջը, որն արագ-արագ ու մեծ եռանդով մոտենում էր այս ու այն կողմ շարված շինականներին ու, համապատասխան հրամաններ արձակելով, շարժվում առաջ։

Արևն արդեն ահագին բարձրացել էր։ Արքան երկար ժամանակ դրսում չէր եղել։ Գլխարկն էլ թողեց մեքենայի մեջ... Շոգը սկսեց նեղել նրան։ Հետապնդումը երկարում էր։ Սկզբում գուցե Արքայի հետաքրքրությունը մեծ էր... Բայց հիմա մի կողմից շոգը, մյուս կողմից՝ երկարող հետապնդումը, սկսել էին նյարդայնացնել նրան։ Նա արդեն նկատում էր հետապնդվող կնոջ տձև համաչափությունները։ Դժվարանում էր որոշել՝ տարբերություն կա՞ր արդյոք նրա հասակի ու լայնության միջև։ Կարծես նրա բոլոր երեք չափումները հավասար էին։ Բայց դա, իհարկե, թվում էր միայն։

Արքայի համբերությունն արդեն վերջանում էր, սակայն նրա համառությունն անգերազանցելի էր։ Ազատը կրնկակոխ հետևում էր Արքային, աչքերը չորս արած, ուշի-ուշով զննելով շուրջը։

Վերջապես կարճահասակ կինն, իր «գործը» ավարտելով՝ թողեց տոնավաճառի տարածքն ու, փողոցը հա-

տելով, մոտեցավ բազմաթիվ մեքենաների շարքում առաջամասը դեպի մայթեզրը կայանած մի սև մեքենայի։ Առանց շուրջը նայելու՝ միանգամից բացեց դուռն ու, նըստելով հետևի նստարանին, փակեց դուռը։ Մեքենայի ապակիներն իջեցված էին։ Ներսում երևացին ևս մի քանի պարարտ մարմին։ Արևային ակնոցներն աչքներին սևազգեստ երիտասարդներ էին։

Արքան շրջվեց Ազատի կողմը։

– Արշակին հաղորդիր՝ որտեղ ենք։ Թող մի ջոկատ կանչի, ու աննկատ շրջապատեն սրանց, հասկացա՞ր։

– Լրիվ հասկացա,– պատասխանեց Ազատն ու անցավ գործի։

Ըստ Արքայի ասածի ամեն բան հաղորդելուց հետո՝ Ազատը մոտեցավ Արքային ու գլխով նշան արեց, որ հաղորդել է։

Արքան սկսեց մոտենալ մեքենային։ Ազատն անհանգըստացավ։ Փորձեց կասեցնել Արքայի ընթացքը, բայց Արքան նշան արեց, որ միայն հետևի իրեն ու մնա միանգամայն աննկատ։ Ազատը հլու, հնազանդ հետևեց Արքային։

Արքան դանդաղ մոտեցավ սև մեքենային։ Մի փոքր զննեց ներսն ու տեսավ, որ բոլորն էլ ծխում են, հաստլիկ կինը՝ ներառյալ։ Արքան ընդհուպ մոտեցավ մեքենայի այն պատուհանին, որտեղից դուրս էր ցցված ծխող կնոջ ճարպակալած ձեռքն ու... «բարև ձեզ» ասելով՝ սկսեց ուղիղ նայել նրա աչքերի մեջ։

Պատասխան չստանալով՝ Արքան կրկնեց իր բարևը։ Կինը մի փոքր անհանգստացավ։ Կարծես հիշեց՝ ով էր բարևողը։ Կողքի երիտասարդներն իսկույն զգացին կնոջ անհանգստությունը։

– Էս ո՞վ ա,– ներսից ձայն տվեց հաստլիկներից մեկը՝ մերթ ընդ մերթ նայելով մեկ Արքային, մեկ էլ՝ հաստլիկ կնոջը, որը հավանաբար նրանց մայրն էր՝ դատելով արտաքին նմանությունից։ Բոլորի դիմագծերն իրար նման էին՝ կլոր ու պարարտ, ասես նույն հացի գործարանի բոքոն։

– Ի՞նչ ա, բիձա՛,– արհամարհական նետեց կինը՝ դիմելով Արքային։

– Ասեցի՝ բարև ձեզ...

– Հա՛, ի՞նչ ես ուզում,– դարձյալ արհամարհական նետեց կինը։

– Ի՞նչ էիր անում շուկայում։

Մեքենայի ներսում սկսեցին լուրջ անհանգստանալ։ Միմյանց հետ մի երկու բառ փոխանակելուց հետո, հաստլիկներից մեկը սկսեց դանդաղ ու վստահորեն դուրս գալ ավտոմեքենայի հակառակ կողմի դռնից։ Մինչ նա կհասցրներ անցնել Արքայի կողմը, ներսի նստածներից մեկը հանեց ձեռքի հեռախոսն ու սկսեց խոսել ինչ-որ մեկի հետ։

– Էդ ի՞նչ ցուցակ էր,– հարցրեց Արքան՝ շարունակելով նայել կնոջ աչքերի մեջ։

Կինը տագնապած սկսեց աջ ու ձախ նայել։ Արքայի հարցն անպատասխան թողնելով՝ շրջվեց կողքի նստածի կողմն ու նրա հետ մի քանի բառ փոխանակելուց հետո, հրամայեց, որ մեքենայից դուրս եկած հաստափոր երևույթը հետ վերադառնա մեքենայի մեջ։ Հաստափորն արդեն քիչ էր մնում շրջանցեր մեքենան ու մոտենար Արքային, բայց, կնոջ հորդորներին տեղի տալով, հետ վերադարձավ ու նստեց իր տեղը։

Ազատն, իհարկե, նկատել էր մեքենայից դուրս եկած հաստափորին ու արդեն պատրաստ էր մոտենալ ու միջամտել։ Բայց, տեսնելով, որ լարվածությունը թուլացավ, շարունակեց աննկատ մնալ իր տեղում՝ կողքի մեքենայի հետնամասին հենված։ Այդ պահին նկատեց, որ արագարագ քայլելով իրենց է մոտենում մի երիտասարդ ոստիկան, մի քիչ հաստլիկ ու ամրակազմ։ Ոստիկանն, արագորեն գնահատելով իրավիճակը, միանգամից մոտեցավ Արքային։

– Ի՞նչ ա պատահել, հորոխպե՛ր։

– Իսկ դու ո՞վ ես,– ոստիկանի համար անսպասելի հարցրեց Արքան։

– Ո՞նց,– զարմացավ ոստիկանը,– չի երևո՞ւմ։

– Դու, նախ, չպիտի ներկայանա՞ս,– մեխեց Արքան։

Ոստիկանը մի քիչ շփոթվեց՝ զգալով, որ գործ ունի բանիմաց մարդու հետ։

– Շարքային Մնոյան։ Բան ա՞ պատահել։

– Ինչի՞ց երևաց, որ բան ա պատահել։

Ոստիկանը շփոթվեց։

– Սրա՞նք զանգեցին, կանչեցի՞ն,– շարունակեց Արքան՝ հայացքով ցույց տալով սև մեքենայի մեջ նստած հաստլիկներին։

– Ի՞նչ զանգել, կանչել... անցնում էի... տեսա...

– Ի՞նչ տեսար։

– Դե, որ... բայց ի՞նչ ես ուզում էս մարդկանցից։

– Ինչի՞ց երևաց, որ բան եմ ուզում։

– Հայրի՛կ ջան, ի՞նչ ա պատահել։

– Մենակ ինձ ե՞ս հարցնելու։ Սրանց հարցնելու բան չունե՞ս։

– Կհարցնեմ, հայրի՛կ ջան, բոլորիդ էլ հերթով կհարցընեմ,– պատասխանեց ոստիկանն ու, անցնելով մեքենայի մյուս կողմը, սկսեց շշուկով զրուցել ներսի նստածների հետ.

– Էս ո՞վ ա, ի՞նչ ա ուզում։

– Այ Գափո ջան, տեսավ ինձ գործի վրա, ընկել ա հետևիցս՝ չի պոկվում։ Մի բան արա՝ ռադ ըլնի գնա,– հորդորեց կինը։

– Բայց, ոնց որ հասարակ չուվակ չի...– պատասխանեց Գափոն։

– Գափո՛, էս արդեն քու անելու բանն ա,– վրա բերեց հաստափորներից ամենախոշորը։

Գափոն գլուխը կախ վերադարձավ Արքայի մոտ։

– Հայրի՛կ ջան, կարող ա՞ մոտիկացել փող-մող ես ուզել, թե՞ բան ես ծախում,– սկսեց ոստիկանը, ակնհայտորեն թմրանյութ ակնարկելով։ Սա արդեն ահաբեկելու հանդուգն փորձ էր։

– Ուզում ես խուզարկե՞լ ինձ,– հակադարձեց Արքան։

– Կարող ա, բայց հլա փաստաթղթերդ տուր՝ տեսնեմ։

– Ի՞նչ փաստաթուղթ։

– Անձնագիր-մանձնագիր չունե՞ս։

– Ես անձնագիր չունեմ։

Ոստիկանի գլխին դեռ չէր հասնում՝ ում հետ գործ ունի ու, իհարկե, չհասկացավ, թե Արքան ինչ էր ակնարկում, որ ինքն ընդհանրապես անձնագիր չուներ։

– Վարորդական իրավունք էլ չունե՞ս։

– Չէ։

– Դու հո բոմժ չե՞ս։ Կարող ա՞ փողոցներն ընկել, բան-ման ես ծախում։

Ոստիկանը շարունակում էր ահաբեկելու իր փորձերը։

Արքան վաղուց էր հասկացել ոստիկանի միտքը։

– Բայց, եթե ինձ խուզարկես ու ոչինչ չգտնես, ստիպված պիտի մեքենայի մեջի մարդկանց էլ խուզարկես,– նկատեց Արքան։

Արդեն որոշ հետաքրքրասեր մարդիկ էին սկսել հավաքվել մեքենայի շուրջը։ Մեքենայի ներսիններին անհանգստությունն աճում էր, իսկ ոստիկանի գործը՝ գնալով բարդանում։

– Լավ,– սկսեց նահանջել ոստիկանը,– երևում ա, որ մաքուր ես։ Բայց ի՞նչ խնդիր ունես էս մարդկանց հետ։

– Էս մարդիկ գներ են թելադրում շուկայում։

Արդեն ահագին մարդ էր խմբվել նրանց շուրջը։ Ոստիկանը նեղն էր ընկել։ Շունչը կտրվում էր։

– Լավ, հայրի՛կ, կպարզենք։ Դու կարող ես գնալ, – փորձեց գլխացավից պրծնել ոստիկանը։

– Այսի՞նքն...– զարմացավ Արքան։– Ես որ գնացի, դու ո՞նց ես պարզելու։

– Էդ մեր գործն ա, դու գնա գործիդ, մենք կպարզենք։

– Մի հատ ինձ բացատրի՝ ո՞նց ես պարզելու, ես որ գնացի։

– Մեր համար անհնար բան չկա, դու հանգիստ գնա։

– Ա՛յ, տղա ջան, ո՞նց ես վկային ու մեղադրողին բաց թողնում՝ առանց հարցափորձ անելու, առանց գոնե բնակության վայր, հեռախոսի համար հարցնելու...

– «Այ տղա»-ն ո՞րն ա։ Մի քիչ հարգանքով, ի՛...

Սև մեքենայի շուրջը խմբված բազմությունը դեռ չէր հասկանում ինչն ինչոց էր։ Բազմության հետևում Արքան հանկարծ նկատեց Արշակին։ Արշակը վաղուց էր որոնում Արքային։ Երբ նրանց հայացքները հանդիպեցին, Արշակը գլխով նշան արեց, որ ջոկատն արդեն դիրքավորվել է։ Բայց դեռ չէր հասկանում՝ ինչ էր կատարվում։ Արքան նկատեց, որ ջոկատի տղաները, մարդկանց բազմության

մեջ միախառնված, արդեն շրջապատել էին մեքենան։

– Հարգանքո՞վ։

– Հա, բա... ի՛... կարող ա՞ գիտես...

– Իսկ քեզնից չի՞ պահանջվում հարգանքով վերաբերվել մարդկանց։

– Բա էսքան վախտ ա ի՞նչ եմ անում... ի՛...

– Այսինքն գոհ լինե՞մ, որ ձեռքերս դեռ չես ոլորել ու ձերբակալել...

– Արդեն երկարացնում ես։ Շառդ քաշի, գնա՛...

– Մի բոպե... Ես էս մարդկանց մեղադրում եմ հանցագործության մեջ, իսկ դու առանց ինձ ու նրանց հարցափորձ անելու, առանց անուն, ազգանուն հարցնելու, առանց բնակության վայրը կամ հեռախոսիս համարը հարցնելու, ինձ ասում ես՝ գնա՞։ Ես նաև վկա եմ, չէ՞։ Ես որ գնացի, հետո ո՞նց ես ինձ գտնելու, որ վկայություն տամ։

Ոստիկանը զգաց, որ նեղն է ընկել։

– Հա, լավ, ասա անուն, ազգանուն, բնակությանդ վայրը, հեռախոսիդ համարն ու գնա։

– Այսինքն... Որ չստիպեի՝ չէիր հարցնելո՞ւ։

Ոստիկանը կարկամել էր, ահավոր կարմրել ու քըրտնել։

– Փաստորեն, ուզում ես կոծկե՞լ ոճրագործությունը։ Զլինի՞ դու էլ ես մասնակից,– շարունակեց Արքան։

– Գիշերվա երա՞զ ա էս մարդը,– ասես ինքն իր հետ խոսելով՝ սկսեց աջ ու ձախ նայել Գափոն։

– Հիմա գրե՞մ հասցես ու հեռախոսիս համարը։

– Հա, գրի ու գնա...– Գափոն արդեն հուսահատությունից շփոթվել էր։

– Վերադասիդ կանչիր՝ կգրեմ,– հաստատուն տոնով շարունակեց Արքան։

Սև ավտոմեքենայի մեջ արդեն խուճապ էր։ Շները վատ հոտ էին առնում։ Մեկը ներսից չդիմացավ։

– Արա՛, Գափո, էս մարդկանց ցրի ստեղից՝ պոկվենք... ի՛...

– Ժողովուրդ, ցրվե՛ք։ Ի՞նչ ա եղել, ի՞նչ կա հետաքըրքիր,– սկսեց Գափոն։

Շատերը հետ-հետ գնացին, բայց ոմանք դեռ հապա-

ղում էին։ Գափոն արդեն ուզում էր ձեռքը տանել բարձր լարման մահակին, երբ Ազատը վրա հասավ ու տապալեց նրան։ Այդ տեսնելով, ջոկատի տղաները կայծակնային արագությամբ մոտեցան ու, մոտ կանգնած մարդկանց հեռացնելով, խկոյն շրջափակեցին Արքային։

Սև ավտոմեքենայի միջի հաստագլուխները սարսափից ոչինչ չէին հասկանում։

– Արա, խո՛դ տուր, քշի՛։ Ի՞նչ ես ապուշացել,– մեքենայից լսվեց կարճահասակ կնոջ՝ պարագլխի, ձայնը։

Եթե մեքենան տեղից պոկվեր, ապա կարող էին զոհեր լինել։ Այդ պահին Արքան, չափազանց տագնապած, դիմեց ջոկատի տղաներին.

– Ձերբակալե՛լ սրանց։

Ջոկատի տղաների մի մասն Ազատի հետ միասին մնացին Արքայի շուրջը, իսկ մնացածը հանեցին ատրճանակներն ու անցան Արքայի հրամանի կատարմանը։

– Ձեռքնե՛րդ, դո՛ւրս մեքենայից։ Դո՛ւրս, դո՛ւրս, արա՛գ...– լսվում էին տղաների ձայները։

Մարդիկ արդեն հեռու էին քաշվել ու հեռվից էին հետևում դեպքերի ընթացքին՝ տարակուսած ու երկյուղած։ Շատերը ոչինչ դեռ չէին հասկանում։

Սև մեքենայից կամաց-կամաց՝ ծանր ու դանդաղ, սկսեցին դուրս գալ ձերբակալվածները՝ վարորդը, ևս երկու երիտասարդ ու կարճահասակ կինը։ Դժվար էին շարժվում նրանք, գիրուկ մարմինները հազիվ-հազ քարշ տալով, մանավանդ՝ ձեռքները գլխներին դրած։ Երբ բոլորը դուրս եկան մեքենայից, ջոկատի տղաները նրանց հրեցին դեպի ավտոմեքենայի առաջնամասը։ Համարյա պառկեցրին մեքենայի վրա ու սկսեցին խուզարկել։ Նրանցից ոչ ոք չհամարձակվեց դիմադրություն ցույց տալ։ Բոլորը վախեցած էին։ Միայն ձերբակալված կնոջ հայացքի մեջ դեռ մոլեգին չարություն կար։ Նրա դեմքը կարմիր էր կատաղությունից։

Ջոկատի տղաները զինաթափեցին ձերբակալվածներին ու պառկեցրին նրանց հենց փողոցում, բերանքսիվայր՝ ձեռքները գլխներին։

– Խուզարկե՛լ մեքենան,– լսվեց Արշակի ձայնը։

Այդ ասելով՝ Արշակը մոտեցավ Արքային։

– Ի՛մ Արքա, բան չեմ հասկանում։ Ի՞նչ է կատար-

վում։

– Ժողովրդի մոտ ո՞վ կա,– Արշակին դիմեց Արքան՝ ի նկատի ունենալով իր ու Արշակի ընտանիքները։

– Մի ջոկատ էլ էնտեղ կա։

– Ապրե՛ս։

Տոնավաճառի բեմից դեռ բարձր երաժշտություն էր հնչում։

– Էն երգն ու պարը դադարեցնե՛լ։ Սրանց քարշ տվեք բեմի վրա,– հրամայեց Արքան։

Ջոկատի տղաներն իսկույն դրեցին իրենց կարմիր բերետները՝ Արքայական թիկնապահ գնդի տարբերանշանով, ու անցան Արքայի հրամանի կատարմանը։

– Էս երկար կտևի։ Թող ժողովուրդը շարժվեն առանց մեզ, մենք հետո կհասնենք,– Արշակին դիմեց Արքան։

– Հա՜, մեկ էլ լրագրողների ու նկարահանողների խումբ ա պետք,– հավելեց նա։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

Արշակը հեռակա կապի միջոցով համապատասխան հրահանգներ տվեց ու հետևեց Արքային։

Մի քանի րոպե անց երգն ու պարը դադարեց։ Ջոկատի տղաները ձերբակալվածներին ոտքի հանեցին։ Օձիքներից բռնած, հրելով անցկացրին փողոցն ու տարան շուկայի կենտրոնում գտնվող բեմի մոտ։ Մեկ առ մեկ բեմ բարձրացրին ու ծնկաչոք դրեցին բեմի վրա։ Մարդիկ արդեն սկսում էին կռահել, թե ով էր վստահաբար հրամաններ արձակողը։ Անսպասելի լուրն արագորեն տարածվեց, ու մարդկանց հոծ բազմություն սկսեց հավաքվել բեմի շուրջը։

Արքան դանդաղ բեմ բարձրացավ։ Ամբոխը դեռ ընդարմացած վիճակում էր։ Արքայի հետ միասին բեմ էին բարձրացել նաև Ազատն ու Արքայի թիկնապահ գնդի մի քանի մարտիկ։

– Ազա՛տ, ժողովրդին արագ բացատրիր իրավիճակը, որ հանգստանան,– Ազատին դիմեց Արքան։

Ազատն իսկույն մոտեցավ խոսափողին։

– Ժողովո՛ւրդ, հանգի՛ստ։ Արքան շուկայում օրինազանցների է բացահայտել։ Նրանք ձերբակալված են ու հիմա պատասխան կտան բոլորիդ աչքի առաջ։

Իրարանցումն ու ժխորն իսկույն դադարեց։ Բոլորը կախեցին գլուխները՝ աջ ձեռքի բռունցքն արևահյուսակին բարև բռնած։

– Բարին ընդ ձեզ, իմ եղբայրնե՛ր ու քույրե՛ր,– սկսեց Արքան՝ Ազատից վերցնելով խոսափողը։– Այս առավոտ ականատես եղա շուկայում գներ թելադրելու արատավոր երևույթի։ Չկարողացա կողքով անցնել։ Ցավում եմ, որ այս ամենը խաթարեց առևտուրը։ Կփորձեմ արագորեն ավարտել սրանց դատը։

– Մո՛տ բերեք պարագլխին,– հրամայեց Արքան։

Ջոկատի տղաները մոտ բերեցին կնոջը։

Բոլորը պապանձվել էին։ Ճանճի տզզոցն անգամ կլսվեր։ Մի փոքր դադարից հետո, դիմելով պարագլխին, Արքան շարունակեց.

– Ուրեմն դու կազմակերպել ես յուրահատուկ հարկահանություն այն դեպքում, երբ ես բոլոր ազատ շինականներին ազատել եմ հարկերից։ Գներ ես թելադրում, շուկան՝ կառավարում։ Իշխանություն ես բանեցնում։

Շատերը դեռ աչքներին չէին հավատում։ Ամեն ինչ շատ արագ էր կատարվում։

– Բոլորդ էլ ազգականներ եք, եթե չեմ սխալվում։ Սրանք տղանե՞րդ են,– հարցրեց Արքան՝ ձեռքով ցույց տալով մյուս ձերբակալվածներին։– Խոսի՛ր։

Կինը լուռ էր։ Վախից պապանձվել էր։ Անակնկալն ամբողջովին անդամալուծել էր նրան։ Մտքովը չէր անցնի, որ ծուղակը կընկնի, այն էլ՝ Արքայի ձեռքով։

– Առաջ գան նրանք, ովքեր ճանաչում են այս կնոջը,– դիմեց Արքան հավաքված բազմությանը։

– Խնայի՛,– աղերսական տոնով սկսեց կինը՝ հավանաբար, հասկանալով իր գլխին եկածի ողջ ծանրությունն ու իր անելանելի դրությունը։

– Խնայե՞մ։

– Խնայի՛, անտեր կնիկ եմ...

– Անտե՞ր,– զարմացավ Արքան։– Էս դասաբները ձեռիդ տակ՝ ի՞նչ անտեր,– ասաց Արքան՝ ձեռքով ցույց տալով ձերբակալվածներին։

– Էլ չեմ անի... անմարդ կնիկ եմ...– աղերսական տոնով շարունակեց կինը։

– Անմա՞րդ։

– Հա, մարդս էս տաս տարի ա մեռել ա։

– Ինչի՞ց։

Կինը լուռ էր։ Ո՞նց ասեր, որ հանցագործի մեկն էր ու որ բանտում էր մահացել։

– Դու տիրոմթյան կարիք չունես, դու ինքդ ես տիրոմթյուն անում աջ ու ձախ,– ասաց Արքան ու կրկին դիմեց շուկայի բազմոմթյանը, այս անգամ ընդհուպ մոտենալով խոսափողին ու մի փոքր ավելի կոշտ ու հրահանգող տոնով.

– Առաջ գան նրանք, ովքեր ճանաչում են այս կնոջը՝ այն շինականները, ում սա, ահաբեկելով, թելադրել է բարձրը պահել վաճառվող մթերքների գները շուկայում։

Շատերը վախենում էին առաջ գալ։ Ոմանք էլ դեռ աչքներին չէին հավատում։

Արքայի վերջին հորդորը վերջապես հասավ մորի վաճառող կնոջ ականջին։ Նա իսկույն շրջվեց դեպի բեմը։ Դժվար էր հավատալ իրողությանը։ Բեմի վրա էր նա, ով իր հետ մտերմիկ խոսքի էր բռնվել առավոտյան։ Բեմի վրա էր նաև այն կինը, որն առավոտվանից շուկայում, ազատորեն իշխանություն բանեցնելով, գներն էր կառավարում։

Բարձր գներով վաճառելն, իհարկե, ցանկալի էր բոլորի, մանավանդ՝ ենոքավանցի շինական կնոջ համար, բայց ժամ առաջ վերջացնելն ու իր թոռների մոտ՝ դեպի գյուղ հետ վերադառնալն ավելի կարևոր էր։

Շինական կինը մեծ զարմանքով նկատեց, որ Արքայական թիկնապահ գնդի տարբերանշանով մարտիկների ատրճանակների տակ ծնկաչոք բեմին էին ոչ միայն գներ կառավարող կինը, այլ նաև նրա հետ միասին առավոտվանից շուկայում «տիրոմթյուն» անող երեք սևազգեստ հաստափորներն ու մի ոստիկան։

Նա իսկույն կռահեց՝ ով էր իր առավոտվա զրուցակիցն ու ինչ էր տեղի ունեցել իրենց զրույցից հետո։

– Վա՜յ, քոռանամ ես... Ախչի՜... Էս, հո, մեր...– կնոջ մարմնով մի անասելի սարսուռ անցավ։ Հետո տաքացավ ու խփեց գլխին։

– Ախչի՜, էս մեր... ես էլ ասում եմ՝ ինչի՞ ա դեմքը

ծանոթ...

Այս ասելով, կինը ձեռքը տարավ գրպանն ու, մի թղթադրամ հանելով, սկսեց զննել վրայի դիմանկարը՝ այն համեմատելով իր առավոտվա զրուցակցի դեմքի հետ։

– Հա՜ էլի...– ինքն իրեն ասաց կինը։

Թղթադրամն արագորեն դրեց գրպանն ու դիմեց իր հարսին, որը նրա հետ միասին Երևան էր եկել օգնելու.

– Ազիզ ջան, դու մնա ստեղ։ Ես պտի գնամ։

Ու, առանց հարսի արձագանքին սպասելու, արագորեն դիմեց դեպի բեմը։

– Ճա՛մփա տվեք, ճա՛մփա տվեք։

Մարդիկ արագորեն ճամփա էին բացում ենոքավանցի կնոջ համար։ Նա վերջապես հասավ բեմին ու ձայն տվեց։

– Ե՛ս եմ, ես եմ, եղբա՛յր ջան։

Արքան նկատեց ու իսկույն ճանաչեց կնոջը։

– Թողե՛ք բեմ բարձրանա,– դիմեց Արքան իր թիկնապահ գնդի մարտիկներին։

Շինական կինը բեմ բարձրացավ։ Միանգամից գլուխ տվեց Արքային ու արդեն ուզում էր մոտենալ, Արքայի ձեռքը համբուրել, բայց Արքան իսկույն հետ քաշվեց ու թույլ չտվեց։

– Խոսիր, քույրի՛կ։ Ասելու բան ունե՞ս, ճանաչո՞ւմ ես այս կնոջը, ի՞նչ կասես,– դիմեց նրան Արքան։

– Ասեմ, ասեմ,– սկսեց կինը,– բայց ամոթու գետինն եմ մտնում, որ հենց սկզբից համաձայնվեցի սրա ասածներին։ Մեզնից բոլորից փող ուզեց ու ասեց, որ նենց կանի, որ բոլորը նույն գնով կծախեն իրանց ապրանքները։ Որ, եթե չհամաձայնվենք, չի թողի ստեղ ապրանք ծախենք։ Էս լակոտներն էլ հետն էին,– ասաց կինն ու ձեռքով ցույց տվեց բեմի վրա ծնկաչոք երիտասարդներին։– Բայց կմեռնեի, որ չգայի ու չասեի։

– Շատ լավ,– ասաց Արքան ու, դառնալով բազմությանը, շարունակեց,– առաջ թող գան նրանք, ովքեր այս շինական կնոջ պես ենթարկվել են ահաբեկչության։

Տեսնելով ենոքավանցի կնոջ համարձակությունն ու անկեղծ ու անմնացորդ խոստովանությունը՝ ամբոխի միջից աստիճանաբար սկսեցին առաջ գալ ու բեմի շուրջը

շարվել առավել համարձակ շինականները։ Հետո՝ կամաց-կամաց նաև մյուս բոլորը։

Արքան գոհ էր մարդկանց համարձակությունից։ Գոհ էր, որովհետև կարող էին և առաջ չգալ։ Մարդկանց մեջ դեռ լիովին չէր անհետացել արդարադատության հանդեպ տարիներ շարունակ կուտակված անվստահությունը։ Բայց եկան։ Ենոքավանցի կնոջ վարքը շարժեց սառույցը։ Գուցե շատերը նրա պես ամաչում էին իրենց արածից կամ, գուցե, հենց նոր ամաչեցին։ Ոմանք էլ, գուցե, վախեցան, որ կպատժվեն, եթե առաջ չգան։ Ինչևէ, վկաների ահագին բազմությունն էր հավաքվել բեմի շուրջը։

Վկաների հոծ բազմությունը սարսափի էր մատնել բոլոր ոճրագործներին։

– Խնայի՞,– ծնկաչոք տեղից կրկին ձայն տվեց ոճրագործության պարագլուխ կինը։

– Համբերի՛,– հորդորեց նրան Արքան,– փաստորեն ընդունո՞ւմ ես ողջ մեղավորությունդ։

– Հա, մեղավոր եմ, խնայի...– աղերսում էր կինը։

– Համբերի՛,– զայրացավ Արքան։– Դու, փաստորեն, միայնակ չես գործել։ Ձինված օգնականներ ես ունեցել մարդկանց ահաբեկելու համար...

Կինը լուռ էր։

– Բացի զինված ավազակներից, փաստորեն, նաև ոստիկանի աջակցությունն ես վայելել։ Այն ոստիկանի, որն իմ անունից կոչված է օրինականություն, կարգ ու կանոն պահպանել։ Սա է՞լ է տղադ,– հարցրեց Արքան՝ արհամարհական նայելով ձերբակալված ոստիկանին։

Կինը դեռ լուռ էր։

– Իսկ դու գիտե՞ս, որ չհամագործակցելով ավելի ես ծանրացնում վիճակդ։

Դեռ լռություն էր։

– Դու գուցե լիովին չես պատկերացնում... Ձեր ազգակցական կապը դժվար չի պարզելը։ Ու, դառնալով Արշակին.

– Արշա՛կ, թաղի ոստիկանապետին՝ իսկույն այստեղ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Արշակն ու անցավ՝ կատարելու Արքայի հրամանը։

Մինչ կժամաներ ոստիկանապետը, Արքան շարունա-

կեց.

– Ուրեմն, դու զինված ավազակախմբի ու իր երդումը դավաճանած ոստիկանի հետ միասին ահաբեկում ես իմ ժողովրդին, հարկահանություն ես կազմակերպել, իշխանություն ես բանեցնում, շուկայի գներն ես բարձր պահում ու դրանով իմ հատած դրամի արժեքն ես նսեմացնում...

Մեղադրանքների տարափից ավազակախմբի պարագլուխ կինը կարկամել էր: Վերջին մեղադրանքը, սակայն, գլխին չհասավ:

Արքան շրջվեց դեպի ծնկաչոք ոստիկանը:

– Դու գիտես չէ՞, որ հարցաքննությանն ընդդիմանալու, չհամագործակցելու, հետաքննությանը խանգարելու համար պատիժդ կծանրանա:

Ոստիկանը լուռ էր:

– Իհա՛րկե, գիտես,– շարունակեց Արքան:– Ասա, տեսնեմ, դու ի՞նչ ազգակցական կապի մեջ ես այս կնոջ ու մյուս ավազակների հետ:

– Խնայի՜,– արցունքներ թափելով՝ սկսեց Գափոն:

– Այ, որ ամեն ինչ պատմես, ոչինչ չթաքցնես, շատ խելոք բան արած կլինես:

– Էս մորքուրս ա, էս էլ մորքուրիս տղեքն են,– խորապես ահաբեկված սկսեց պատմել Գափոն:– Ինձ նոր էին նշանակել շուկայի վրա: Եկան, համոզեցին, որ գործ անենք: Ասին՝ արի տիրություն արա, մենք մնացածը կանենք... Ես մեղավոր չեմ...

– Լավ,– ասաց Արքան:

Լրագրողների ու նկարահանողների խումբն արդեն գործի էր անցել: Բեմի վրա տեղի ունեցող ամեն ինչ նկարահանվում էր:

Այդ պահին շուկայի տարածք մտավ ոստիկանապետը՝ մի քանի սպայի ուղեկցությամբ: Բազմության միջով, իրենց համար ճանապարհ բացելով, մոտենում էին նրանք: Երբ հասան բեմին, կանգ առան ու բարև բռնած քարացան՝ գլուխները կախ:

Արքան նկատեց դա ու ոստիկանապետին հրավիրեց բարձրանալ բեմ: Արշակը ոստիկանապետին հեռախոսով մանրամասն բացատրել էր ողջ եղելությունը:

– Ի՛մ Արքա, ներող եղիր, ես ամենևին տեղյակ չեմ

եղել,– սկսեց ոստիկանապետը՝ միաժամանակ բեմ բարձրանալով։

– Հուսով եմ,– ասաց Արքան։– Փաստորեն, արդեն տեղյակ ես իրողությանը։

– Ի՛մ Արքա, արդեն լիովին տեղյակ եմ,– պատասխանեց ոստիկանապետը։

– Մինչև գալդ պարզեցինք, որ էս երիտասարդները պարագլխի տղաներն են,– ասաց Արքան՝ ձեռքով ցույց տալով ծնկաչոք հասալիկներին,– իսկ սա՝ քրոջ տղան,– շարունակեց նա՝ ցույց տալով ծնկաչոք ոստիկանին,– որ այս ամենը խմբակային հանցագործություն է։ Քո ոստիկանի հովանավորությամբ, այս ավազակախումբը ահաբեկել է անմեղ շինականներին ու յուրահատուկ հարկահանություն կազմակերպել։ Մնում է պարզել, թե ուրիշ ի՞նչ հանցագործություններ են կատարել սրանք նախկինում, ուրիշ ի՞նչ հանցագործ կապեր ունեն, հատկապես՝ որևէ կապ ունե՞ն այլ ոստիկանների հետ, այլապես նման հանդգնություն հնարավոր չի պատկերացնել, ինչին ականատես եղա այսօր։

– Ի՛մ Արքա, դա բացառվում է...

– Ի՞նչ։ Առանց հետաքննության արդեն եզրակացություններ՞ ես անում,– կտրեց ոստիկանապետին Արքան։

– Ի՛մ Արքա, ներող եղիր, սխալվեցի,– խոստովանեց ոստիկանապետը,– հետաքննությունը կընթանա ամենայն բծախնդրությամբ։

– Հետաքննության ավարտից հետո բոլոր նյութերն՝ անմիջապե՛ս իմ սեղանին,– հրամայեց Արքան։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– պատասխանեց ոստիկանապետը։

– Այսօրվա միջադեպը վերաքննելու կամ վկաներին հետագայում հարցաքննելու ոչ մի կարիք չկա։ Բոլոր վկաներն այս պահից ազատ են՝ վերադառնալու իրենց ամենօրյա գործին։ Ես արդեն վերջացրել եմ և՛ գործի քննությունը, և՛ սրանց դատավարությունը։ Քեզ մնում է միայն պարզել, թե ուրիշ ինչ հանցանքների մեջ են ներգրավված սրանք, և ամենակարևորը՝ կա՞ն, արդյոք, ուրիշ ոստիկաններ, ովքեր երբևէ այս կամ այն կերպ համագործակցել են սրանց հետ։ Բոլորին հայտնաբերե՛լ։ Կրկնում

եմ՝ ամբողջ զեկույցը կներկայացնես անձամբ ինձ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ, ամեն բան կարվի ինչպես կամեցար,– խոնարհաբար գլուխ տվեց ոստիկանապետը։

– Ուրեմն, եթե հետաքննության ընթացքում սրանք համագործակցեն,– շարունակեց Արքան,– լիովին խոստովանեն իրենց բոլոր նախկին հանցագործություններն ու կապերը, ոստիկանների հետ՝ ներառյալ, ապա գուցե փոխեմ դատավճիռս։ Իսկ դատավճիռս հետևյալն է։

Արքան, մի փոքր դադարից հետո, շարունակեց.

– Կանխամտածված ու կազմակերպված ձևով հարկահանություն կազմակերպելու, ազատ շինականներին ահաբեկելու, նրանց անօրինական գործարքի մեջ ստիպողաբար ներքաշելու համար ես՝ դեպքերի ականատես ու մեղադրող, նաև՝ դատավոր, Համայն Հայոց Արքաս, դատապարտում եմ՝ պարագլուխ կնոջը՝ մահապատժի, իսկ նրա ողջ գերդաստանը՝ որձատման։ Հանցագործների հետ համագործակցելու, արքայական ոստիկանի իր երդումը դավաճանելու, ոստիկանի անունն ու պատիվը հանցավոր կերպով ոտնահարելու համար ես՝ Համայն Հայոց Արքաս, հանցագործ ոստիկանին դատապարտում եմ մահապատժի, իսկ նրա ողջ գերդաստանը՝ որձատման։ Սրանց գերդաստանի բոլոր կանանց ու աղջիկներին աքսորել դեպի անմարդաբնակ գյուղերը։ Երկու գերդաստանն էլ անմիջապես ձերբակալել, բռնագրավել դրանց ողջ ունեցվածքը։ Հանցագործ ոստիկանի համազգեստը, ինչպես կարգն է, հանել ու պատրաստել հրապարակավ հրկիզման՝ անարգանքը ոստիկանության շարքերից վերացնելու համար։

Այս ասելուն պես, Արքան դիմեց բազմությանը.

– Արդա՞ր է դատավճիռս։

– Արդա՜ր է, արդա՜ր է...– լսվեց ամեն կողմից։

– Արդա՜ր է, արդա՜ր։ Վայ, մեռնեմ ես քո աստղին,– ասաց ենոքավանցի կինն ու փորձեց մոտենալ ու ծնկի գալ Արքայի առջև, բայց Արքան թույլ չտվեց։

Ենոքավանցի կինը, ուրախության արցունքներն աչքերին, ձեռքերը վեր պարզեց ու սկսեց օրհնել Արքային.

– Աստված պահի բալեքիդ... մեռնեմ զորությանդ... Մեր գլխից անպակաս ըլնես։

– Ի՛մ եղբայրներ ու քույրեր, մեծապես ձեր համար-

ձակության շնորհիվ հնարավոր դարձավ այս հանցագործների բացահայտումն ու արդար դատը,– բազմությանը դիմեց Արքան։– Իսկ հիմա անցեք ձեր գործին։ Ես պիտի գնամ։

Բազմության աղմկալի ծափահարությունների ներքո, Արքան իջավ բեմից և Արշակի, Ազատի ու իր թիկնապահ գնդի մարտիկների ուղեկցությամբ, դիմեց դեպի իր մեքենան։

Լրագրողների ու նկարահանողների խումբը դեռ շարունակում էր նկարահանել։

Ոստիկանապետն այդ ընթացքում բեմ հրավիրեց իր հետ ժամանած սպաներին ու սկսեց հրահանգներ արձակել։ Նրա սպաներն, արագորեն շղթայակապ անելով ձերբակալվածներին, ոտքի հանեցին նրանց ու սկսեցին տանել դեպի ոստիկանական մեքենաները։

Մարդիկ ուշի-ուշով հետևում էին բեմի վրա կատարվող անց ու դարձին։ Ոմանք ցնծությամբ, ոմանք՝ զարմանքով, ոմանք էլ դեռ չէին հավատում իրենց աչքերին։ Ամեն ինչ շատ արագ էր կատարվում։ Դա նաև չափազանց անսովոր էր ու անսպասելի։ Ո՞վ կմտածեր, որ Արքան անձամբ շուկա կմտներ։ Նույնիսկ հանցագործների մտքով չէր անցել, որ գուցե հենց Արքային բախվեն իրենց «գործի» վրա։

Բեմի շուրջը հավաքվածները կամաց-կամաց վերադառնում էին իրենց գործերին, միաժամանակ զրուցելով կատարվածի մասին, մտքեր փոխանակելով։ Նրանք բոլորը ցնցված էին Արքայի արագ ու համարձակ վարքից։ Տարիքով մարդիկ նույնիսկ հիացած էին Արքայի դատավճռով։

Ենոքավանցի կինը գլխիկոր բեմից ցած իջավ ու դիմեց դեպի իր տաղավարը։ Նա ափսոսում էր, որ Արքան գնաց։ Զղջում էր, որ շուտ չլսեց Արքայի կոչը։ Դեռ ահավոր ամոթ էր զգում՝ հանցագործներին ենթարկվելու համար։ Բայց միևնույն ժամանակ սիրտը լի էր բերկրանքով, որ կանգնեց Արքայի կողքին, օգնեց նրան մերկացնել հանցագործներին։ Նա դեռ երկար կհիշի Երևանում իր հետ կատարվածն ու անպայման կպատմի բոլորին։ Կըպատմի ամենայն մանրամասնությամբ, առաջին հերթին՝

իր թոռներին։

– Ազատ ջան, ժողովուրդը հասե՞լ են տեղ,– դիմեց Արքան Ազատին։

– Ի՛մ Արքա, հասել են։ Ամեն ինչ կարգին է։

– Փառք Աստծո,– Արքայի լարվածությունն իսկույն թուլացավ մի փոքր, չնայած՝ դեռ ահավոր զայրացած էր։ Դեռ ծանր ու ճնշող զգացումներ ուներ։ Իր զայրույթի մեջ մահապատժի էր դատապարտել մի կնոջ, նույնիսկ, երկու գերդաստանի որձատման դատավճիռ էր ընդունել...

Երբ անցան փողոցն ու մոտեցան մեքենաներին, Արքան հանկարծ հիշեց, որ իր հատուկ շնորհակալությունը չհայտնեց ենոքավանցի կնոջը։ Մի պահ կանգ առավ։ Արշակն ու Ազատը զարմացած շրջվեցին Արքայի կողմը։

– Ի՛մ Արքա, ի՞նչ եղավ,– համարյա միաժամանակ ասացին նրանք։

– Մոռացա էն կնոջը շնորհակալություն հայտնել։ Նա, որ չլիներ, մարդիկ գուցե առաջ չգային։ Նա փրկեց դրությունը։

– Ի՛մ Արքա, օրը թեքվել ա։ Մինչև հասնենք՝ մութը կընկնի,– փորձեց Արքային հետ պահել Ազատը։

– Չէ, Ազատ, էդ կինը հերոսություն արեց, նույնիսկ տղամարդիկ չհամարձակվեցին առաջ գալ։ Սենց չի կարելի թողնել,– ասաց Արքան ու շրջվեց, որ հետ գնա։

Հազիվ էր մի երկու քայլ արել, երբ նկատեց դեպի իրեն արագ-արագ քայլող ենոքավանցի կնոջը, մի փոքր դույլ ձեռքին։

– Եղբա՛յր ջան, սպասի,– ասելով, կինը մոտեցավ ու կանգնեց Արքայի դեմ դիմաց։– Բա, մոռացար աղջկանդ համար մորի վերցնես,– շփոթմունքից կարկամած, արտաբերեց կինը։

– Վա՜յ, քույրիկ ջան։ Ես քեզ շատ շնորհակալ եմ։ Դու չես պատկերացնի, թե ինչքան շնորհակալ եմ արածիդ համար։ Դու որ չլիներիր, գուցե ոչ ոք առաջ չգար։ Գործս շատ կդժվարանար։ Ես քեզ շա՜տ շնորհակալ եմ։ Այս ասելով, Արքան մոտեցավ, երկու ձեռքով բռնեց կնոջ գլուխն ու, մի փոքր կռանալով, համբուրեց նրա ճակատը։ Կնոջ դեմքն ավելի շառագունեց։ Խիստ անհարմար զգաց։ Չէր հասկանում ոչինչ։ Շառագունած դեմքով սկսեց աջ ու

ճախ նայել։ Նա ավելի անհարմար զգաց նաև այն պատճառով, որ իրենց մոտեցել ու ողջ կատարվածին ուշի-ուշով հետևում էր նրա հարսը։

Արքայի աչքն ընկավ մի փոքր հեռվում կանգնած՝ արևահար դեմքով, նիհարիկ, բայց պիրկ մարմնով, աշխատանքից մի փոքր կորացած մեջքով, խարտյաշ ու գանգուր մազերը սկեսրոջ պես սպիտակ գլխաշորով պինդ կապած ու երկնքից կապույտ աչքերով մի երիտասարդ կնոջ։

– Աստված իմ...– ակամայից արտաբերեց Արքան։

Արքան երբևէ հակված չէր եղել լրջորեն հավատալու վերամարմնավորման տեսությանը, բայց երիտասարդ կնոջ կերպարը, չգիտես ինչու, Արքային մղեց մտաբերել իր մեծ մորը, որը շատ փոքր տարիքում, Մեծ Եղեռնից մազապուրծ, սկզբում ապաստան էր գտել Հունաստանի ափերում, հետո արդեն հասել էր Երևան։ Արքան հաճախ էր կոտորածների զարհուրելի պատմություններ լսել նրանից՝ դեպքերի անմիջական ականատեսից։

Ենոքավանցի կինը նկատեց Արքայի հայացքի ուղղությունը։

– Հարսս ա,– ասաց կինը։

Հարս ու սկեսուր անչափ շփոթված էին, մեկը մյուսից շփոթված։

Արդեն մարդիկ էին սկսում խմբվել նրանց շուրջը։ Հետաքրքրությունից դրդված՝ մեծ ու փոքր կամաց-կամաց խմբվում էին ու շրջապատում։ Նրանք՝ պատշաճ հեռավորության վրա կանգնած, աջ ձեռքի բռունցքները կրծքներին, հետևում էին Արքայի ու ենոքավանցի կնոջ զրույցին։ Մարդկանց համար շատ անսովոր էր Արքային տեսնել փողոցում, մանավանդ՝ սովորական հագուստով։

Արքայի համար նույնպես անսովոր էր լինել փողոցում ու շատ մոտ հեռավորությունից իրեն հառած աչքերի կրակի տակ։ Չնայած մեծ հետաքրքրություն կար նրանց մեջ, սակայն այդ ամենը կարծես խաթարում էր մի ներդաշնակ կապ։

Արքան զգաց, որ մի տարօրինակ կորստի ցավ է սկսում սողոսկել իր սիրտը։ Մի փոքր էլ՝ ու գուցե անդառնալիորեն կորցներ մի շատ հարազատ բան։

– Քույրի՛կ ջան, Երևանում մնալու տեղ ունե՞ք,– դի-

մեց Արքան ենոքավանցի կնոջը։

– Չէ, ի՞նչ մնալ,– պատասխանեց ենոքավանցի կինը,– հիմա գնում ենք ավտոկայան, որ հասցնենք վերջին ավտոբուսին։– Էս մորին էլ տար աղջկադ,– շարունակեց կինն ու Արքային մեկնեց մորիով լի վերջին դույլը։

Արշակն ու Ազատը սկսեցին անհանգստանալ։ Արդեն մարդկանց հոծ բազմություն էր հավաքվել նրանց շուրջը։

– Անունդ ի՞նչ է, քույրի՛կ,– հարցրեց Արքան։

– Փառանձեմ,– պատասխանեց ենոքավանցի կինը։

– Փառանձեմ քույրիկ, հարսիդ ասա՝ եկեք նստեք իմ մեքենան։ Մենք ձեզ կհասցնենք գյուղ։

– Վա՜յ, չէ։ Անհարմար ա,– ասաց Փառանձեմն ու անչափ շփոթված՝ ձեռքը տարավ ամոթից կարմրող դեմքը ծածկելու։

Փառանձեմի հարսն արդեն ընդհուպ մոտեցել էր նրանց։ Արքայի առաջարկը լսելով՝ նա նույնպես խիստ կարմրեց ու դեմքը թաքցնելու համար անցավ սկեսրոջ մեջքի հետևը։

– Էլ ոչ մի խոսք։ Սա արքայական հրաման է, նստեք մեքենան։ Ես ձեզ քաղաքում մենակ չեմ թողնի, – ասաց Արքան ու նշան արեց Ազատին։

Արքայի թիկնապահ գնդի մարտիկներն իսկույն օգնեցին կանանց՝ տեղավորել դատարկ դույլերն Արքայի մեքենայի բեռնախցում և ուղեկցեցին նրանց նստել մեքենան։

– Ազա՛տ ջան, Արշա՛կ ջան, ես կանանց հետ մինչև ճամփաբաժանը գնամ, հետո կգամ ձեզ հետ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– համարյա միաժամանակ ասացին Արշակն ու Ազատը և անցան նստելու մյուս մեքենան։ Արքան տեղավորվեց առջևի նստարանին՝ վարորդի կողքին, ու շարասյունը շարժվեց։

– Փառանձեմ քույրիկ, փաստորեն ամուսնուդ գերդաստանի ողջ հոգսը քո վրա է հիմա,– սկսեց Արքան։

– Է՜,– խորը հոգոց հանեց Փառանձեմը։

Արքան տեսավ, որ լավ չսկսեց։ Հասկացավ, որ անասելի ցավոտ հիշողություններ արթնացրեց։ Փառանձեմ քույրիկը գլուխը կախել էր՝ սառած հայացքն անորոշ հեռուն։ Արքան՝ իր անզգուշությամբ, բորբոքեց դժբախտ կնոջ տարիներ շարունակ մխացող վերքը։

– Հարսիդ անունն ի՞նչ է, Փառանձեմ քույրիկ,– մի փոքր հետո փորձեց զրույցի ուղղությունը փոխել Արքան։

– Մարիամ,– պատասխանեց Փառանձեմը։

Սա մինչև ոսկորները ցնցեց Արքային։ Հիմա արդեն Արքան էր շփոթվել։ «Չի՛ կարող պատահել։ Ինչպե՞ս, թե... Մարիա՞մ։ Մեծ մորս անո՞ւնը։ Սա ի՞նչ զուգադիպություն է»,– մտածում էր Արքան։

Իր շփոթմունքը քողարկելու համար, Արքան դեմքը շրջեց առաջ, բայց մի փոքր դադարից հետո շարունակեց.

– Փառանձեմ քույրիկ, մի քիչ պատմիր հարսիդ մասին։ Քանի՞ թոռ ունես։ Ինչո՞վ եք զբաղվում։ Հարսդ, որ հետդ է, բա երեխեքին ո՞վ է նայում։

– Է՜, էս խեղճ աղջիկն ինձանից անբախտ դուրս եկավ,– դարձյալ խորը հոգոց հանեց կինը։

– Ո՞նց,– զարմացավ Արքան։

Փառանձեմի աչքերը լցվեցին։ Բայց, երբ կոկորդի խեղդուկը մի փոքր անցավ, փորձեց անպատասխան չթողնել Արքայի հարցը.

– Ո՞նց ասեմ... նոր էինք նշանդրեքն արել։ Աշունքը պտի հարսանիքն անեինք։ Տղես էլ վեր կացավ գնաց խոպան՝ հոր ու մեծ ախպոր մոտ՝ թե հարսանիքի համար փող աշխատեմ՝ գամ։ Էդ գնալն էր...

Փառանձեմն այլևս չկարողացավ շարունակել։ Արցունքները սկսեցին ցած հորդել։ Հարսը մի թաշկինակ մեկնեց սկեսրոջը։ Փառանձեմն առավ ու տարավ աչքերին։

Արքան չէր սպասում նման շրջադարձի։ Նա հիմա ավելի տարակուսած էր։ Բան չէր հասկանում։ Փառանձեմ քույրիկը դեռ շատ էր հուզված։

Մի փոքր անց, սակայն, Արքան փորձեց մի բան պարզել։

– Փառանձեմ քույրիկ, բան չեմ հասկանում։ Բա որ հարսանիք չեք արել...

– Է՜... Էս աղջկա ցավը տանեմ ես,– իսկույն վրա բերեց Փառանձեմը։– Թաղմանը էն լաց ու կոծն էր դրել, որ... Մինչև քառասունքը մեր տնիցը չգնաց։ Ամբողջ ժամանակ մոտս էր։ Իրար սիրտ էինք տալիս ու առնում։ Տենց էլ մնաց ու մնաց։ Հազար ասեցի՝ այ աղջիկ ջան,

գնա։ Սիրուն աղջիկ ես, հազար ուզող կունենաս։ Բա, թե՝ չէ՛։ Հերն ու մերն էլ եկան, թե տանեն իրանց աղջկանը, չլսե՛ց, չգնա՛ց։ Մնա՞ց ու մնաց։ Էս քանի տարի ա մոտիցը չի պոկվում։ Ամեն ինչով օգնում ա՝ ոնց որ աղջիկս ըլնի։ Էնքա՞ն ենք կապվել իրար, որ էլ չասելու...

Արքան ցնցված էր։ Արցունքները խեղդել էին կոկորդը։ Ասելու ոչինչ չէր գտնում։

Մեքենաների շարասյունը շուտով հասավ ճամփաբաժանին ու կանգնեց։ Արքան քարացել էր՝ իր տեղում նստած, չէր կարողանում շարժվել։ Մի քանի վայրկյան անց Ազատը, Արշակն ու Արքայի թիկնապահ գնդի մարտիկները դուրս եկան իրենց մեքենաներից ու մոտեցան Արքայի մեքենային։ Ազատն ընդհուպ մոտեցավ, մի փոքր առաջ թեքվեց՝ Արքայի դուռը բացելու համար ու զարմանքով նկատեց նրա քարացած վիճակը։ Մի փոքր տագնապած բացեց դուռը։

– Ի՛մ Արքա՞...

Արքան զգաց Ազատի անհանգստությունը։

– Հա, Ազատ ջան... բան չկա,– նրան հանգստացրեց Արքան, մի փոքր անց ուշքի գալով, ու շարունակեց,– ուրեմն կանանց ապահով պետք ա հասցնել գյուղ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– պատասխանեց Ազատը։

Ներսում Փառանձեմն ու հարսը խիստ անհանգստացան։

– Չէ՛, գյուղ պետք չի, պե՛տք չի գյուղ...– տագնապեց Փառանձեմը։

Արքան հասկացավ կնոջ անհանգստության պատճառը։ Ժպտաց ու դիմեց Ազատին.

– Լա՛վ, տղերքը թող մինչև Իջևան հասցնեն։ Այնտեղից իրենք կգնան, Ենոքավանը մոտ է,– ասաց Արքան ու զգաց, որ Փառանձեմի սրտով էր իր որոշումը։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Ազատը։

– Հա, հետո թող հետևեն, որ կանայք ապահով գյուղ հասնեն,– Ազատի ականջին շշուկով հավելեց Արքան, միաժամանակ վեր կենալով տեղից ու դուրս գալով ավտոմեքենայից։

Ազատը գլուխ տվեց ու սկսեց հրահանգներ տալ թիկնապահ գնդի տղաներին։

Արքան մի փոքր թեքվեց մեքենայի մեջ ու դիմեց Փառանձեմին.

– Փառանձեմ քույրիկ, կրկին՝ շատ շնորհակալ եմ համարձակությանդ համար, շատ շնորհակալ եմ։

Փառանձեմի դեմքը կրկին շառագունեց։

– Դե՛, ձեզ բարի ճանապարհ։ Մորու համար նույնպես շատ շնորհակալ եմ,– ասաց Արքան ու, մի վերջին հայացք գցելով Մարիամի կողմը, սկսեց քայլել դեպի հետևում կանգնած մյուս մեքենան։ Մարիամն աչքերն իսկույն կախեց։ Բայց, երբ Արքան հեռացավ, շրջվեց ու սկսեց հայացքով հետևել նրան։

Արքայի թիկնապահ գնդի մարտիկներից մեկն իսկույն նստեց մեքենան՝ միաժամանակ բարևելով կանանց։

– Աստծու բարին, բալե՛ս,– պատասխանեց Փառանձեմը։

Մարիամը դեռ նայում էր Արքայի ուղղությամբ։ Շուտով մեքենան շարժվեց։ Արքան նկատեց իր կողմը նայող Մարիամին։ Սիրտը ճմլվեց՝ կարծես մի հարազատ մասունք էր կորցնում ու ակամա ձեռքով արեց։ Մարիամն ամոթից իսկույն հետ շրջվեց։ Շատ տարօրինակ բան կար այս ամենի մեջ։

Ազատն ու թիկնապահ գնդի մարտիկները շրջափակել էին Արքային։ Բայց Արքան դեռ չէր շտապում։ Մի քանի վայրկյան լուռ հետևելով հեռացող մեքենային՝ Արքան մտածում էր. «գոնե էլի կտեսնե՞մ նրան»։

Երբ, կանայք ահագին հեռացել էին, Արքան շրջվեց դեպի Ազատը։

– Գնացի՛նք,– ասաց նա ու սկսեց շարժվել դեպի մյուս մեքենան։

– Հա՛, էսօր չենք հասցնի մտնել Էջմիածին։ Դա թող մնա հետ գալուց,– հավելեց Արքան։

Ազատը բացեց մեքենայի դուռը։ Արքան նստեց հետևի նստարանին։ Մեքենայի մյուս կողմից Արշակը ներս մտավ ու նստեց Արքայի կողքին։ Ազատն իսկույն նստեց վարորդի կողքն, ու շարասյունը շարժվեց։ Մեկն՝ առջևից, մյուսը՝ հետևից, նրանց ուղեկցում էին թիկնապահ գնդի մարտիկները երկու մեքենայով։

***

Արևն արդեն լա՜վ թեքվել էր։ Շարասյունը շուտով դուրս եկավ քաղաքից ու բռնեց Ամբերդի ճանապարհը։ Որոշ ժամանակ ամեն մեկն իր մտքերով էր։ Լռությունը խախտեց Արշակը.

– Ի՛մ Արքա, թույլ տուր խոսել։

– Ասա՛, Արշակ ջան։

– Ի՛մ Արքա, չգիտեմ... բայց մի քիչ անզգույշ վարվեցիր էս առավոտ։ Բա որ դրանք զինված լինեին, ու...

– Չդիմացա, Արշակ։ Տանել չեմ կարողանում կեղտի ոչ մի նշույլ։

– Ի՛մ Արքա, բայց սպասեիր մի քիչ։ Դրանք տեղից շարժվողը չէին ոնց որ։ Ջոկատը ճամփին էր։

– Հա՜, ճիշտ ես, դրանք տեղից շարժվողը չէին, բայց չդիմացա։ Եթե չմիջամտեի, ինձ չէի ների։ Կստացվեր, որ վախեցել եմ կեղտից։

– Ի՛մ Արքա, հասկացա։ Քեզ եմ ասում, բայց ես էլ չէի դիմանա։ Հենց տեղում կսատկացնեի շներին։ Դու ահագին սառնասիրտ տարար ամեն ինչ։

– Գոհ եմ, որ սենց վերջացավ։ Ժողովուրդն էլ իր աչքով տեսավ... մի անգամ տեսնելը հազար անգամ լսելուց լավ է,– ասաց Արքան։

Բոլորը դարձյալ մտքերի մեջ էին։ «Այ, որ Արքան ասեր հենց տեղում սատկացրու, ո՞նց կսատկացնեի»,– մտածում էր Ազատը։

– Հետո՝ ճակատագիրը հենց ինձ էր ընտրել դրանց բախվելու համար։ Չէր կարելի խուսափել։ Ոճիրը տեսնելն ու կողքով անտարբեր անցնելը համարյա նույն չափի ոճիր է, եթե ոչ՝ ավելի։ Ամեն մարդ պիտի հասկանա սա։ Ընդհանուր առմամբ, պարկեշտ մարդկանց կրավորական կեցվածքն է համատարած անարդարության պատճառը։ Աշխարհի դժբախտությունն այն է, որ պարկեշտ մարդիկ ոչինչ չեն անում՝ ոճիրը վերացնելու համար։ Վոլտերն ասել է՝ «Ամեն մարդ մեղավոր է այն լավի համար, որ չի արել»։

– Այդ կրավորական կեցվածքը Քրիստոնեությունն է մեր մեջ սերմանել,– նկատեց Արշակը։

– Կրավորականը՝ այո, գուցե կրոնավորներն են սերմանել,– շարունակեց Արքան:– Իսկ՝ համատարած ոճրամտությունն ու ոճրագործությո՞ւնը...

Արշակը լուռ էր:

– Ա՛յ, օրինակ՝ ի՞նչն էր պատճառը, որ երկար ժամանակ չէր ստացվում ցած բերել ոճրագործների իշխանությունը Հայաստանում: Այդ ինչի՞ց էր, որ չնայած ամեն ոք գիտեր դրանց ոճիրների մասին, բայց, միևնույն է, ոչինչ չէր ստացվում,– շարունակեց Արքան:

– Դրսի ուժերի ճնշումը, երևի: Հայաստանում ցանկացած հեղափոխության փորձ մարտահրավեր էր ո՛չ միայն ներսի իշխանություններին, այլ առաջին հերթին՝ այդ իշխանությունների դրսի հովանավորին,– պատասխանեց Արշակը:

– Դրա մեջ մեծ ճշմարտություն կա, բայց նույն այդ հովանավորը չկարողացավ որոշ ժողովուրդների պարտադրել ոճրամիտ ու ոճրագործ իշխանություններ: Օրինակ՝ մերձբալթյան ժողովուրդներին:

– Ի՛մ Արքա, ուզում ես ասել՝ արտաքին ճնշո՞ւմը չէր պատճառը:

– Արտաքին ճնշումը մեծ նշանակություն ունի, բայց այդ նույն ճնշումը տարբեր կերպ ազդեց տարբեր ժողովուրդների վրա: Ե՛վ խորհրդային, և՛ հետխորհրդային տարիներին կոռումպացված ժողովուրդներն էլի մնացին նույնը:

Արշակը դեռ սպասում էր Արքայի մեկնաբանություններին:

– Ասածս այն է, որ, եթե մեզանում բոլորը դեմ լինեին մեր ոճրագործ իշխանավորներին, ապա խնդիր ընդհանրապես չէինք ունենա: Ցավն այն էր, որ կրավորականների հետ մեկտեղ, մարդկանց մի ստվար մաս, եթե չասեմ՝ մեծամասնությունը, սատարում էր իշխանություններին: Տարբեր պատճառներով... մեկը չէր ուզում կորցնել իր աշխատատեղը պետական համակարգում, մյուսը՝ ձգտում էր այդ համակարգում տեղ գրավել, մեկն իր ձեռնարկությունն էր վախենում կորցնել, մյուսն՝ իր աշխատատեղն այդ ձեռնարկությունում: Բոլորն այս կամ այն կերպ շղթայված էին իշխանական համակարգին:

– Բայց ինչպե՞ս ստացվեց, որ հանկարծ փոխվեց ամեն բան,– վրա բերեց Արշակը։

– Այն ժամանակ համոզված էի, որ եթե առաջարկեմ մարդկանց ազգայնացնել տնտեսությունը, վերացնել իրեն վարկաբեկած դեմոկրատական կառավարման համակարգը, վերացնել կապիտալիզմն ու ազատել շինականներին բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից, ապա սառույցը կշարժվի,– պատասխանեց Արքան։

Բայց մի փոքր դադարից հետո շարունակեց.

– Իսկ, եթե անկեղծ՝ ապա չգիտեմ։ Երևի՝ հրաշքով։ Մարդիկ վախենում են անորոշությունից։ Դեմ են որևէ փոփոխության, չգիտեն՝ ինչ կբերի այն։ Գերադասում են յոլա գնալ եղածով, քանի դեռ դանակը չի հասել ոսկորին։

– Ի՛մ Արքա, բայց մեր դեպքում հասել ու անցել էր, չէ՞,– փորձեց շարունակել Արշակը։

– Չգիտեմ... Եթե ավելի հեշտ լուծում կա, ինչո՞ւ պայքարել։

– Ի՛մ Արքա, արտագա՞ղթն ի նկատի ունես։

– Այո։ Նաև դրսից գումար ստանալով ապրելը։ Բայց չի կարելի մոռանալ իրենց արյան կանչով ամեն պրագմատիկ մոտեցում արհամարհող մեր հերոսներին։ Նրա՛նց ենք պարտական ամեն դրական տեղաշարժի համար։ Հենց նրանք են հրաշքը, իրենք գիտակցում են դա, թե՝ ոչ։ Նրա՛նք են շալակած տանում աշխարհը։

Ու Արքայի մտքով մեկ առ մեկ եկան ու անցան այն բոլորը, ում ջանքերի ու կյանքի գնով իրականություն էր դարձել Հայաստանի Թագավորությունը։

– Ազա՛տ ջան, տնեցիք ո՞նց են,– հանկարծ հիշեց Արքան։

Ազատի զառամյալ ծնողներն ու երկու մեծ եղբայրը գյուղում էին ապրում։

– Ի՛մ Արքա, լավ են,– մի փոքր շառագունելով, պատասխանեց Ազատը։

– Մենակ ո՞նց են անում,– շարունակեց Արքան։

Ազատի եղբայրների բոլոր տղաներն ու թոռները կամ ծառայում էին Արքայական զինված ուժերում, կամ՝ Արքայի թիկնապահ գնդում։

– Ոչինչ։ Շատ մենակ չեն։ Մեկ-մեկ, որ գնում ենք,

օգնում ենք։ Ձմեռվա խոտն առնում ենք, շարում։ Դժվարն էդ ա։ Մնացածն իրանք անում են։

– Իսկ առողջությունն՞ը,– հետաքրքրվեց Արքան։

– Ոչինչ, լավ են, փառք Աստծու։

– Ախր, որ բերես մոտդ, մեր բժիշկը կհետևի, կբուժի։

Ազատի ու իր ենթակա սպաների ընտանիքները՝ բոլորը, բնակվում էին Արքունիքում։

– Չէ՜, հերս հեչ չի ուզում, հազար անգամ եմ ասել։

– Ախր ձեզ մոտ ձմեռը ճամփեքը փակվում են... Գոնե ձմեռները որ գան... մեր բժշկի հետ զրույց կանեն, մենակ չեն լինի։

Այս ասելով, Արքան բան հիշեց.

– Հա, Ազատ ջան, մի հատ կապվիր Ամբերդ, ասա, որ գալիս ենք։ Շատ չանհանգստանան։

– Ի՛մ Արքա, հեսա,– ասաց Ազատն ու հեռակա կապի միջոցով կապվեց Ամբերդում գտնվող ջոկատի մարտիկների հետ։

– Խաժա՛կ, ես եմ։ Ամեն ինչ լա՞վ ա,– սկսեց Ազատն ու, դրական պատասխան ստանալուց հետո, շարունակեց,– բոլորին ասա, որ մոտենում ենք։ Մի հինգ-տասը րոպեից կհասնենք։ Դուք էլ պատրաստվեք դիմավորելու,– հրահանգներ տվեց Ազատն ու անջատեց կապը։

Մութն արդեն ընկնելու վրա էր։ Մեքենաները լեռնային ճանապարհով արագորեն մագլցում էին սարն ի վեր։ Դեպի ամրոց տանող ճանապարհն ահագին լայնացված էր, ամրոցի դիմացի կայանատեղը՝ նույնպես։ Ոչ միայն ամրոցը, այլ նաև ողջ շրջապատը հսկվում էր Համակարգի անվտանգության ծառայության զինված ուժերի կողմից։ Համարյա ողջ Արագած լեռը հայտարարված էր անվտանգության գոտի։ Ռազմավարական նշանակության գոտիներում ընդհանրապես արգելված էր որևէ մեկի մուտքը։

Մեքենաները շուտով մոտեցան առաջին պահակակետին։ Պահակակետի սպաներն իսկույն ճանաչեցին Արքայի մեքենաները։ Սակայն, երբ մոտեցան, Ազատը հրամայեց կանգնեցնել մեքենաները։ Դուրս եկավ ու սկսեց քայլել դեպի իրեն եկող սպան։ Պահակակետի բոլոր սպաներն իսկույն ճանաչեցին Ազատին։ Հավաստիանալով, որ ամեն ինչ կարգին է, պահակակետի պատասխանատուն հրամայեց բացել արգելաձողը։

Երբ մեքենաների շարասյունն անցնում էր բարև բռնած սպաների շարքերի միջով, Արքան ու Արշակը կիսաբաց պատուհանից դուրս նայեցին, իրենք էլ բարև բռնած։

Երկրորդ պահակակետն անցան առանց կանգնելու։ Սպաներն, արդեն բարև բռնած, շարվել էին ճանապարհի երկու կողմերում։ Իսկ մի քանի րոպե անց, երբ մոտենում էին ամրոցին, նկատեցին ամրոցի մուտքի մոտ, ճանապարհի երկու կողմերում շարված, ամրոցի պահապան անվտանգության գնդի սպաներին՝ նույնպես բարև բռնած։

Երբ մեքենաներն անցան պահակակետն ու մոտեցան ամրոցին, Արքան նկատեց, որ իրեն դիմավորելու է դուրս եկել թագուհին՝ արքայազնների ու արքայադստեր հետ միասին։ Դրսում էր նաև Արշակի ողջ ընտանիքը, Արքայի անձնական բժիշկն իր երկու օգնականների հետ միասին, ամրոցի սպասավորների ու աշխատողների ողջ կազմն ու գիտաշխատող անձնակազմը։

Երբ մեքենաները կանգ առան, Ազատն արագորեն դուրս եկավ մեքենայից ու բացեց Արքայի կողմի դուռը։ Երբ Արքան դուրս եկավ մեքենայից, նրան ընդառաջ վա-

զեց արքայադուստրը։

– Վա՜յ, Անուշ ջան։ Կյա՜նքս,– ասաց Արքան ու գըրկեց նրան։

– Պա՛պ, մորի բերե՞լ ես,– միանգամից հարցրեց Անուշը։

Արքայի մտքից թռել էր մորին, բայց հիշեց, որ մնացել էր մյուս մեքենայի մեջ։

– Հա, քաղցր ջան, բայց մնաց մյուս մեքենայի մեջ։ Այ, որ քնես, զարթնես, տղերքը բերած կլինեն։

Անուշը փաթաթվեց հորն ու միասին մոտեցան թագուհուն։ Թագուհին խիստ լարված էր անցկացրել ողջ օրը։ Արքան չափազանց վտանգավոր բան էր արել։ Բոլորի դեմքին խիստ անհանգստություն կար։ Բայց Արքային ողջ և առողջ տեսնելով՝ թագուհին միանգամից հանգստացավ։ Մի ջերմ ժպիտ շողաց նրա դեմքին։ Ակամա մոտեցավ ու փարվեց Արքային։ Սա շատ անսովոր էր բոլոր ներկաների համար։ Բայց կարելի էր հասկանալ։ Արքան, իրոք, շատ վտանգավոր բան էր արել։

Մի քանի վայրկյան այդպես մնալուց հետո, Արքան սկսեց կողքերը նայել։

– Աննա, գնանք ներս։ Կպատմեմ...

Թագուհին իսկույն հետ քաշվեց ու միասին մոտեցան արքայազններին։

– Պապ, ի՞նչ էր եղել,– հորը դիմեց մեծ արքայազնը։

– Հեչ, Տիգրա՛ն ջան, կպատմեմ։ Ներս գնանք։ Ծարավ եմ։ Ամբողջ օրը ջուր չեմ խմել։ Հետո կնստենք, մի բան կուտենք։ Սեղանի վրա կպատմեմ։

Բոլորի սիրտը վառվում էր հետաքրքրությունից։ Նույնիսկ Արշակն ամեն ինչ չգիտեր։ Բոլորն էլ անհամբեր սպասում էին, թե ինչ են լսելու։

Երբ Արքան, արքայադուստրը գրկած, թագուհու և արքայազնների հետ միասին ներս մտավ ամրոց, նրանց ուղեկցում էին Արքայի թիկնապահ գնդի մարտիկները, Ազատն ու Արշակը։ Նրանց բոլորին հետևում էին Արքայի անձնական բժիշկն՝ իր օգնականների հետ միասին, սպասարկող անձնակազմն ու գիտաշխատողները։ Արքան, արքայադուստրն ու թագուհին բարձրացան իրենց հարկաբաժինը։ Արքայի թիկնապահ գնդի մարտիկներից երկուսը

հերթապահում էին հարկաբաժնի դռան մոտ։ Բոլորը ցրվեցին իրենց սենյակները։ Շուտով ընթրիքն էր։

***

Ամրոցի պատերից ներս վերակառուցված ու նորակառույց հարկաբաժիններն էին։ Ամենավերևում արքայական ընտանիքի սենյակներն էին, նրանից ներքև՝ հյուրերի ու սպասարկող անձնակազմի սենյակները, նաև՝ խոհանոցն ու ճաշասենյակը։ Բայց այս անգամ ընթրիքը մատուցվելու էր դրսում՝ նորակառույց հարկաբաժինների տանիքում։ Տանիքը հարթ էր, ներսից հազարաշեն ու հողածածկ։ Ամրոցի աշտարակներից մեկի վրա ծածանվում էր Արքայական Համակարգի դրոշը։ Ստորին հարկաբաժնում, նաև ամրոցի պարսպի ու աշտարակների ներսում, գիտաշխատողների, ամրոցի անվտանգության գնդի մարտիկների ու ամրոցի վերակառուցման աշխատանքների մասնակիցների սենյակներն էին։ Իսկ ողջ նկուղային հարկը տրամադրված էր Արքայի գաղտնի ծրագրի շուրջ աշխատանքներին։ Այնտեղ օրն ի բուն իրենց գիտական փորձերի ու փորձարկումների վրա էին ճգնում մեր ֆիզիկոս տղաները՝ Համակարգի ամենապայծառ գլուխների մի նվիրյալ խումբ։

Արքան անհամբերությամբ սպասում էր զրուցելու նրանց հետ։ Երկար ժամանակ էր՝ ոչ մի լուր չուներ նրանց գործերի վիճակից։

Ամառային իրիկուն էր։ Արագածի գագաթից փչում էր մեղմ հովը։ Ամրոցի հարկաբաժինների հարթ տանիքի վրա տեղ-տեղ երևում էին վերին սենյակների ապակեպատ երդիկները։ Տանիքին դեռ կանաչ խոտ կար։ Ընթրիքի սեղանը գցվել էր տանիքի վրա կապած կտավե ծածկի տակ։ Ներսը լուսավորում էին հաստատուն հոսանքի էլեկտրական լապտերները։ Ողջ ամրոցին էլեկտրական հոսանք էր մատակարարում Նիկոլա Տեսլայի սկզբունքով ամրոցի հարևանությամբ կառուցված փոքրիկ էլեկտրակայանը։ Ամրոցի աշտարակներից մշտական հսկողություն էին իրականացնում ամրոցի պահապան անվտանգության գնդի մարտիկները։

Ընթրիքի էին հավաքվել Արշակի ընտանիքը, գիտաշխատող անձնակազմն ու, իհարկե, Արքայի անձնական

բժիշկն՝ իր երկու օգնականների հետ միասին։ Այնտեղ էին նաև արքայազնները։ Երբ Արքան թագուհու և արքայադստեր հետ միասին վեր բարձրացավ, Ազատի ու թիկնապահ գնդի մարտիկների ուղեկցությամբ, բոլորը ոտքի կանգնեցին՝ բարև բռնած։

– Բարին ընդ ձեզ, ի՛մ եղբայրներ ու քույրեր,– ասաց Արքան ու թագուհու և արքայադստեր հետ միասին գրավեց իր տեղը սեղանի գլխին՝ բարձր մեջքով բազմոցին։

Ընթրիքն անցավ ազատ ու անբռնազբոս մթնոլորտում։ Սկզբում Արքան պատմեց, թե ինչպես ստացվեց, որ կանգնեցին ու մտան շուկա, հետո՝ ինչպես խոսքի բռնվեց մորի վաճառող կնոջ հետ, ինչպես հետևեց ոճրագործների պարագլխին ու հայտնաբերեց ավազակախումբը, ինչ զայրույթով բացահայտեց նրանց հետ շուկայի վերահսկողությունն իրականացնող ոստիկանի կապը...

Արքայից հետո Արշակը շարունակեց պատմությունն ու հասցրեց այն իր ավարտին։ Ներկաները ցնծությամբ ընդունեցին Արքայի դատավճիռը։ Նրանք համաձայն էին, որ Արքան արդար դատավճիռ էր ընդունել։

Բոլորը գիտեին Արքայի մշտական համոզմունքը՝ որ չէր կարելի թույլ տալ ոճրագործության որևէ դրսևորում։ Չնայած, նախկինում շատ շատերը թյուրիմացաբար հավատում էին, թե ոճրամիտ ու ոճրագործ մարդկանց ներկայությունն ու արարքները, ընդհուպ մինչև հենց իրենք՝ ոճրագործները, համատիեզերական ներդաշնակության բաղկացուցիչ մասն են, նույնիսկ՝ հենց Աստծո շնորհն են, քանի որ ամեն ինչ տիեզերքում Աստծուց է, բայց Արքան միշտ այլ կարծիքի էր եղել։ Նա միշտ համոզված էր եղել, որ ստորակարգ արարածների ամեն մի արարք, նույնիսկ՝ ներկայություն, իր բացասական ուղերձն է տարածում ու ապականում շրջապատը, որ դրանք՝ այդ ոճրագործները, միայն խանգարում են, որ դրանց հարկավոր է միայն վերացնել այնպես, ինչպես մոլախոտերից մաքրում են շրջապատը։ Այնպես, ինչպես քաղհանում են բանջարանոցը։

***

Ընթրիքը համարյա ավարտված էր, երբ առաջատար ֆիզիկոսներից մեկը՝ Ռաֆայել Իշխանյանը, դիմեց Արքա-

յին.

– Ի՛մ Արքա, թույլ կտա՞ս մի բան ասել։

Ռաֆայելն Արքայի տարիքի մարդ էր՝ բարալիկ մարմընով, բարձրահասակ, լայն ճակատով, սպիտակ մորուքով ու երկար սպիտակ մազերով։ Նա Արքայի գաղտնի ծրագրի մեջ ընդգրկված առաջին ֆիզիկոսներից էր։

– Իհարկե, խնդրեմ, եղբա՛յր Ռաֆայել,– խկույն արձագանքեց Արքան։

– Ի՛մ Արքա, բայց հինավուրց խոսք կա՝ «Իմաստունը չի հակադրվում չարին»։ Նույնիսկ գիտությունն է հաստատում, որ չարի ուժերին հակադարձելն ավելի է հզորացնում նրանց,– արտահայտվեց Ռաֆայելը։

Արքայի համար անակնկալ էր Ռաֆայելի հարցը։

– Եղբա՛յր Ռաֆայել, հակադարձելը՝ գուցե, բայց տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե չարին հակադրվելու կամ հակադարձելու, այլ նրան վերացնելու հետ...– կիսակատակ արձագանքեց Արքան։

Ռաֆայելը չէր սպասում նման պատասխանի։ Արքայի կիսակատակ արձագանքը Ռաֆայելի սրտովը չէր։ Նա Արքայից լուրջ պատասխան էր ակնկալում։ Արքան, տեսնելով Ռաֆայելի դժգոհ դեմքը, շարունակեց.

– Հուսով եմ՝ չես առաջարկում, որ պաշենք նրանց ու դնենք գլխներիս, կամ աչք փակենք նրանց վրա, շրջանցենք, չնկատենք, թույլ տանք, որ երես առնեն, բազմանան, ոհմակ կազմեն, իշխանության հասնեն ու ճնշեն պարկեշտ մարդկանց, թունավորեն նրանց կյանքն ու խանգարեն։

Ռաֆայել Իշխանյանը պատասխան չուներ։ Նա ու նրա պես շատ մտավորականներ դեռ համոզված էին, թե չարի ուժերը նույնիսկ անհրաժեշտություն են տիեզերքի հավասարակշռությունը պահելու համար, որ չի կարելի նույնիսկ մտածել չարի ուժերին վերացնելու մասին։

– Ի՛մ Արքա, բայց հնարավոր չէ առանց նրանց,– փորձեց շարունակել Ռաֆայելը։

– Ա՜, իհարկե։ Իհարկե, հնարավոր չէ։

Բոլորը տարակուսած Արքային էին նայում։ Նրանք ամեն ինչ թողել ու քարացել էին՝ սպառիչ մեկնաբանության ակնկալիքով։ Արքան չէր կամենում ավելին ասել,

բայց Ռաֆայել Իշխանյանն ու բոլոր ներկաները դեռ համառորեն սպասում էին։

– Ի՛մ Արքա, չեմ հասկանում։ Մի կողմից համաձայն ես, որ հնարավոր չէ առանց չարի, իսկ մյուս կողմից ասում ես՝ պետք է վերացնե՞լ նրանց... Չեմ հասկանում։ Եթե պետք է վերացնել չարը, հապա էլ ինչի՞ համար է այն։

– Հենց՝ վերացնելու,– Արքան այլևս չկարողացավ թաքցնել ճշմարիտ պատասխանը։

Բոլորն իսկույն ծիծաղեցին՝ դա կատակ ընդունելով։ Ռաֆայելը՝ նույնպես։ Բայց նա շատ արագ սթափվեց։ Հասկացավ, որ Արքան չէր կատակում։

– Ի՛մ Արքա, կատակո՞ւմ ես։

– Ամենևին։

– Ի՛մ Արքա, այդ դեպքում բան չեմ հասկանում։ Իսկ՝ իմաստնությո՞ւնը, որ չի կարելի հակադրվել չարին։

Մի փոքր դադարից հետո Արքան փորձեց պատասխանել Իշխանյանի հարցին.

– Եղբա՛յր Ռաֆայել, նշածդ իմաստնությունը կոչում է միայն չհակադրվել։ Այսինքն՝ չփորձել բանավիճել, չփորձել ուղղել, կարգի հրավիրել, ուրիշ՝ ոչինչ։ Իսկ ինչո՞ւ չբանավիճել, ինչո՞ւ չփորձել կարգի հրավիրել։ Որովհետև՝ օգուտ չունի։

Արքայի մեկնաբանությունն, իրոք, անակնկալ էր։

– Այդ դեպքում ի՞նչ անել։

– Եղբա՛յր, Ռաֆայել, ա՛յ, դու ազնիվ մարդ ես։ Հրաշալի երեխաներ ունես, թոռներ։ Դու թույլ կտա՞ս, օրինակ, որ թոռներդ ընկերություն անեն ոճրամիտ խուժանի հետ, տուն հրավիրեն նրանց։ Դու՝ ինքդ, անձամբ ընկերություն կանե՞ս, տուն կհրավիրե՞ս հանցամիտ ու հանցագործ մեկին։

Ռաֆայելը լուռ էր։

– Չես անի։

– Ի՛մ Արքա, բայց ոչ մի տեղ չկա չարին վերացնելու կոչ անող որևէ իմաստնություն։

– Ի՞նչ կարիք կա իմաստնանալ մի հարցի շուրջ, որը պարզից էլ պարզ է։

Ռաֆայելը չարին չընդդիմանալու, չարին չհակառակ-

վելու գաղափարի ամենանվիրյալ հետևորդներից էր։ Նրան շատ դժվար էր համոզել հակառակի մեջ։

– Բայց, ի՛մ Արքա, ֆիզիկայում հայտնի է ռեզոնանսի երևույթը, երբ որևէ բանին ուշադրություն դարձնելը, առճակատվելը, պայքարելը ավելի է հզորացնում այն։

Ռաֆայելի անդրդվելի համառությունը ստիպելու էր Արքային՝ բացել բոլոր փակագծերը, բայց դա չէր կարելի անել կանանց ու երեխաների ներկայությամբ։

– Ուշ է, եղբայրնե՛ր։ Եկեք մեր կանանց ու երեխաներին թույլ տանք անցնել քնելու,– առաջարկեց Արքան։

Արշակն իսկույն մի հայացք գցեց իր կնոջ՝ Մարինեի, կողմը։ Մարինեն անմիջապես հասկացավ, որ հարկավոր էր վեր կենալ, աղջիկներին վերցնել ու հեռանալ սեղանից։

Արքան շրջվեց դեպի արքայադուստրը։

– Քա՛ղցր ջան, ուշ է։ Գնա քնելու։ Առավոտյան կըզարթնես ու կտեսնես, որ տղաները բերել են մորին։

Այս ասելով՝ Արքան համբուրեց Անուշի ճակատը։ Անուշը փարվեց հորը։ Ինչպես միշտ՝ այտ այտի տվեցին հայր ու աղջիկ քնելուց առաջ։ Կանայք թագուհու գլխավորությամբ վեր կացան սեղանից։ Բոլորը ոտքի կանգնեցին ճանապարհելու նրանց աջ ձեռքի բռունցքներն արևահյուսակին։ Կանայք բարի գիշեր մաղթելով, իջան իրենց հարկաբաժինները՝ երեխաների հետ միասին։

***

Կանանց հեռանալուց հետո, Արքան դիմեց Ռաֆայելին՝ չցանկանալով անպատասխան թողնել նրա հարցը։

– Ի՛հարկե, եղբա՛յր Ռաֆայել։ Լիովին համամիտ եմ, որ չարի դեմ պայքարելը՝ ուշադրություն դարձնելը, առճակատվելը, բանավիճելը հզորացնում են նրան։ Հենց դրա համար էլ չի կարելի պայքարել։ Պետք է միանգամից վերացնել։

Ռաֆայելը տարակուսած էր դեռ։

– Հասկանում ես՝ անուղղելի է չարը։ Չարին անօգուտ է ուղղելը, խնդրելը, հորդորելը, նույնիսկ բանտարկելը, հուսալով, թե կփոխվի, և այլն։ Պետք է միանգամից վերացնել։ Այնպես, ինչպես աղբն են դուրս հանում տնից

ու ոչնչացնում, մոլախոտն են քաղհանում ու տրորում։ Այլապես չարը կապականի շուրջն ու, իր վիբրացիաները տարածելով, կփչացնի մյուսներին։

Վիբրացիաների հիշատակումը կարծես որոշ ազդեցություն ունեցավ։ Ռաֆայելը մտքերի մեջ ընկավ, բայց դժվար էր հրաժարվել տարիներ շարունակ փայփայած համոզմունքից։

– Եղբա՛յր Ռաֆայել, չարին չհակառակվելու պատգամը երբեք էլ չի նշանակել հանդուրժել այն։ Ինչպես շատ պատգամներ, սա ևս սխալ է մեկնաբանված ու հասկացված, որը շատ թյուրիմացությունների, նույնիսկ՝ համատարած դժբախտությունների է բերել,– շարունակեց Արքան։

Մի փոքր շունչ առնելուց հետո, Արքան փորձեց վերստին ընդգծել իր միտքը.

– Էլի եմ ասում՝ չարին չհակառակվել, կամ չհակադրվել, ինչպես ասացիր, չի նշանակում հանդուրժել այն։ Մեջբերածդ իմաստնությունը միայն նշանակում է չվիճել չարի հետ, չփորձել ուղղել նրան, չփորձել կարգի հրավիրել։ Խոսքն, իհարկե, բացահայտ ու անուղղելի չարի մասին է։ Բայց նկատենք, որ սեփական զավակներին, ազգակիցներին կարելի է, նույնիսկ անհրաժեշտ է կրթել, ուղղել, կարգի հրավիրել, անգամ՝ պատժել։

– Ի՛մ Արքա, բայց տվյալ դեպքում դու երկու գերդաստանի որձատման հրաման ես տվել,– փորձեց ընդդիմանալ Ռաֆայելը՝ ակնհայտորեն ակնարկելով այդ գերդաստանների հպատակ լինելու փաստը։

Արքան մի փոքր նեղն ընկավ։ «Ասե՞լ, թե՞ չասել»,– մտածում էր նա։ Բայց զրույցն այնքան էր խորացել, որ արդեն հնարավոր չէր կանգնել կես ճանապարհին։

– Որոշումս կարող է հակասական թվալ... Սակայն բանն այն է, որ նախ նման ոճրագործներ ծնած գերդաստանն ընդհանրապես իրավունք չունի ապրել ու իր ներկայությամբ ապականել մյուսներին։ Իսկ, եթե ի նկատի ունես նրանց ազգային պատկանելությունը, ապա նման ոճրագործները չեն կարող մեր ազգից լինել։ Ամեն դեպքում՝ տեղ չունեն մեր մեջ։

– Ի՛մ Արքա, հասկանում եմ միտքդ։ Երիտասարդ ժամանակ ես նույնպես կիսում էի համոզմունքդ, բայց հետո

փոխվեցի։ Ավելի մարդասիրական աշխարհայացքներ եկան ու պարուրեցին միտքս։

– Գիտեմ։ Շատ դժվար է ընդդիմանալ այդ «մարդասիրական» կոչված գաղափարներին։ Չնայած՝ տեսար, չէ՞, որ դրանք ամենևին էլ գաղափարներ չեն, այլ սխալ մեկնումներ են միայն։

– Ի՛մ Արքա, բայց ինչպե՞ս տարբերել անուղղելի, անհույս չարին։

– Շատ լավ հարց տվեցիր։ Հին իմաստնություն կա՝ «Իրենց գործերով կճանաչեք նրանց»։ Խոսքերը կարող են խաբուսիկ լինել, գործերը՝ ոչ։

– Ի՛մ Արքա, բայց մարդ, ընդհանրապես, սխալական է, ինչպես ասում են։ Կարող է մեկ անգամ սխալվել, կամ՝ երկու։ Նույնիսկ ամբողջ կյանքում կարող է սխալվել,– փորձեց հակադարձել Ռաֆայելը։

– «Ամբողջ կյանքում»-ը արդեն շատ ասացիր։ Պարկեշտ մարդը չի կարող ամբողջ կյանքում «սխալվել»։ Ամբողջ կյանքում «սխալվում են» անուղղելի չար մարդիկ,– վրա բերեց Արքան։

– Բայց կա՞ այդպիսի բան՝ «չար մարդ», թե՞ դա միայն մեր ընկալումն է,– անկեղծորեն հետաքրքրվեց Ռաֆայելը։

– Շատերի մոլորությունն է, ի դեպ, թե չկան չար մարդիկ, թե կան միայն չար գործեր և այլն։ Թե՝ պետք է ատել միայն չարագործությունը, բայց չի կարելի ատել չար մարդուն։ Թե՝ նրան պետք է միայն խղճալ և այլն։ Ասա, տեսնեմ՝ ըստ ֆիզիկայի օրենքների, կա՞, արդյոք, ազատ էներգիա առանց այդ էներգիան կրող նյութի։ Լույսն ինքը և՛ մասնիկային, և՛ ալիքային հոսք է, ճի՞շտ է։ Կարելի՞ է, արդյոք տարանջատել նյութը էներգիայից, նյութականը՝ հոգևորից։ Վերջապես կա՞ արդյոք վիբրացիա՝ առանց վիբրացիայի աղբյուրի։ Այսինքն՝ կա՞ արդյոք արարք՝ առանց կատարողի։

Ռաֆայելը մտքերի մեջ էր։

– Ոչ, իհարկե,– նրա փոխարեն պատասխանեց Արքան ու շարունակեց։– Ու, եթե արարքը չար է, ապա ինչպե՞ս կարող է կատարողը չարը չլինել։ Ինչպե՞ս կարող է

վատ վիբրացիա ճառագել, օրինակ, լավ աղբյուրից։ Ամեն վիբրացիա իր աղբյուրի հետևանքն է ու պատճեն։ Ընդունում եմ, որ մարդիկ կարող են սայթաքել, սխալվել։ Բայց, երբ մարդը չի զղջում, չի փորձում ուղղել իր սխալն ու հետ կանգնել արատավոր ճանապարհից, այն էլ՝ ողջ կյանքի ընթացքում, մանավանդ, երբ արարքը կանխամտածված է ու շարունակական, դա արդեն անուղղելի չարագործություն է,– ասաց Արքան։

Ռաֆայելը դեռ մտքերի մեջ էր, բայց շուտով սթափվեց ու փորձեց ևս մի պարզաբանում ստանալ.

– Ի՛մ Արքա։ Բայց կարելի՞ է, արդյոք, կոտորել մի ողջ գերդաստան միայն, որովհետև նրա զավակներից մեկը չարագործ է։

– Պտուղը ծառից հեռու չի ընկնում, եղբա՛յր Ռաֆայել։ Եթե չկտրես ծառը, ապա կշարունակի ոճրագործներ ծնել ու դրանցով լցնել աշխարհը։ Հին իմաստնություն կա՝ «Եթե ծառը բարի պտուղ չի տալիս, ապա կտրում են այն ու այրում»։

– Ի՛մ Արքա, բայց մի քիչ դաժան չի՞,– վրա բերեց Ռաֆայելը։

– Իսկ դաժան չի՞ անմեղ մարդկանց, մանավանդ՝ երեխաներին, փոքր տարիքից սկսած մատնել չարի կործանարար վիբրացիաների ճնշմանը, անհամաչափ ստրեսի մատնել նրանց ազնվասիրտ հոգիները։ Դրանով, ի դեպ, խաթարելով նրանց ուսումնառությունը։ Մի՞թե դաժան չի,– արձագանքեց Արքան։

Ռաֆայելը պատասխան չէր գտնում։ Անհնար էր չհամաձայնվել Արքայի փաստարկների հետ։

– Ի՛մ Արքա, ներող եղիր։ Ուշացումով, բայց պատասխանեմ հարցիդ՝ իհարկե, թույլ չեմ տա իմ երեխաներին մտերմանալ ոճրագործ խուժանի հետ, կամ՝ տուն բերել նրանց։ Ես ինքս, իհարկե, չեմ ընկերանա ոճրագործի հետ, չեմ բերի տունս։

– Իսկ, եթե հայտնաբերել ես, որ արդեն տանդ են ու չեն ուզում գնալ... Տիրություն են անում, իշխանություն բանեցնում... Ի՞նչ կանես։ Կհանդուրժե՞ս։

– Ի՛մ Արքա, ճիշտ ես։ Չեմ հանդուրժի։

– Տեսնո՞ւմ ես, եղբա՛յր Ռաֆայել։

Բոլորը լուռ էին։

– Փոխարենը կուզես, որ երեխաներդ իրենց պես պարկեշտ ընկերներ ունենան։ Նույնիսկ՝ իրենցից պարկեշտ, այնպես չէ՞։

– Ի՛մ Արքա, այո։ Նույնիսկ՝ իրենցից պարկեշտ։

– Ինչո՞ւ,– անմիջապես հարցրեց Արքան։

Բոլորը կլանված հետևում էին երկխոսության ընթացքին։

Պատասխանի չսպասելով՝ Արքան շարունակեց.

– Որպեսզի երեխաներդ, շփվելով նրանց հետ, ավելի՛ բարձրանան, առաջադիմեն։ Տիեզերքում անընդհատ շարժում կա։ Ով տեղում է դոփում, ապա հետ է ընկնում։ Ի դեպ, Արարչի համար այնքան էլ կարևոր չէ, թե ինչ բարոյահոգևոր աստիճանի վրա ես։ Նրա համար ավելի կարևոր է, թե ինչ արագությամբ ես առաջադիմում։ Իսկ, ընդհանրապես, չի կարելի ուսումնառության ընթացքում ուսանողին մատնել ստրեսի՝ կործանարար վիբրացիաների ճնշումներին։ Ուսանողին քննության կարելի է մատնել միայն ուսումն ավարտելուց հետո, ոչ՝ ընթացքում։ Նկատենք նաև, որ նույնիսկ քննության սրահն է շրջափակված, որպեսզի ո՛չ օժանդակ միջամտություն լինի, ո՛չ էլ՝ խանգարող։

– Ի՛մ Արքա, ընդունո՞ւմ ես ուրեմն քննության անհրաժեշտությունը,– փորձեց շարունակել Ռաֆայելը։

– Ռաֆայել, չլինի՞ թե կրկին ակնարկում ես չարի անհրաժեշտության մասին։

Ռաֆայելը մի փոքր կախեց գլուխը։

– Եղբա՛յր Ռաֆայել, չարի ուժերը անհրաժեշտ են միայն մեր վերջին փորձության համար։ Դա, պատկերավոր ասած՝ միայն փիլիսոփայության դոկտորի աստիճանի քննություն է։ Ուսումնառության ողջ ընթացքում չարի ուժերի անհրաժեշտությունը չկա։ Այդ ընթացքում չարի ուժերը միայն խանգարելու են։

– Ի՛մ Արքա, ուզում ես ասել, որ ուսման ողջ ընթացքում որևէ փորձության կարիքը չկա՞,– հարցրեց Ռաֆայելը։

– Կա։

– Առանց չարի ուժերի՞։

– Նման բան։

– Ի՛մ Արքա, չեմ հասկանում։

Արքան մի փոքր շունչ առավ ու շարունակեց.

– Մարդն ունի երկակի բնույթ՝ մի կողմից կենդանական, իսկ մյուս կողմից՝ աստվածային։ Կամ, այլ կերպ ասած, մարդու մեջ կա երկու էակ՝ բնական մարդ և բանական մարդ։ Այ, հենց այս երկուսի միջև էլ ընթանում է պայքարը մարդու ողջ կյանքի ընթացքում։ Եվ դա մարդու համար շատ էլ բավարար փորձություն է։ Կարիքը չկա դրսից չարի ուժերի լրացուցիչ ճնշման։ Մարդու բնական կեսի նախանձը, գոռոզությունը, էգոիզմը, ագահությունը, իշխելու մարմաջը և այլն, հսկողության տակ պահելը շատ շատերի համար նույնիսկ չափից դուրս ծանր փորձություն է։ Բայց, երբ այս փորձությանը գումարվում է դրսից չարի ուժերի ճնշումը, ապա մարդու գործը ծայրաստիճան ծանրանում է։ Չարի ուժերի ազդեցությունը խանգարում է մարդուն անցնել իր իսկական փորձությունը։ Իսկ, եթե հաշվի առնենք չարի ուժերի ճնշումը մարդու վրա հենց մանկությունից սկսած, ապա կտեսնենք, թե ինչպես է խաթարվում մարդու կրթությունը։ Հետո զարմանում ենք՝ խեղված սերունդ տեսնելով։ Եղբա՛յր Ռաֆայել, չարի ուժերի կողմից արտաքին ճնշումը մարդուն միայն կխանգարի, թույլ չի տա նրան արդար պայքարում դիմակայել իր ներքին բնական մարդուն։ Հետևաբար, հարկավոր է հեռու պահել չարի ուժերին։

– Ի՛մ Արքա, բայց արդյո՞ք առաջընթացը չի կանգնի, երբ բոլորը հավասարապես լավը լինեն,– վրա բերեց Ռաֆայելը։

– Ռաֆայե՛լ, նախ՝ չկա ավելի ջերմ ու գեղեցիկ բան, քան երբ բոլորը լավն են։ Բայց դու արդեն վախենում ես մի բանից, որին մարդկությունը դեռ չի հասել։ Ու եթե այդքան հետաքրքրվում ես իմանալ՝ կկանգնի՞ առաջընթացը, թե՝ ոչ, ապա պետք է փորձել՝ հասնել ու տեսնել, այդպես չէ՞։ Ոչինչ չի կարող կասեցնել գիտնականի քո հետաքրքրասիրությունը։ Թե՞ սխալվում եմ...

Ռաֆայելը դեռ մտքերի մեջ էր։

– Իսկ, եթե պատասխանեմ հարցիդ, ապա՝ մի՛ վախենա, չի կանգնի։ Առաջընթացին էլ վերջ չկա։

– Ի՛մ Արքա, բայց չէ՞ որ տիեզերքի հավասարակշռության համար անհրաժեշտ է մութ և լուսավոր ուժերի ներդաշնակությունը։

– Ա՜, Յին ու Յանի տեսությո՞ւնն ի նկատի ունես։

– Այո։

– Եղբա՛յր Ռաֆայել, Յին ու Յանը երբեք էլ չարի ու բարու գաղափարը չեն ունեցել։

Ռաֆայելը զարմացավ։

– Դա հիմնականում իգականի ու արականի միասնության մասին է։ Իգականն ու արականը չեն կարող առանց միմյանց։ Ամեն տղամարդու կին է պետք, այնպես, ինչպես ամեն կնոջ՝ տղամարդ։ Ամեն պրոտոնին էլեկտրոն է պետք և այլն։ Յին ու Յանի տեսությունը նյութականի ու հոգևորի միասնության մասին է։ Չկա հոգևոր առանց նյութականի։ Յին ու Յանի տեսությունը նաև կյանքի փուլերի մասին է՝ աճի, զարգացման ու անկման՝ մահվան, մասին։ Այն վիբրացիոն դաշտում բարձրի ու ցածրի, սառի ու տաքի ներդաշնակության մասին է։ Յին ու Յանի տեսությունը չի ընդգրկում չարը։ Չարը ներդաշնակության բաղադրիչ չի։ Ներդաշնակությունը չարի ու բարու խառնուրդը չի։ Չարի կարիքը չկա ներդաշնակության հասնելու համար։ Ներդաշնակությունը հենց չարի բացակայությունն է։ Բայց՝ մի վախենա։ Չարի պակասություն երբեք չի լինի։

– Ի՛մ Արքա, ինչո՞ւ ես այդպես կարծում,– անհանգստացավ Ռաֆայելը։

– Եղբա՛յր Ռաֆայել, մեր՝ Արարչական, գեներն ինքնամաքրվելու, նաև՝ ինքնակատարելագործվելու զարմանահրաշ հատկություն ունեն։ Մի հրաշքով կարողանում են առանձնանալ տականքից՝ ժամանակի ընթացքում կարողանում են աստիճանաբար մաքրվել պատահական խառնուրդներից, նաև՝ ազատվել սեփական արատներից ու պակասություններից։ Հետևաբար, մի կողմում առանձնանում են թոմդ Արարչական գենակիրները՝ աստվածամարդիկ, իսկ հակառակ կողմում՝ տականքը։ Տիեզերքը կարծես միջակություններ չի հանդուրժում, կատարելության է ձգտում՝ ներդաշնակության։ Տականքը միայն խախտում, խաթարում է ներդաշնակությունը։ Այն իր վիբրացիաներով թույլ չի տալիս ներդաշնակության հասնել։ Դա է պատճա-

ոը, որ հարկավոր է մեկուսացնել նրան ու թույլ չտալ, որ թունավորի շրջապատը, որպեսզի չխաթարվի ներդաշնակությունը, որ մարդը կարողանա անարգել դիմակայել իր ներքին բնական մարդուն, կարողանա առաջադիմել, դրսևորել իր ողջ Արարչական ներուժը: Ներդաշնակ՝ երջանիկ, հասարակություն հնարավոր է չարի վիբրացիաների բացակայության պայմաններում միայն: Ասածս հիմնականում այն է, որ ներսի բնական մարդուն հսկողության տակ պահելը հենց այն փորձությունն է, որ պիտի անցնենք: Չարի միջամտությունը միայն խանգարելու է, այնպես, ինչպես վնասակար բակտերիաները, կամ մեր ներսի թունավոր թափոններն են խանգարում մեր մարմնի ներդաշնակ գործունեությանը:

– Ի՛մ Արքա, փաստորեն, բնական մարդու հատկությունները չարի բավարար դրսևորումնե՞ր ես համարում...

– Մասամբ: Բնական մարդու ոչ բոլոր բաղադրիչներն են չարիք: Չարն այն է, երբ մարդ գիտակցաբար, միտումնավոր ու կշռադատված կերպով ուրիշներին վնասելու ընտրություն է կատարում: Օրինակ՝ ինքնասիրությունն ու ինքնապահպանման բնազդը, որ բնական մարդու բաղադրիչներից են, կամ նույնիսկ նախանձը, կամ՝ դիմացինից առաջ անցնելու, նրան ինչ-որ բանում գերազանցելու մղումը, ունեցածով չբավարարվելու, նույնիսկ իշխելու մարմաջն ինքնին չարիք չեն: Չարիք է, երբ մարդ գիտակցաբար իր այդ մղումներն ուզում է բավարարել ուրիշի հաշվին՝ վնասելով նրան:

– Ի՛մ Արքա, լավ չհասկացա,– շփոթվեց Ռաֆայելը:

– Ինքնապահպանման մղումն, օրինակ,– շարունակեց Արքան:– Վատ չի, երբ մարդ հոգ է տանում ինքն իր մասին, ձգտում է առողջ և ուժեղ լինել, թաց տեղ չպառկել, չհիվանդանալ և այլն: Վատ չի, երբ մարդ նույնիսկ ծուլանում է մի քիչ, ուզում է քնել, կազդուրվել: Չարիք է, երբ այդ ամենն անում է իր մերձավորին միտումնավոր կերպով վնաս պատճառելով, ընտանիքում իր հարազատների հանդեպ իր պարտականություններն արհամարհելով:

Կամ՝ նախանձն ու դիմացինից առաջ անցնելու մղումը: Վատ չի, երբ մարդ ասենք՝ բարի նախանձ ունի, որ, տեսնելով դիմացինի ձեռքբերումները մտավոր ու հոգևոր

ոլորտներում, մղում ունի գերազանցել նրան, անցնել ավելի առաջ։ Բայց չարիք է, երբ մարդ նախանձից դրդված դիմացինին վնասելու ընտրություն է կատարում։

Կամ՝ ունեցածով չբավարարվելու մղումն, օրինակ։ Վատ չի, երբ մարդ չի բավարարվում իր ձեռք բերած գիտելիքով ու ձգտում է ավելին ունենալ, բայց չարիք է, երբ մարդ անհրաժեշտից ավել նյութական բարիքներ կուտակելու ընտրություն է կատարում, մանավանդ, երբ դա անում է ուրիշներին շահագործելու միջոցով, կողոպտելով նրանց, կամ՝ ամայացնելով մայր բնությունը։

Կամ՝ իշխելու մղումն, օրինակ։ Վատ չի, երբ մարդ իշխելու մղում ունի։ Օրինակ՝ այնպես, ինչպես նահապետն է իշխում իր տոհմի վրա՝ թույլ չտալու, որ չարի վիբրացիաները ներխուժեն ու փչացնեն իր սերունդը, որ պաշտպանի իր տոհմն օտարների ոտնձգություններից, որ արգելի իր սերնդին շփվել անբարոյական խուժանի հետ։ Բայց չարիք է, երբ մարդ իշխանություն է բանեցնում՝ ուրիշներին շահագործելու, նրանց աշխատանքի արդյունքները կողոպտելու նպատակով, կամ պարզապես հաճույք է ստանում իշխանություն բանեցնելուց։

Կամ օրինակ՝ սեփական սերնդի հարատևումն ապահովելու գենետիկ մղումը։ Վատ չի, երբ մարդ մղում ունի սերունդ տալ, խնամել նրան ու ճիգ ու ջանք չխնայել՝ իր սերնդի բարեկեցիկ կյանքն ու հարատևումն ապահովելու համար։ Բայց չարիք է, երբ մարդն ընտրում է այդ ամենն անել մեկ ուրիշի ու նրա սերնդի հաշվին՝ վնասելով նրան։

Բայց բնական մարդու բաղադրիչներից են նաև գողը, գոռոզը, վախկոտն ու եսամոլը, ստորն ու կեղծավորը, քծնողն ու կաշառակերը, խաբեբան ու խարդախը, եսասերն ու փառամոլը, կողոպտիչն ու բռնակալը, ոհմակն ու ոհմակի ուժով մյուսներին ճնշելու, շահագործելու ու կեղեքելու, ընդհանրապես՝ խմբակային շահ հետապնդելու մղումը և այլն։ Ա՛յ, սրանք բացարձակ չարիք են։

Ու մարդու Աստվածային կեսի՝ բանական մարդու, գործն է ճնշել, զսպել բնական մարդու բացարձակ չարը։ Բանական մարդու գործն է՝ կասեցնել, կալանավորել բնական մարդու գողին, գոռոզին, վախկոտին ու եսամոլին, ստորին ու բռնակալին, եսասերին ու փառամոլին։ Ընդ-

հանրապես բանական մարդու գործն է խուսափել ուրիշին մտավոր, հոգևոր, նյութական ու ֆիզիկական վնաս պատճառելուց, նաև՝ խուսափել մայր բնությանը վնաս պատճառելուց։

Միայն բանական մարդը կարող է դա անել՝ իրեն ներհատուկ սիրով, բարությամբ, ինքնազոհաբերության, պատասխանատվության, կարեկցանքի, խղճի, պարտքի, պատվի, վստահության, հավատարմության, ազնվության ու, ամենակարևորը՝ արդարության մղումով։

Սակայն բանական մարդու հատկանիշներից են նաև ցասումը, խստությունը, չարի հանդեպ անհանդուրժողականությունը, անդրդվելի ուղղամտությունը... բայց նաև ինքնատիրապետումը, պարզությունն ու համեստությունը, անկեղծությունն ու, իհարկե, առաքինությունը, նաև՝ նրբանկատությունն ու հավատարմությունը։ Ինչո՞ւ չէ, նույնիսկ՝ խենթ ու խելառ, անբռնազբոս վարքը։

Ի դեպ, և՛ բնական, և՛ բանական մարդը ենթագիտակցության ոլորտում են, արմատներով խրված են մեր գենետիկ կոդի մեջ։ Մեր ընտրությունից է կախված, թե որին կծառայեցնենք մեր գիտակցությունը, որն, ըստ էության, միայն հաշվարկներ կատարող գործիք է։

– Փաստորեն, չարիքը մեկ ուրիշին վնասելու մարդու գիտակցված, միտումնավոր ընտրությո՞ւնն է,– ասես ինքն իր հետ խոսելով՝ արտաբերեց Ռաֆայելը։

– Այո, Ռաֆայել։ Չարիքը միտումնավոր ու կանխամտածված կերպով մեկ ուրիշին, կամ մայր բնությանը վնասելու մարդու ընտրությունն է։ Արիական իմաստնություն կա՝ «Մի՛ վնասիր»։ Սա չի վերաբերում միայն մարդու սեփական մարմնին՝ նրա առողջությանը։ Սա վերաբերում է նաև դիմացինին ու մայր բնությանը։

– Իսկ, ինչո՞ւ են մարդիկ վնասելու ընտրություն կատարում,– որոշ դադարից հետո փորձեց շարունակել Ռաֆայելը։

– Հիմնականում ճշմարիտ կրթության պակասն է,– պատասխանեց Արքան։

– Ի՛մ Արքա, ուրեմն, չարիքի պատճառը կրթությա՞ն պակասն է։

– Հիմնականում՝ այո, բայց չմոռանանք, որ միևնույն

ընտանիքում, միևնույն ծնողներից ծնված ու դաստիարակված, միևնույն միջավայրում մեծացած, միևնույն ուսուցչի մոտ ուսանած երեխաները, հարազատ եղբայրներ կամ քույրեր լինելով հանդերձ, կարող են շատ տարբեր լինել միմյանցից իրենց արժեհամակարգով։

– Ուրեմն...

– Պարզապես մեկը մյուսից տարբերվում է իր գենետիկ կոդով։ Ոմանք երբեմն բնական մարդու բացարձակ չարի գերակշռություն ունեն։ Դրանց վրա ոչ մի կրթություն չի աշխատի։

– Բայց էլի չեմ հասկանում՝ Աստված ինչո՞ւ է ստեղծում դրանց։

Արքան ժպտաց՝ հայացքը մի փոքր շեղելով զրուցակցից։

– Ի՛մ Արքա, ներող եղիր։ Ամենևին չեմ ուզում հոգուդ հետ խաղալ։

– Գիտեմ, եղբա՛յր Ռաֆայել, գիտեմ։ Չարն առաջանում է մեր գենետիկ կոդի շարունակական ինքնակատարելագործման, ինքնամաքրման ճանապարհին, որպես այդ գործընթացի անխուսափելի թափոն։ Այնպես, ինչպես մեր մարմնում են առաջանում թափոններ նրա բնականոն կենսագործունեության հետևանքով։ Իսկ, եթե ավելի գիտականորեն՝ ապա ժամանակի ընթացքում անընդհատ տարբեր գենետիկ համադրումներ են ստացվում։ Կուզես դա պատահականություն համարիր, կուզես՝ ի վերուստ կառավարվող միտում...

Մի փոքր դադարից հետո Արքան շարունակեց.

– Ընդհանրապես, Արարիչը մարդուն մարմին է տվել ու դրել այս մոլորակի վրա՝ փորձ ու փորձառություն կուտակելու, նաև փորձվելու համար, այն մտայնությամբ, որ ի վերջո իր պես Արարիչ դառնա, եթե հաջողությամբ անցնի այդ փորձությունները։ Մարդն, իր զգայարաններով աշխարհը ճանաչելու հետ մեկտեղ, պիտի նաև փորձվի։ Ինչպես ասացի, սեփական ներսում ծվարած բնական մարդուն վերահսկելը հենց այդ փորձության առաջին, ամենամեծ ու ամենակարևոր փուլն է։ Իսկ չարի վիբրացիաները ճանաչելն ու դրա աղբյուրը՝ չարին, ոչնչացնելը վերջին փորձությունն է։ Նա, ով հաջողությամբ կանցնի

առաջին փուլն ու կկարողանա ճիշտ ճանաչել չարին, այն աստիճան, որ համարձակություն կունենա ոչնչացնել նը-րան, կհամարվի բոլոր փորձություններն անցած։ Սա, իհարկե, երկայրի սուր է։ Այն կարող է աշխատել մեր օգտին։ Բայց կարող է և մեր դեմ աշխատել։ Շատ վտան-գավոր է սխալվելը։ Հետևաբար, կոչ եմ անում զգույշ վար-վել, յոթ անգամ չափել, նոր՝ կտրել։

– Ի՛մ Արքա, բայց, արդյո՞ք, դու այսօր հետևեցիր քո իսկ պատգամին՝ յոթ անգամ չափելու,– վրա բերեց Ռա-ֆայելը։

– Եղբա՛յր Ռաֆայել, իմ սիրտն ինձ չի խաբում։ Ես անսխալ զանազանում եմ անհույս չարին։ Ճիշտ է, խան-գարող գործոններ շատ կան։ Մարդուն հիմնականում խանգարում է այն, որ դեռ լիակատար հաղթանակ չի տա-րել իր ներսի բնական մարդու հանդեպ՝ դեռ չի հասել կատարելության։ Մարդուն շատ են խանգարում նաև գեր-իշխող գաղափարախոսությունների, շրջապատի մարդկանց մոտեցումների ու հայացքների, հատկապես նրանց սխալ ընկալումների ու մեկնությունների ճնշումը և այլն։ Բայց երբ բացահայտում ես դրանց սխալ ու մոլորեցնող բնույ-թը, ապա ազատագրվում ես բոլոր կապանքներից ու սրտիդ ձայնն ավելի հստակ ես լսում։ Ջուր չի ասվում, որ գիտելիքն ազատագրում է մարդուն։

– Ի՛մ Արքա, բայց մարդս սխալական է, ինչպես ասում են։ Հնարավո՞ր է արդյոք անսխալ ճանաչել չարը, մանավանդ՝ հասնել կատարելության։

– Եղբայր Ռաֆայել, լավն ու վատը, ճիշտն ու սխալը միմյանցից տարբերելը մեծ խնդիր չէ։ Լավի ու վատի, ճշտի ու սխալի, արդարության ու անարդարության ցուցի-չը մարդու գենետիկ կոդում է։ Հարկավոր է միայն ինքնա-խաբեությամբ չզբաղվել։ Իսկ կատարելության՝ բնական մարդու վրա լիակատար գերիշխանության, իհարկե, հնա-րավոր է հասնել։ Այլապես Քրիստոսը չէր տա հետևյալ պատգամը՝ «Եղեք կատարյալ այնպես, ինչպես ձեր Երկ-նային Հայրն է կատարյալ»։

– Ի՛մ Արքա...

– Եղբա՛յր Ռաֆայել, ես ինքնագատաստանի, անար-խիայի կոչ չեմ անում։ Տականքին կարելի է նկատել ու

սկզբում հեռացնել սեփական ընտանիքից, գերդաստանից, կամ համայնքից։ Իսկ նրա ոտնձգությունները՝ կասեցնել համայնքի կամ գործող պետական կառույցի լծակներն օգտագործելով։ Պարզապես պետք է աչք չփակել, կույր չձևանալ, հայտնաբերել, համարձակորեն ջրի երես հանել ու պատժել։ Ամեն դեպքում՝ չհանդուրժել։ Հին Արիական իմաստնություն կա՝ «Անարդարությունը հանդուրժելը հանցագործություն է։ Չարիքը լռելյայն տանելը նշանակում է խրախուսել այն։ Չարի հանդեպ անտարբերությունը նոր չարիքներ է ծնում։ Չարիքը հանդուրժողն ավելի վատն է, քան չարիք գործողը։ Ով չի դիմադրում չարագործին, նա ավելի մեծ չարագործ է»։ Մեր դժբախտությունների պատճառն այն էր, որ հանցավոր անտարբերություն ունեինք չարի ու ստորակարգի հանդեպ։ Երկրպագում էինք նրանց, ում պիտի սատկացնեինք։ Ընդհանրապես, երբ արդարությունը թուլացնում է իր ճնշումը, ապա անարդարությունն է գլուխ բարձրացնում։

Բոլորը մտքերի մեջ էին։

– Եղբայրնե՛ր, ես ոչ մի արտառոց բան չեմ առաջարկում։ Ոչ մի արտասովոր բան չկա հանցագործին հայտնաբերելու ու պատժելու մեջ։ Իսկ, եթե կարծում եք՝ իմ այսօրվա դատավճիռը գերազանցել է որևէ նախատեսված պատժաչափ, ապա պիտի հիշեցնեմ, որ հենց մեր Ազգային Սահմանադրության մեջ որձատում է նախատեսված կանխամտածված ու կազմակերպված կերպով ուրիշի առողջությանը, ունեցվածքին, նրա տնտեսական գործունեությանը վնաս պատճառելու համար, ուրիշի աշխատանքը շահագործելու, նրան կողոպտելու համար, ուրիշի իրավունքների վրա բռնանալու, ուրիշին ահաբեկելու, նրա վրա շահադիտական նպատակով բռնություն կիրառելու համար։ Մանավանդ, երբ գործ ունենք կազմակերպված ավազակախմբի հետ, ու երբ հանցագործները միևնույն գերդաստանի մարդիկ են։ Իմաստնություն կա՝ «Եթե ձեռքդ քեզ խանգարում է, ապա կտրիր այն ու դեն նետիր»։ Կամ՝ «Երբ ծառը բարի պտուղ չի տալիս, ապա կտրում են ու այրում»։ Նմանատիպ, բայց ավելի հինավուրց, Արիական իմաստնություն կա՝ «Եթե մարմնի մի մասը վարակվել է,

ապա մարմինը փրկելու համար հարկավոր է վարակված մասը կտրել ու դեն նետել»։ Ընդհանրապես հիշեք, որ Արարիչը աշխարհը չի ստեղծել չարագործների համար։ Չարագործները տեղ չունեն այս աշխարհում։ Արարիչն աշխարհը ստեղծել է ազնվասիրտ մարդկանց համար։

Բոլորը գլուխները կախել էին՝ որպես համաձայնության նշան։ Նույնիսկ Ռաֆայելն էր համաձայն Արքայի բոլոր փաստարկների հետ։ Չնայած, դեռ պիտի մտածեր, վերաքններ, բայց կարծես ամեն ինչ ճիշտ էր։

Իսկ, երբ Ռաֆայելն այլևս հարցեր չունի, ուրեմն՝ ամեն ինչ կարգին է։

– Ի՛մ եղբայրներ, արդեն շատ ուշ է,– նկատեց Արքան,– գնանք, քնենք։ Այսօր շատ երկար օր էր։ Բոլորդ լավ հոգնած կլինեք։

Այս ասելով Արքան նկատեց, որ կեսգիշերն անց էր։ Միանգամից վեր կացավ տեղից։ Արշակն ու մյուսները նույնպես վեր կացան բարև բռնած։ Արքան, բոլորին բարի գիշեր մաղթելով, դիմեց դեպի իր հարկաբաժինը՝ արքայազնների, Ազատի ու Թիկնապահ գնդի մարտիկների ուղեկցությամբ։

Աստիճանների վրա հանկարծ հիշեց Փառանձեմին ու Մարիամին։

– Հա, Ազա՛տ։ Տղաներն եկե՞լ են Իջևանից։

– Ի՛մ Արքա, եկել են։ Ամեն ինչ լավ է։ Կանանց իջացրել են Իջևանում։ Հետո՝ մնացել մինչև գյուղի ավտոբուսը նստեն։ Հետևներից մինչև գյուղ էլ քշել են։ Մինչև տուն չեն հասել, բայց...

– Ոչինչ, էդքանը հերիք ա։

Արշակը, Ազատն ու Թիկնապահ գնդի մարտիկներն ուղեկցեցին Արքային ու արքայազններին մինչև արքայական հարկաբաժինը։ Արշակը, մեկ անգամ ևս բարի գիշեր մաղթելով բոլորին, շարունակեց ներքև՝ դեպի իր հարկաբաժինը։

– Ազա՛տ ջան, դու էլ գնա քնի։ Բարի գիշեր,– ասաց Արքան ու ներս մտավ իր հարկաբաժինը։ Ազատը գլուխ տվեց ու, գնդի մարտիկներին հրահանգներ տալով, իջավ ներքև։

Թիկնապահ գնդի մարտիկներից երկուսը բարև բըռ-

նած իրենց դիրքերում էին՝ արքայական հարկաբաժնի մուտքի մոտ։ Արքան նրանց ևս բարի գիշեր մաղթեց ու ներս մտավ արքայազնների ուղեկցությամբ։ Տիգրանն ու Արտակը բարի գիշեր մաղթեցին Արքային ու անցան իրենց սենյակները։

***

Թագուհին դեռ քնած չէր։ Սպասում էր Արքային։ Երբ Արքան ներս մտավ իր ննջարանը, Թագուհին վեր կացավ տեղից ու ընդառաջ գնաց նրան։

– Երեխեն քնե՞ց,– հարցրեց Արքան՝ ի նկատի ունենալով արքայադուստրը։

– Հա, բայց՝ դժվար։ Քեզ էր ուզում։ Ինձ չի սիրում,– կատակեց Թագուհին։

– Ես էլ քեզ չեմ սիրում,– կատակեց Արքան։

Աննան փարվեց Արքային։ Արքան իսկույն հիշեց, որ բան ուներ պատմելու նրան։

– Հա՜, քեզ բան ունեմ պատմելու։

– Ի՞նչ։

– Օգնիր՝ զրահաբաճկոնս հանեմ...

Թագուհին սկսեց օգնել Արքային, բայց վառվում էր հետաքրքրությունից։

– Դե, պատմի՛ր։

– Համբերի՛, կպատմեմ։ Մի հատ ցնցուղի տակ մըտնեմ՝ գամ... Հեչ չեմ սիրում էս զրահաբաճկոնը։

– Ոչինչ, դիմացիր։

– Դիմանում եմ, դիմանում եմ։ Սրան էլ եմ դիմանում, քեզ էլ եմ դիմանում,– կատակեց Արքան։

Թագուհուն մի ողջ հավերժություն թվաց Արքայի լվացվելը։ Բայց երբ նա վերադարձավ, Թագուհին միանգամից դիմեց նրան։

– Դե, պատմի՛ր։

– Համբերի՛... գլուխս բարձին դնեմ՝ կպատմեմ։

– Հա, դիր։

Արքան հազիվ էր հասցրել տեղավորվել անկողնում... Աննան համարյա կամարի պես կախվեց նրա վրա՝ անհամբեր, թե ինչ էր լսելու։ Արքան սկսեց հանդարտ։

– Հիշո՞ւմ ես, երբ ընթրիքի ժամանակ պատմում էի

այսօրվա դեպքի մասին...

– Ըհը՛ն...

– Արշակը կեսից շարունակեց ու ավարտեց...

– Հա...

– Ես այդ կանանց հետ մինչև ճամփաբաժանը գնացի: Արշակն ուրիշ մեքենայով մեր հետևից էր գալիս ու չլսեց նրանց պատմությունը: Միայն վարորդն իմացավ:

– Վա՜յ,– խիստ անհանգստացավ Աննան:

– Լսի՛ր: Պարզվեց, որ նրանք հարս ու սկեսուր են: Սկեսրոջ անունը՝ Փառանձեմ, հարսի անունը՝ Մարիամ: Միասին են ապրում:

Մի փոքր դադարից հետո Արքան շարունակեց.

– Էդ աղջկան չեմ կարողանում մոռանալ:

– Չհասկացա,– տարակուսեց Թագուհին:

Արքան նկատեց, որ խանդի զգացում արթնացրեց նրա մոտ:

– Ի՜, խանդից բացի ուրիշ բան չգիտես...

– Բա ի՞նչ մտածեմ:

Ու Արքան պատմեց ողջ պատմությունը:

Սարսուռը պատել էր Թագուհուն: Նա նոր հասկացավ, թե ինչու Արքան չէր կարողանում մոռանալ Մարիամին:

– Գիտես, մտածում եմ գտնել նրանց ու բերել Արքունիք:

– Որպես ի՞նչ:– Դարձյալ խանդի զգացում արթնացավ Թագուհու մոտ:

Արքան նկատեց դա:

– Դե, պարզ չի՞,– փորձեց Աննայի հոգու հետ խաղալ Արքան:

– Ինչ անում ես՝ արա,– Աննան խռովեց ու շրջվեց հակառակ կողմը:

– Երկուսին էլ կբերեմ: Թող ապրեն մեզ մոտ: Գործագործություն կանեն:

– Իսկ, եթե չգիտեն,– հեգնեց Աննան:

– Ոչինչ, կսովորեն: Դժվար չի:

– Իսկ հետո՞,– շարունակեց հեգնել Աննան:

– Հետո՝ կտեսնենք:

Մի փոքր դադարից հետո Արքան շարունակեց՝ մտքերի մեջ խորասուզված.

– Հետո, գուցե հարս վերցնենք Մարիամին։

– Ի՞նչ,– զարմացավ Թագուհին ու շրջվեց Արքայի կողմը։

– Ինչո՞ւ զարմացար։

– Ախր, ուրիշի հարսն է։

– Աղջիկն է։

– Հա, բայց...

– Ի՞նչ բայց...

– Դե...

– Լսի՛ր, դմբո՛, հարսանիք չի եղել։

– Հա, բայց։

– Ոչ մի բայց։ Ես նրան ձեռքիցս բաց չեմ թողնի։ Էդ տեսակ աղջիկ ողջ աշխարհում չկա։ Նա մի անգին գոհար է։ Նրա հավատարմությունը ոչ մի կին չունի։ Նա մի ողջ տիեզերք արժի։ Նրա նմանը չկա։

– Ի՞նչ,– աչքերը չռած Արքային ավելի մոտեցավ Թագուհին,– ուզում ես ասել, որ, նույնիսկ, ես...

– Տեսա՞ր... Այ, եթե դեմքդ տեսնեիր հայելու մեջ...

Աննան կրկին հետ շրջվեց, այս անգամ՝ ամոթից։ Մի քանի րոպե այդպես մնալուց հետո, սակայն, շարունակեց.

– Բայց նա, ախր, գյուղացի է։

– Ի՞նչ,– պոռթկաց Արքան։– Դու պալատներո՞ւմ ես ծնվել ու մեծացել։

Աննան վախից կուչ եկավ։ Բայց մի որոշ ժամանակ անց հասկացավ իր սխալը։ Զգուշորեն շրջվեց դեպի Արքան։

– Ներիր, հիմար բան ասացի։ Մինչև հիմա դեռ անլիարժեքության բարդույթ ունեմ, որ հայրական տունս գյուղում է։

– Էսքան տարի է միասին ապրում ենք... Ես որևէ կերպ հեգնել կամ ակնարկե՞լ եմ, որ ծնունդով Երևանից չես։

– Չէ, դու լավն ես։

Աննան, իրոք, շատ էր զղջացել իր ասածի համար։

– Արի ուզո՞ւմ ես մեջքդ տրորեմ,– դիմեց նա Արքային՝ մի գրավիչ ժպիտ դեմքին։

– Չէ՛, չե՛մ ուզում։

– Ես ուզում եմ, արի։

– Չէ՛, տրամադրություն չունեմ,– ասաց Արքան ու շրջվեց հակառակ կողմը։

Աննան զգաց, որ ամեն ինչ փչացրել էր։

– Ի՞նչ անեմ, որ ներես։

– Լույսը հանգցրու՝ քնիր։

Աննան զգաց, որ էլ հնար չկար՝ շահելու Արքայի սիրտը։ Խորն ափսոսանքով ու թախիծը սրտում ասաց.

– Լսո՛ւմ եմ, իմ ամուսին, իմ տիրակալ,– ու հանգցրեց լույսը։

Սակայն Արքային հեշտ չէր հետ նվաճելը։ Նա խոյի համառություն ուներ, նաև՝ շատ էր հոգնել ամբողջ օրը։ Աննան փորձեց հպվել Արքային մի վերջին հույսով, բայց՝ ապարդյուն։

– Քնի՛,– հրահանգող տոնով ասաց Արքան։

Աննան մի խորը հոգոց հանեց ու լուռ շրջվեց։

Առավոտյան շուտ Արքան զարթնեց թռչունների ճըռվողյունից ու այլևս չկարողացավ քնել։ Հագնվեց ու մտավ Անուշի ննջարանը։ Արքայադուստրը դեռ քնած էր՝ անմեղ դեմքը բարձին։ Արքան ծնկի իջավ ու սկսեց զննել նրան։ Ուզեց կարոտն առնել։ Պետական գործերը թույլ չէին տալիս շատ ժամանակ նվիրել արքայադստերը։ Փորձեց հիշել Անուշի փոքր ժամանակները, բայց չկարողացավ։ Միտքը լի էր ամենատարբեր խնդիրներով ու հոգսերով։

Որոշ ժամանակ այդպես մնալուց հետո վեր կացավ, կամացուկ դուրս եկավ սենյակից ու զգույշ փակեց դուռը։ Վերադարձավ իր ննջարանն ու մոտեցավ թագուհուն։ Աննան ևս քնած էր։ Արքան զղջաց, որ գիշերը զայրացել էր վրան։ Մտածեց, որ կարող էր հանգիստ ասել, բայց արդեն ուշ էր։ Մոտեցավ, ծնկի իջավ ու համբուրեց։ Վեր կացավ։ Մի երկու քայլ հետ-հետ գնաց։ Ուզում էր շրջվել, երբ թագուհին զարթնեց։

– Ի՛մ Արքա... զարթնե՞լ ես,– ասաց նա՝ տեղից մի փոքր վեր կենալով։

– Հա, քնի՛ր։ Ես դուրս գամ։

– Անուշը զարթնե՞լ է։

– Չէ, քնած է։ Քնի՛ր։

Աննան արագ վեր թռավ անկողնուց։ Մոտեցավ ու փարվեց Արքային։

– Ների՛ր։ Լրիվ ինձ կորցրել էի։ Չէի հասկանում՝ ինչ եմ ասում։

– Հասկանում եմ, մի՛ նեղվիր։

– Չէ, ամաչում եմ։ Կմեռնեմ, եթե չասես, որ ներում ես։

– Ներում եմ, չմեռնես,– ասաց Արքան։

Աննան գլուխը բարձրացրեց Արքայի ուսից ու աղերսող աչքերով նայեց նրան, որ համոզվի իրո՞ք ներել է, թե՝ ոչ։ Արքայի դեմքին ժպիտ երևաց։ Թագուհին հալվեց ու համբուրեց Արքային։ Արքան ամուր գրկեց նրան ու մի երկու րոպե այդպես մնալուց հետո, ասաց.

– Լավ, գնամ։ Էսօր շուտ ենք դուրս գալու։ Ճամփին Էջմիածին պիտի մտնենք։

– Ո՞ւր ես գնում,– անհանգստացավ Աննան։

– Իջնեմ ներքև՝ տղերքի մոտ։ Տեսնեմ՝ ինչ են արել։ Էս գործն արագացնել ա պետք։

– Բայց հույս ունեի, որ առավոտը կթողնես մեջքդ տրորեմ,– բազմանշանակ հակառակվեց Աննան,– քանի երեխեն քնած է։

– Հեսա կզարթնի։ Երեկ պիտի խոսեի տղերքի հետ։ Արշակի հետ էլ պիտի խոսեմ։ Երեկվա սրիկաների պատճառով բան չհասցրի,– ասաց Արքան և ուզում էր պոկվել, բայց Աննան չթողեց։

– Մի քիչ էլ մնա,– ասելով՝ պինդ փաթաթվեց Արքային։– Հաստա՞տ ներում ես։

– Ասեցի՝ հա։ Քանի՞ անգամ ասեմ։

– Շատ, թե չէ՝ չեմ հավատա։

– Մի հավատա։

– Կտանջեմ։

– Տանջում եք, էլի... Բոլորդ էլ տանջում եք։

– Ես է՞լ։

– Հենց առաջինը՝ դու։

– Էլ չեմ տանջի։

– Հաշվե՞լ ես քանի անգամ ես ասել նույն բանը։

– Չէ, ամաչում եմ։

– Ամաչելով հաշվի։

Աննան լուռ էր։

– Առանց տանջելու չես կարող, չէ՞,– շարունակեց Արքան։

– Չէ, ես անուղղելի եմ։

– Գիտեմ։

– Տար ինձ, կորցրու։

– Իմաստ չունի։

– Ինչի՞։

– Կատուների նման հետ ես գալու։

– Անպետք։

– Ճիշտ է։ Ես ոչ մեկին էլ պետք չեմ։ Բոլորն իրենց ուզածով են ուզում ապրել։ Ես էլ ընկել եմ...

– Ի՞նչ ես ասում։

– Բա ի՞նչ։

– Չէ, քեզ լավ էլ սիրում են։

– Ո՞վ։
– Բոլորը։
– Դու է՞լ։
– Իհարկե։
– Բա սիրողը կջղայնացնի՞։
– Չէ, չի ջղայնացնի։
– Բա ինչո՞ւ ես ջղայնացնում։
– Չգիտեմ։
– Բոլորդ էլ ասում եք, որ սիրում եք, բայց ջղայնացնում եք, հակառակվում։ Ուզում եք, որ բանն ասեմ, ասելուց հետո՝ մի լավ համոզեմ։ Համոզելուց հետո էլ՝ ստիպեմ, որ գնաք անեք։ Թե չէ՝ չեք անի։
– Ճիշտ, բայց ինչո՞ւ։
– Որովհետև բոլորդ էլ փախնում եք պատասխանատվությունից։ Ուզում եք, որ ձեզ ստիպեն ինչ-որ բան անել, որ պատասխանատվությունն ամբողջովին ստիպողի՛ վրա ընկնի, ձեզ վրա չընկնի։ Իբր՝ ինքներդ չէիք ուզում անել, համաձայն չէիք։ Ձեզ ստիպել են։ Դո՛ւք չեք մեղավորը, այլ՝ ստիպողը։
Ուզում եք, որ գոնե համոզեն ձեզ։ Որ համոզողի հետ կիսվի ձեր պատասխանատվությունը։ Համոզելու ընթացքում էլ հակառակվում եք՝ մինչև վերջին փամփուշտը, որ հնարավորին չափ քիչ պատասխանատվություն ընկնի ձեզ վրա, շատն ընկնի համոզողի՛ վրա։
Սա միայն գործին չի, որ վերաբերում է։ Պարզագույն գիտելիքն ի՞նչ է՝ չեք ընդունում։ Որովհետև ենթագիտակցորեն շատ լավ գիտեք, որ գիտելիքը երբեք միայնակ չի լինում։ Լավ գիտեք, որ պատասխանատվությունն ու պարտականությունը նրա մշտական ուղեկիցներն են։ Ու, եթե ընդունեք, ապա գիտելիքի հետ միասին նույնքան պատասխանատվություն ու պարտականություն կծանրանա ուսներիդ։ Ա՛յ, հենց դրա համար էլ հրաժարվում եք գիտելիք ընդունելուց։ Ամեն փաստարկ մոգոնում եք, միայն թե չմտնի էդ գիտելիքը։ Գերադասում եք անգամ տգետ մնալ, միայն թե պատասխանատվություն ու պարտականություն չվերցնեք ուսներիդ, միայն թե՝ ոչ մի բան չանեք։
Ինչո՞ւ։ Որովհետև ծույլ եք։ Բայց միայն դա չի պատճառը։ Պատասխանատվությունից խուսափում եք ոչ միայն,

որովհետև ծույլ եք, այլ որովհետև նաև գոռոզ եք, շատ գոռոզ։ Ինչպե՞ս թե պատասխանատվություն կամ պարտականություն վերցնել։ Ինչպիսի՜ անպատվություն։ Դուք ամպերից վեր եք։ Դուք ոչ մեկին պարտական չեք։ Ուրիշներն են ձեզ պարտական։ Ուրիշները պիտի մտածեն, հոգ տանեն ձեր մասին, ծառայեն ձեզ։ Իսկ դուք չպիտի մտածեք։ Չպիտի հոգ տանեք ուրիշների մասին։ Չպիտի ծառայեք։ Էդ էր պակաս՝ ծառայել, մտածել, մտահոգվել, մանավանդ՝ ընդհանուրի մասին։ Ընդհանուրն ո՞վ էր։ Ընդհանո՛ւրը պիտի մտահոգվի ձեր մասին, ծառայի ձեզ։ Դուք ծառա չեք, դուք լորդ եք։

Բայց միայն մարդկանց հանդեպ չի ձեր գոռոզությունը։ Խեղճ բնությունն ի՞նչ ա։ Բնության հանդեպ էլ եք գոռոզ։ Ո՞նց թե՝ մաքուր պահել բնությունը կամ թեկուզ՝ ձեր անմիջական շրջապատը։ Ո՞նց թե՝ հոգ տանել, խնամել։ Բնությունն ո՞վ էր։ Բանն էլ, որ ստիպում են անել, դժկամությամբ եք անում, ընդդիմանալով։

Հիվանդագին գոռոզություն ունեք։ Այն աստիճանի, որ նույնիսկ ինքներդ ձեր լավի համար չեք ուզում պատասխանատվություն վերցնել։ Բա որ հանկարծ սխալ բան անեք։ Դրանից հետո ո՞նց եք ապրելու։

Իսկ, ընդհանրապես, ձեր ցանկացած՝ մեծ, թե փոքր, ձախողմանը հաջորդող մեղադրանքներից եք խուսափում։ Ոչ մի մեղավորություն չեք կարող տանել։ Ո՞նց թե... Ի՞նչ մեղավոր... Ո՞վ իրավունք ունի ձեզ մեղադրել որևէ բանում։ Էլ չխոսենք սեփական սխալն ինքնակամ ընդունելու ու զղջալու մասին։ Ինչպիսի՜ նվաստացում։ Ավելի լավ չի՞ մեռնեք։

Չնայած, շատ մեղադրելու չի։ Շատ էլ լավ գիտեք, որ շրջապատի մարդիկ կացինները սրած պատրաստ կանգնած են՝ ամբողջ մեղքը ձեզ վրա գցելու ու իրենցից ամեն մեղավորություն մաքրելու համար։ Այդպես էլ ապրում եք՝ մեկդ մեկիցդ գոռոզ, մեկդ մեկիցդ խորամանկ։ Շատ լավ հմտացել եք պատասխանատվությունից խուսափելու, մանավանդ՝ այն ուրիշի վրա թողնելու, նրա վզին փաթաթելու գործում։

Ով էլ որ փորձում է շալակել ու տանել բոլորիդ պատասխանատվությունը, կամ ծաղրում եք՝ միամիտի տեղ

դնելով, կամ, լավագույն դեպքում, մի կիսաբաց դռան արանքից հետևում եք, թե ե՞րբ է ձախողվելու, որ վրա հասնեք, գլխին կանգնեք ու աշխարհով մեկ ձեններդ գլ-լուխներդ գցեք՝ ցույց տալու համար, որ դո՛ւք չեք մեղավորը, որ գտել եք մեղավորին: Առաջինն եք գտել: Որ գան, տեսնեն, համոզվեն: Ձեր «հերոսության» համար ձեզ մեդալ տան, պաչեն: Անուններդ գրեն պատերին ու հավերժացնեն հետագա սերունդների համար:

Ձեր ձենի վրա եկողներն էլ հետ մնացողը հո չե՞ն: Կգան ու միանգամից ոտի տակ կտան ձեր գտած «ձախորդին»: Բա ցույց չտա՞ն, որ նրա հետ ոչ մի կապ չեն ունեցել: Բա մի մեդալ էլ իրենք չպոկե՞ն: Բա գոնե մի օր հանգիստ «խղճով» չքնե՞ն, որ մեղավորն իրե՛նք չեն: Որ թեկուզ իրենք չեն գտել մեղավորին, բայց գոնե «ժամանակին» վրա են հասել ու տրորել, գոնե մի քացի խփել են:

Հենց նույն պատճառով էլ առաջնորդ եք փնտրում, որ առաջ գա ու իր վրա վերցնի ողջ պատասխանատվությունը: Դրա հետ մեկտեղ նաև էնպիսի պերճախոս ճառեր ասի, որ ոչ մի չհամոզվելու տեղ չթողնի, որ դուք ձեր համաձայնությունը «հանգիստ խղճով» տաք: Բայց ոչ մի գործ չանեք: Միայն հետևից սուտի-մուտի հայ-հույ անեք, «ոգևորեք», որ գնա ու ամբողջ գործն ինքն անի: Մենա՛կ անի, դուք վտանգի տակ չմտնեք: Միայն կիսաբաց դռան արանքից նայեք: Որ առաջնորդի հաջողության դեպքում գնաք՝ մի պատառ էլ դուք փախցնեք: Իսկ ձախողման դեպքում՝ դուք «մաքուր» դուրս գաք: Իբր՝ «մենք չէինք ուզում. մենք համաձայն չէինք»:

Հեղինակությունն էլ եք նույն բանի համար փնտրում: Ինքնուրույն չեք ուզում մտածել, որոշում ընդունել, որ հանկարծ պատասխանատվություն չընկնի ուսերիդ: «Ի՛նքը ասեց: Մեր հեղինակությունն ասեց: Չէ՞ որ ինքն ա մեր մտավորականը, մեր գլուխը: Իրա ասածը մեր համար...» Հա՞, ամեն ասած անո՞ւմ եք: Ամեն ասած չեք անում: Ինչը որ գործի պիտի դնի ձեզ, կամ՝ պատասխանատվության տակ դնի, չեք անում: Կամ չլսելու եք տալիս մարդու ասածը, կամ էլ՝ լսում եք, ծափ տալիս ու փախ-

նում տուն։

Դատելուց էլ եք խուսափում նույն պատճառով։ Լոզունգ եք սարքել՝ «մի դատիր»։ Շատ հարմար լոզունգ ա։ Ի՞նչ-ակ։ Բա որ հանկարծ սխա՞լ դուրս գաք։ Կամ՝ շուտ գան ու ձեզ դատե՞ն, ձեր արածներն երեսներովդ տան, պախարակեն, գցեն ոտի տակ ու տրորեն...

Աննան լսում էր, լսում ու ավելի ամուր էր գրկում Արքային։ Ասես փորձում էր նրա մեջ կուտակված ու վերջապես դուրս ժայթքող զայրույթը կլանել, ամբողջովին վերցընել իր մեջ։ Բնազդաբար զգում էր, որ այդպես պիտի աներ՝ կիսեր, թեթևացներ ամուսնու բեռը, նեցուկ լիներ, խնամեր նրան, սիրեր ու փայփայեր։ Զգում էր, որ տղամարդիկ շատ խոցելի են, երբ մենակ են ու անսեր։ Սիրտը ճմլվում էր, տեսնելով, թե որքան ասելիք էր կուտակվել Արքայի մեջ։ Մեղավոր էր զգում, որ շուտ չէր նկատել, թողել էր, որ կուտակվի։ Ժամանակին չէր կիսել ու թեթևացրել նրա սիրտը։

Արքան, վերջապես, հանդարտվեց։

– Ներիր, քեզ չեմ ասում։

– Գիտեմ։

Այդ պահին լսվեց արքայադստեր ձայնը։

– Մա՜մ։

Արքան իսկույն հասկացավ, որ Անուշն իր ձայնից էր զարթնել։

– Հա՜, կյանքս,– ասելով, պոկվեց Աննայի գրկից ու դիմեց դեպի արքայադստեր ննջարանը։

Աննան արագորեն սկսեց հագնվել։

Արքան ներս մտավ Անուշի ննջարանն ու տեսավ, որ արքայադուստրն արդեն նստել էր անկողնու մեջ։ Արագ մոտեցավ ու սկսեց համբուրել նրա ճակատը։

– Պա՜պ։

– Հա՜, կյանքս։

– Ի՞նչ էր եղել։

– Բան չէ։

– Բա ինչի՞ էիր ջղայնացել։

– Վա՜յ, լսեցի՞ր։ Հեչ, Անուշ ջան։ Խոսում էինք։

– Մամայի վրա էիր ջղայնացե՞լ։

– Չէ, կյանքս։

– Բա՝ ո՞ւմ։
– Ուրիշների։
– Բա ո՞ւր են ուրիշները։
– Մոքումս։
Անուշը սկսեց մտածել։
– Լավ։ Վեր կաց, լվացվիր, հագնվիր։ Հետո միասին կգնանք, տեսնենք՝ մորին բերե՞լ են տղերքը, հա՞։
– Հա։
Արքան նորից համբուրեց արքայադստեր ճակատն ու դուրս եկավ նրա ննջարանից։ Աննան արդեն հագնվել էր։
– Ես իջա,– ասաց Արքան ու դիմեց դեպի դուռը։
– Սպասի՛ր,– ասաց Աննան ու աճապարելով մոտեցավ ու նորից գրկեց Արքային։
– Երեխեն զարթնել ա։ Կտեսնի։
– Թող տեսնի։
– Թող գնամ։ Շատ բան կա անելու։
– Դու ե՞րբ ես դադար առնելու։
– Գերեզմանում։
– Չասե՛ս տենց բան, էլ չասես,– սարսափահար Արքային ուղղեց իր հայացքը Աննան։
– Լավ, թող՝ գնամ,– ասաց Արքան ու համարյա ուժով պոկվեց Աննայի գրկից։
Արդեն հասել էր դռան մոտ, երբ Աննան նկատեց ամթոռի մեջքին գցված Արքայի զրահաբաճկոնը։
– Բաճկո՛նդ։ Զրահաբաճկո՛նդ։ Չե՛նք կապել,– համարյա ճչաց նա։
– Ոչինչ, օգուտ չունի։
– Չէ՛, պետք ա,– պնդեց Աննան ու համարյա ուժով հետ պահեց Արքային։
– Հանվի՛ր,– ասելով, սկսեց քանդել Արքայի վերնաշապիկի կոճակները։
– Աննա, իմաստ չունի։
– Դու չգիտես, ունի՛։ Գոնե սիրտս մի քիչ հանգիստ կլինի։
– Լավ, որ սիրտդ հանգիստ կլինի...
– Մա՜մ,– նորից ձայն տվեց արքայադուստրը կողքի սենյակից։
– Հա՜, Անուշ ջան։ Գալիս եմ։ Դու սկսիր ինքնուրույն

հագնվել։

Այս ասելով՝ Աննան արագ-արագ սկսեց օգնել Արքային կապել զրահաբաճկոնը։

– Դե, գնացի Անուշի մոտ,– ասաց նա՝ Արքայի զրահաբաճկոնը կապել վերջացնելուց հետո ու, նրան մի վերջին համբույր տալով՝ մտավ արքայադստեր ննջարանը։ Արքան արագորեն վրան գցեց վերնաշապիկն ու դուրս եկավ։

Հարկաբաժնի ելքի մոտ նրան էին սպասում Ազատը, արքայազնները, Արշակն ու թիկնապահ գնդի տղաները։ Երբ Արքան բացեց դուռն ու դուրս եկավ իր հարկաբաժնից, նրանք ոտքի կանգնեցին բարև բռնած։

– Ո՞նց եք, տղերք։ Ամեն ինչ լավ ա՞,– սկսեց Արքան։

– Ի՛մ Արքա, ամեն ինչ կարգին է։ Գիշերը հանգիստ է անցել,– ասաց Արշակը։

– Շատ լավ։ Մեր ֆիզիկոս եղբայրները զարթնե՞լ են։

– Ի՛մ Արքա, զարթնել են, քեզ են սպասում,– պատասխանեց Ազատը։

– Իջանք,– ասաց Արքան։ Ու բոլորը միասին իջան ներքև։

***

Լաբորատորիայում՝ ողջ գիտաշխատող անձնակազմը խմբված, սպասում էր Արքային։ Երբ Արքան իր շքախմբով ներս մտավ, գիտաշխատողները շրջվեցին դեպի նա ու, բարև բռնած, գլուխները կախ, դիմավորեցին նրան։

– Բարին ընդ ձեզ, ի՛մ եղբայրներ,– ասաց Արքան։– Ո՞նց քնեցիք։ Երեկ ահագին երկար նստեցինք։

– Ի՛մ Արքա, մեզ համար սովորական էր։ Ամեն օր նույնն է։ Չենք նկատում՝ ոնց է անցնում ժամանակը, – ասաց Ռաֆայելը։

– Հասկանում եմ։ Ձեր գործն էլ գործ չի,– փորձեց կատակել Արքան։

Տղաները ծիծաղեցին։

– Եղբայրնե՛ր, դե՛, պատմեք, տեսնեմ՝ ի՞նչ առաջընթաց կա։

– Ի՛մ Արքա, մինչև հիսուն կիլոմետր փորձել ենք։ Լավ աշխատում է,– ասաց Ռաֆայելը՝ ցույց տալով միկրո-

ալիքային թնդանոթը։– Հիսուն կիլոմետրի վրա նույնիսկ տանկի զրահի միջով կանցնի ու կվառի բոլոր միկրոսխեմաները։ Նույնը՝ ինքնաթիռների, ուղղաթիռների և այլն։

– Իսկ ավելի հեռո՞ւ։

– Գուցե վաթսուն էլ աշխատի։

– Ինձ ավելի հեռու է պետք։

– Ի՛մ Արքա, ինչքա՞ն։

– Տասն անգամ ավել։

– Ի՛մ Արքա, դժվար բան ես ուզում։ Դրա համար երևի մի հազար անգամ շատ էներգիա պահանջվի։

– Բայց հնարավո՞ր է։

– Սրանով՝ չէ։ Բայց, եթե մեծը կառուցենք, տեսականորեն պիտի որ հնարավոր լինի։ Ամեն դեպքում ավելի հզորը պիտի կառուցենք ու փորձենք։

– Պիտի որ լինի։ Տեսլան արել է, չէ՞,– ասաց Արքան։

– Ի՛մ Արքա, գուցե... Տեսականորեն, թղթի վրա, գուցե։ Բայց հնարավոր չի, որ պատրաստած լինի։ Փորձարկելը որ, էլ չեմ ասում...

– Ինքը գուցե չի սարքել, բայց այդ զենքը վաղուց կա։

– Ի՛մ Արքա, հաստատ չգիտենք։

– Գիտենք, Ռաֆայե՛լ,– նրան կտրեց Արշակը,– գիտենք։ Տեսլան Երկրորդ Համաշխարհային պատերազմից առաջ արդեն ուներ այդ զենքն ու հայտարարել էր, որ երկու հարյուր մղոնի վրա կարող է օդուժի մի ողջ նավատորմ կործանել։ Նա սարքել էր այդ թնդանոթը։ Իր մահից առաջ բոլոր գերտերություններին ուղարկել է իր գծագրերը։ Նրանք էլ՝ սարքել են, հիմա ունեն։

– Դե, մենք նրանց հնարավորությունները չունենք,– հակադարձեց Ռաֆայելը։

– Տեսլան ունե՞ր,– վրա բերեց Արքան։– Միայնակ և՛ հնարեց, և՛ սարքեց։ Հետո, իհարկե, քանդեց վերացրեց, որ պատրաստի վիճակում ոչ մեկի ձեռքը չընկնի։

– Ի՛մ Արքա, Տեսլան ուրիշ էր։ Նրա նմանն էլ չի ծընվի։ Ինչ էլ անենք, «Տեսլա» չենք դառնա։

– Պետք է դառնաք, Ռաֆայե՛լ։ Մեր երկրի ճակատագիրը քո խմբից է կախված,– վրա բերեց Արքան։

Ռաֆայելը կախեց գլուխը։ Ու մի փոքր մտորելուց

հետո, ասաց.

– Ի՛մ Արքա, հասկանում եմ։ Բայց ասենք՝ սարքեցինք։ Ասենք՝ էլեկտրաէներգիայի հարցն էլ լուծվեց ու մի հրաշքով աշխատեց։ Միևնույն է, այդքան հեռու թիրախ որտեղի՞ց գտնենք փորձարկելու համար։

Արքան մտքերի մեջ ընկավ։

– Դու սարքի՛ր։ Թիրախի մասին մի՛ մտածիր,– ասաց Արքան,– դա ինձ վրա։

Ռաֆայելը զարմացավ։

– Ի՛մ Արքա, չեմ հասկանում։

– Ռաֆայե՛լ, նշածս հեռահարությունն ինձ պետք է՝ թշնամական արբանյակները մեր երկրի վրայից հեռացնելու համար։ Դրանք են, որ մեր թշնամիներին առավելություն են տալիս մեր նկատմամբ։ Նրանք վերևից ամեն բան տեսնում են։ Դա նման է նրան, որ մինչև ատամները զինված զինվորը մենամարտի դուրս գա աչքերը կապած, անզեն մեկի հետ, հասկանո՞ւմ ես։ Դրանց արբանյակային ցանցն է իրենց հաղթանակների գրավականը։

– Հասկանում եմ,– ասաց Ռաֆայելը, մտազբաղ, հայացքը դեպի ներքև ուղղելով։

Բոլորը լուռ էին։

– Ի՛մ Արքա, բայց արբանյակներին հասնելու համար հարկ կլինի ճեղքել ողջ իոնոսֆերան,– լռությունը խախտեց Ռաֆայելը որոշ դադարից հետո։

– Դրա ձևն էլ կա։ Նախ լազերային ճառագայթով ճեղքվում է իոնոսֆերան ու անմիջապես այդ ճեղքի միջով արձակվում է միկրոալիքը,– պատասխանեց Արքան։

– Ի՛մ Արքա, բայց դրանք շատ արագ են ընթանում։ Հնարավոր չի բռնացնել... Թեկուզ, եթե ճեղքենք իոնոսֆերան, ապա շատ փոքր տարածք կբացվի միայն։ Այդ հատվածում վայրկյանի մեկ հազարերորդական մաս անգամ չի մնա այդ արբանյակը, որ մեր միկրոալիքը հասցնի վնասել դրա էլեկտրական ցանցը։

– Չգիտեմ, Ռաֆայել... Բոլոր գերտերությունները գտել են հնարը։ Դո՛ւք էլ պիտի գտնեք։ Չգիտեմ...

Բոլորը դեռ լուռ հետևում էին զրույցի ընթացքին։

– Ի՛մ Արքա, մենք պաշտպանական շատ ու շատ ուրիշ զենքեր ունենք։ Մեր հակաօդային պաշտպանության

համակարգերը կարողանում են նկատել ցանկացած օբյեկտ։ Անտեսանելի կոչված թռչող սարքերն այլևս մեզ համար խնդիր չեն,– փորձեց Արքային հանգստացնել Ռաֆայելը։

– Նույնիսկ, եթե տասնհինգ կամ քսան կիլոմետր բա՞րձր են, կամ ավելի՞ բարձր, ասենք՝ հարյուր, կամ՝ երկու հարյուր,– հարցրեց Արքան։

– Այո։ Հարց չկա։

– Իսկ փո՞քր օբյեկտները։ Ասենք՝ փոքր տրամաչափի հրթիռը...

– Դա մի քիչ դժվար է, բայց իր հետագծով հաստատ կտարբերվի ասենք՝ խոշոր թռչնի հետագծից։ Մեր սպաները պատրաստված են, իսկույն կճանաչեն։

– Իսկ գետնին չհասած խփե՞լը։

– Դա հեշտ չի, բայց կա հնար։ Մինի-էլեկտրամագնիսական պուլսացիայով կկարողանանք այրել հրթիռի միկրոսխեմաներն ու ստիպել, որ նշանակետից հեռու ընկնի։

– Խոսքը հենց ա՞յս գործիքի մասին է,– հարցրեց Արքան՝ ձեռքով ցույց տալով թնդանոթը։

– Ի՛մ Արքա, այո,– գոհունակության ժպիտը դեմքին պատասխանեց Ռաֆայելը։– Սա հրաշք է։ Հազար անգամ փորձարկել ենք։ Սա նույնիսկ թաքստոցից է աշխատում։ Կարիք չկա գետնի մակերևույթ հանել։ Ճիշտ է, ուժը մի փոքր թուլանում է, հեռահարությունը՝ պակասում, բայց հրաշք է։

– Բայց հիշե՛նք, որ մեր թշնամիներն էլ ունեն սրանից,– ասաց Արքան։

– Ի՛մ Արքա, բայց մենք հո նրանց վրա հարձակվողը չե՞նք,– փորձեց Արքայի միտքն իմանալ Արշակը։

– Չէ, իհարկե, մենք հարձակվողը չենք։ Մտահոգությունս այն է, որ կարող են մեր գործարանների, ռազմակայանների կամ էլեկտրակայանների համակարգչային ցանցը վնասել։ Թեկուզ՝ հենց այս զենքին վնաս տալ։

– Ի՛մ Արքա, հնարավոր է։ Բայց միայն այն դեպքում, եթե ինքնաթիռի կամ անօդաչու թռչող սարքի վրա դրած՝ հասցնեն մեր սահմաններից ներս։ Իսկ դա բացառվում է։ Բյուրականի մեր հակաօդային պաշտպանության կայաններն օրն ի բուն հսկում են երկինքը՝ մայրաքաղա-

քի ու ողջ Արարատյան դաշտի վրա։ Իսկ Արագածի փեշերի մյուս կայանները Զանգեզուրի, Գեղամա լեռների կայանների հետ միասին հսկում են մնացած տարածքները,– վրա բերեց Արշակը։

– Լավ։ Շատ լավ,– հանգստացավ Արքան։

Մի փոքր մտորելուց հետո, Արքայի գլխում մի միտք ծագեց։

– Ռաֆայե՛լ, իսկ հնարավո՞ր է այս գործիքի միջոցով ազդել հարձակվող բանակի մարտիկների վրա։

– Ինչպե՞ս,– զարմացավ Ռաֆայելը։

– Այ, ասենք՝ ինչպես որ էլեկտրամագնիսական պուլսացիաներն ազդում են էլեկտրական ցանցի վրա։ Չէ՞ որ մարդու մարմնում բոլոր օրգանները, հատկապես՝ սիրտը, աշխատում են ուղեղից էլեկտրական իմպուլսներով։

– Դա հետաքրքիր է,– իր՝ գիտնականի, հրճվանքը չըկարողացավ թաքցնել Ռաֆայելը։ Միանգամից գլխի չընկավ, թե ինչ դաժան բան էր անցել Արքայի մտքով։ Բայց շուտով հասկացավ ու համարյա ուզում էր հարց բարձրացնել, երբ միանգամից հիշեց գիշերվա խոսակցությունը, նաև՝ որ ոչ մի զենքի տեսակ էլ մարդասիրական չի։

– Կփորձենք, ի՛մ Արքա,– ասաց Ռաֆայելը։

– Ի՛մ Արքա, այդ դեպքում լավ կլինի սարքել նաև սրա փոքրերը։ Դրանք մեր սահմանապահ տղաներին շատ պետք կգան,– ասաց Արշակը։

– Լավ միտք է,– համաձայնեց Արքան։

– Հասկացա,– ցնծության մեջ էր Ռաֆայելը։

– Մեր հետախույզներին նույնպես պետք կգա,– հավելեց Արքան։

Ռաֆայելի աչքերը վառվում էին նոր մարտահրավերի կապակցությամբ։ Գիտնականի համար ավելի քաղցր բան չկա, քան անհայտի ճամփով ճամփորդելը։ Մանավանդ, որ ինտուիցիայով զգում ես, որ հեռվում անպայման մի բան կա։ Իսկ հայրենասեր գիտնականի համար՝ առավելևս, որովհետև դրանով իր ժողովրդի անվտանգությունն էր ապահովելու։

– Ուրեմն, աշխատում ենք երկու ուղղությամբ, Ռաֆայել։ Մտորում եք մեծի հնարավորության վրա։ Այդ ընթացքում արագ կառուցում ու փորձարկում եք փոքրը, ասենք՝

չորս հարյուր կամ երեք հարյուր մետր հեռավորության վրա՝ հակառակորդի մարտիկներին շարքից հանելու համար։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ուրախությամբ պատասխանեց Ռաֆայելը։ Բոլոր գիտաշխատող տղաները ուրախ էին նոր առաջադրանքի համար։

– Հա, Արշա՛կ, քանի որ սրա փորձարկումները լավ են անցել, արդեն անցիր զանգվածային արտադրությանը։ Սրանք պետք է տեղադրել մեր սահմանների երկայնքով՝ աննկատ կերպով թշնամու տեխնիկան շարքից հանելու համար։ Սրանցից պետք է կառուցել ու տեղադրել նաև մեր մեծ քաղաքներն ու ռազմական հենակետերը պաշտպանելու համար թշնամու օդային հարձակումից։ Պետք է նաև տեղադրել մեր սահմաններին մոտ գտնվող թշնամիների ռազմական նշանակության օբյեկտներին, էլեկտրակայաններին, նավթավերամշակման կայաններին կամ նավթամուղ գծերին խփելու համար։ Ի գո՛րծ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։ Հենց վաղը Ռաֆայելի հետ միասին գծագրերով կմտնեմ գործարան։

– Եթե կարիքը կա, տղերքից մեկը թող մնա գործարանում՝ աշխատանքները վերահսկելու համար,– Արշակին դիմեց Արքան՝ ի նկատի ունենալով Ռաֆայելի խմբի գիտաշխատողներին։

– Շատ լավ, ի՛մ Արքա,– պատասխանեց Արշակը։

– Ուրիշ հարցեր կա՞ն, Ռաֆայել։

– Լազերի հարցը, ի՛մ Արքա։

– Շա՞տ դժվար է։

– Ի՛մ Արքա, անհնարինի սահմանին է։

– Ռաֆայե՛լ,– նրան դիմեց Արքան,– մեզ համար անհնարին-մանհնարին չպիտի լինի։ Մեր լինել-չլինելու խնդիր կա։ Մեծ Եղեռնով դեռ նոր է սկսվել մեր ազգին վերացնելու մեր թշնամիների ծրագիրը։ Մենք մեր գոյությամբ շատ ենք խանգարում նրանց։ Կամ՝ նրանք, կամ՝ մենք։ Մեր երեխաների ապագայի համար, մեր ազգի գոյատևման համար՝ մեզ համար անհնարին ոչ մի բան չպիտի լինի։ Տեսլայից պիտի անցնեք։ Մտածիր նրա պես։ Դեն նետիր ֆիզիկայի բոլոր օրենքները։ Էլի ուսումնասիրիր Տեսլայի գործերը։ Փորձիր վերակերտել նրա մտա-

ծելակերպը։ Մտիր նրա կերպարի մեջ, այլապես՝ բան չի ստացվի։ Տղե՛րք, ամեն ինչ ձեզնից է կախված։ Մեզ կհաղթեն դրանք իրենց արբանյակներով։ Մի հնար է պետք գտնել,– դիմեց Արքան ֆիզիկոսների խմբին։– Ամեն մեկդ մի «Տեսլա» պիտի դառնաք։ Էդ մարդը մենակ էր։ Պետական հովանավորություն չուներ։ Իր հովանավորը հրաժարվեց ֆինանսավորել, երբ իմացավ, որ օդից էլեկտրականության վրա հնարավոր չի հաշվիչ դնել։ Դուք էդպիսի վտանգի տակ չեք։ Ես ձեզ մենակ չեմ թողնի։ Ձեզ մնում է «Տեսլա» դառնաք։ Ա՛յ, ո՞նց գտաք ու կառուցեցիք Տեսլայի օդից, ավելի ճիշտ՝ եթերից, էլեկտրականություն ստանալու համակարգը։ Ո՞նց կառուցեցիք էս հրաշքը։ Գիտեմ՝ ամեն բացահայտումից հետո մարդ մի տեսակ հանգստանալ է ուզում, թուլանալ։ Բայց չենք կարող։ Պատերազմ է, թեկուզ կրակոցներ չկան... Դեռ՝ չկան... Բայց պատերազմ է։ Մեզ խեղդում են։ Ամեն կողմից են խեղդում մեր և՛ բացահայտ, և՛ ոչ բացահայտ թշնամիները։ Թուլանալու իրավունք չունենք։

– Ի՛մ Արքա...– փորձեց մի բան ասել Ռաֆայելը։

– Գիտեմ, Ռաֆայել, տղերքն իրենց ընտանիքների երեսը կարգին չեն տեսնում։ Գիտեմ։ Արփա-Սևան թունելի տղաները լույսի երես էլ չեն տեսնում, փորձարկումներն են անում։ Բայց ուժ են գտնում, չէ՞։ Նրանք ամեն գիշեր աչքերիս առաջ են։ Մեր երեխեքի ապրել-չապրելը, դուք եք որոշում։ Ա՛յ, էդքան պատասխանատվություն կա ձեր ուսերին։

– Հասկացա, ի՛մ Արքա,– խորապես տպավորված արտաբերեց Ռաֆայելը։

Արքան նայեց Ռաֆայելի աչքերին։ Ռաֆայելն իրոք զգացել էր Արքայի անհանգստությունը։ Արքան հայացքով հերթով զննեց մյուս բոլոր գիտաշխատողներին։ Նրանք ևս զգաստացած ու խորապես մտահոգված էին։

– Հա՜, քիչ էր մնում մոռանայի։ Գործի հաջող ավարտի համար, Ռաֆայե՛լ, անձամբ քեզ ու ծրագրի մասնակից բոլոր տղաներին պարգևատրում եմ Ազգային Հերոսի Արքայական շքանշաններով։ Հրապարակավ արարողություն չի լինի, իհարկե։ Կստանաք նաև խոշոր դրամական պարգևներ։ Ցավում եմ, բայց այս ամենը պիտի գաղտնի մնա։

Շքանշանների ու հատկապես դրամական պարգևների հարցը կլուծեմ վաղն առավոտյան, առաջին հերթին։ Ազգային գանձարանի գլխավոր գանձապահը գոմարները կփոխանցի ձեր անձնական հաշիվների վրա։ Իսկ շքանշանները ես՝ ինքս, կբերեմ, երբ մյուս անգամ Ամբերդ գամ։

Խմբի տղաների աչքերին ժպիտ երևաց։

– Իսկ հիմա երևի ճաշի ժամ է։ Կտեսնվենք վերևում, ի՛մ եղբայրներ,– ասաց Արքան ու դուրս եկավ իր շքախմբի ուղեկցությամբ։

Ռաֆայելն ու բոլոր խմբի տղաները բարև բռնած հայացքով ճանապարհեցին նրանց։

Ամառվա արևն արդեն բարձրացել ու ջերմացրել էր օդը։ Ճաշի սեղանը գցվել էր նույն տեղում՝ ամրոցի հարկաբաժինների հարթ տանիքին։ Ներկա էր ողջ երեկվա կազմը։ Բժիշկը հիմնականում մրգի սեղան էր կազմել։ Միրգն ու բանջարեղենն Ամբերդին մատակարարում էին Բյուրականի ու հարևան մյուս համայնքների շինականները։ Թիկնապահ գնդի տղաները բերել էին ենոքավանցի կնոջ նվիրած մորին։ Սեղանին կար նաև մոշ ու սև հաղարջ։ Արքայադուստրն ուրախ էր մորու համար։

Ճաշն անցնում էր ուրախ ու անբռնազբոս մթնոլորտում։ Բժիշկը, պատասխանելով առողջության վերաբերյալ ներկաների հարցերին, կրկին շեշտեց մանրակրկիտ ծամելու, ընդհանրապես՝ ուտելու ընթացքում չշտապելու անհրաժեշտությունը։ Նաև՝ որ մեծապես կարևոր էր հաց կիսել մտերիմների, ընկերների, հոգեհարազատ մարդկանց հետ միասին, հատկապես, որ ցանկացած լարվածություն բացասաբար է անդրադառնում մարդու առողջության վրա։

Բժիշկն, իմանալով, որ ֆիզիկոս տղաները ուշ են քընում, երբեմն էլ՝ անքուն գիշերներ անցկացնում, շատ վրդովվեց։ Հորդորեց նրանց ժամանակին քնել՝ երեկոյան ժամը տասից ոչ ուշ։ Եվ անպայման քնել առնվազն ութ ժամ։ Տղաները հակադարձեցին, թե չեն նկատում՝ ժամանակն ինչպես է անցնում։ Բժիշկը դիմեց Արքային.

– Ի՛մ Արքա, խնդրում եմ ասա տղաներին, որ ուշ չքնեն, լիարժեք քուն ստանան։ Կենտրոնական նյարդային համակարգի հանգստանալու ամենալավ ժամանակը մինչև կեսգիշեր է։

Արքան իսկույն արձագանքեց բժշկի խնդրանքին։

– Տղանե՛ր, բժիշկը ճիշտ է ասում։ Դուք էլ գիտության մարդիկ եք… Համարեք նաև, որ բանակում եք։ Այսուհետև հրամայում եմ՝ ժամանակին քնել։ Երեկոյան ժամը տասից հետո արթուն չմնալ։ Պա՞րզ է։

– Պարզ է,– միաբերան պատասխանեցին տղաները։

– Ես հասկանում եմ ձեր հայրենասիրությունը, բայց սեփական մարմինն անխնա ծախսելը հեռանկարային չէ։

Բոլորը գլխով համաձայնության նշան արեցին։

– Ի՛մ Արքա, բայց մի բան ասեմ,– սկսեց Ռաֆայելը։

– Ասա՛, Ռաֆայել։

– Ասում էիր, որ մենք պատերազմի մեջ ենք։

– Այո՛։

– Բայց չէ՞ որ պատերազմի ժամանակ մարդիկ սեփական առողջությունն են վտանգել, նույնիսկ իրենց կյանքն են գիտակցաբար զոհաբերել։

– Իհարկե։ Ա՜, ուզում ես արդարացնել խմբի ինքնազոհաբերությունը։ Թույլ չեմ տա,– պատասխանեց Արքան։

– Չէ։ Պարզապես՝ որպես գիտնական, ուզում եմ հասկանալ մարդու իռացիոնալ վարքի պատճառը։ Մարդը գիտակցաբար զոհաբերում է իր համար ամենաթանկ բանը՝ սեփական առողջությունը, նույնիսկ՝ կյանքը։ Եվ դա՝ ոչ միայն պատերազմական պայմաններում, այլ նաև խաղաղ ժամանակ։ Բայց չէ՞ որ մարդու համար կյանքից ավելի թանկ բան չկա։ Ես հոգու անմահությունից իր ողջ կյանքում խոսող գուրուի խոսքերն եմ լսել՝ իր մահվան մահճում պառկած։ Սարսափում էր մահից ու հայհոյում իր ծերացած ու անպետք մարմինը։ Այն աստիճան, որ իր աշակերտներն էին զարմացել, ես կասեի՝ հիասթափվել։ Քրիստոսն՝ ինքը, սարսափել է մահվանից առաջ։ Այն աստիճան, որ քրտինքի փոխարեն արյուն է կաթել ճակատից։ Բայց, այնուամենայնիվ, մարդն իր կյանքի ընթացքում ապրում է՝ հաճախ չխնայելով սեփական առողջությունը։

– Չգիտեմ, Ռաֆայե՛լ։ Գուցե կա։

– Ի՛մ Արքա, ինչի՞ մասին ես ասում։

– Գուցե կա կյանքից ավելի թանկ բան։ Գիտեմ, որ սա պետական քարոզչություն է հիշեցնում։ Շատ լավ գիտեմ, որ բոլոր երկրներն էլ այս կամ այն կերպ իրենց քաղաքացիների մոտ հայրենասիրական զգացումներ են գրգռում, հատկապես՝ պատերազմական շրջանում, փորձելով ձևավորել ու ներարկել այն միտքը, թե կյանքից ավելի թանկ բան կա՝ հայրենիքը, ու որ ամեն մարդ պետք է անվարան զոհաբերի իր կյանքը հայրենիքի համար։ Հիշում եմ՝ նույնիսկ այդպիսի ֆիլմ կար՝ «Կյանքից ավելի թանկ» վերնագրով։ Կարծեմ լեհական ֆիլմ էր, բազմասերիանոց, հետպատերազմյան տարիներին՝ գուցե վաթ-

սունականներին, նկարահանված։ Բայց՝ չնայած այս ամենին, կա մի բան, գուցեև շատ բան, որ մարդ իր սեփական կյանքից առավել է համարում։ Դա շատերն են նկատել ու շատ վաղուց։ Հիմա չեմ հիշում, թե ով է ասել՝ «մարդիկ ապրում են այնպես, ասես սեփական կյանքից թանկ որևէ այլ բան կա»։ Ու սա՝ որևէ պետական քարոզչությունից անկախ։ Ես՝ ինքս, մի առիթով գրել էի. «Լիարժեքորեն չի ապրում նա, ով պատրաստ չի մեռնել բարու ու գեղեցիկի համար»։ Բայց, բացի բարուց ու գեղեցիկից կա նաև արդարություն, ճշմարտություն, ինչի համար մարդ պատրաստ է զոհաբերել իր առողջությունն ու կյանքը։ Այս ամենի շարքում, սակայն, ամենաառեղծվածայինը հայրենիք հասկացությունն է։

Բոլորը լուռ էին։

– Բոլորդ կհամաձայնեք, որ ներկայումս մեր երկրում հայրենասիրություն ներարկող ոչ մի քարոզչություն չի տարվում։ Այնուամենայնիվ, մեզանում հայրենասիրության պակաս չկա։

Բոլորը համաձայն էին Արքայի հետ։

– Ի՛մ Արքա, ճիշտ ասացիր, որ հայրենիք հասկացությունն ամենաառեղծվածայինն է ու դեռ չբացատրվածը։ Արվեստի շատ գործեր՝ պոեզիա, երգ, կինո փորձել են բացատրել, գոնե ներկայացնել այն, բայց ոչ ոք դեռ սպառիչ պատասխան չի տվել։ Չի բացատրել, թե ինչ է հայրենիքը,– համաձայնեց Ռաֆայելը։

– Գուցե ոչ ոք խորապես չի մտածել այդ ուղղությամբ,– մտքերի մեջ խորասուզված արտաբերեց Արքան։

– Բայց հայրենիք հասկացությունը հենց ամենացը-ցունն ու ամենաչբացատրվածն է,– շարունակեց Ռաֆայելը։

– Չգիտեմ, գուցե ոչ ոք չի կարողացել։ Ամեն դեպքում ամբարիշտ իշխանավորներին ձեռնտու չի բացահայտել հայրենիք հասկացության էությունը,– ասաց Արքան։

– Իսկ հոգեբանների՞ն, կամ՝ փիլիսոփաների՞ն... նրանց է՞լ ձեռնտու չի,– հակադարձեց Ռաֆայելը։

– Չգիտեմ... Գուցե չեն կարողացել։

– Ի՛մ Արքա, նոր ասացիր, որ բոլոր երկրներին

ձեռնտու չի բացահայտել հայրենիք հասկացության էությունը։

– Այո։

– Իսկ մե՞զ... Մենք մյուսներին նման չենք, ճի՞շտ է։

– Ճիշտ է։

– Այդ դեպքում մենք ինչո՞ւ չենք փորձում բացահայտել։

– Մենք...

Արքան բազմանշանակ լռեց։ Չէր ուզում խորանալ հարցի էության մեջ։ Ինչպե՞ս ասեր, որ կան բաներ, որ կարիք չկա բացահայտել։ Բայց Ռաֆայելը երեկվա պես անդրդվելի էր։ Արշակի ու մյուս բոլորի հայացքի ուղղությունն Արքայի կողմն էր։

– Եղբայրնե՛ր, կան բաներ, որ ավելի լավ կլինի մընան չբացատրված։ Բացատրությունը մի տեսակ էժանացնում է հասկացությունը, մանավանդ՝ ոչ լիարժեք բացատրությունը։ Ես համոզված չեմ, որ իմ բացատրությունը լիարժեք է։

– Ի՛մ Արքա, ամեն դեպքում չեմ հանգստանա, մինչև չասես մտքինդ,– վրա բերեց Ռաֆայելը,– իմ՝ գիտնականի, հետաքրքրասիրությունն ամեն ինչից վեր է։

– Ա՜, ևս մի բան, որ կյանքից առավել է,– կատակեց Արքան։ Բայց, տեսնելով գիտնականի անդրդվելի կեցվածքը, շարունակեց.

– Եղբա՛յր Ռաֆայել, հետաքրքրասիրությունը շատ անգամ է կործանել մարդկանց։

– Ես պատրաստ եմ,– պնդեց Ռաֆայելը։

Ռաֆայելն անդրդվելի էր, նրա գիտաշխատողները՝ նույնպես։ Ոչ ոք չէր զիջում Ռաֆայելին իր հետաքրքրասիրությամբ։ Երկար լռություն հաջորդեց։

– Լավ,– սկսեց Արքան,– խաղի մի ձև կա։ Մարդուն չորս-հինգ վայրկյան ընդմիջումներով հաջորդաբար տարբեր պատկերներ են ցույց տալիս ու պահանջում, որ անմիջապես գրի առնի ամեն պատկերից հետո իր մտքին եկածը։ Հիմա, եթե հակառակն անենք՝ ես ձեզ ասեմ հայրենիք։ Ի՞նչ մտապատկեր առաջացավ ձեր մտքում։

Մի քանի վայրկյան սպասելուց հետո, Արքան դիմեց բոլորին.

– Խնդրե՛մ, եղբայրնե՛ր։ Ասացեք, տեսնեմ, միանգամից ի՞նչ մտապատկեր առաջացավ ձեր մտքում՝ լսելով հայրենիք բառը։

– Մեր դրոշը,– ասաց Արշակը։

– Մասիս սարը,– ասաց Ռաֆայելը։

– Մեր պետության քարտեզը,– ասաց բժիշկը։

– Իմ ծննդավայրը,– ասաց գիտաշխատող տղաներից մեկը։

– Մեր քանդված եկեղեցիները,– ասաց մյուսը։

– Հողը, ջուրը, բնաշխարհը,– ասացին մյուսները։

Արքան՝ մի փոքր մտորելուց հետո, շարունակեց.

– Լավ։ Դրոշի մտապատկերը շատ խորհրդանշական է։ Բայց նկատենք, որ տարբեր ժամանակաշրջաններում մենք տարբեր դրոշներ ու զինանշաններ ենք ունեցել։ Այսինքն՝ հայրենիքը դրոշը չի, ոչ էլ՝ զինանշանը։ Դրանք միայն հայրենիքը ներկայացնող խորհրդանշաններ են։ Ավելի ճիշտ՝ ներկայացնելու փորձ են։ Հայրենիքը հնարավոր չէ մեկ կամ երկու խորհրդանշանով ներկայացնել։ Կամ, օրինակ՝ Մասիս սարը։ Մասիս սարը միայն հարակից շրջանների մարդկանց համար կարող է խորհրդանիշ հանդիսանալ։ Չե՞ որ թեկուզ հենց ներկայիս փոքրիկ Հայաստանի տարբեր շրջաններից այն չի երևում։ Սևանում, Լոռիում, Շիրակում, Զանգեզուրում, Արցախում մարդիկ չեն տեսնում Մասիսն ու երբեք էլ չեն տեսել։ Հողն ու ջուրն էլ տարբեր շրջաններում տարբեր են։ Կամ՝ մեր պետության քարտեզը։ Չէ՞ որ այն մեր պատմական տարածքի միայն մի փոքր մասն է։

Տարիներ առաջ ես հայրենիք հասկացության շուրջ նման զրույց ունեցա ընկերներիս հետ։ Նրանց առաջին մտապատկերները համարյա նույնն էին։ Մեր հետագա զրույցի ընթացքում մեծամասնությունը, հայրենիք ասելով, սկսեցին պատկերացնել նաև մեր պատմական տարածքները։ Սկզբում՝ առաջին հանրապետության տարածքը, հետո նաև՝ ողջ Արևմտյան Հայաստանը։ Նույնիսկ Կիլիկիան համարեցին մեր հայրենիքի մաս, երբ հարցը հասավ դրան։ Բայց իմ հարցին, թե, արդյո՞ք, Կիրովաբադը մեր հայրենիքն է, բոլորը պատասխանեցին՝ ոչ։ Բայց ինչո՞ւ։ Չէ՞ որ դա էլ մեր պատմական տարածքներից է, մեր

Գանձակն է։ Իմ՝ Նախիջևանի մասին հարցին, մի քիչ կմկմացին, բայց կրկին պատասխանեցին՝ ոչ։ Բայց չէ՞ որ այն մեզ ավելի մոտ է, քան Կիլիկիան։ Իսկ Ախալքալակի ու Ախալցխայի՝ մեր Ջավախքի, վերաբերյալ հարցիս շատերը դրական արձագանքեցին։

– Հետաքրքիր է,– բարձրաձայն մտորելով՝ արտահայտվեց Ռաֆայելը,– կարծում եմ՝ նույնը ես կասեի։ Բայց, ի վերջո, ո՞րն է մեր հայրենիքը։

– Եղբայրնե՛ր, նախ նկատենք, որ հայրենիքը հիմնականում նույնացվում է տարածքների հետ, առաջին հերթին՝ մեր հսկողության տակ գտնվող տարածքների, հետո նաև՝ մեր կորցրած՝ պատմական տարածքների։ Բայց նկատեցի՞ք, որ նույնիսկ այն տարածքները, որոնք չեն մտել պատմական Մեծ Հայքի մեջ, օրինակ՝ Կիլիկիան, հայրենիք ենք համարում, այն դեպքում, երբ մշտապես Մեծ Հայքի մաս կազմած Նախիջևանն ու Գանձակը՝ ոչ։

Հայրենիքը տարածքների հետ նույնացնելը մասամբ ճիշտ է։ Բայց եկեք ուշադրություն դարձնենք, որ հակասական են չափորոշիչները։ Մեր ոչ բոլոր կորցրած տարածքներն ենք հայրենիք համարում։ Արևմտյան Հայաստանը, նույնիսկ՝ Կիլիկիան, համարում ենք հայրենիք, իսկ Նախիջևանն ու Գանձակը՝ ոչ։ Իմ այն հարցին, թե արդյո՞ք Ուրմիա լճի հարակից շրջանները մեր հայրենիքն են, շատերը պատասխանեցին՝ ոչ։ Բացասական էր պատասխանը նաև ողջ Ատրպատականի մասին հարցիս։

– Հետաքրքիր է,– չկարողացավ իր ոգևորությունը զսպել Ռաֆայելը։

– Ամենահետաքրքիրն այն է, որ միանշանակ չէր վերաբերմունքը ներկա Հայաստանից դուրս գտնվող հայաշատ վայրերի հանդեպ։ Օրինակ՝ Ջավախքն ընդունվեց որպես մեր հայրենիքի մաս, չնայած՝ գտնվում է ուրիշ պետության տարածքում, սակայն մեր պատմական տարածքների մաս կազմող, մեր մյուս հարևան պետության՝ Իրանի, տիրույթում գտնվող հայաշատ վայրերը՝ ոչ։

– Շատ հետաքրքիր է։ Այնուամենայնիվ, ո՞րն է հայրենիքի էությունը,– չդիմացավ Ռաֆայելը։

– Տարօրինակն այն է, որ Իրանի տարածքի հայերն իրենք իրենց ապրելու վայրը հայրենիք չեն համարում։

Նրանց համար հայրենիք է ներկայիս Հայաստանի տարածքը,– շարունակեց Արքան։– Բայց ավելի տարօրինակ է, երբ Մեծ Եղեռնից մազապուրծ հայերի սերունդները, օրինակ՝ Հունաստանում ապաստան գտած հայերի զավակները, ովքեր ծնվել ու մեծացել են այնտեղ, նույնիսկ Հայաստան հայրենադարձվելուց հետո իրենց հայրենիքը դեռ Հունաստանն էին համարում։ Նույնը՝ Ֆրանսիայում ծնվածները։ Ես շփվել եմ Հունաստանում ծնված ու մեծացած հայերի հետ, ովքեր Հայաստանում հաստատվելուց, ընտանիք կազմելուց ու երկար տարիներ ապրելուց հետո, այդպես էլ Հայաստանն իրենց հայրենիքը չհամարեցին։ Դեռ շարունակում էին Հունաստանը սիրել, հունական պարեր պարել, հունական երաժշտություն լսել և այլն։ Երբեք հայկական երգ ու պար չսիրեցին։ Ի վերջո, յոթանասունականներին ողջ ընտանիքով տեղափոխվեցին Ֆրանսիա՝ ֆրանսահայ կնոջ «հայրենիքը»։ Չնայած՝ պիտի ասեմ, որ նրանց որդիներից մեկը հետո թոնդ հայրենասեր դարձավ հենց այնտեղ՝ Ֆրանսիայում, ու միացավ Հայաստանի Ազատագրության Գաղտնի Բանակի մարտիկներին։

Ի դեպ, Կալիֆորնիայի հայերը, թեկուզև իրենց հայրենիքն են համարում Հայաստանն՝ իր ներկայիս տարածքով, բայց չեն էլ մտածում թողնել իրենց բնակության վայրն ու գալ Հայաստան։ Եթե նույնիսկ հնարավորություն ունենայինք տեղավորել բոլորին, միևնույն է՝ չէին գա։

– Ի՛մ Արքա, չափազանց հետաքրքրական են դիտարկումներդ,– նկատեց բժիշկը։

– Ի՛մ եղբայրներ, դուք ի՞նչ կարծիքի եք. ո՞րն է վերջապես մեր հայրենիքը,– հարցրեց Արքան։

– Արդեն դժվարանում եմ,– ասաց Արշակը։

– Եթե ընդունենք, որ պատմական Մեծ Հայքի ողջ տարածքն է մեր հայրենիքը, ապա ինչո՞ւ Գանձակն ու Նախիջևանը՝ չեն,– շարունակեց Արքան։

– Գուցե նրանից է, որ այնտեղ այլևս հայ չկա, ու այդ տարածքները հիմա մեզ թշնամի երկրի կազմում են…– փորձեց պատասխանել Արշակը։

– Շատ մոտիկ է։ Բայց այդ դեպքում ինչո՞ւ ենք Արևմտյան Հայաստանի տարածքները հայրենիք համարում։ Չէ՞ որ այդ տարածքները նույնպես մեզ թշնամի երկրի

կազմում են ու այնտեղ ևս հայ չի ապրում։

– Չգիտեմ, դժվարանում եմ...– պատասխանեց Արշակը, գլուխը տարուբերելով ու, խնդրի ծանրությունից մի թեթև ժպտալով, հայացքը հառեց ներքև։

– Կամ ինչո՞ւ ենք Արևմտյան Հայաստանի տարածքները հայրենիք համարում՝ միևնույն ժամանակ դուրս թողնելով Վասպուրականի մեծ մասն ու Պարսկահայքը, չնայած նրան, որ այդ տարածքները մեզ թշնամի երկրի կազմում չեն,– հակադարձեց Արքան։

– Չգիտեմ, գուցե Պարսկահայքը շատ վաղուց ենք կորցրել, պատերազմում տանուլ տվել՝ դրանի՞ց է, – փորձեց պատասխանել Արշակը՝ գլուխը բարձրացնելով։

– Գուցե։ Բայց չէ՞ որ ողջ Հայաստանը, մեր ներկայիս տարածքը ներառյալ, միևնույն ժամանակ ենք տանուլ տվել։

– Ա՛յ, դա հետաքրքիր է,– արտահայտվեց բժիշկը։

– Ուրեմն, եթե պատմական տարածքներով է որոշվում հայրենիքը, ապա Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հետ միասին մեր Գանձակը, Նախիջևանը, Ատրպատականը, Վասպուրականի ու Պարսկահայքի տարածքները՝ պատմական Խոյն ու Սալմաստը ևս՝ պիտի համարեինք մեր հայրենիքի մաս։ Բայց, եթե որոշվում է հայությունի առկայությամբ, ապա Գանձակի, Նախիջևանի ու Պարսկահայքի պես՝ Արևմտյան Հայաստանն ու մանավանդ Կիլիկիան, չպիտի համարեինք մեր հայրենիքի մաս։

Հիշենք, որ մինչև Մեծ Եղեռնը Մեծ Հայքի ու Կիլիկիայի ողջ տարածքը, նույնիսկ ընդհուպ մինչև Փոքր Ասիա թերակղզու արևմտյան ափերը հասնող տարածքները հայաշատ էին։ Որ համարյա միևնույն ժամանակ հայաթափվեցին և՛ Արևմտյան Հայաստանի, և՛ Կիլիկիայի, և՛ Վասպուրականի ու Պարսկահայքի տարածքները։ Ընդ որում՝ Գանձակն ու Նախիջևանն ավելի ուշ են հայաթափվել։ Բայց՝ չնայած դրան, մենք հատկապես Գանձակն ու Նախիջևանն այլևս հայրենիք չենք համարում։

– Ի՛մ Արքա, արդեն խճճվում եմ,– արտահայտվեց Ռաֆայելը։

– Եկեք վերաքննենք այս երկու չափորոշիչները։ Նախ՝ հայաշատության չափորոշիչը, հետո՝ պատմական

տարածքների,– շարունակեց Արքան։– Ասացեք խնդրեմ, Կալիֆորնիայի, ընդհանրապես՝ Միացյալ Նահանգների, Եվրոպայի կամ Ռուսաստանի, նաև՝ Միջագետքի ու Միջերկրականի կամ Միջին Ասիայի հայաշատ վայրերը հայրենի՞ք են մեզ համար, թե՝ ոչ։

– Ոչ,– միաբերան պատասխանեցին բոլորը։

– Իսկ, եթե այդ վայրերը լինեին առանձին ինքնավարություններ,– շարունակեց Արքան։

Շատերը տարակուսեցին։

– Իսկ, եթե այդ հայաբնակ շրջանները չլինեի՞ն որևէ պետության կազմում։ Ասենք, օրինակ՝ պատկերացրեք մի հայաբնակ կղզի օվկիանոսի մեջ։

Բոլորը լուռ էին։

– Լավ... Փաստորեն, Հայկական Լեռնաշխարհից դուրս, թեկուզև ինքնակառավարվող հայաշատ որևէ շրջան հայրենիք չենք համարում։ Իսկ Կիլիկիա՞ն։ Չէ՞ որ այն հենց սկզբից դուրս է եղել Հայկական Լեռնաշխարհի սահմաններից, բայց մենք այն հայրենիք ենք համարել ու դեռ շարունակում ենք համարել։

Ոչ ոք պատասխան չուներ։

– Բայց նկատենք, որ հայության բացակայությունն Արևմտյան Հայաստանում մեզ չի խանգարում այն հայրենիք համարել։

Բոլորն ուշադիր լսում էին Արքային։ Նա կարծես գիտեր՝ ուր է տանում։

– Լավ, անցնենք պատմական տարածքի չափորոշիչին,– շարունակեց Արքան։– Ի՞նչ կասեք այն տարածքների մասին, որոնք ինչ-որ ժամանակ, ընդ որում՝ դարեր շարունակ, մերն են եղել։ Ասենք, օրինակ՝ Միջերկրականի արևելյան ափերը՝ Լիբանանն ու Պաղեստինը։ Կամ այն տարածքները, որ չնայած Մեծ Հայքի սահմաններից դուրս են եղել, բայց ժամանակին Տիգրան Մեծի կայսրության մասն են կազմել։

– Ոչ,– միաբերան ասացին բոլորը։

– Դարձյալ գանք Կիլիկիային։ Չե՞ որ այն Հայկական Լեռնաշխարհի սահմաններից դուրս է, Միջերկրական ծովի ափին, սահմանակից Լիբանանին։

– Գուցե, որովհետև այնտեղ պետականություն է եղել,

ու միայն վերջերս է հայաթափվել,– փորձեց պատասխանել մեծ արքայազնը։

– Հրաշալի է։ Հիմա արդեն ունենք երրորդ չափորոշիչը՝ պետականությունը։ Դրան քիչ հետո կանդրադառնանք։ Բայց շարունակելով խոսել պատմական տարածքի չափորոշիչի մասին՝ փաստորեն, Հայկական լեռնաշխարհի, Մեծ Հայքի տարածքներն ենք հիմնականում նույնացնում մեր հայրենիքի հետ,– եզրակացրեց Արքան։– Անկախ նրանից՝ որևէ հայ ապրում է, թե՝ ոչ։ Գումարած Կիլիկիան։

Բոլորը գլխով համաձայնության նշան արեցին։

– Այդ դեպքում ինչո՞ւ ենք Գանձակը, Նախիջևանը, Վասպուրականի մեծ մասն ու Պարսկահայքը դուրս թողնում։

Ոչ ոք պատասխան չուներ։

– Լավ,– շարունակեց Արքան,– իսկ, եթե, Աստված չանի իհարկե, բայց պատկերացրեք՝ մի երկնաքար գա, հարվածի ու ոչնչացնի մեր լեռնաշխարհը, տեղը լցվեն օվկիանոսի ջրերն ու վերջ։ Մեր սփյուռքի հայրենակիցները կհամարե՞ն, որ հայրենիք ունեն։ Կամ, թեկուզ, հենց մենք՝ ինքներս, եթե հասցրած լինենք ապաստան գտնել հարևան երկրներում, ասենք՝ Աֆղանստանում, կամ Ռուսաստանում՝ Կովկասյան լեռներից հյուսիս, մենք կհամարե՞նք, որ հայրենիք ունենք։

Ամեն ինչ միանգամից բարդացավ։ Բոլորը խորը մտքերի մեջ ընկան։

– Իսկ մեր նոր ապաստանն Աֆղանստանի տարածքում, օրինակ, մեզ համար նոր հայրենիք կհամարե՞նք,– շարունակեց Արքան։

– Գուցե,– լսվեց Ռաֆայելի ձայնը։

– Իսկ, երբ սկսենք մեր նոր ապաստանն Աֆղանստանի տարածքում համարել հայրենիք, կսկսե՞նք արդյոք հայաշատ Կալիֆորնիան կամ Ռուսաստանի ու Միջին Ասիայի հայաշատ շրջանները նույնպես հայրենիք համարել։ Չէ՞ որ նրանք էլ են օտար պետության տարածքում։

– Գուցե ոչ,– ասաց Ռաֆայելը։

– Ինչո՞ւ։ Ուրեմն մեր նոր բնակավայրը հայրենիք համարելու համար մեզ սարե՞ր են պետք։

– Հետաքրքիր է: Երևի…– ասաց բժշկը:

– Այդ դեպքում ինչո՞ւ, օրինակ, հիմա Հայկական լեռնաշխարհից ոչ շատ հեռու գտնվող, սարոտ ու հայաշատ վայրերը հայրենիք չենք համարում: Կամ, օրինակ՝ հայրենիք կհամարեի՞նք, եթե ապաստան գտած լինեինք սարոտ մեկ այլ տարածքում, օրինակ՝ Տիբեթում կամ Ալթայում, Պամիրում կամ ասենք՝ Միացյալ Նահանգների արևմտյան սարոտ շրջաններում:

– Երևի… չգիտեմ,– դարձյալ լսվեց բժշկի ձայնը:

– Բայց ինչո՞ւ այդ դեպքում Կալիֆորնիայի, Լիբանանի, կամ Սիրիայի հայաշատ ու միևնույն ժամանակ սարոտ շրջանները հայրենիք չենք համարում:

Ամեն բան խճճվել էր:

– Հիմա գանք պետականության չափորոշիչին: Կալիֆորնիայի, Ռուսաստանի, Լիբանանի, կամ Սիրիայի ու Իրաքի, նաև Միջին Ասիայի հայ համայնքներն ապրում են ցրված: Պետականություն չունեն, նույնիսկ ինքնավարություն չունեն: Նրանք ամբողջովին ենթարկվում են տեղի իշխանություններին: Նրանք բոլորն, իհարկե, ունեն որոշ մշակութային ինքնուրույնություն, սակայն չունեն պետականություն: Հենց այս պատճառով է, որ դժվարանում ենք այդ շրջանները հայրենիք համարել՝ չնայած դրանց հայաշատությանը:

Հիմա՝ ուշադիր: Աֆղանստանում, Տիբեթում, կամ Միացյալ Նահանգների արևմտյան՝ համարյա անմարդաբնակ, տարածքներում մեր ապաստան գտնելու օրինակի դեպքում, պարզապես ենթադրեցինք, որ պիտի ապրենք միևնույն տարածքում համատեղ և ունենանք որոշ ինքնավարություն՝ պետականություն: Մեծամասամբ մեր այս ենթադրությունն է պատճառը, որ մեր նոր բնակավայրը հակված ենք հայրենիք համարել:

Բայց եկեք վերադառնանք երկնաքարի օրինակին: Ենթադրենք այդ չարաբաստիկ երկնաքարն ավելի մեծ է ու ողջ մոլորակն է կործանելու, բայց մենք՝ հայերս, արդեն տիրապետելով հակագրավիտացիոն տեխնոլոգիային, նստում ենք մեր տիեզերանավերն ու փրկվում: Մի մոլորակ ենք գտնում ու տեղավորվում: Հիմա որտե՞ղ է մեր հայրենիքը:

– Պարզ է՝ այդ մոլորակի վրա,– համարձակ պատասխանեց Ռաֆայելը։

– Ճիշտ է։ Բայց կրկին ենթադրեցինք, որ այդ նոր մոլորակի վրա ապրում ենք միևնույն տարածքում, միատեղ և ունենք պետականություն։ Եթե, օրինակ, ապրեինք ցրված, տեղաբնակների մեջ, ապա հայրենիք չէինք ունենա, ճի՞շտ է։

Բոլորը գլխով արեցին։

– Փաստորեն քննարկեցինք երեք չափորոշիչ՝ տարածքը, հայաշատությունն ու պետականությունը։ Տեսանք նաև, որ տարածքից ավելի կարևոր են հայաշատությունն ու պետականությունը։

– Իսկ հիմա եկեք պատկերացնենք...

– Ի՛մ Արքա, մի րոպե, խնդրում եմ։ Էս ամեն ինչը միանգամից մի քիչ շատ էր։ Թույլ տուր մարսենք,– Արքային ընդհատեց Ռաֆայելը։

Արքան ժպտաց։ Իրոք շատ ծանր էր բացահայտումների տարափը։ Հազարամյակներ շարունակ մարդկանց գիտակցությունը վարագուրող բազմաթիվ շերտեր ցած էին բերվել։ Նոր աշխարհ էր բացվում։ Ժամանակ էր պետք ընտելանալու համար։

– Ի՛մ Արքա, փաստորեն հայրենիքի հիմնական չափորոշիչը հայաշատությո՞ւնն է՝ հայ համա՞յնքը,– փորձեց անձամբ իր և բոլորի համար ամրապնդել Արքայի բացահայտումը բժիշկը։

– Համարյա, բժի՛շկ։ Համարյա։ Բայց միայն այն դեպքում, եթե այդ հայաշատ համայնքն ապրում է համատեղ, միատեղ ու ինքնակառավարվող համակարգ է։ Ցրված, ուրիշ ազգերի մեջ ապրող հայերին, որքան էլ բազմաքանակ, հայրենիք չես համարի։ Ա՛յ, Միացյալ Նահանգներում կամ մանավանդ Ռուսաստանում ավելի շատ հայ է ապրում, քան Հայաստանում։ Բայց միևնույն է՝ հայերի այդ բազմությունները հայրենիք չեն, որովհետև ապրում են ցրված, չունեն սեփական ինքնակառավարում՝ պետականություն։ Նմանապես՝ մենք հայրենիք չենք ունենա մեր նոր մոլորակի վրա, եթե ապրենք ցրված, տեղի ազգերի մեջ, ենթակա նրանց պետական համակարգին։

Բայց շարունակությունը լսեք։ Եկեք պատկերացնենք,

որ մեր նոր մոլորակի ոչ բոլոր շրջաններն են բարեբեր։ Շուտով սննդի պակասից գժտություն է ընկնում ազգի մեջ։ Դժվարություններին ձեռք-ձեռքի, միահամուռ դիմակայելու փոխարեն երկփեղկվում է ազգը։ Մի փոքր խումբ դավադրաբար զավթում է իշխանությունը, նաև՝ բարեբեր հողերը, ստրկացնում ոմանց, իսկ մեզ՝ վռնդում դեպի տափաստանները։ Հիմա ունե՞նք հայրենիք, թե՞ ոչ։ Եթե այո, ապա որտե՞ղ է այն։

– Կարծում եմ՝ մեր հայրենիքը հիմա այդ մոլորակի տափաստաններում է,– փորձեց պատասխանել Ռաֆայելը։

– Ճիշտ է, բայց միայն այն դեպքում, եթե չցրվենք տեղաբնակների մեջ։ Մնանք ձեռք-ձեռքի, ուս-ուսի՝ համախմբված ինքնակառավարվող համայնք։

Մի փոքր դադարից հետո, Արքան շարունակեց.

– Ընդհանրապես, հայրենիքը միմյանց հոգեհարազատ ու առաքինի արժեհամակարգ ունեցող մարդկանց բազմությունն է՝ ազգը։ Մի խումբ ոճրագործների ու նրանց ենթակա մարդկանց խումբը հայրենիք չէ, նույնիսկ, եթե կա պետականություն։

Հիմա պա՞րզ է, թե ինչու էին մարդիկ առանց խղճի խայթի լքում Հայաստանը հանրապետության տարիներին։ Որովհետև նրանք լքում էին ոչ թե իրենց հայրենիքը, այլ անբարենպաստ մի երկիր։

Մի խոսքով՝ պատմական տարածքի չափորոշիչը համարյա նշանակություն չունի։ Նշանակություն չունի նաև հայաշատությունը։ Նշանակություն չունի նույնիսկ պետականությունը։

Երկար ու խորը լռություն տիրեց։ Բոլորին դեռ ժամանակ էր պետք։ Դժվար էր հայրենիք հասկացության երեք չափորոշիչները բացահայտելուց հետո միանգամից տեսնել դրանց արժեզրկումն ու փոխարենը նոր չափորոշիչի՝ ազգի, ի հայտ գալը։

Վերջապես Ռաֆայելը խախտեց լռությունը։

– Ի՛մ Արքա, բայց հետաքրքիր է՝ ինչո՞ւ ենք Արևմըտյան Հայաստանի տարածքները համարում մեր հայրենիքը,– հարցրեց նա։

– Որովհետև այդ տարածքները համարյա դատարկ են։

– Ի՛մ Արքա, չհասկացա,– հանկարծակիի եկավ Ռաֆայելը։

– Որովհետև մենք այդ համարյա դատարկ տարածքների վրա մտովի տեղադրում ենք մեր ազգին, իր կատարյալ՝ առաքինի, արժեհամակարգով։ Իսկ Գանձակն ու Նախիջևանը, նաև՝ Վասպուրականն ու Պարսկահայքը չենք համարում մեր հայրենիքը, որովհետև այդ տարածքները դատարկ չեն։ Ու հույս էլ չունենք, թե կդատարկվեն։ Այդ պատճառով չենք կարող մտովի այնտեղ տեղադրել մեր ազգին՝ իր առաքինի արժեհամակարգով հանդերձ։ Այն, ինչն ազատորեն անում ենք Արևմտյան Հայաստանի, նույնիսկ՝ Կիլիկիայի դեպքում։ Նկատենք, որ Կիլիկիան նույնպես համարյա դատարկ տարածք է Արևմտյան Հայաստանի պես։ Իսկ Գանձակն ու Նախիջևանը, նաև՝ Վասպուրականն ու Պարսկահայքը հակառակը՝ լցվում են ու «ամրացվում» մեզ թշնամի բնակչությամբ։

– Շատ հետաքրքիր է, շատ,– չկարողացավ իր խանդավառությունը թաքցնել Ռաֆայելը։– Փաստորեն, մենք հայրենիք չունեինք հանրապետության տարիներին։

– Այո, հանրապետության տարիներին մենք հայրենիք չունեինք։ Հանրապետության տարիներին նույնիսկ պետություն չունեինք։ Այդ տարիներին մենք ունեինք միայն մի խումբ մարդկանց իշխանություն մյուսների վրա։ Մենք թե՛ ներսում, թե՛ հատկապես դրսում՝ սփյուռքում, ունեինք միայն հայրենիքի պատրանք։ Հայաստանի Հանրապետության, նաև Արևմտյան Հայաստանի տարածքի վրա մտովի տեղադրում էինք այն ազգին, որը կար մեր մտքում, մեր գենետիկ կոդից բխող պատկերացումներում, մեր բաղձանքներում, այն ազգին, որը մեր ազգային ուսմունքն էր ստեղծել հազարամյակներ առաջ ու ապրել էր՝ ըստ այդ ուսմունքի։ Ղարաբաղյան կռվի մեր հերոսներն իրենց կյանքն էին զոհաբերում հենց այդ հայրենիքի համար։ Նույնիսկ Արևմտյան Հայաստանը հայրենիք չէինք համարի, եթե այնտեղ ևս լիներ այն նույն իրավիճակը, որը կար Հայաստանի Հանրապետությունում՝ մի խումբ ոճրագործների իշխանություն մյուսների վրա, կողոպուտ ու անարդարություն։ Այդ տարածքից ևս կլիներ արտագաղթ, այնպիսի արտագաղթ, ինչպիսին որ կար Հայաստանի

Հանրապետությունից։ Այդ էր պատճառը, որ իմաստ չուներ գրավել կամ որևէ այլ կերպ ձեռք բերել Արևմտյան Հայաստանն ու միացնել այն Հայաստանի Հանրապետությանը։

Բոլորը լուռ էին։ Արքայի բացահայտումների շղթան շատ հեռու էր տարել նրանց։ Մի նոր աշխարհ էր բացվել։ Որոշ ժամանակ անց լռությունը կրկին խախտեց Ռաֆայելը.

– Ի՛մ Արքա, նոր ասացիր, որ պետություն չունեինք Հանրապետության տարիներին։

– Այո։ Մենք միայն պետության պատրանք ունեինք՝ պետականություն։ Մենք միայն մի խումբ իշխանավորների իշխանության տակ ապրող ժողովուրդ էինք, ոչ թե՝ ազգ։

Արքան զգաց, որ դեռ պարզաբանման կարիք կար։

– Եղբայրնե՛ր, ժողովուրդը թեև գենետիկ, սակայն մշակութային ընդհանրություն չունեցող մարդկանց բազմությունն է։ Իսկ ազգը՝ մշակութային ընդհանրություն ունեցող մարդկանց բազմությունը։ Այլ կերպ ասած՝ ժողովուրդը հակամարտ, իրարամերժ նպատակներ ունեցող մարդկանց բազմությունն է։ Իսկ ազգը՝ միասնական նպատակ ու օրակարգ ունեցող մարդկանց բազմությունը։ Կամ՝ ժողովրդին բնորոշ է հակամարտությունը, իսկ ազգին՝ համագործակցությունը։ Աննպատակ, մանավանդ կապիտալիզմին ներհատուկ մրցակցությամբ պառակտված ու հակամարտ մարդկանց բազմությունը ժողովուրդ է միայն ու չի կարող հայրենիք համարվել, կամ՝ ազգ։ Իսկ միասնական նպատակ ունեցող ու համագործակցող մարդկանց բազմությունն ազգն է։ Միայն միասնաբար գործող ազգն է, որ կարող է հայրենիք համարվել, կամ՝ պետություն։

– Ուրեմն ազգը հենց հայրենի՞քն է,– փորձեց ճշտել Ռաֆայելը։

– Այո՛, ազգը հենց հայրենիքն է,– հաստատեց Արքան։

Սա ցնցեց շատերին։

– Ի՛մ Արքա, փաստորեն, ո՛չ տարածքն է չափորոշիչ, ո՛չ քանակությունը...– հարցրեց Ռաֆայելը։

– Միանգամայն ճիշտ է,– պատասխանեց Արքան։–

Նույնիսկ, պետականությունը որոշիչ չէ։ Մեր վերը քննարկած չափորոշիչներից ոչ մեկն էլ որոշիչ չեն. ո՛չ տարածքը, ո՛չ հայաշատությունը, ո՛չ էլ նույնիսկ պետականությունը։ Միակ չափորոշիչն ազգն է՝ միասնական ուսմունքի շուրջ համախմբված, համագործակցող, հոգեհարազատ, համախոհ, զինակից մարդկանց բազմությունը։ Ի դեպ, քանակն էլ որոշիչ չի։ Հայրենիք է նույնիսկ երկու համախոհ ու հոգեհարազատ մարդկանց բազմությունը։

– Փաստորեն, եթե ավելի խորանանք...– փորձեց բարձրաձայն մտորել Ռաֆայելը։

– Պատկերավոր ասած՝ գենետիկ կոդ, դրանից բխող ուսմունք, ուսմունքի շուրջ համախմբված ազգ, որն էլ հենց հայրենիքն է,– ամփոփեց Արքան։

– Ի՛մ Արքա, բայց լավ չհասկացա պետականության ու պետության տարբերությունը,– փորձեց ճշտել Ռաֆայելը։

Արքան, մի փոքր ժպտաց։ Հասկացավ, որ, նախօրոք մանրամասն չբացատրելով դրանց տարբերությունը, որոշ շփոթմունքի առիթ էր տվել։

– Պետությունը միասնական ուսմունք ու մշակույթ ունեցող, միևնույն նպատակի ուղղությամբ համագործակցող ազգն է, որի իշխանավորները, ավելի ճիշտ՝ առաջնորդները՝ նահապետները, մտահոգված են ազգի բարօրությամբ։ Այլ կերպ ասած՝ պետությունը հենց հայրենիքն է, կամ՝ ազգը։

Իսկ պետականությունը պետության պատրանք է՝ կեղծ պետություն։ Պետականությունը մի խումբ մարդկանց իշխանությունն է անուսմունք, անմիաբան ու իրարամերժ նպատակներ ունեցող ժողովրդի վրա։ Մենք հանրապետության տարիներին ունեցել ենք միայն պետականություն, բայց ոչ՝ պետություն։ Մենք նույնիսկ պետություն դառնալու ճանապարհին չէինք, որովհետև չունեինք այն ուսմունքը, որը մեզ համար ընդհանուր նպատակ կձևավորեր ու կհամախմբեր մեզ համագործակցելու այդ նպատակին հասնելու համար։ Անուսմունք ու աննպատակ ապրող ժողովուրդը ո՛չ պետություն է, ո՛չ ազգ, ո՛չ էլ հայրենիք։

Մի փոքր դադարից հետո Արքան շարունակեց.

– Մեր գենետիկ կոդից բխում է Արարչական ուսմունք: Մենք արարչագործ ազգ ենք: Մեր ազգի գործն արարելն է: Մեր ազգը կորցնում է հայրենիք համարվելու որևէ հիմք, եթե զբաղված չէ արարելով: Միայն արարող ազգը կարող է հայրենիք համարվել՝ իր Արարչական, նահապետական ուսմունքով ապրող ազգը, այն ազգը, որն ապրում է նահապետական սոցիալիզմի կամ միապետական սոցիալիզմի սկզբունքներով՝ համագործակցության ու փոխօգնության միջավայրում: Կապիտալիզմի մրցակցային հարաբերություններով ապրողների պառակտված ու հակամարտ բազմությունն ազգ չէ: Հետևաբար չի կարող հայրենիք համարվել: Կապիտալիստական՝ թշնամական, փոխհարաբերություններով ապրողների բազմությունը միայն ժողովուրդ է՝ խառնամբոխ:

– Ի՛մ Արքա, մի՞թե մեր Հայկական լեռնաշխարհի հարցն այդքան անկարևոր է,– հարցրեց բժիշկը:

– Անկարևոր չի, բժիշկ: Մեր գենետիկ կոդը ձևավորվել է հենց այս լեռնաշխարհում ու կրում է այս լեռնաշխարհին բնորոշ վիբրացիաների դրոշմը: Ու հիմա, ուր էլ գնանք, մեզ հետ տանելու ենք այդ դրոշմը: Կարող ենք հայրենիք ստեղծել, օրինակ՝ Կիլիկիայում: Բայց իդեալական կլինի, որ մեր հայրենիքը ստեղծենք հենց մեր բնօրրանում: «Արարչական օրենքներ»-ում հենց այդպես էլ ամրագրված է՝ «Հայրենիքը մայր հողի վրա ապրող ու արարող ազգն է»:

– Ի՛մ Արքա, մեծ բեռ ընկավ ուսերիցս,– թեթևացած թնդաց Ռաֆայելը:– Սա պիտի բոլորն իմանան:

– Կարևորն առաքինի, Արարչական ուսմունքն է ու նրա շուրջ ձևավորված ազգը: Ինչպես արվեստագետը կարիք չունի բացատրել իր ստեղծագործության իմաստը, այնպես էլ կարիք չկա բացատրել հայրենիքի էությունը: Կարևորը, որ այն կա: Բայց, թերևս, ճիշտ ես: Ի վերջո բոլորը պիտի իմանան: Գուցեև գիրք գրեմ այդ մասին: Շատ ուրիշ թյուրիմացությունների պարզաբանման կարիք նույնպես կա:

– Իսկ լեզո՞ւն, ի՛մ Արքա,– շտապեց Ռաֆայելը:

– Լեզուն մեր գենետիկ կոդի վիբրացիաներն են, հետևաբար՝ մեր ուսմունքի բաղկացուցիչ մասը,– պատաս-

խանեց Արքան։

– Բայց շատ եմ լսել, որ ասում են՝ մեր լեզուն մեր մշակույթի մասն է։

– Ես նույնպես շատ եմ լսել, բայց լեզուն ավելի խորն է նստած, քան՝ մշակույթը։ Լեզուն ձևավորվել է ուսումնքին զուգահեռ, նույնիսկ՝ ուսումնքից առաջ։ Պարզապես, քանի որ մարդիկ մեր ուսմունքի մասին գաղափար չեն ունեցել, ապա լեզուն վերագրել են մշակույթին։ Շատերը նույնիսկ մշակույթ ասելով միայն ֆոլկլոր են հասկացել։ Պետք է հիշել, որ մշակույթը ուսմունքի հիման վրա ձևավորված այն զսպաշապիկն է, այն ներքին մեխանիզմը՝ չգրված օրենքների տեսքով, որ պայմանավորում է միջանձնային հարաբերությունները։ Այսինքն՝ նախ գենետիկ կոդից բխող լեզու, ուսմունք, հետո՝ մշակույթ։

Մի փոքր դադարից հետո, Արքան ասաց.

– Լավ... Շատ նստեցինք, եղբայրնե՛ր։ Ես դեռ իմ այգին չեմ մտել։

Այս ասելով՝ Արքան վեր կացավ սեղանից։ Նրան հետևեցին մյուսները։

– Եղբայրնե՛ր, դուք այսօր հանգստացեք,– ասաց Արքան՝ դիմելով գիտաշխատող տղաներին, և Ազատի, Արշակի ու արքայազնների հետ միասին դիմեց դեպի այգին։ Նրանց էին ուղեկցում Արքայի թիկնապահ գնդի մարտիկները։

Արքան մի փոքրիկ այգի էր հիմնել ամրոցի ու մատուռի միջև ընկած տարածքում: Դա հիմնականում մորու և մոշի այգի էր: Կար նաև մամուխ ու մասուր իհարկե: Երբ այգի հասան, Արքան սկսեց զննել իր բույսերը:

– Շուտով կհասնի մորին: Վերջերս հեչ անձրև չեկավ: Դժվար են աճում: Ջորային է այս տարի,– ասես ինքն իր հետ խոսելով, Արքան անցնում էր շարքերի միջով, սիրով ու խանդաղատանքով շոշափելով իր բույսերը:

Արշակն ու արքայազնները կրնկակոխ հետևում էին նրան:

– Արշա՛կ:

– Ի՛մ Արքա...

– Հեռահարությունը բավարա՞ր ես գտնում:

– Վատ չի, ի՛մ Արքա, հիսուն կիլոմետրը բավարար է, բայց լավ կլիներ ավելի հեռու խփեր:

– Հա, լավ կլիներ,– դեռ մտքերի մեջ խորասուզված արձագանքեց Արքան ու շարունակեց:– Իսկ մեծի համար տես՝ ինչ եմ մտածել: Ուրեմն, մեծն անպայման պետք է սարքել: Նախ փորձելու համար աշխատո՞ւմ է, թե՝ ոչ: Սկզբում կփորձարկենք մոտիկ բաների վրա, ասենք՝ սարից սար: Եթե աշխատեց՝ շատ լավ: Գոնե կիմանանք, որ մի մեծ մահակ ունենք թշնամական օդային նավատորմի դեմ, նաև՝ մեր սահմաններին մոտ գտնվող թշնամական նավթամուղ կամ նավթավերամշակման գործարանների աշխատանքը խաթարելու համար:

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ:

– Բայց, դրանց արբանյակային նավատորմն է ինձ շատ անհանգստացնում: Դրա դեմ անզոր ենք: Սրիկաներն ամեն ինչ տեսնում են վերևից:

– Ի՛մ Արքա, ես էլ եմ դրանից վախենում:

– Գիտես, եթե մեծը նույնիսկ չաշխատի, կարելի է սարքել ու համարյա ի ցույց դնել, հետն էլ դրանց ականջը գցել, որ ունենք ու որ աշխատում է: Իսկ, եթե սկսեն մեզ նեղել, միջազգային հանրության ներկայությամբ կհայտարարենք, որ ունենք, նաև՝ որ թույլ չենք տա մեր երկրի վրայով արբանյակների թռիչքը:

– Իսկ, եթե չհավատա՞ն...– հարցրեց մեծ արքայազնը։

– Դա հնարավոր է։ Մեզ փորձելու համար գուցեև վտանգեն իրենց արբանյակներից մեկը։ Բայց, եթե մեծ համոզմունքով զգուշացնենք, կաշխատի։ Այս տարբերակին կդիմենք՝ որպես վերջին միջոց։ Նրանք գիտեն, որ մեր հոլոգրաֆիկ զենքն իրենցինից հզոր է։ Գիտեն, որ ինտելեկտուալ կարողություն միշտ ունեցել ենք։ Կհավատան։ Նույնիսկ մեկ արբանյակ չեն վտանգի։ Դա ահագին գումար է նրանց համար։

– Բայց մեծ ռիսկ է,– վրա բերեց մեծ արքայազնը։

– Շատ մեծ... Դա որպես վերջին միջոց թող մնա։ Ամեն դեպքում պետք է սարքել մեծը։ Փորձել է պետք նաև լազերը։ Դրանց արբանյակները չեն թողնում հանգիստ քնեմ։

– Ի՛մ Արքա, բայց ուրիշ լծակներ շատ ունենք,– փորձեց Արքային հանգստացնել Արշակը։

– Դրանք միայն սահմանափակ վնաս կարող են պատճառել մեր թշնամիների տնտեսություններին։ Իսկ նրանք, մի քանի հարվածով մեր կենսական նշանակության օբյեկտները շարքից հանելով, մեզ լավ կխեղճացնեն։ Շատ վտանգավոր է։

– Բայց կհամարձակվե՞ն,– տարակուսեց մեծ արքայազնը։

– Չգիտեմ... Ինչո՞ւ չէ։ Մինչև ապացուցենք, որ իրենք են մեզ հարվածել... Հետո՝ թեկուզև միջազգային հանրությունն իմանա... ո՞վ ինչ կարող է անել։ Մեր դաշնակիցն էլ շատ անվճռական դուրս եկավ։ Հաստատուն ռազմավարություն չի ցուցաբերում։ Դեռ սեփական հաստատուն ուսմունք չեն ձևավորել։ Ամաչում են, որ մենք էլի առաջինն եղանք։ Մի տեսակ ստորակարգ են զգում իրենց մեր ազգի հոգևոր հզորության առջև։ Երկչոտ են։ Գործի են անցնում միայն, երբ դանակը ոսկորներին է հասնում։ Կամ, երբ բազմապատիկ քանակական ու ռազմական գերակշռություն ունեն։ Մեր թշնամուց էլ շատ են վախենում։ Նրանից որոշ ֆինանսական կախվածության մեջ են դեռ։ Մեր դաշնակցի վրա շատ հույս չունեմ։ Մենք մեր հարցերն ինքներս պիտի լուծենք։ Մեր տղաների սարքած

զենքից վաղուց ունի մեր դաշնակիցը, բայց թաքցնում է մեզնից։ Մեզ չի վստահում։ Հեչ լավ չի դաշնակցել նման մեկի հետ։ Սեփական սկզբունքներ չունեն, չեն էլ ունեցել։ Օտար ազդեցությունների տակ շուտ են ընկնում։ Էն ճիվաղ աֆորիզմը ուղեղներն է մտել, դուրս չի գալիս։

– Ո՞րը, պապ,– խոսեց փոքր արքայազնը։

– Որ՝ «Չկան մշտական թշնամիներ կամ բարեկամներ, կան մշտական շահեր»։ Բայց մեր դաշնակիցն իր իսկ շահն էլ չի հասկանում։ Չի հասկանում, որովհետև սեփական ուսմունք չունի։ Չգիտի՝ ինչ է ուզում, ուր է ուզում գնալ։ Ընդհանրապես չի կարելի անհավասար լծի տակ մտնել ոչ մեկի հետ։ Չգիտես՝ ինչ սպասել դրանցից։ Մեկ էլ տեսար՝ խելքները ծռվեց։ Չգիտեմ... Մարդկությունը երևի երբեք էլ չկարողանա հրաժարվել իրարակործան ուղուց, ձերբազատվել չարի գերությունից։ Մեր դաշնակիցն աշխարհակործան նյութապաշտ սպառողականության գերին է դեռ։ Չի կարողացել լիովին ձերբազատվել դրանից։ Դեռ լավ չի հասկանում մեր առաքելությունը։ Նախանձ ու թերահավատություն ունի մեր հանդեպ։ Վճռորոշ պահի կարող է և հետ քաշվել։

Այս ասելով, Արքան բան հիշեց.

– Արշա՛կ։

– Ի՛մ Արքա։

– Ի՞նչ իրավիճակ է Էջմիածնում։ Էսօր հետ գնալու ճամփին մտնենք։

– Ի՛մ Արքա, ինչպես հրամայել ես՝ արխիվի վրա մի ընտիր ջոկատ եմ դրել։ Հսկողության տակ է նաև ողջ համակարգչային ցանցը, գրադարանն ու թանգարանը։ Մնացած ողջ տարածքը ներքին գործերի նախարարության հսկողության տակ է։ Բարձրաստիճան կրոնավորներին ինձ մոտ եմ տարել։ Տղաները զբաղված են դրանց հարցաքննելով։ Դրսերում ահագին գումարներ ունեն։

– Սրիկանե՛ր,– չդիմացավ Արքան։

– Արտաքին գործերի նախարարի հետ միասին փորձում ենք դրանց դրսի ունեցվածքի հարցը լուծել։ Բայց կա նաև դրանց անձնական ունեցվածքների ու անձնական հաշիվների խնդիրը։ Այդ գործում անհրաժեշտ կլինի կրոնավորների դատապարտման որոշումը։

– Դրա կարիքը չկա։ Եկեղեցու արգելման ու նրա ողջ ունեցվածքի ազգայնացման հրամանս բավական է։

– Ի՛մ Արքա, բայց խոսքն անձնական հաշիվների մասին է։

– Գիտեմ։ Դրանք ոչ մի անձնական հաշիվ էլ չպիտի ունենային։ Որտեղի՞ց դրանց հարստություն։

– Ի՛մ Արքա, ասածդ տրամաբանական է։ Բայց վախենամ՝ առանց կրոնավորների դատապարտման հրամանի, մեզ հետ չհամագործակցեն այդ երկրները։ Շատերի հետ առևտրական կապերի մեջ ենք։ Մեջները դաշնակիցներ էլ ունենք։

– Հասկանում եմ՝ ինչ ես ակնարկում։ Բայց մինչև դատավճռի հասնի գործը, այդ գումարներից գուցե բան չմնա։ Ապարդյուն լինի այդ գործի վրա մեր ծախսած ջանքն ու ժամանակը։

– Ի՛մ Արքա, ճիշտ ես ասում։

Արշակն ընկավ մտքերի մեջ։

– Լավ։ Ես՝ ինքս, եմ դրանց ձերբակալել, ինքս էլ կդատապարտեմ դրանց։ Ասենք, օրինակ, մեր Ազգային Սահմանադրությունը ոտնահարելու և եկեղեցին համառորեն չլուծարելու համար։ Չէ՞ որ՝ ըստ մեր Ազգային Սահմանադրության, արգելվում է բոլոր կրոնական կառույցների առկայությունը մեր երկրում։ Իսկ դրանք երեք տարի շարունակ արհամարհել են մեր երկրի հիմնական օրենքը։ Վատ միտք չի։ Կարելի է հավելել նաև ժողովրդի նկատմամբ «Աստծո հովանավորությամբ» զանգվածային ու կազմակերպված խմբակային ահաբեկչությունն ու դրամաշորթությունը։ Նաև՝ հանրապետության տարիներին հանցագործ նախագահների հետ դրանց հանցավոր համագործակցությունը։ Հատկապես ժողովրդի դեմ իշխանությունների ծավալած կողոպուտը սքողելու և Աստծո անունից այն արդարացնելու ջանքերն ու գործունեությունը։ Մեղքեր շատ ունեն, բայց այսքանը բավական է։ Իմ անձնական քարտուղարը կկազմի տեքստը։ Իսկ մինչ այդ, մեր դիվանագիտական կորպուսի միջոցով սառեցնել դրանց հաշիվները։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Դրանց ազգ ու տակին էլ թափ տուր։ Դրանք

իրենց ունեցվածքի ու բիզնեսների ահագին մաս իրենց բարեկամների անուններով են սարքել։ Բռնագրավել նաև այդ սեփականությունները։ Դիմադրողներին կալանավորել ու դատել։ Ուրիշ ի՞նչ հարցեր են ծագել։

– Ի՛մ Արքա, իսկ էն ճեմարանի սաներին ի՞նչ անենք։

– Հա՜, դրանց մասին մոռացել էի։ Դրանց բաց թողեք, թող գնան իրենց հայրական տները։

– Ի՛մ Արքա, մեջները որբեր էլ կան, նախկին մանկատան սաներ։

– Որբերին ուղարկեք գյուղերը։ Կցեք մի շինականի ընտանիքի՝ որպես օգնական։ Թող աշխատեն նրա ձեռքի տակ ու սկսեն շփվել ու ծանոթանալ նահապետական կարգին։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ։

– Իսկ հիմա պատրաստվեք դուրս գալ, որ լույսով հասնենք Էջմիածին։ Ես մի ժամով առանձնանում եմ մատուռում։ Երբ վերջացնեմ, իմաց կանեմ։ Բոլորդ գնացեք ամրոց ու պատրաստվեք դուրս գալու։

Այս ասելով՝ Արքան շրջվեց դեպի Ազատը.

– Ազա՛տ...

– Ի՛մ Արքա։

– Տղերքը թող օգնեն ամրոցում։ Դու արի հետս։

Բոլորը կանգնած էին բարև բռնած։ Արքան սկսեց քայլել դեպի ներքև՝ մատուռի կողմը։ Ազատը հետևում էր նրան։ Արշակն ու արքայազնները թիկնապահ գնդի մարտիկների հետ միասին դիմեցին դեպի ամրոց։

***

– Ազա՛տ...

– Ի՛մ Արքա...

– Տղերքի տրամադրությունը ո՞նց է։

Արքան ի նկատի ուներ իր թիկնապահ գնդի մարտիկներին։

– Ի՛մ Արքա, լավ են։

– Հո շատ չե՞ն հոգնում։ Ընտանիքներում ամեն ինչ լա՞վ է։

– Ի՛մ Արքա, հա։ Դեռ բան չեմ զգացել։

– Լավ նայի տղերքին։ Մեկ-մեկ հարց ու փորձ արա։ Տես, եթե ընտանեկան խնդիրներ կան, անլուծելի մի թող։ Վերջապես էս ամեն ինչը անում ենք մեր մարդկանց երջանկության համար։ Ընտանեկան խնդիրները դեռ շատ են։ Մեր մարդիկ դեռ լավ չեն հասկանում իրենց էությունն ու ի վերուստ իրենց տրված առաքելությունը։ Դեռ չեն պատկերացնում իրենց Արարչական դերը։ Կանայք էլ ֆեմինիզմի ծանր ազդեցության տակ են դեռ։ Մեր ուսմունքի սերմանումը շատ դանդաղ է ընթանում։ Մեր ազգը շատ երկար ժամանակ է կրել դրսի՝ օտար ուսմունքների, ազդեցությունը։ Է՛լ ասորի, է՛լ հույն ու հոռոմ եկան ու խաթարեցին մեր ազգի նահապետական մշակույթը։ Իսկ, երբ էն սրիկաները երեք հարյուր մեկին այրեցին ու իսպառ ոչնչացրին մեր գիրն ու գրականությունը, ուսմունքն ու այդ ուսմունքի պահապան վարդապետներին, մեր մշակույթը սկսեց արագորեն անկում ապրել։ Ի վերջո, դադարեցինք ազգ լինել։ Կապիտալիզմի մուտքից հետո լիովին վերածվեցինք անուսում ամբոխի։ Վերջերս էլ ծագած արևմտյան հոսանքները կործանման եզրին էին հասցրել մեզ։ Վերջին տարիների այլանդակության մասին էլ չասեմ։ Գյուղերում դեռ՝ ոչինչ, բայց՝ քաղաքներում իսպառ վերացել էր մեր մշակույթը։ Շատ դժվար է վերականգնվում։ Խոսիր հետները։ Եթե դժվարանաս, թող գան մոտս։

– Ի՛մ Արքա, դու ավելի կարևոր գործեր ունես։

– Չէ՛, Ազա՛տ, մարդու երջանկությունից կարևոր գործ չկա։ Հենց դրա համար վերականգնեցինք նահապետական կարգը, որ մեր ուսմունքն ու մշակույթը սերմանելով՝ երջանկացնենք մարդկանց։ Դա է ամենակարևորը։ Ձենքեր էլ սարքում ենք մեր մարդկանց պաշտպանելու համար, նրանց համար խաղաղ ու երջանիկ կյանք ապահովելու միտումով։

– Հասկանում եմ, ի՛մ Արքա։

Այս խոսքի վրա հասան մատուռին։ Մատուռը գտնըվում էր ամրոցից ներքև՝ սուրանկյուն հրվանդանի դեպի արևմուտք ուղղված անկյան աջ կողմում, ձորի հենց եզրին։ Հրվանդանի երկու կողմերում ձորն էր։ Մատուռի դուռը նայում էր իջնող արևին։

– Ազա՛տ, դու ստվերում՝ հովին, նստիր, սպասիր

մինչև վերջացնեմ։

– Ի՛մ Արքա, լսո՛ւմ եմ,– ասաց Ազատն ու անցավ մատուռի հակառակ՝ ստվերոտ կողմը։

Արքան ներս մտավ։ Մատուռի մեջ դրված գահավորակի վրա փռված էր նրա ձեռքով գործված առաջին կարպետը։ Այն շատ հոգեհարազատ էր Արքային։ Ոչ միայն, որովհետև ինքն էր գործել, այլ նաև, որովհետև հազարամյակներից եկող հարազատ մի շունչ ուներ իր մեջ։ Իր խիստ երկրաչափական ու հիմնականում վառ կարմիր գույներով Արքայի կարպետը նման չէր գեղջկական սովորական կարպետներին։ Այդ կարպետը հենց ինքը՝ Արքան, էր հայտնաբերել համարյա հրաշքով, երբ կարպետի պատմության վերաբերյալ գրքեր էր ուսումնասիրում արտասահմանի գրադարաններում։ Այդ գրքերի շատ ու շատ սովորական կարպետների լուսանկարների շարքում նրա հայացքը գամվել էր հավանաբար վաթսունականներին արված մի լուսանկարի, որի մեջ երևում էր մի քոչվոր քրդի ընտանիք՝ սև թաղիքե վրանի մոտ նստած։ Որպես վրանի դուռ ծառայում էր մի կարպետ, որն Արքայի համոզմամբ, Մեծ Եղեռնի ժամանակ հայերից կողոպտված ունեցվածքի մասնիկ էր։ Դժվարին, մանրակրկիտ ու բծախնդիր աշխատանք էր պահանջվել Արքայից մտովի բացելու լուսանկարի կարպետի մեծ ու փոքր ծալքերն ու ամբողջովին վերակերտելու այն իր իրական համաչափություններով։ Ամեն անգամ մատուռ մտնելիս՝ Արքան մտաբերում էր այն բերկրանքը, որ ապրել էր կարպետի հայտնաբերումից սկսած մինչև գործել, վերջացնելը։

Արքան ծնկաչոք նստեց գահավորակին փռած իր կարպետի վրա։ Մի հատուկ խանդաղատանքով շոշափեց այն ու սկսեց մտաբերել իր կյանքի ոդիսականը՝ արտասահմանում ուսանելու տարիները, տհաճ լարվածությամբ լի շփումները՝ հատկապես տեղի արվեստագետ ու արվեստաբան հանրության հետ, հետո՝ իր ուսումնասիրությունները ու աշխատությունները, որոնք հետագայում բերել էին մեր ազգային ուսմունքի բացահայտմանն ու, ի վերջո, Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրությանը՝ իր զինանշանով ու դրոշով։

Շատ բան կար հիշելու։ Արքան գոհ էր, որ կարողա-

ցել էր մեր ազգային ուսմունքի շուրջն ի մի հավաքել հայ մտավորականների մի ամրակուռ կորիզ, այդ կորիզի շուրջը՝ համախոհների բանակ ու, ի վերջո՝ միասնական ազգ։

Արքան մատուտի բաց դռան միջով իր հայացքը հառեց իջնող արևին։ Երկար ժամանակ լուռ ու անթարթ՝ հայացքն արևին հառած, խորհում էր նա։ Վերջապես փակեց աչքերն ու, ասես ինքն իր հետ խոսելով, սկսեց.

– Մեր Հայր Արարիչ, չեմ եկել բան խնդրելու, մանավանդ՝ պահանջելու։ Եկել եմ միասին մտորելու։ Խորհելու եմ եկել։ Մտքիցս չի գնում, որ երեկ մահապատժի դատապարտեցի էդ ոճրագործներին, մանավանդ որ դրանց գերդաստանները որձատելու հրաման տվեցի։ Հիմա ողբ ու իրարանցում է դրանց օջախներում։ Ջնայած դրանց բոնն օջախ չի կարելի անվանել։ Բայց ամեն դեպքում երկակի զգացումներ ունեմ սիրտս տանջող։ Խիղճս տանջում է այդքան կին ու աղջիկ անտեր ու որբ թողնելուս համար։

Բայց ի՞նչ անեի։ Թողնեի, որ շարունակեին ապականե՞լ շուրջը։ Դու ես ասել, չէ՞, որ, երբ ծառը բարի պտուղ չի տալիս, կտրում են այն ու այրում։ Հենց այդպես էլ արել եմ։ Հիմա կասես՝ ի՞նչ գիտեիր, որ հետո բարի պտուղ չէր տալու։ Բայց, եթե մինչև հիմա չի տվել, հետո ո՞նց էր տալու։ Պտուղները ժառանգում են ծառի էությունը, ճիշտ չի՞։ Թե՞, եթե կրթեինք ու չգիտեմ ինչ անեինք, փոխվելու էին։

Չէ՛, ճիշտ եմ արել։ Գործերով են ճանաչում մարդուն։ Իսկ պտուղը ծառից հեռու չի ընկնում։ Ուրեմն ծառն էր վատը։ Դրա համար էլ կտրել տվեցի։ Եթե էլի նման բանի հանդիպեմ, նույնն եմ անելու։ Հիմա կասես՝ «անձնական վրեժ ես հանում, որովհետև հետդ անհարգալից են վարվել»։ Հա՛, հենց վրեժ եմ հանում։ Նույնը կանեի, եթե տեսնեի՝ ուրիշի հետ էլ են նույն կերպ վարվում։ Տականք շներ։ Միմյանց հետ ինչ անում են՝ թող անեն։ Ազնվասիրտ մարդկանց կպան՝ կվառեմ։ Արմատախիլ կանեմ ու կվառեմ։ Ինչքան ձեռքումս ուժ ու իրավունք կա, պիտի անեմ։ Թեկուզ չհասկանան, թեկուզ թշնամիներ ձեռք բերեմ։ Միևնույն է՝ չեմ թողնի ազնվասիրտ մարդուն ճնշեն, վիրավորեն, կամ թեկուզ անհարգալից մոտենան։ Արմատախիլ կանեմ ու կվառեմ։

Շատ ենք հանդուրժել դրանց ներկայությունը։ Սերունդներ են խեղվել դրանց պատճառով։ Եղեմական պարտեզից սկսած՝ ներ են խուժում ու փչացնում մեր կանանց ու աղջիկներին։ Օձի ճտեր։ Մտնում են ու խանգարում՝ իրենց այլանդակ վարք ու բարքով։ Իրենց վատ օրինակը սփռելով՝ ճնշում ու կողոպտում են աճող սերնդի միտքն ու հոգին, ապականում ու փչացնում նրանց անմեղ սիրտն ու էությունը։ Հա՛, վրեժ ունեմ։ Ազգիս վրեժը ես եմ առնելու։ Էս հնարավորությունը ձեռքումս՝ թողնեմ, որ օձի ճտերը բազմանա՞ն ու թունավորե՞ն շուրջը։ Ոչ մի դեպքում։ Իրավունքներիս ու հնարավորություններիս հետ մեկտեղ նույնքան պատասխանատվություն ու պարտականություն ունեմ՝ վառել, թափել կեղտն ու երջանիկ կյանք ապահովել մեր մարդկանց համար։ Չե՞ որ հենց դա է Արքայի գործը՝ երջանիկ կյանք ապահովել իր ազգի համար։ Արքան բռնապետ չի կամ էլ՝ անպատասխանատու իշխանավոր։ Արքան իր ազգի նահապետն է, իր ազգի պատասխանատուն, նրա երջանկության երաշխավորը, պատվի ու արժանապատվության պահապանը։ Ինչպես ընտանիքի հայրն է իր կնոջ ու երեխաների ուսուցիչն ու պաշտպանը, այնպես էլ Արքան է իր ազգի գերագույն ուսուցիչն ու պահապանը։

Վաղնջական ժամանակներում մեր արքաները պատասխանատվություն ունեին ապահովել ոչ միայն իրենց ազգի երջանկությունն ու խաղաղ ստեղծագործ կյանքը, այլ նաև՝ հարևան ազգերինը։ Միայն դրա համար են նախահարձակ կռվի ելել՝ ազատագրելու մեր հարևան ազգերին իրենց բռնակալներից։ Մենք ազգովի չէինք կարող երջանիկ լինել, երբ մեր հարևան ազգերը երջանիկ չէին։ Նրանց երջանկության ապահովումը մեր ազգի համար անհրաժեշտություն էր։ Հնուց է մնացել մեզանում հարևանի ներքին կյանքին միջամտելու մեր մշակույթը։ Մարդ չի կարող երջանիկ ապրել, եթե հարևանը երջանիկ չի։ Ինչպե՞ս կարելի է հանգիստ քնել, երբ լաց ու կոծ կա հարեվանիդ տանը, կռիվ ու դավ, սով ու ավեր։

Բայց մեր մշակույթը փոխվեց։ Սկսեցինք ապրել անտարբեր ու ձեռնպահ՝ չխառնվել մեր հարևան ազգերի ներքին կյանքին։ Թողեցինք, որ ուժեղանա բռնապետությունը, ճնշումն ու կողոպուտը մեր հարևան երկրներում,

մարդու կողմից մարդու շահագործումը։ Ու մի գեղեցիկ օր էլ Բելի վարակը սկսեց ներխուժել, ներխուժել ու ծվատել մեր ուամունքը։ Աստիճանաբար սկսեցինք նմանվել նրանց՝ մեր հարևան բռնակալներին։ Սկսեցինք սեփականացնել նախկինում բոլորին հավասարապես պատկանող սարն ու ձորը, գետն ու անտառը, լիճն ու հողը։ Մեր ազգակցին ճորտի տեղ դրեցինք։ Շահագործեցինք ու հիվանդացրինք։ Հիվանդացրինք ու դեն շպրտեցինք։ Թշնամություն մտավ ազգի մեջ։ Փսորեց ու թոլացրեց մեզ։ Վանեց միմյանցից։ Սկսեցինք հեռանալ իրարից ու ցրվել հեռուները։

Նախկինում մեր արիասիրտ ազգի մեջ չի եղել անհավասարություն։ Չի եղել ստրկատիրություն կամ ճորտատիրություն։ Մենք միմյանց չենք նվաստացրել ու շահագործել, ճնշել ու ծաղրել։ Մենք հոգ ենք տարել ու պաշտպանել թույլերին։ Կռվել ենք նրանց փոխարեն։ Պահել ենք մեր արժեքները։ Պարսավել ենք ագահին ու եսամոլին, խարդախին ու խաբեբային, կեղծավորին ու շողոքորթին, գոռոզին ու ինքնահավանին։ Հալածել ենք վախկոտին ու դավաճանին։ Չենք հանդուրժել որևէ ոհմակ ու խմբակցություն, խումբ ու կուսակցություն։ Չենք ճանաչել որևէ խմբակային շահ կամ շահամոլություն։ Չենք ունեցել կրոն ու կրոնամոլություն, հավատ կամ սնահավատություն։

Ունեցել ենք ուամունք ու գիտություն, գիտելիք ու օրենսդրություն, կարգ ու կանոն։ Ապրել ենք ներդաշնակ՝ միմյանց ու բնության հետ, ազատ ու երջանիկ։ Առանց բռնության ու բռնապետության։ Եթե հարկ ենք տվել, ապա հոժար սրտով՝ մեր երկրի ամրացման ու պաշտպանության համար միայն։ Մեր արքաներն առաջնորդել են մեզ, չեն կառավարել։ Ուսուցանել են, չեն նվաստացրել։ Հոգ են տարել, չեն կեղեքել։ Մեր արքաներն ու նահապետները կռվի են ելել՝ պաշտպանելու մեր կյանքն ու երջանկությունը, պատիվն ու արժանապատվությունը։ Նաև՝ մեր հարևանների կյանքը, ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը։

Բայց չդիմացա՞նք։ Մտա՞վ ախտը։ Սկզբում ասորաբաբելական, հետո՝ հունա-հռոմեական... Մտավ ու ապականեց մեր ավանդականն ու մեր սեփականը։ Բելի ուամունքն, ի վերջո, հաղթեց։ Խարդավանքներն ու դավաճա-

նութիւնը, բռնութիւնն ու բռնակալութիւնը ներս մտան։ Դարձանք եսամոլ ու եսապաշտ, ագահ ու դաժան։ Կողոպտեցինք ու նվաստացրինք մեր ազգակցին։ Վարակի պես տարածվեց ու խորացավ ներազգային գզվռտոցը։ Կորավ, գնաց մեր ոսմունքը, հետն էլ՝ մեր ողջ հայրենիքը։

Բայց ամենազարհուրելին սկսվեց եկեղեցուց։ Մտավ ու ավերեց։ Վառեց ու կոտորեց։ Վերացրեց մեր ոսմունքը։ Գրավեց ու ճորտացրեց։ Դավեց ու թունավորեց։ Սպանվեցին, վերացան մեր արքաները։ Երկիրն ընկավ ու տրորվեց։ Ազգը մնաց անտեր ու անպաշտպան, անուսմունք ու բզկտված։ Ու, երբ մտավ կապիտալիզմը, թշնամացրեց ու փսորեց, քանդեց ու ցրեց, պանդուխտ ու տարագիր սարքեց մեզ։ Հայը հայի մոտ ճորտ չի աշխատի. կամ կմեռնի, կամ՝ կհեռանա։

Բայց գոնե իսպառ չանհետացանք։ Դեռ կա սերմը։ Ծաղկեց, պտուղ տվեց։ Հիմա շնչում է մեր շինականը։ Ազատ է հարկերից՝ ինչպես Նահապետ Հայկի ժամանակ։ Վերականգնեցինք ամեն մեկի պատիվն ու արժանապատվությունը։ Ազգայնացրինք տնտեսությունը։ Չկա էլ մասնավոր սեփականություն, մարդու կողմից մարդու շահագործում։ Վերացան մրցակցությունն ու թշնամանքը, հակամարտությունն ու գզվռտոցը։

Հողն ու ջուրը, անտառն ու ընդերքը բոլորինն են հիմա, հավասարապես։ Չկա արտոնյալ ոչ մեկը։ Հետ բերեցինք մեր ոսմունքն ու կարգը։ Երջանիկ են մարդիկ այնպես, ինչպես վաղնջական ժամանակներում։

Հենց մեզ մոտ է եղել «Ոսկի քաղաքը»՝ Լաստիվերում։ Մենք օրինակելի ազգ ենք եղել շրջակա ժողովուրդների համար։ Իրենց բռնակալներից խուսափելով, մարդիկ մեզ մոտ են եկել, ապաստան գտել։ Չենք մերժել ոչ մեկին։ Մեր հովանու տակ ենք առել նրանց։ Չենք նվաստացրել։ Վարվել ենք հարգանքով։ Չենք տարբերել մեզանից։ Թողել ենք, որ մեզ պես օգտվեն մայր հողի բարիքներից, ապրեն ազատ ու երջանիկ՝ վաղվա օրվա մասին չմտահոգվելով։ Բայց չթողեցին, եկան, խանգարեցին։ Ավերեցին Լաստիվերը, ցրիվ տվեցին բնակիչներին։ Մարդիկ ապաստան գտան շրջակա անտառներում, սարերում ու ձորերում։

Բայց չկորանք։ Հիմա ավելի մեծ «Ոսկի քաղաք» ենք կառուցել։ Մեր լույսը փարոսի պես իրեն է ճգում վիշտ ու ցավ տեսած մեր աշխարհասփյուռ ազգակիցներին։ Մեր օրինակով ոտքի են կանգնում մեր հարևան ազգերը։ Ու ինչպես առաջ, հիմա ևս չար ուժերի թիրախն ենք դառել։ Կրկին ուզում են կործանել մեզ։ Չեն հանգստանում։ Ինչի՞ համար։ Որ իշխե՞ն։ Իշխե՞ն ու լափե՞ն։ Լափե՞ն ու իշխե՞ն։ Կա՞ ուրիշ պատճառ։

Ասա, հապա ինչպե՞ս չլցվեմ վրեժով։ Արդարացի չի՞ ցասումս։ Արյունռուշտ ու խաբեբա, ագահ ու եսասեր մարդկանց ո՞նց չպատժեմ։ Ո՞նց չպաշտպանեմ իմ ժողովրդին։ Թողնեմ, որ փչացնե՞ն։

Հո միայն գոյատևելու համար չի՞, որ ծնվել ենք։ Մարդը ծնվել է ապրելու համար։ Եթե մարդ երջանիկ չի ապրում, ուրեմն չի ապրում ընդհանրապես։ Բայց նաև՝ գործ ունենք, չէ՞, անելու։ Ասել ես՝ «Բազմացեք ու բարեկարգեք աշխարհը»։ Ո՞նց բարեկարգեինք, երբ սրիկաները մարդկանց հավաքել, քշել, լցրել էին քաղաքներն ու աշխատեցնում էին օրվա հացի համար։ Ստրկացրել էին՝ աշխատանքից կախման մեջ գցելով։ Մարդկանց մզում ու դեն էին նետում։ Շահագործում էին ու լափում արդյունքը։ Արտադրանքն էլ ի՞նչ էր՝ անօգուտ, անպետք ու վնասակար։ Հողն էին փչացնում, ընդերքն ու շրջապատն ապականում։

Չգիտեմ... Մարդիկ պիտի ազատ ապրեն։ Ազատորեն՝ անվճար, օգտվեն մայր հողի բարիքներից։ Ուժ ու եռանդ ունենան՝ բարեկարգելու աշխարհն ու հետ բերելու այն իր դրախտային վիճակին ու տեսքին։ Չէ՞ որ դա է աստված դառնալու հիմնական ճանապարհը։ Վերջապես, ազատ ընտրության իրավունք պիտի ունենան մարդիկ։ Նույնիսկ՝ ազատորեն գործելու իրավունք, որ տեսնենք արածներն ու ճանաչենք։ Այլապես չենք ճանաչի։ Ի՞նչ իմանաս շղթայված մարդու միտքը։ Նրա ուզածն ի՞նչ է. լավագույն դեպքում՝ ազատվել կապանքներից։ Մարդը շղթաներից ազատ լինելուց բացի, պիտի նաև կրթված լինի, իմանա չարն ու բարին։ Լավն ու վատը չիմացող մարդն ինչպե՞ս ընտրություն կատարի՝ ինչի՞ ու ինչի՞ միջև։ Մարդն անպայման պիտի ազատ լինի, որ տեսնես գործը՝ ի՞նչ է անում, ի՞նչ

է սրտի ուզածը։ Ճորտերին հնարավոր չի ճանաչել։ Աշխարհի շատ մտածողներ վրիպեցին, սխալվեցին։ Բոլոր ճորտերին համարեցին հեզ ու խոնարհ, համեստ ու ազնիվ արարածներ։ Չհասկացան, որ նրանցից ոչ բոլորն են լավը։ Չհասկացան, որ ոչ բոլորն են ճորտ, որովհետև չեն ուզեցել տեր դառնալ, այլ որովհետև շատերը չեն կարողացել տեր դառնալ։ Որ, եթե հնարավորություն լինի, ապա կձգտեն տեր դառնալ ու իշխել մյուսների վրա։ Չհասկացան ու առանց կրթելու ապստամբության հանեցին նրանց։ Ճորտերն էլ ելան ու գրավեցին իշխանությունը։ Հետո, ճիշտ է՝ փորձեցին կառուցել աշխարհի ազնվասիրտ մտածողների հասարակությունը, բայց չկարողացան։ Զստացվեց, որովհետև ոչ բոլորն էին կիրթ ու ազնիվ։ Անկիրթ ու անազնիվ մարդիկ չէին կարող կառուցել ազնիվ ու արդար հասարակություն։

Թող մարդիկ ազատ ընտրության, նաև գործելու ազատություն ունենան։ Ազատ դրսևորեն իրենց տաղանդները, ով ինչ որ ունի։ Լավը՝ լավը, վատը՝ վատը, որ ճանաչենք։ Այլապես չենք ճանաչի։ Եթե չճանաչենք՝ չենք կարողանա դատել։ Չենք իրագործի մեր վերջին քննությունը՝ ճանաչել ու պատժել ոճրամիտ ու ոճրագործ մարդուն։ Եթե դա չանենք, ապա աստված չենք դառնա։ Չէ՞ որ աստված դառնալն է մեր առաքելությունը երկրի վրա։ Դրա համար ենք ապրում։ Լոկ գոյատևելը չի մեր գործը։

Թե՞ էս ամեն ինչը հնարված բաներ են։ Գուցե ոչ մի նպատակ էլ չկա՞։ Ի՞նչ բարեկարգել։ Ի՞նչ աստված դառնալ։ Գուցե մարդիկ հենց այսպես աննպատակ էլ պիտի ապրեն... Իսկ ես ընկել եմ հետևներից ու փորձում եմ բան հասկացնել, գործի դնել։ Նպատակ եմ ներարկում՝ աշխարհը վերափոխել, բարեկարգել, վերադարձնել իր դրախտային վիճակին, աստված դառնալ... Չգիտեմ... Անտառի գազանները ո՞նց են ապրում։ Շատ էլ ներդաշնակ ապրում են՝ առանց նպատակի։ Ինչնե՞րն ա պակաս։ Ուտում, խմում քեֆ են անում։ Աննպատակ ու անհոգ։

Բայց, եթե նույնիսկ Դու էլ ասած չլիներիր՝ «Բազմացեք ու բարեկարգեք աշխարհը», մեկ է՝ մեր գենի մեջ կա այդ մղումը։ Բոլորիս մեջ էլ կա սերունդ տալու, նրան կրթելու, հատկապես՝ աշխարհը բարեփոխելու, բարեկար-

գելու իղձը։ Մեր կյանքի գնով անում, դնում ենք մեր սերունդների համար երջանիկ կյանք ապահովելու մտքով։ Մեզ չինայելով, արարում ենք ու կառուցում, նույնիսկ՝ երբ անհրաժեշտ էլ չի։ Օր ծերությունն ծառ ենք տնկում՝ իմանալով, որ չենք հասցնելու ճաշակել նրա պտուղները։ Ինչի՞ համար։ Ո՞վ է ստիպում։ Ներսից մեկն, ասես մահակը ձեռքը, մեզ գործի է հանում։ Չի թողնում անգործ նըստենք։

Մեր մեջ շատ կան նաև ծույլեր, բայց դա մեր իսկական գենետիկ դիմագիծը չի։ Շատերի մոտ դա հակամշակույթից է, ուսմունքի պակասից, չարի ուսմունքից։ Չնայած գենետիկ չար էլ կա։ Շատ կա։

Բայց ինչո՞ւ են լավ ու բարի մարդիկ տառապում։ Ինչո՞ւ են հիմնականում լավ մարդիկ տառապում։ Որովհետև չարը շա՞տ է, թե՞ որովհետև այդպես է պետք։ Ճիշտ է, դժբախտություններն ուսուցանող կարող են լինել, բայց՝ մի քիչ շատ չի՞։ Համաձայն եմ, որ այն դժբախտությունը, որը չի սպանում, կարող է բան սովորեցնել, կործանարար ուղուց հետ պահել, գուցեև՝ ճիշտ ուղու վրա դնել։ Ավելի լավ է իմանաս՝ որն է վատը, քան չիմանաս՝ որն է լավը։ Բայց հաճախ դժբախտությունները սպանում են։ Փորձանքները խեղդում ու խեղում են մարդկանց կյանքը։ Պարկեշտ ու բարի մարդկանց չի շրջանցում տառապանքը։ Բոլորս ենք տառապում։ Ինչո՞ւ։

Բայց որտեղի՞ց սկսվեց էս տառապանքը։ Հա՜, երբ վռնդվեցինք դրախտից։ Չլսեցինք, չհնազանդվեցինք։ Արեցինք այն, ինչ չպիտի անեինք։ Չավարտեցինք մեր ուսումը։ Մնացինք անուսում։ Չնայած, չէ, մենք չենք վռնդվել դրախտից։ Դրախտից վռնդվել են մեր հարևան ազգերի նախնիները։ Մենք լսել ենք Քեզ։ Մենք հնազանդ ենք եղել։ Մենք ավարտել ենք մեր ուսումը։ Դա է պատճառը, որ մեր հարևանները մեզ միշտ աստվածներ են համարել, մեր երկիրն էլ՝ աստվածների երկիր։ Գիլգամեշը մեր երկրում էր փնտրում անմահության գաղտնիքը։ Մենք տիրապետել ենք այդ գաղտնիքին։ Մենք չենք վռնդվել։ Մենք եղել ենք Քո տված գիտելիքի կրողները։ Ամբողջի... Բոլոր մեր հարևան ազգերը մեզ մոտ են փնտրել այն, ինչ պակասում էր իրենց։ Մեզ մոտից է այդ գիտելիքը տարածվել

արևելք ու արևմուտք։ Զորոաստրը՝ զորեղ աստղը, Հայաստանից է իջել հարավ-արևելք ու տարածել մեր վաղնջական ուսմունքը։ Նա հենց Որոտան գետի ափին է ծնվել։

Քրիստոսն էլ իր ուսումն է առել Հայաստանում՝ Մոկաց աշխարհում։ Այնտեղ դեռ պահպանվել էր մեր անաղարտ ուսմունքը։ Հունա-հռոմեական հեթանոսությունն այնտեղ դեռ չէր խեղաթյուրել մեր վաղնջական ուսմունքը։ Բայց՝ չհասցրեց տարածել ողջ ուսմունքը։ Անավարտ մնաց իր գործը։ Չթողեցին։ Կամ՝ գուցե չուզե՞ց ամբողջն ուսուցանել։ Իսկ գուցե հետո՞ են խեղաթյուրել։ Ինչևէ... Մարդուն ամենաճիշտը բնութագրում են նրա արարքները՝ նրա գործերը։ Իսկական արիասիրտ մարդու պես ճիպոտը ձեռքին հալածեց վաշխառուներին տաճարի հրապարակից։ Վատաբանեց, պախարակեց, հայհոյեց սրիկա կեղծավորներին ու դրանց ողջ եկեղեցական կառույցը։ Գիտեր, որ դրա համար իրեն չեն ների, կսպանեն։ Լավ գիտեր։ Ու սպանեցին։ Գիտեր, որ չի հասցնելու հյուրընկալվել մեր Աբգար Արքայի մոտ։ Ինչո՞ւ չեկավ։ Ապահով տեղ կունենար նրա հովանու ներքո։ Գիտակցաբար գնաց մահվան։ Որ ի՞նչ ապացուցեր։ Ո՞ւմ։ Անարժանների՞ն։ Միայն արժանավորները կհասկանային ու կգնահատեին իր ինքնազոհաբերությունը։ Հասկացողին՝ մեկ, չհասկացողին՝ հազար ու մեկ։ Չգիտե՞ր։ Գիտեր։ Բայց ինչո՞ւ զոհեց իրեն։ Գուցե արժանավորներ կայի՞ն մեջները։ Դեռ վաղնջական ժամանակներից էդ կողմերում շատ կային մեր ազգակիցներ։ Գուցե նրա՛նց համար էր անում։ Հիմա դժվար թե իմանանք։ Ինքը ոչինչ չի գրել։ Իրենից հետո էլ շատ ժամանակ է անցել, երբ սկսել են բան գրել։ Հիմա ոչինչ չենք իմանա։ Բայց դա կարևոր չի։ Մեր գենետիկ կոդում նստած են մեր նախնյաց վիբրացիաները։ Ուզածդ պահին կարող ենք վերակերտել ուսմունքը։ Ու արեցինք։ Այդ ուսմունքի շնորհիվ է, որ արթնացրինք մեր ազգակիցների նիրհող ու շղթայված միտքն ու ոգին։ Հիմա մեր ուսմունքի շուրջ համախմբված ազգ ենք՝ պետություն։ Հիմա գիտենք, որ հայրենիք ունենք։ Հայրենիքն այլևս վերացական պատրանք չի։

Արքայի մտքերը մի պահ ընդհատվեցին։ Նա անսովոր տագնապ զգաց։

***

Թշնամական արբանյակների կառավարման կենտրոնում իրարանցում էր։ Արբանյակները սպասարկող սպաներից մեկը դիմեց իր հրամանատարին։

– Պարո՛ն գեներալ, թույլ տվեք զեկուցել։

– Զեկուցի՛ր, կապիտան։

– Շատ հարմար պահ է։

– Ի՞նչ ի նկատի ունես։

– Նա, կես ժամ կլինի՝ մեկուսացել է մատուռում։ Երևի դեռ երկար կմնա։ Միայնակ է։ Մոտակայքում ոչ ոք չկա բացի իր անձնական թիկնապահից։

– Դա հետաքրքիր է,– ասաց գեներալը՝ վեր կենալով իր տեղից ու մոտենալով մոնիտորին։

– Բայց պիտի շտապենք։ Այսպիսի առիթ էլ չի լինի։ Ինքն իրեն ծուղակն է գցել։ Մատուռի երկու կողմում ճորեր են։ Փախչելու տեղ չունի,– ասաց սպան՝ մատը մոնիտորին ուղղած։– Մեր հարվածային արբանյակը շուտով հարմար դիրքում կլինի։

Գեներալն իսկույն վերցրեց հեռախոսն ու կապվեց գլխավոր հրամանատարի հետ։

– Պարո՛ն նախագահ, թույլ տվեք զեկուցել։

– Զեկուցի՛ր, գեներալ։

– Հայոց Արքան շատ հարմար դիրքում է. սարերում՝ միայնակ։ Կարող ենք հենց հիմա վերացնել՝ առանց ավելորդ զոհերի։ Բայց պետք է շտապել։ Նման առիթ էլ չի լինի։

Լռություն տիրեց։

– Պարո՛ն նախագահ...

– Ասում ես՝ միայնա՞կ է։

– Այո, առանձնացել է մատուռում։ Ընտանիքից հեռու։ Միայն թիկնապահներից մեկն է մոտը։ Ի՞նչ կհրամայեք անել։ Այս առիթին շատ երկար ենք սպասել։ Այսպիսի պահ էլ դժվար կրկնվի։ Մեր հարվածային արբանյակը հենց նրա գլխավերևում է։

Դարձյալ լռություն տիրեց։

– Պարո՛ն նախագահ...

– Իսկ կիմացվի՞, որ մենք ենք հարվածել։

– Ամենևին։ Դա բացառվում է։ Նրանք չգիտեն, որ

հնարավոր է արբանյակից հարվածել։ Հետո՝ նրանց հակաօդային պաշտպանության համակարգը հիմնականում սահմաններն է հսկում։ Հնարավորություն էլ չունի հայտնաբերել մեր հրթիռը՝ մինչև այն ընդհուպ չմոտենա ու չմտնի նրանց բադարի շառավղի մեջ։

Նախագահը մտածում էր։ Հեշտ չէր որոշում ընդունելը։ Եթե պարզվեր, ապա միջազգային սկանդալ էր սպասվում։

– Պարո՛ն նախագահ...

– Իսկ, եթե վրիպե՞նք...

– Բացառված է։ Ոտքով հեռու չի փախչի։ Ծուղակում է։

Մի քանի վայրկյան անց լսվեց նախագահի ձայնը։

– Խփե՛լ։

– Լսո՛ւմ եմ։

Գեներալը ցած դրեց լսափողն ու դիմեց սպային։

– Կապիտա՛ն, խփե՛լ։

– Լսո՛ւմ եմ, պարոն գեներալ,– արձագանքեց կապիտանը։– Բայց կոդն է պետք։

– Իհարկե,– ասաց գեներալն ու մոտեցավ կառավարման վահանակին։

Մի քանի վայրկյան անց կոդն արդեն ներդրված էր։

– Երբ հարմար է, սեղմի՛ր կոճակը,– հրամայեց գեներալը։

– Մի երկու րոպե ևս, ու ամենահարմար դիրքում կլինենք, պարոն գեներալ։

– Շատ լավ։ Ես իմ գրասեղանի մոտ կլինեմ,– ասաց գեներալն ու մոտեցավ իր գրասեղանին։ Հանեց դարակից ոգելից խմիչքն ու սկսեց կոնծել։

***

Արքայի մտքերը շարունակեցին հորդել.

– Հազիվ հայրենիք ենք ստեղծել։ Բայց մեր թշնամիների համար վտանգավոր է մեր միասնությունը, ազատությունն ու երջանկությունը։ Սրիկանե՜ր... Դրանց ուժը մեզ միմյանցից բաժանելու մեջ է եղել։ «Բաժանիր, որ տիրես»։ Իհարկե... Կապիտալիզմով մեր մեջ մրցակցություն ու հակամարտություն գցեցին, թշնամացրին ու բաժանեցին մեզ։

Մենք էլ չհասկացանք, եռանդուն կերպով լծվեցինք գործի: Մրցավազքից կուրացած՝ սկսեցինք կողոպտել. իրար էլ, երկիրն էլ: Անհավասարություն ու անարդարություն, կամայականություն ու թշնամություն, աղքատություն ու թշվառություն մտավ մեջներս: Ջանգվածաբար սկսեցինք լքել երկիրը: Այն, ինչ մեր թշնամիներն էին ուզում:

Սա է եղել մեր դժբախտությունը: Սրան են ձգտել նրանք: Միշտ են ձգտել: Միշտ են սարսափել մեր միասնությունից: Զարմանում եմ միայն, որ չեն հասկացել: Թույլ են տվել, որ առաջ գա մեր ուսմունքը, տարածվի ու սերմանվի: Ժողովրդին հավաքի իր շուրջն ու ազգ դարձնի: Վրիպել են ու հիմա շատ են ափսոսում, շա՜տ: Ամեն ինչ կզոհեն՝ ժամանակը հետ բերելու համար: Բայց ուշացել են: Գնացքն արդեն ճանապարհին է: Էլ հնարավոր չի կասեցնել մեր ընթացքը: Մհերը դուրս է եկել ու քայլում է մեջներս:

***

– Պարո՛ն գեներալ, հիմա կարող ենք խփել: Սպասում եմ հրամանի,– ասաց կապիտանը:

– Համոզվա՞ծ ես, որ նա դեռ ներսում է,– փորձեց վերջնականապես հավաստիանալ գեներալը:

– Այո՛, պարոն գեներալ: Դեռ դուրս չի եկել: Թիկնապահն էլ դեռ իրեն է սպասում դրսում,– պատասխանեց կապիտանը:

– Հրամայում եմ խփել,– անմիջապես վրա բերեց գեներալը, միաժամանակ իր գրասեղանից վեր կենալով ու մոտենալով կառավարման վահանակին, ևս մեկ անգամ զննելու մոնիտորը, որի վրա պարզորոշ երևում էր մատուռն ու նրա ստվերում դեռ նստած Աղատը:

Կապիտանն անմիջապես սեղմեց կոճակը: Հեռահար կառավարման հրթիռը պոկվեց արբանյակից ու սկսեց դանդաղորեն մոտենալ երկրին:

– Ա՛յ, այդպես,– ասաց գեներալն ու վերադարձավ իր գրասեղանի մոտ: Հասնելուն պես նստեց աթոռին: Անմիջապես բացեց դարակն ու, հանելով ոգելից խմիչքը, շարունակեց կոնծել:

***

Արքայի մտքերն այսօր սահուն չէին ընթանում։ Չէր կարողանում կենտրոնանալ։ Սկսել էր տագնապ զգալ։ Հուսով էր, թե, առանձնանալով մատուռում, կկարողանար կենտրոնանալ, խորհել անցած գնացածի ու ապագայի շուրջ։ Բայց չէր ստացվում։ Չէր հասկանում՝ ինչու։ Շատ բան կար մտքում։ Վերջին օրերի դեպքերն ալեկոծել էին սիրտը։ Եկեղեցին վերացնելը, կաթողիկոսին դատապարտելը, եկեղեցու փոխարեն ազգային ուսմունքի կենտրոններ հիմնելու մասին զեկուցումը։ Գուցե՝ Էջմիածին մտնելու ու վերջապես սեփական աչքերով եկեղեցու գաղտնի արխիվը տեսնելու ակնկալիքը։ Գուցե այլ պատճառ էլ կար... Չէր կարողանում կենտրոնանալ։

***

Հրթիռը շարունակում էր մոտենալ մթնոլորտին։ Հրթիռի պաշտպանական վահանի առաջին շերտը սկսել էր շիկանալ։

– Կապիտա՛ն, զեկուցի՛ր։

– Պարո՛ն գեներալ, ամեն ինչ կարգին է։ Շուտով կմոտենանք մեզոսֆերային։

– Լավ։ Զեկուցի՛ր ամեն քայլը։

– Լսո՛ւմ եմ։

***

Արքան բացեց աչքերն ու միանգամից կկոցեց։ Արևն ահագին թեքվել էր։ Էլ ոչինչ չէր կարողանում մտածել։ Սովորաբար խաղաղության ու ներդաշնակության զգացումով էր ընդհատում իր խոկումները։ Հիմա մի տեսակ ուրիշ էր։ Սիրտն անհանգիստ՝ սկսեց շուրջը նայել։

***

– Պարո՛ն գեներալ, հրթիռը շուտով կմտնի մեզոսֆերա։

– Լա՛վ։ Շարունակի՛ր զեկուցել։

– Լսո՛ւմ եմ։

Հրթիռի պաշտպանական վահանի առաջին շերտը չափազանց շիկացել էր։ Հրթիռն աստիճանաբար արագու-

թյուն էր հավաքում։

***

Արքայական Համակարգի հակաօդային պաշտպանության Արագածի արևմտյան կայանի կառավարման վահանակի մոտ հսկողություն իրականացնող հերթապահ սպան տարօրինակ շարժում նկատեց մոնիտորի վրա, Երկրի մակերևույթից մոտ երկու հարյուր հիսուն կիլոմետր բարձրության վրա։

– Հետաքրքիր է,– ասես ինքն իր հետ խոսելով՝ ակամա արտաբերեց նա։

– Ի՞նչ կա, Վարդանյա՛ն,– դիմեց նրան հրամանատարը։

– Ի՛մ կապիտան, տարօրինակ հետագծով շատ փոքր բան երևաց երկու հարյուր հիսուն կիլոմետր բարձրության վրա։ Երկնաքարի նման չի, հետագծի ուղղությունը մեզ վրա է, կարծես։

– Իսկ ավելի ճշգրի՞տ։

– Մայրաքաղաքի, կամ...

– Ի՞նչ կամ։

– Ավելի ճիշտ մի քիչ հյուսիս-արևմուտք, Արագածի արևմտյան փեշերի, հենց մեզ վրա։

– Սա երկնաքար չի,– տագնապեց կապիտանը, մոնիտորը զննելուց հետո։

Մոնիտորի վրա հայտնված կետը շարունակում էր իր շարժումը։

– Հա, հաստատ մեզ վրա է գալիս՝ Արագածի արևմտյան փեշերի,– հավաստիացրեց Վարդանյանը։

– Հրթիռի է նման, սա հրթի՛ռ է,– տագնապեց կապիտանը։– Արքան այստեղ է՝ Ամբերդում։ Տագնա՜պ, – բղավեց նա ու անձամբ սեղմեց տագնապի կոճակը։

Տագնապի ազդանշանի բարձր ձայնն անմիջապես լցվեց բոլոր սրահներն ու կայանի ողջ տարածքը։

– Պատրաստվել խփելո՛ւ,– հրամայեց կապիտանը։

– Լսո՛ւմ եմ, ի՛մ կապիտան,– պատասխանեց Վարդանյանը։– Բայց շատ փոքր է։ Կարող է վրիպենք։

– Ո՛չ մի վրիպել։ Արքան է այստեղ իր ընտանիքով։ Արշակը... Պետք է զգուշացնել...

Կապիտանը վերցրեց հեռախոսն ու կապվեց Ազատի հետ։ Ազատը գրպանից հանեց հեռախոսը։

– Ազա՛տ, Գոռն է, լսո՞ւմ ես։

– Հա, Գոռ, ասա։

– Հրթիռ է գալիս։

– Ո՞նց, թե։ Որտեղի՞ց։

– Երևի արբանյակից։ Արքան ո՞ւր է։

– Մատուռում։

– Շուտ մի բան արա։ Արքային փրկել է պետք։ Ուղիղ ձեզ վրա է գալիս։

– Հասկացա։ Կարո՞ղ եք խփել։

– Կփորձենք, բայց շատ փոքր է։ Երևի չստացվի։

– Ինչքա՞ն ժամանակ կա։

– Հինգ րոպե, ոչ ավել։

– Հասկացա։ Վերջ,– ասաց Ազատը։ Անջատեց կապն ու իսկույն մտավ Արքայի մոտ։

– Ի՛մ Արքա, հրթիռ է գալիս։ Պիտի հեռանանք։

Արքան ցնցվեց։

– Ո՞նց։ Որտեղի՞ց։

– Երևի արբանյակից։

– Ինչքա՞ն ժամանակ ունենք։

– Հինգ րոպե, ոչ ավել։ Հեռանալ է պետք,– ասաց Ազատն ու մոտեցավ Արքային, որ ոտքի հանի։

– Չէ՛, մի րոպե,– ասաց Արքան՝ դանդաղ իջնելով գահավորակից։ Ոտքերն ահավոր թմրել էին։

– Դրանք ինձ են նշան բռնել։ Տեսան մենակ եմ...

– Ի՛մ Արքա, ժամանակ չկա։

– Փախնելու տեղ էլ չկա։

– Ամրոցը։

– Չէ՛, մյուսներին կվտանգենք։

– Բա ի՞նչ անենք։

– Դու փախի՛ր։

– Չեմ գնա։ Քեզ մենակ չեմ թողնի։

– Գնա՛, փրկվիր։

– Չէ։

– Ազատ, քեզ մի՛ կորցրու։ Դու դեռ գործ ունես անելու։

– Բա դո՞ւ։
– Ես իմն արել եմ։
– Չե՛մ գնա։
– Ազա՛տ, ինքնազոհաբերության ժամանակը չի, գնա՛։
– Չէ։
– Ազատ, մի՛ հապաղիր, չես հասցնի։
Ազատը դեռ համառում էր։
– Թու՛, ես քո։ Դանա՛կդ տուր։
– Ինչի՞ համար։
– Տո՛ւր,– բղավեց Արքան՝ շեշտակի նայելով Ազատի աչքերին։
Ազատը սարսափեց։ Արքան երբեք այդքան ահարկու չէր դիմել իրեն։ Նա դժկամությամբ, բայց արագորեն հանեց դանակն ու տվեց Արքային։
– Արշակին տեղեկացրու ու ասա թող ժողովրդին հանի ամրոցից ու մեքենաներով արագ դուրս գան։ Մյուսներն էլ թող դուրս գան ու ցրվեն տեղանքով։
Մինչ Ազատը կատարում էր Արքայի հրամանը, Արքան գահավորակի վրայից արագորեն հանեց իր կարպետն ու սկսեց դանակով ճեղքեր բացել կարպետի չորս անկյուններում։
Ազատը ցնցվեց։
– Ի՛մ Արքա, ի՞նչ ես անում։
– Սո՛ւս։

***

– Պարո՛ն գեներալ, մեզ երևի բացահայտել են։ Թիկնապահը շտապ մտավ մատուռ, բայց դեռ դուրս չի եկել։ Երկուսն էլ այնտեղ են։
– Հետաքրքիր է,– ակնհայտ հեգնանքով ասաց գեներալը։
– Պարոն գեներալ, տարօրինակ կերպով դուրս չեն գալիս։
– Սառնասիրտն է։ Խուճապի չի մատնվում, մտածում է,– մրթմրթաց գեներալը։
Մի որոշ դադարից հետո, սակայն, շարունակեց.
– Անխելք չի։ Գիտի, որ փախչելու տեղ չունի։ Խելացի է շան որդին։ Լավ է։ Մեզ էլ հենց դա է պետք, որ

հենց իր տեղում մնա։ Ավելորդ զոհերի կարիք չկա։ Քանի՞ բոպե մնաց։

– Երեք, պարո՛ն գեներալ։

– Շատ լավ,– ասաց գեներալն ու անցավ էլի կոնծելու։

***

Հրթիռի պաշտպանական վահանի առաջին շերտի շիկացած բեկորները պոկվեցին ու սկսեցին հեռանալ։ Հրթիռն արդեն մտել էր մեզոսֆերայի խորը շերտերը։ Օդի շփումն իր վրա սկսեց ընդունել հրթիռի պաշտպանական վահանի երկրորդ շերտը։

***

– Շո՛ւռ արի,– ասաց Արքան՝ ավարտելով իր գործը։

– Չհասկացա…

– Շո՛ւտ, ժամանակ չկա։

Ազատը շրջվեց։ Արքան կարպետը գցեց Ազատի մեջքին։

– Ձեռքերդ մտցրու վերևի ճեղքերի մեջ ու ամուր բռնիր կարպետից։ Ոչ մի դեպքում բաց չթողնես։

Ազատը բան չէր հասկանում, բայց կատարում էր Արքայի ամեն ասածը։

– Ոտքերդ մեկ առ մեկ բարձրացրու։

Ազատը բարձրացրեց, սկզբում՝ աջ ոտքը։ Արքան նրա աջ ոտքը մտցրեց կարպետի ներքևի աջ անկյունի ճեղքի մեջ։

– Իջացրու։ Հիմա՝ ձախը։

Ազատն այս անգամ ձախ ոտքը բարձրացրեց։ Արքան նրա ձախ ոտքը մտցրեց կարպետի ներքևի ձախ անկյունի ճեղքի մեջ։ Հետո արագ հանեց իր գոտին ու կարպետի միջնամասը կապեց Ազատի մեջքին՝ գոտկատեղի շրջանում։

– Թռի ձորն ու փրկվի։

– Ո՞նց։ Բա դո՞ւ։ Ինչի՞ ես ինձ փրկում,– ասաց Ազատն ու շրջվեց դեպի Արքան։

– Գնա՛։ Ես չեմ կարող, ծեր եմ։ Ոտքերս թմրած են։ Պատճառ շատ կա։ Գնա՛։ Թռիր աջ ձորը։ Ձեռքերդ ու ոտ-

քերդ, ինչ էլ լինի, լայն բացած՝ ձիգ պահիր, խաչաձև։ Ձորում միշտ քամի կա։ Բռնի քամին ու կսավառնես։ Պահիր գետի վրա։ Խորը տեղ տեսնես, քեզ քաշիր ձեռքերդ ու ոտքերդ՝ կընկնես ջրի մեջ, կփրկվես։ Հա, երդվիր, որ իմ Տիգրանին թիկունք կկանգնես, ոնց որ՝ ինձ։ Նա ամեն ինչ գիտի, ինձնից էլ՝ լավ։

– Երդվո՛ւմ եմ,– ասաց Ազատն ամենայն լրջությամբ։

– Գնա՛։ Շատ շնորհակալ եմ ամեն ինչի համար,– ասաց Արքան ու գրկեց Ազատին, բայց մի երկու վայրկյան հետո բաց թողեց։

– Գնա՛։

Ազատը մի վերջին հայացք գցեց Արքայի կողմը։ Մի փոքր թաց, բայց միևնույն ժամանակ թշնամու հանդեպ կատաղությամբ լի աչքերն Արքայից դանդաղ հեռացնելով, գլուխը կախ դուրս եկավ մատուռից ու քայլեց դեպի ձորը։

Նախկինում երբեք նման բան չէր արել։ Սակայն, անսահման զայրույթով լեցուն, երկյուղի ոչ մի նշույլ չկար նրա սրտում։ Անսահման վրեժով լի՝ էլ ոչնչի առջև ընկըրկողը չէր Ազատը։ Շուտով հասավ հրվանդանի աջ եզրին ու առանց վարանելու նետվեց ձորը։ Ինչպես Արքան էր ասել, Արագածի գագաթից փչող քամին ուժգին էր ձորում։ Ազատը լիովին սթափվեց միայն այն ժամանակ, երբ արդեն օդի մեջ էր։ Ջարմանքով նկատեց, որ ճախրում է։ «Ճիշտ էր Արքան։ Ստացվեց»,– ինքն իրեն մտածեց Ազատը ու մտաբերեց Արքայի հրահանգները՝ պահել գետի վրա ու ձիգ պահել ձեռքերն ու ոտքերը։

***

Մեր հակաօդային պաշտպանության կայանում խիստ լարված իրավիճակ էր։

– Ի՛մ կապիտան, հետագիծը հաշվարկված է։ Կարող ենք խփել,– տագնապած զեկուցեց Վարդանյանը։

– Դե, շո՛ւտ, խփե՛լ,– հետևեց կապիտանի հրամանը։

Վարդանյանը սեղմեց կոճակն ու շարունակեց հետևել մոնիտորին։

***

– Պարո՛ն գեներալ,– խուճապի մեջ ձայն տվեց կա-

պիտանը։

– Ի՞նչ,– շաղված աչքերը բարձրացնելով՝ համարյա անտարբեր արձագանքեց գեներալը։

– Պարո՛ն գեներալ, Արքան փախավ։

– Ո՞նց՝ փախավ,– սթափվեց գեներալը։

– Չգիտեմ։ Պարաշյուտի նման բան կար երևի մոտը, ձորը նետվեց ու ճախրում է։

– Ո՞նց,– զարմացավ գեներալն ու մոտեցավ մոնիտորին։ Ու, նկատելով ձորն ի վար ճախրող կարմիր «պարաշյուտը», խուճապահար հրամայեց.

– Շեղե՛լ, շեղե՛լ հրթիռի ուղղությունը։ Խփե՛լ դրան։ Խփե՛լ։

– Լսո՛ւմ եմ,– պատասխանեց կապիտանն ու սկսեց շեղել հրթիռի ուղղությունը։

Արդեն մեկ րոպեից էլ պակաս ժամանակ էր մնացել։ Հրթիռը մեծ արագությամբ սլանում էր դեպի ներքև։

***

Ամրոցում իրարանցում էր։ Արշակը փորձում էր կատարել Արքայի հրամանը։ Թագուհին ընդդիմանում էր։

– Ի՛մ թագուհի, Արքայի հրամանն է, որ բոլորը դուրս գան ամրոցից ու ցրվեն։ Ես պարտավոր եմ կատարել նրա հրամանը։

– Իսկ ինքն ո՞ւր է։

– Ինքը մատուռում էր՝ Ազատի հետ։ Հուսով եմ, որ սա խաբուսիկ տագնապ է։ Ամեն դեպքում պետք է դուրս գալ ամրոցից ու ցրվել։

– Ես առանց նրա չեմ գնա։

– Ի՛մ թագուհի, Արքան ինձ չի ների։ Խնդրում եմ։

Թագուհին վերջապես տեղի տվեց ու արքայադստեր հետ միասին սկսեց շարժվել դեպի ներքև։ Արքայադուստրը բան չէր հասկանում։ Փոքր արքայազնը ուղեկցում էր մորն ու Անուշին։ Մեծ արքայազնը մի փոքր հետ մնաց ու դիմեց Արշակին։

– Արշա՛կ, բա ինքն ո՞ւր ա։

– Տիգրան ջան, մատուռում էր, Ազատի հետ։

– Էս լուրջ ա՞։

– Ինչքան հասկանում եմ՝ հա։

– Բա...

– Երևում ա՝ կրակն ուզում ա իրա վրա վերցնի։

Տիգրանը կաթվածահար էր։ Չէր հավատում իրողությանը։

– Մենք պիտի դուրս գանք ու ցրվենք։ Գուցե ամրոցին էլ փորձեն խփել։

– Մեր հակաօդայինները չեն կարո՞ղ ոչ մի բան անել։

– Կանեն, բայց կարող է չստացվի։ Պետք է դուրս գալ։

Տիգրանն իսկույն գնահատեց իրավիճակն ու Արշակի հետ միասին դիմեցին ներքև՝ դեպի մեքենաները։

***

Մեր հակաօդայինները ճշգրիտ հաշվարկել էին թշնամական հրթիռի հետագիծն ու արձակել հակահրթիռը։ Բայց, երբ թշնամականը շեղեց իր ուղղությունը դեպի կարմիր «պարաշյուտը», ամեն ինչ ապարդյուն անցավ։ Մեր հրթիռը վրիպեց։ Էլ ժամանակ չկար արձակելու երկրորդը։

***

Արքան նստեց գահավորակին։ Աչքերը հառեց արևին ու արդեն պատրաստվում էր միանալ իր նախնիներին։ Աչքի առջև արագորեն անցան իր կյանքի բոլոր նշանավոր դեպքերն ու դեմքերը, մանկությունից սկսած իր ձախողումներն ու ձեռքբերումները։ Ձախողումները շատ էին։

***

Ամրոցում դեռ իրարանցում էր։ Արշակը հանկարծ նկատեց, որ չկար Ռաֆայելը։

– Ռաֆայելն ո՞ւր է,– դիմեց նա գիտաշխատող տղաներին։

Տղաները դժկամությամբ, բայց տեղեկացրին, որ ներքևում է։ Արշակը հրամայեց նրանց դուրս գալ ամրոցից, իսկ ինքը մտավ լաբորատորիա։ Տեսավ, որ Ռաֆայելը գործի էր դրել միկրոալիքային թնդանոթը։

***

– Հը՛ն, ստացվո՞ւմ է, կապիտա՛ն,– տագնապած հարցրեց գեներալը։

– Դժվար է շարժվող թիրախին, բայց կլինի,– պատասխանեց կապիտանը։

– Տես, չվրիպե՛ս,– սպառնաց գեներալը։

Կապիտանը խուճապի մեջ էր։

***

Հանկարծ, Արքայի մտքով մի զարհուրելի բան անցավ։ Իսկ, եթե դրանք չեն նկատել, որ ի՛նքը չի եղել մատուռից փախչողը... Իհա՛րկե, չեն նկատել։ Չէի՛ն կարող նկատել։ Արքան սարսափեց, որ իր փոխարեն Ազատին դրեց կրակի տակ։ Արքայի ոտքերը դեռ թմրած էին։

– Սրիկանե՛ր,– բղավելով, նա իսկույն վեր թռավ տեղից ու դիմեց դեպի մատուռի դուռը։ Հասավ ու կանգնեց դռների մեջ, գլուխը բարձր՝ դեպի վեր։

***

– Պարո՛ն գեներալ, Արքան դեռ մատուռում է,– համարյա ճչաց կապիտանը։

– Ո՞նց, թե...

– Հա, տեսնում եմ։ Ահա,– ասաց կապիտանը, մատը մոնիտորին մեկնած։

– Շան որդի։ Ո՞նց մեզ ֆոռացրեց,– ասաց գեներալն ու արագորեն մոտեցավ մոնիտորին, որ համոզվի։

– Ի՞նչ անենք,– հարցրեց կապիտանը։

Գեներալի դեմքը կարմրել էր կատաղությունից։ Դեպքերի անակնկալ շրջադարձից խուճապահար, նա իսկույն հրամայեց.

– Արա՛գ։ Արա՛գ։ Հե՛տ շեղել։ Հե՛տ շեղել հրթիռը։

– Լսո՛ւմ եմ,– ասաց կապիտանն ու սկսեց հետ շեղել հրթիռը դեպի Արքան։

***

Որոշ ժամանակ անց լսվեց մի զարհուրելի պայթյուն։ Շուրջն ամեն ինչ դղրդաց՝ ասես աշխարհակործան երկրաշարժից։ Բոլորը ցնցվեցին։ Աննայի սիրտը ճաքեց։

– Դավի՜թ,– ճչաց նա և ուշագնաց ընկավ գետնին։

Վերջ առաջին գրքի

ԱՐԱՐՉԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

ՀԻՄՆԱՐԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մարդը ծնվել է մայր նախանյութից երջանկության մեջ ու երջանիկ ապրելու համար։ Երջանկությունն է մարդու բնական վիճակը։ Մայր նախանյութին ներհատուկ ամենակարևոր հատկությունն ինքնակատարելագործման մղումն է։ Մարդը մայր նախանյութի ինքնադրսևորման արդյունքն է։ Հետևաբար մարդուն ևս ներհատուկ է ինքնակատարելագործվելու մղումը։ Մարդը, միայն երջանիկ ապրելով, կկարողանա ճանաչել համատիեզերական օրինաչափությունները ու ինքնակատարելագործվել։ Երջանկությունից բացի մյուս բոլոր վիճակները կասեցնում են մարդու առաջընթացն ու սպանում նրան։ Մարդ չի կարող երջանիկ լինել, երբ բոլորը երջանիկ չեն։ Մարդու առաքելությունն է ինքնակատարելագործվել, սերունդ տալ, ու հոգ տանել իր սերունդների և մյուս բոլորի երջանկության ու կատարելագործման մասին։ Մարդու առաքելությունն է նաև հոգ տանել ու խնամել մայր բնությունը, նրա բուսական ու կենդանական աշխարհը, բարեփոխել այն, այգեստանների վերածելով տափաստաններն ու անապատները։ Այս ամենին կարելի է հասնել միայն նահապետական կարգի առկայությամբ։

ԱՐԱՐՉԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

1 Սիրիր (մի վնասիր, խնամիր) ինքդ քեզ
2 Սիրիր մերձավորիդ
3 Սիրիր մայր բնությունը

4 Պաշտպանիր ինքդ քեզ
5 Պաշտպանիր մերձավորիդ
6 Պաշտպանիր մայր բնությունը

7 Բարեփոխիր ինքդ քեզ
8 Բարեփոխիր մերձավորիդ
9 Բարեփոխիր մայր բնությունը

ԱՐԱՐԻՉ

Արարիչը համատիեզերական օրինաչափությունների ամբողջությունն է։ Նա ճշմարտության, բարու և արդարության մարմնացումն է։ Ճշմարտությունն ու արդարությունը վեր են ամեն ինչից՝ անձնական, ընտանեկան, տոհմային կամ որևէ այլ բազմության խմբակային շահերից։ Եղբայրությունը, հավասարությունն ու արդարությունը մեր Արարչական գենի հիմնական հատկություններն են։

. Դատապարտելի է նա, ով դիմացինին չի հարգում ու գնահատում այնպես, ինչպես ինքն իրեն։

. Դատապարտելի է նա, ով իր անձնական շահը վեր է դասում ազգակցի, համայնքի կամ ազգի ընդհանուր շահից։

. Դատապարտելի է նա, ով շահագործում է մյուսի աշխատանքը։

Երբ մարդ վարձատրվում է իր աշխատանքի արդյունքից պակաս, ապա դա շահագործում է։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ հայերս, արարվել ենք Արարատում՝ Արարչի ձեռքով ու Արարչի նմանությամբ, Արարչի բանականությամբ ու իմաստնանալու հնարավորությամբ։ Բայց բանականության հետ մեկտեղ նույնքան պատասխանատվություն ու պարտականություն ունենք մեր ուսերին։ Մեր պարտքն է Արարչական կարգ հաստատել առաջին հերթին մեզանում, հետո նաև՝ ողջ աշխարհում։ Մեր պարտքն է ինքնամաքրվել, միաժամանակ օգնելով ողջ մարդկությանը՝ ձերբազատվել պիղծ հակամշակույթի գերությունից ու այդպիսով ներդաշնակություն ու կայուն խաղաղություն հաստատել ողջ աշխարհում։ Շրջապատող հակամշակույթն ու աննեղդաշնակ կյանքը համատարած ու շարունակական դրժբախտություններ են ծնում։ Մենք՝ հայերս, մեր աստվածամարդ էությամբ պատասխանատու ենք Արարչագործության մյուս զավակների համար այնպես, ինչպես մեծ եղբայրը՝ իրենից փոքրերի համար։ Մեր պարտականությունն է Արարչական կենարար ուսմունքը տանել մեր փոքրը եղբայրներին ու ազնվացնել նրանց։

. Դատապարտելի է նա, ով արհամարհում է ի վերուստ իր վրա դրված ինքնամաքրվելու, շրջապատող հակամշակույթից ձերբազատվելու, Արարչական կենարար ուժմունքն իր շուրջն ու ողջ աշխարհում սերմանելու պատասխանատվությունն ու պարտականությունը։

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մարդը ծնվում է անկապտելի իրավունքներով։ Մարդն իրավունք ունի պաշտպանել իր ու իր մերձավորների կյանքը, առողջությունը, անձնական սեփականությունը, պատիվն ու արժանապատվությունը։

. Դատապարտելի է նա, ով փորձում է սահմանափակել մարդու ինքնապաշտպանության իրավունքը։

ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ/ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ ի ծնե հավասար են՝ իրենց իրավունքներով ու արժեքով։ Ոչ ոք իրավունք չունի ստրուկ, ճորտ, ծառա կամ վարձու բանվոր պահել։ Արարչական փոխհարաբերությունները հիմնված են փոխվստահության ու համագործակցության վրա։

. Դատապարտելի է նա, ով նվաստացնում է մեկ ուրիշին ու շահագործում նրա աշխատանքը։

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Բնության մեջ ամեն ինչ պատկանում է բոլորին հավասարապես։ Բոլորը հավասարապես իրավունք ունեն օգտվելու մայր հողի բարիքներից, բավարարելու իրենց նյութական ու հոգևոր կարիքները։ Գթասիրտ ու հարգալից վերաբերմունքը մայր բնության նկատմամբ յուրաքանչյուրի պարտականությունն է։

. Դատապարտելի է նա, ով իր սեփականն է համարում բնության որևէ հատված ու սահմանափակում կամ արգելում է մյուսներին՝ օգտվել այդ հատվածի բարիքներից։

. Դատապարտելի է նա, ով կողոպտում է բնությունը անհրաժեշտից ավել՝ նյութական բարիքներ կուտակելու համար։

ԸՆՏԱՆԻՔ

Մարդն արարվել է Արարչի նմանությամբ: Սակայն հենց սկզբից կորցրել է իր Արարչական կերպարն ու իր ուսուցչին: Մարդու երկրային կյանքի գործն է՝ ինքնուրույն վերականգնել իր Արարչական կերպարը: Այդ գործում հսկայական է ընտանիքի, հատկապես՝ կնոջ դերը: Ընտանիքը տղամարդու և կնոջ ոգեղեն միությունն է, տոհմի մասնիկն ու տոհմի հետ միասին՝ ազգի հիմքը:

. Դատապարտելի է այն տղամարդը, որը չի ձգտում վերականգնել իր Արարչական կերպարը:

. Դատապարտելի է այն կինը, որը չի օգնում ու չի խրախուսում նրան այդ հարցում:

Տղամարդը հայր է: Իր ազնվությամբ, առաքինությամբ ու իմաստնությամբ նա է ընտանիքի առաջնորդը, նրա բարեկեցության, պատվի ու արժանապատվության պահապանը: Տղամարդը նաև իր կնոջ հոգևոր ու մտավոր գիտելիքների ուսուցիչն է, նրա հոգու ներդաշնակության երաշխավորն ու պատասխանատուն:

Կինը մայր է: Իր սրբությամբ տոհմածին է մայրն ու տոհմի հարատևման ու ամբողջականության պատասխանատուն: Նրա ծնած երեխաներն իրենը չեն: Նրանք տոհմի զավակներն են:

. Դատապարտելի է այն տղամարդը, որը տեր չի կանգնում իր զավակներին:

. Դատապարտելի է այն կինը, որը կտրում է երեխաներին իրենց տոհմից:

Ընտանիքի հայրն ու մայրը հավասարապես պատասխանատու են ընտանիքի բարօրության համար: Տղամարդը հիմնականում դրսի, կինը՝ ներսի, պատասխանատուն է: Ընտանիքի արու զավակներին կրթում է հայրը, իսկ էգ զավակներին՝ մայրը: Կնոջ սրբազան պարտականությունն է՝ խնամել ամուսնուն ու նրա զավակներին:

. Դատապարտելի է այն կինը, որը չի խնամում իր ամուսնուն ու նրա զավակներին:

. Դատապարտելի է այն տղամարդը, որը կնոջը վերաբերվում է որպես ստրուկի:

Տղամարդն իր իմաստնությունն առաջինը կիսում է իր կնոջ, իսկ հետո՝ իր արու զավակների հետ։
. Դատապարտելի է այն կինը, որը չի հարգում իր ամուսնուն ու չի սովորում նրանից։
. Դատապարտելի է այն կինը, որը չի կատարում իր պարտականություններն ընտանիքում։
. Դատապարտելի է այն կինը, որն անհնազանդ է ամուսնուն ու չի կատարում նրա ցուցումները։
. Դատապարտելի է այն կինը, որը պահանջներ է դնում ամուսնու առջև։
. Դատապարտելի է այն կինը, որն ամուսնու գլխին նըստած՝ իր քմահաճույքներն է թելադրում։
. Դատապարտելի է այն կինը, որն ամուսնանալուց հետո աչքը հորական տոհմի կողմն է։
. Դատապարտելի է այն կինը, որն ընտանիքի հանդեպ իր պարտականություններն ամուսնու վրա թողած՝ մտահոգված է իր սեփական կամ իր հորական տոհմի բարեկեցությամբ։
. Դատապարտելի է այն կինը, որն ամուսնանալուց հետո ակնկալում է իր հորական տոհմի միջամտությունն իր ընտանիքի գործերին։
. Դատապարտելի է այն կինը, որի աչքը դուրսն է։

Տոհմի նահապետը տոհմի մեծ հայրն է։ Իր ազնվությամբ, առաքինությամբ, իմաստնությամբ ու վեհությամբ նա է տոհմի խորհրդանիշը, նրա առաջնորդն ու տոհմի կրթության ու բարեկեցության պատասխանատուն, նրա պատվի ու արժանապատվության պահապանը։ Տոհմի բոլոր անդամները հարգում ու անվերապահորեն հնազանդվում են տոհմի նահապետին։
. Դատապարտելի է այն տոհմը, որի անդամները չեն հարգում ու չեն հնազանդվում տոհմի նահապետին։
. Դատապարտելի է այն տոհմը, որի աղջիկները չեն նախապատրաստված ուրիշ տոհմերի շարունակելիությունն ապահովելու առաքելությանը։
. Դատապարտելի է այն տոհմը, որն իր աղջկանից ծնված ուրիշ տոհմի սերունդն է սեփականացնում։

. Դատապարտելի է այն տոհմը, որի ընտանիքներում հարսի տոհմն է տնօրինում։
. Դատապարտելի է այն տոհմը, որն իր աղջկան ուրիշ տոհմին հանձնելուց հետո, միջամտում է նրա ընտանեական կյանքին։
. Դատապարտելի է այն տոհմը, որն իր որդուն է փեսայության տալիս հարսի տոհմին։
. Դատապարտելի է այն տոհմը, որն իր աղջկա համար փեսա է ներս առնում։
. Դատապարտելի է այն տոհմը, որն իր անառողջ կամ պղծված աղջկան հարսնության է տալիս ուրիշ տոհմի։
. Դատապարտելի է այն տոհմը, որի աղջիկը կորցնում է կուսությունը՝ նախքան ամուսնանալը։

ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ
Զուգավորումը տիեզերքի արարման պատճենն է։ Այն տղամարդու համար իր Արարչական ներուժի գործադրման ու զարգացման համար է։ Կնոջ համար զուգավորումը տղամարդու Արարչական ներուժն իր վրա կրելու ու արարմանն այդպիսով մասնակից լինելու համար է։ Զուգավորումը նաև տոհմի շարունակելությունն ու զույգի միությունն ամրապնդող ու սրբագործող անհրաժեշտություն է։
. Դատապարտելի է այն զույգը, որը զուգավորվում է միայն մարմնական հաճույքներ ստանալու համար։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
Երկիրն արարվել է Արարչի կողմից՝ որպես Մայր, իր զավակներին սնելու ու խնամելու համար։ Մարդու անհնազանդության պատճառով Երկիրը կորցրել ու դեռ չի ստացել իր դրախտային կերպարանքը։ Մարդու առաքելությունն է վերականգնել այն։
. Դատապարտելի է այն անհատը, համայնքը կամ ազգը, որը չի անում ամեն ինչ՝ Երկիրն իր դրախտային վիճակին վերադարձնելու համար։

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ
Մարդը ծնվել է երջանիկ ապրելու համար։ Երջանկություն

է ապրել սիրո, եղբայրության, հետևաբար, արդարության պայմաններում և ազատորեն օգտվել մայր հողի բարիքներից։ Երջանկության բաղադրիչներից է նաև համատիեզերական օրինաչափությունների իմացությունը։ Չկա անհատական երջանկություն՝ առանց ընտանիքի, տոհմի, համայնքի ու ազգի հավաքական երջանկության։

. Դատապարտելի է նա, ով չի անում ամեն հնարավոր բան՝ ազգի հավաքական երջանկությունն ապահովելու համար։

. Դատապարտելի է նա, ով սահմանափակում կամ արգելում է մյուսին օգտվել մայր հողի բարիքներից։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մարդու օրգանիզմն անկայուն ներդաշնակության մեջ է։ Անբարենպաստ պայմանների հետևանքով ենթակա է հոգնելու և հիվանդանալու։ Լիարժեք քունն առողջության վերականգնման գրավականն է։ Սակայն խիստ անբարենպաստ պայմանների հետևանքով ներդաշնակությունը կորցրած օրգանիզմը հիվանդանում է ու լուրջ բժշկման կարիք ունի։ Բժշկի պարտականությունն է՝ ունենալ մարդու օրգանիզմի մասին լիարժեք գիտելիքներ ու նրան հմտորեն բժշկելու ունակություն։

. Դատապարտելի է այն բժիշկը, որը չի բուժում հիվանդին այնպես, ինչպես կբժշկեր ինքն իրեն։

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մտավորականն ազգի հոգևոր ու մտավոր առողջությամբ մտահոգված անհատն է՝ անկախ մասնագիտությունից ու տարիքից։ Մտավորականությունն ազգի ուսմունքի, նրա ամենաառաքինի արժեքների կոտղը, կրողն ու սերմնացանն է ազգի մեջ։ Մտավորականությունն ազգի առաջնորդն է, նրա գլուխը, միտքն ու խիղճը։ Առանց գլխի մարմինը դատապարտված է մահվան։

. Դատապարտելի է այն մտավորականը, որն անկեղծորեն չի մտահոգված ազգի հոգևոր ու մտավոր առողջությամբ ու չի անում ամեն հնարավոր բան՝ ստեղծելու, սերմանելու ու պահպանելու բարձրարժեք ու առաքինի մշակույթ։

ԱՐՎԵՍՏ

Արվեստը տրված է ի վերուստ՝ մարդու Արարչական զորության, նրա հոգևոր ու մտավոր զարգացման համար։ Արվեստագետի առաքելությունն է՝ սերմանել ճշմարտությունը, առաքինին, բաձրարժեքն ու գեղեցիկը։ Արվեստը նաև ի զորու է վեր հանել ու պահպանել ազգային հիշողությունը, արժեհամակարգն ու նախանշել ապագա առաջընթացի ուղիներ։ Արվեստը նաև հասարակության արատները վեր հանելու, պախարակելու ու այդպիսով նրան ինքնամաքրման մղելու համար է։ Արվեստագետի պարտականությունն է՝ ունենալ լիարժեք գիտելիքներ համատիեզերական օրինաչափությունների, արվեստի օրենքների ու օրինաչափությունների մասին, նաև՝ այդ գիտելիքները կիրառելու հմտություն։

. Դատապարտելի է այն արվեստագետը, որն օգտագործում է արվեստը՝ միայն սեփական զգայարաններին հաղորդ տալու համար։

. Դատապարտելի է այն արվեստագետը, որն օգտագործում է արվեստն անարդար, ցածրարժեք, ստորակարգ, տգեղ ու անբարոյական արժեքներ սերմանելու համար։

ԶՈՐԱՎԱՐ

Զորավարը բանակի մարտական ոգու կերտողն է։ Զորավարը բարոյականության, արիության ու անձնվիրության տիպարն է։ Զորավարն իր յուրաքանչյուր զինվորին վերաբերվում է այնպես, ինչպես իր սեփական որդուն։ Հարգանքը զորավարի հանդեպ ամեն զինվորի սրբազան պարտքն է։ Բանակը՝ որպես մի մեծ ընտանիք, ի զորու է տանել անհնարին թվացող հաղթանակներ։

. Դատապարտելի է այն զորավարը, որը չի հարգում իր զինվորին։

. Դատապարտելի է այն զինվորը, որը չի հարգում իր զորավարին։

ԱԶԳԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Ազգի առաջնորդն Արարչական անարատ արյուն ունի։ Նա ազգի հավաքական կերպարն է։ Նա աստվածամարդ է՝ իր ազնվությամբ, առաքինությամբ, իմաստնությամբ, վեհու-

թյամբ ու քաջությամբ: Նա խորաթափանց միտք ունի, հրաբորբ ու կարեկից սիրտ: Առաջնորդն իր ազգի գերագույն նահապետն է: Նա իր ազգի անցյալի վկան է և նրա ներկայի ու ապագայի կերտողը: Նա է իր ազգի ոսմունքի կոտղը, կրողն ու պահապանը: Նրա անձնվեր հայրենասիրության օրինակով է կրթվում ու հղկվում ամեն մի նոր սերունդ: Չկա ավելի կործանարար բան, քան առաջնորդի վատ օրինակը:

. Դատապարտելի է այն առաջնորդը, որը հոգ չի տանում իր ազգի, նրա ոսմունքի ու մշակույթի մասին:

. Դատապարտելի է այն առաջնորդը, որն իր ազգի վրա անիրավ տիրապետություն է կիրառում:

. Դատապարտելի է այն առաջնորդը, որն օգտագործում է իր դիրքը՝ նեղ անձնական շահերի համար:

. Դատապարտելի է այն առաջնորդը, որը չի գործում իմաստնությամբ, իր ազգի հավաքական շահը մտքում:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթը տեսակի գենից բխող աշխարհընկալման, ոսմունքի ու այդ ոսմունքի հիման վրա ստեղծված օրենքների ազդեցությամբ առաջացած այն ներքին մեխանիզմն է՝ չգրված օրենքների տեսքով, որ կարգավորում է միջանձնային հարաբերությունները հասարակության ներսում: Նաև՝ միջազգային հարաբերությունները

ԱԶԳ

Ազգը գենետիկ ու դրանից բխող մշակութային ընդհանրություն ունեցող մարդկանց բազմությունն է:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ժողովուրդը՝ թեև գենետիկ, սակայն մշակութային ընդհանրություն չունեցող մարդկանց բազմությունն է:

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիքը Մայր հողի վրա ապրող ու արարող ազգն է:

ՍԵՐ

Սերն արյունակցի էության կարոտն է, ձգտումը դեպի

նմանատիպ՝ հոգեհարազատ՝ արյունակից, էակը, մշակույթը կամ ազգը։ Երջանկություն է ապրել նմանատիպ՝ հոգեհարազատ՝ արյունակից, էակի հետ միասին, սիրո ու ներդաշնակության մեջ։

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ
Հայրենասերը հայրենիքի կարոտ, հայրենիքի հանդեպ սեր ու հարգանք ունեցողն է։ Սերը սիրահարվածություն չէ։ Այն կշռադատված ընտրություն է, որն երևում է որևէ մեկի կամ երևույթի հանդեպ մարդու ուշադրության, հոգատարության ու ինքնազոհաբերության պատրաստակամության մեջ։ Նույնն է հայրենիքի հանդեպ սերը։

ԱՌԱՋԸՆԹԱՑ
Անհատի կամ ազգի առաջընթացի գրավականն անկեղծ որոնումը, բացահայտումն ու ազնիվ ինքնախոստովանությամբ ինքնամաքրումն է՝ առանց որի ազգը դատապարտված է մահվան։ Ապագան վտանգված ազգի միակ փրկությունը սեփական վերադաստիարակությունն է։

***

Այս օրենքները, ծառայելով որպես չափորոշիչ, կօգնեն մեր ազգակիցներին հղկել իրենց սեփական արժեհամակարգն ու մոտենալ սահմանված բարոյահոգևոր բարձունքին։ Միայն բարձրարժեք ու համընդհանուր մշակույթ ունենալով է հնարավոր միասնական ու հզոր ազգ դառնալ ու լուծել մեր ամբողջական հայրենիքի վերականգնման ու համայն հայության վերամիավորման գերխնդիրը։

©Դավիթ Միրզոյան, Մարտ 2012
www.davitmirzoyan.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (Նախագիծ)

Մենք՝ համայն Հայ ժողովուրդը, նպատակ ունենալով՝

.Վերականգնել ու ապրել մեր ազգային էությունից բխող Արարչական ուսմունքով,

.Վերականգնել դարեր առաջ կորցրած մեր ազգային պետությունը,

.Վերականգնել մեր ամբողջական հայրենիքը,

.Վերադարձնել աշխարհասփյուռ բոլոր վտարանդի հայերին,

.Վերականգնել մեր ազգի համատիեզերական Արարչական առաքելությունը,

.Վերականգնել ու պահպանել Երկրագնդի ու նրա կենսոլորտի անաղարտ, դրախտային վիճակը,

.Վերականգնել ու պահպանել Արարչական արժեքների վրա հիմնված կայուն խաղաղություն Երկրագնդի բոլոր ազգերի միջև, հռչակում է Հայաստանը՝ որպես միապետություն՝ վերականգնելով Արարչական կարգն արքա միապետի՝ ազգի գերագույն նահապետի, գլխավորությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՒՆԸ

Հայաստանի անվանումն է՝

Հայաստանի Թագավորություն։

Միջազգային ասպարեզում՝ Kingdom of Armenia:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Թագավորությունն ազատ, անկախ, ինքնիշխան, անբաժանելի ու անկապտելի Համակարգ է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայաստանի Թագավորության արժեհամակարգն Արարչական ուսմունքն է։ Հայաստանի Թագավորությունում բոլոր օրենքներն ու միապետի գործունեությունը բխում են Արարչական ուսմունքից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ
Հայաստանի Թագավորությունն ազգային, սոցիալական միապետություն է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ
Հայաստանի Թագավորությունը սահմանադրական, ժառանգական միապետություն է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՊԵՏԻ ՏԻՏՂՈՍԸ
Հայաստանի Թագավորության միապետի տիտղոսն է՝ Համայն Հայոց Արքա։

Համայն Հայոց Արքան իր ազգի առաջնորդն է, իր ազգի հավաքական կերպարը, նրա Արարչական էության մարմնացումը։ Համայն Հայոց Արքան՝ իր ազնվությամբ, առաքինությամբ, իմաստնությամբ, վեհությամբ ու քաջությամբ, իր ազգի գերագույն նահապետն է, իր ազգի բարօրության, պատվի ու արժանապատվության պահապանը։ Համայն Հայոց Արքան իր ազգի անցյալի վկան է, նրա ներկայի ու ապագայի կերտողը։ Նա է իր ազգի ուսմունքի ու մշակույթի կոտղը, կրողը, կիրառողն ու պահապանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԸ
Հայաստանի Թագավորության զինանշանն իննաթև արևխաչն է։

Երկու տարբերակն էլ հավասարապես ընդունելի են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԸ

Հայաստանի Թագավորության դրոշը 1.73 X 1 հարաբերությամբ հորիզոնական կարմիր ուղղանկյան վրա նարընջագույն զինանշանն է։

Երկու տարբերակն էլ հավասարապես ընդունելի են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԲԱՆԸ

Հայաստանի Թագավորության նշանաբանն է՝
Եղբայրություն, եղբայրություն, եղբայրություն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԵՐԳԸ

Հայաստանի Թագավորության օրհներգն Արամ Խաչատրյանի կողմից երկրորդ հանրապետության համար գրված երաժշտությունն է։

ԲԱՌԵՐԸ՝

Արարչական ազատ աշխարհ Հայաստան,
Բազում դարեր դաժան ճամփա դու անցար,
Քաջ որդիք քո մաքառեցին քեզ համար,
Որ դառնաս դու մայր հայրենիք հայության։

Կրկներգ՝
Փառք քեզ, միշտ փառք, Արարչական Հայաստան,
Աշխատասեր, ճարտարագործ-շինարար,
Ժողովրդիդ սուրբ դաշինքով անսասան՝
Դու ծաղկում ես և կերտում լույս ապագադ։

Արան անմահ մեզ հուրն անշեջ պարգևեց,
Մեր դեմ շողաց երջանկաբեր այգաբաց,
Մեր պայքարը կործանումից մեզ փրկեց և
Տվեց մեզ նոր, պայծառ կյանք փառապանծ։

Կրկներգ

Քո որդիքը եղբայրաբար միացան,
Ու կերտեցին ամրակուռ մի պետություն,
Քո այրերը, խորաթափանց, իմաստուն,
Հաղթորեն մեզ դեպ ապագա են տանում։

Կրկներգ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ
Հայաստանի Թագավորության պետական լեզուն գրական արևելահայերենն է։

ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
Համայն Հայոց Արքայի անձը սուրբ է ու անձեռնմխելի։ Համայն Հայոց Արքան չի կարող մեղադրվել կամ պախարակվել։ Համայն Հայոց Արքայի անձի կամ Արքայական ընտանիքի որևէ անդամի հասցեին վիրավորական արտա-

հայտություն թույլ տալը համարվում է անարգանք ողջ ազգի հասցեին, հետևաբար որակվում է որպես թշնամանք ու հանցագործություն։

Համայն Հայոց Արքային, թագուհուն կամ արքայական ընտանիքի որևէ անդամին ապակողմնորոշող ու կեղծ տեղեկություն հաղորդելը համարվում է մեծագույն անարգանք, հետևաբար որակվում է՝ որպես թշնամանք ու հանցագործություն։

Համայն Հայոց Արքային, թագուհուն կամ արքայական ընտանիքի որևէ անդամին հաճոյանալը, շողոքորթելը, հաճոյախոսություններով ու քծնանքով դիմելը համարվում է հանցագործություն։

ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻ ԽՈՍՏՈՒՄԸ
Ստանձնելով երկրի իշխանությունը՝ Համայն Հայոց Արքան արտասանում է. «Խոստանում եմ Արարչական զորությամբ առաջնորդել Հայաստանն ըստ Արարչական ուսմունքի ու Սահմանադրության»։ Այս խոստումը չի կարող կրկնվել երկրորդ անգամ։

ՀԻՄՆԱՐԱՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
Հայաստանի Թագավորության Սահմանադրության հիմքն Արարչական ուսմունքն է։ Արարչական ուսմունքը կարգավորում է կյանքի բոլոր բնագավառները, հատկապես այն բնագավառները, որոնք կարգավորված չեն համապատասխան օրենսդրությամբ։

Ըստ Արարչական ուսմունքի՝ բոլորն ի ծնե հավասար են իրենց իրավունքներով ու արժեքով։ Մարդ իրավունք չունի ստրուկ, ճորտ, ծառա կամ վարձու բանվոր պահել։ Ոչ ոք իրավունք չունի ստրկության, ճորտության, ծառայության հանձնվել կամ վարձու աշխատանքի անցնել մեկ ուրիշի մոտ։ Ոչ ոք իրավունք չունի շահագործել մյուսի աշխատանքը։ Երբ մարդ վարձատրվում է իր աշխատանքի արդյունքից պակաս, ապա դա շահագործում է։ Ըստ Արարչական ուսմունքի՝ բոլորի պարտականությունն է սեփական

ազգակցին վերաբերվել եղբայրաբար ու հարգանքով՝ այնպես, ինչպես կցանկանար, որ իրեն վերաբերվեին։

Ըստ Արարչական ուսմունքի՝ մարդ ծնվում է անկապտելի իրավունքներով։ Մարդկանց հիմնական ու անկապտելի իրավունքներն են՝ կյանքը, առողջությունը, իրավահավասարությունը, ունեցվածքի անձեռնմխելիությունը, պատիվն ու արժանապատվությունը։ Հայաստանի Թագավորությունում ամեն մարդ իրավունք ունի ամենուր ու ցանկացած միջոցներով պաշտպանել իր ու իր մերձավորների իրավունքները։

Հայաստանի Թագավորությունում մեծագույն հանցանք է բռնություն կամ ոտնձգություն կիրառել սեփական ազգակցի, հպատակի կամ քաղաքացու, իրավունքների՝ կյանքի, առողջության, իրավահավասարության, ունեցվածքի անձեռնմխելիության, պատվի ու արժանապատվության վրա։ Ցանկացած այդպիսի ոտնձգություն պատժելի է որձատմամբ։

Ըստ Արարչական Օրենքի՝ բնության մեջ ամեն ինչ պատկանում է բոլորին հավասարապես։ Բոլորը հավասարապես իրավունք ունեն օգտվելու մայր հողի բարիքներից, բավարարելու իրենց նյութական, մտավոր ու հոգևոր կարիքները։

Յուրաքանչյուրի պարտականությունն է գթասիրտ ու հարգալից վերաբերմունք ունենալ մայր բնության նկատմամբ, խնամել ու բարեփոխել այն, պահպանել նրա անաղարտությունն ու վերականգնել նրա դրախտային վիճակը։

Հայաստանի Թագավորության հպատակներ կարող են լինել միայն հայազգի անձիք՝ նրանք, ովքեր ծնվել են հայ ծնողներից, դաստիարակվել ազգային արժեհամակարգով ու տիրապետում են հայոց լեզվին։ Բոլոր մյուսներն ունեն միայն քաղաքացու կարգավիճակ։

Հայաստանի Թագավորությունը Համակարգի հպատակնե-

րի ու քաղաքացիների կյանքի, առողջության, ունեցվածքի, պատվի ու արժանապատվության երաշխավորն է։ Հայաստանի Թագավորությունում մարդկանց սոցիալական ապահովությունն առաջնահերթ խնդիր է։

Հայաստանի Թագավորությունը Համակարգի կենսոլորտի անաղարտության պահպանության երաշխավորն է։

Հայաստանի Թագավորության սրբազան պարտականությունն է՝ վերականգնել ու պահպանել ողջ Երկրագնդի ու նրա կենսոլորտի անաղարտությունն ու դրախտային վիճակը։

Հայաստանի Թագավորության սրբազան պարտականությունն է՝ Արարչական Ուսմունքի վրա հիմնված արդարություն ու կայուն խաղաղություն հաստատել Երկրագնդի բոլոր ժողովուրդների միջև։

Հայաստանի Թագավորությունում հպատակներն իրենց կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք ունեն։

Հայաստանի Թագավորության հպատակները զենք կրելու իրավունք ունեն։

Հայաստանի Թագավորության հպատակներն ունեն զինված ապստամբության իրավունք։

Հայաստանի Թագավորությունը բոլոր հպատակներին ու քաղաքացիներին կառավարիչների կամայականություններից պաշտպանելու երաշխավորն է։ Հայաստանի Թագավորությունում կառավարիչների կողմից ցանկացած անօրինական բռնություն հանցագործություն է։

Կառավարիչների կամ օրինապահ մարմինների կողմից որևէ անօրինական բռնության հպատակը, կամ քաղաքացին իրավունք ունի պատասխանել բռնությամբ։

Որևէ պաշտոն պատիվ կամ ճանաչում չէ, այլ՝ միայն աշխատանք ու պարտականություն։

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Թագավորությունում ողջ տնտեսությունն ազգայնացված է ու գտնվում է Համայն Հայոց Արքայի իշխանության տակ՝ հողը, ընդերքը՝ իր ջրային և օգտակար հանածոներով, աղբյուրները, գետերն ու լճերը, անտառները, մարգագետինները, ոռոգման, ջրամատակարարման ու ջրահեռացման ողջ համակարգը, ճանապարհներն ու հաղորդակցության ողջ համակարգը, Ազգային գանձարանը, էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցը, էլեկտրաէներգիայի և բոլոր տեսակի էներգակիրների արտադրության ու ներկրման ձեռնարկությունները, բոլոր տեսակի խոշոր արտադրական, ֆինանսական ու առևտրական ձեռնարկությունները, հասարակական տրանսպորտի համակարգը, գիտության, կրթության և առողջապահության ողջ համակարգը, զինված ուժերը, ազգային անվտանգության համակարգը, օրինապահ համակարգը, դատաիրավական ողջ համակարգը, զանգվածային լրատվության բոլոր միջոցները, առաջին հերթին՝ հեռատատեսությունը, արվեստի բոլոր բնագավառները, հատկապես՝ թատրոնը, կինոն, կերպարվեստը, ազգային արվեստի, ճարտարապետության ու պատմության հուշարձանները և այլն՝ բացի քաղաքացիների անձնական սեփականությունից՝ կահույքից, փոխադրամիջոցներից, գործիքներից, կացարանից ու անհատական, նաև՝ ընտանեկան ձեռնարկություններից։

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Թագավորությունում կա երկու տեսակի ձեռնարկություն՝ Արքայական և ընտանեկան։

Արքայական ձեռնարկությունների համակարգում մարդիկ կաշխատեն ու կվարձատրվեն ըստ կողմերի միջև նախօրոք, կամավոր փոխհամաձայնությամբ կազմված ու ստորագրված պայմանագրի։ Արքայական համակարգի ձեռնարկությունների ողջ եկամուտը կմտնի Ազգային գանձարան։

Հայաստանում ցանկացած անհատ կամ ընտանիք իրավունք ունի ցանկացած տնտեսական գործունեություն ծավալել։ Ընտանեկան ձեռնարկությունների համակարգում արգելվում է վարձու աշատանքի օգտագործումը։ Ընտանեկան ձեռնարկություններում կարող են աշխատել միայն միևնույն ընտանիքի կամ գերդաստանի անդամները։ Ընտանիքի կամ գերդաստանի անդամներից բացի, արգելվում է վարձու աշխատանքի վերցնել մեկ ուրիշին։ Միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում է կարելի աշխատանքի ներգրավել մեկ ուրիշին, այն պայմանով, որ նա վարձատրվի ընտանիքի կամ գերդաստանի անդամի հետ համահավասար։ Ընտանեկան ձեռնարկություններն Ազգային գանձարան կմուծեն իրենց շահույթի 10%-ը։

Բոլոր մարդիկ ծնվում են հավասար արժեքով ու արժանապատվությամբ։ Հետևաբար ոչ ոք իրավունք չունի շահագործել մյուսին ու նրա աշխատանքը։ Երբ հարկադրված մարդ մատնում է սեփական անձը ծառայության կամ վարձու աշխատանքի՝ վարձատրվելով սեփական աշխատանքի արդյունքից պակաս, ապա դա շահագործում է։ Մարդն ազատորեն իրավունք ունի տնօրինել իր մտավոր և ֆիզիկական աշխատանքի արդյունքները։ Ոչ ոք իրավունք չունի ստրուկ, ճորտ, ծառա կամ վարձու բանվոր պահել։ Ոչ ոք իրավունք չունի ստրկության, ճորտության, ծառայության հանձնվել կամ վարձու աշխատանքի անցնել մեկ ուրիշի մոտ։

Հայաստանի Թագավորությունում բոլոր տնտեսական կամ այլ գործառույթները կատարվում են իրավահավասար ու հավասարազոր անհատների կամ ձեռնարկությունների միջև՝ ըստ նախօրոք, կամավոր փոխհամաձայնությամբ կազմված ու ստորագրված պայմանագրի։

Ոչ մի օտարերկրյա քաղաքացի կամ պետություն իրավունք չունի որևէ սեփականություն ունենալ Հայաստանի Թագավորությունում։ Ոչ մի օտարերկրյա քաղաքացի իրավունք չունի աշխատել Հայաստանի Թագավորությունում։

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ
Հայաստանի Թագավորությունում ամեն անհատ իրավունք ունի ազատորեն՝ անվճար, օգտվել մայր հողի տված բարիքներից՝ իր և իր ընտանիքի կարիքները հոգալու համար։ Ոչ ավել, բայց նաև՝ ոչ պակաս։

Հայաստանի Թագավորությունում հողօգտագործումն ու ջուրն անվճար է (այս ոլորտը կկարգավորվի առանձին օրենսդրությամբ ու կիրագործվի Հողօգտագործման նախարարության կողմից)։

ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Համայն Հայոց Արքայի ձեռքում է ողջ օրենսդիր ու գործադիր իշխանությունը, օրինապահ ու դատաիրավական ողջ համակարգը։

Համայն Հայոց Արքան իրականացնում է Համակարգի կառավարումը՝ համապատասխան նախարարությունների միջոցով։

Համայն Հայոց Արքան պահպանում է օրինականությունը Համակարգի ներսում՝ Արքայական ոստիկանության, Արքայական դատարանների ու Արքայական արդարադատության նախարարության միջոցով։

Համայն Հայոց Արքան է ազգի գերագույն դատավորը։

Համայն Հայոց Արքան է իր հպատակների իրավունքների պաշտպանը։

Համայն Հայոց Արքան է որոշում Համակարգի բոլոր ոլորտները կարգավորող օրենսդրությունը։

Համայն Հայոց Արքան է հաստատում միջազգային պայմանագրերը։

Համայն Հայոց Արքան է հատում Համակարգի դրամը, որոշում դրամական միավորի անունը, արժեքը, տեսքն ու

քանակը շրջանառության մեջ։

Համայն Հայոց Արքան է որոշում իր հատած դրամի նկատմամբ այլ երկրների դրամների համարժեքները։

Համայն Հայոց Արքան է հատում արժեթղթեր։ Արքայից բացի ոչ ոք իրավունք չունի արժեթղթեր հատել։

Համայն Հայոց Արքան է որոշում իր հատած դրամի ու արժեթղթերի կեղծարարների պատժաչափը։

Համայն Հայոց Արքան է որոշում հարկերի, վարկերի, տեսակն ու չափը (Հայաստանում արգելվում է տոկոսով վարկեր տալը)։

Համայն Հայոց Արքան է որոշում օտար պետություններից վերցվելիք պարտքի չափը (միայն ծայրահեղ իրավիճակներում կարելի է օտար երկրներից վարկ վերցնել)։

Համայն Հայոց Արքան է որոշում կշռի, երկարության, ժամանակի ու համակարգում կիրառվող բոլոր չափման միավորները։

Համայն Հայոց Արքան է կառավարում օտարերկրյա պետությունների հետ առևտուրը՝ Առևտրի նախարարության միջոցով։

Համայն Հայոց Արքան է որոշում տարանցիկ փոխադրումների ու երկիր ներմուծվող ապրանքների տեսակը, քանակն ու մաքսերի չափերը։

Համայն Հայոց Արքան է հաստատում հայազգի անձանց հպատակության դիմումները։

Համայն Հայոց Արքան է տնօրինում ողջ փոստային ծառայությունը, զանգվածային լրատվության միջոցները, հեռախոսային ու համակարգչային կապի ցանցը՝ Կապի նախարարության միջոցով։

Համայն Հայոց Արքան է հովանավորում ու զարգացման մղում գիտությունն ու ազգային արվեստը։ Գիտությունն ու ազգային արվեստը ֆինանսավորվում են Ազգային գանձարանից։

Համայն Հայոց Արքան է իր հպատակների գիտական, տեխնոլոգիական, արվեստի գործերի ու արհեստի նմուշների հեղինակային իրավունքների պաշտպանը՝ Հեղինակային իրավունքների պաշտպանության նախարարության միջոցով։

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
Համայն Հայոց Արքայի իշխանությունը կարող է փոխանցվել միայն Արքայի օրինական ամուսնությունից սերված արու զավակներին։ Իսկ արու զավակների բացակայության դեպքում՝ Համայն Հայոց Արքայի ընտրյալին։ Համայն Հայոց Արքայի դեռ չծնված արու զավակները համարվում են թագաժառանգներ։ Թագաժառանգների ծնունդը, անունն ու ժամանակը հայտարարվում է Համակարգով մեկ ու գրանցվում Արքայական շառավղի ժառանգական մատյանում։

Համայն Հայոց Արքայի մահից անմիջապես հետո կամ Արքայի անգիտակից վիճակում, Արքայի ամենաավագ արու զավակն անմիջապես համարվում է Համայն Հայոց Արքան՝ անկախ նրանից, թե նա երբ կստանձնի իշխանությունը։

Համայն Հայոց Արքայի մահից անմիջապես հետո կամ Արքայի անգիտակից վիճակում և արու զավակի բացակայության դեպքում, Արքայի դեռ չծնված արու սաղմն անմիջապես համարվում է Համայն Հայոց Արքան՝ անկախ նրանից, թե երբ կծնվի նա կամ՝ երբ կստանձնի իշխանությունը։

Համայն Հայոց Արքայի մահից անմիջապես հետո, կամ Արքայի անգիտակից վիճակում և արու զավակի կամ արու սաղմի բացակայության դեպքում, ողջ Արքայական իշխա-

նությունն անմիջապես անցնում է թագուհուն, բայց՝ ժամանակավորապես, մինչև չընտրվի նոր Համայն Հայոց Արքան։ Արքայի մահից հետո թագուհին չի կարող նորից ամուսնանալ։

Համայն Հայոց Արքայի մահից անմիջապես հետո կամ Արքայի անգիտակից վիճակում և արու զավակի, արու սաղմի կամ թագուհու բացակայության դեպքում, ողջ Արքայական իշխանությունն անմիջապես անցնում է ավագ արքայադստերը, բայց՝ ժամանակավորապես, մինչև չընտրվի նոր Համայն Հայոց Արքան։ Արքայադստեր ամուսինը չի կարող համարվել Համայն Հայոց Արքա՝ առանց համազգային հանրաքվեի։

Համայն Հայոց Արքայի մահից անմիջապես հետո կամ Արքայի անգիտակից վիճակում և արու զավակի, արու սաղմի, թագուհու կամ արքայադստեր բացակայության դեպքում, ողջ Արքայական իշխանությունն անմիջապես անցնում է Արքայի կողմից իր կենդանության ու ողջամբության օրոք ընտրված իրավահաջորդին։ Արքայի կողմից ընտրված իրավահաջորդի անձը գաղտնի է պահվում մինչև Արքայի մահը։

Համայն Հայոց Արքայի մահից անմիջապես հետո կամ Արքայի անգիտակից վիճակում և արու զավակի, արու սաղմի, թագուհու, արքայադստեր կամ Արքայի կողմից ընտրյալ իրավահաջորդի բացակայության դեպքում, երկրի կառավարումը (ոչ իշխանությունը) անմիջապես, բայց ժամանակավորապես անցնում է Արքայական Խորհրդին, մինչև չընտրվի նոր Համայն Հայոց Արքան՝ համազգային հանրաքվեով։

Նոր Արքայի ընտրությունը պետք է տեղի ունենա համազգային հանրաքվեով, Համայն Հայոց Արքայի մահից հետո, ամենաշատը մեկ տարվա ընթացքում։

Նոր Արքա կարող է առաջադրել միայն ազգի գյուղապետերից, քաղաքապետերից, գավառապետերից, մարզպան-

ներից, Արքայական խորհրդի անդամներից, նախարարներից և ազգային ուսմունքի կենտրոնների ուսուցիչներից ու շրջանավարտներից կազմված ժողովը։ Ժողովի աշխատանքներին կարող են մասնակցել միայն 35 տարեկանից բարձր հպատակներ։ Նոր Համայն Հայոց Արքայի թեկնածու կարող է առաջադրվել միայն 50 տարեկանից բարձր անձը՝ ժողովի մասնակիցների ձայների 75%-ից ավել մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ։

Համայն Հայոց Արքան իր տարիքի կամ առողջական պատճառով կարող է դադարեցնել ու թագաժառանգին կամ իր ընտրյալ իրավահաջորդին փոխանցել ողջ իշխանությունը։

Եթե Արքան ծանր հիվանդության պատճառով չի կարող մասնակցել Արքայական խորհրդի նիստերին, նրա տեղը ժամանակավորապես զբաղեցնում է Արքայի առաջին օրինական իրավահաջորդը լիիրավ ձայնի իրավունքով, եթե 21 տարեկանից բարձր է։ Արքայական Խորհրդի որոշումը ներկայացվում է Համայն Հայոց Արքային՝ վերջնական հաստատման։ Վերջնական որոշումը Արքայինն է։

Համայն Հայոց Արքայի մինչև 21 տարեկան դառնալը, Համակարգի կառավարումը (ոչ իշխանությունը) ժամանակավորապես ստանձնում է Արքայական Խորհուրդը։

Համայն Հայոց Արքայի մինչև 21 տարեկան դառնալը, նրա կրթության ու խնամակալի հարցը լուծում է Արքայական Խորհուրդը, եթե և՛ Արքան, և՛ Թագուհին չկան ու չեն թողել որևէ գրավոր ցուցում խնամակալի անձի վերաբերյալ։

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
Թագաժառանգի 21 տարեկան դառնալուց անմիջապես հետո, Համայն Հայոց Արքան հայտարարում է նրա հասունության մասին։ Համայն Հայոց Արքայի պարտականությունները ստանձնելուց առաջ Արքայի օրինական իրավահաջորդն արտասանում է. «Խոստանում եմ Արարչական

զորությամբ առաջնորդել Հայաստանն՝ ըստ Արարչական ուսմունքի ու Սահմանադրության»։

Թագադրման կարգը կներկայացվի թագադրման մասին առանձին Արքայական փաստաթղթով։ (Արքայական Խորհրդի անդամների կողմից ծնկաչոք, թագաժառանգին կամ նորընտիր Արքային է մատուցվում թագն ու արքայական թուրը՝ արքայական վահանի վրա։ Թագաժառանգը կամ նորընտիր Արքան ինքն է իր գլխին դնում թագն ու կապում մատուցված սպառազենը։ Այս ամենին ծնկաչոք հետևում են բոլոր ներկաներն ու ողջ ժողովուրդը։ Արքան արտասանում է իր խոստումը։ Արքայի խոստումը լսելուց հետո, բոլորը ոտքի են կանգնում՝ աջ ձեռքի բռունցքն արևահյուսակին սեղմած՝ որպես հպատակության նշան)։

Հայաստանի Թագավորությունում չկա ազգային ժողով։

Հայաստանի Թագավորությունում միայն Համայն Հայոց Արքան ունի օրենսդրական իրավունք։

Համայն Հայոց Արքան որոշումներ է ընդունում՝ Արքայական խորհրդի խորհրդատվական աջակցությամբ։

Արքայական խորհրդի Անդամներն են՝ Արքայի երկու խորհրդականները, վարչապետը և խորհրդի մյուս ինն անդամները, զինված ուժերի նախարարն ու Համակարգի անվտանգության ծառայության ընդհանուր հրամանատարը ներառյալ։

Հայաստանի Թագավորությունում Համայն Հայոց Արքան իր իշխանությունն իրականացնում է իրեն ենթակա կառույցների՝ Արքայական խորհրդի, նախարարությունների, օրինապահ ու դատաիրավական ողջ համակարգի միջոցով։ Համայն Հայոց Արքան ընտրում և նշանակում է ոչ միայն Արքայական խորհրդի անդամներին ու նախարարներին, դեսպաններին ու հյուպատոսներին, այլ նաև՝ իր անձնական քարտուղարության քարտուղարին, մարզպաններին, գավառապետերին ու մեծ քաղաքների քաղաքապետերին։

Գյուղապետ, քաղաքապետ ու թաղապետ կարող է լինել համայնքի ամենատարեց հպատակը։

Արքայական խորհրդի խորհրդատվական աջակցությամբ ու ներկայացմամբ, Արքան ընտրում և նշանակում է քաղաքացիական ու զինվորական ավագ պաշտոնյաներին։ Արքան զինվորական ու ազգային անվտանգության ավագ պաշտոնյաների ընտրությունն ու նշանակումը կարող է կատարել՝ առանց Արքայական խորհրդի իմացության։

Արքայազնները, արքայադուստրերն ու թագուհին իրավունք չունեն որևէ պաշտոն զբաղեցնել։

Արքայական խորհրդի անդամները, նախարարները, դեսպաններն ու հյուպատոսները, Արքայի թիկնապահ գնդի հրամանատարը, անվտանգության ծառայության ընդհանուր հրամանատարը, Արքայական զինված ուժերի ընդհանուր հրամանատարն ու Արքայական զինված ուժերի ու անվտանգության ծառայության բարձրաստիճան սպաները, նախքան իրենց պաշտոններում նշանակվելը, հանդիսավոր կերպով երդվում են հնազանդ ու հավատարիմ լինել Արարչական Ուսմունքին, Համայն Հայոց Արքային ու Հայաստանի Թագավորության Ազգային Սահմանադրությանը (Արքայի կողմից կազմված երդման տեքստը կներկայացվի առանձին փաստաթղթով)։

Համայն Հայոց Արքան կարող է Արքայական խորհրդի անդամների համար օգնական քարտուղարներ նշանակել։ Արքայական խորհրդի աշխատանքներից դուրս, իրենց համապատասխան պարտականություններով օժտված քարտուղարներն օժանդակում, ներկայացնում ու գործում են խորհրդի այն անդամին, ու նրա անունից, որին կցված են։

Միևնույն ժամանակահատվածում Արքայական խորհրդի անդամներ չեն կարող լինել ամուսիններ, եղբայրներ, ծնողներ ու երեխաներ, բարեկամներ ու հարազատներ։ Համայն Հայոց Արքան իր հայեցողությամբ հանձնարարություններ է բաշխում Արքայական խորհրդի անդամների

միջև։

Համայն Հայոց Արքան կարող է ցանկացած ժամանակ իր հայեցողությամբ փոփոխել Արքայական խորհրդի կազմը՝ առանց դատարանի որոշման, հեռացնել Արքայական խորհրդի անդամներին ու նրանց քարտուղարներին, դիվանագիտական ու հյուպատոսական պաշտոնյաներին, քաղաքացիական կամ զինվորական ավագ պաշտոնյաներին, կայազորների ու նավատորմի հրամանատարներին։ Հեռացման դեպքում բոլոր պաշտոնյաները կստանան իրենց հասանելիք կենսաթոշակի կեսը։

Մյուս բոլոր պաշտոնյաները պաշտոնից հեռացվելու դեպքում կենթարկվեն պատասխանատվության ու կկանգնեն դատարանի առջև։

Առավելագույն տարիքի հասնելուց հետո բոլոր ավագ պաշտոնյաներն անցնում են կենսաթոշակի (առավելագույն պաշտոնավարելու տարիքը 70 տարեկանն է)։

Արքայական խորհուրդը Համայն Հայոց Արքայի հանձնարարությամբ կարող է կառավարել Համակարգը՝ Արքայի երկրի ներսում շրջագայությունների ժամանակ։

Արքայական խորհուրդը կառավարում է երկիրը Համայն Հայոց Արքայի անունից, մանրակրկիտ կերպով հետևելով Արարչական ուսմունքի ու սույն Սահմանադրության դրոյթների ոգուն և Արքայի հատուկ հանձնարարականներին։

Արքայական խորհուրդը որոշումներ է ընդունում բաց քվեարկությամբ։ Արքայի բացակայությամբ ընդունված որոշումները ստորագրվում են Արքայական խորհրդի անդամների կողմից ու ներկայացվում Համայն Հայոց Արքայի հաստատմանը։ Ձայների հավասարության դեպքում նախարարների խորհրդի նախագահն ունի երկու ձայնի իրավունք։

Արքայական խորհրդի անդամները կարող են չմասնակցել խորհրդի նիստերին միայն առողջական ու այլ հարգելի պատճառներով։

Արքայական խորհուրդը որոշումներ կարող է ընդունել միայն, երբ նիստին ներկա են խորհրդի անդամներից առնըվազն տասը։

Արքայական խորհրդի բոլոր վարույթներն արձանագրվում են ու պահվում Արքայական Արխիվում։ Դիվանագիտական ու ռազմական ոլորտի գաղտնի խորհրդակցություններն արձանագրվում են ու պահվում են հատուկ՝ «ԳԱՂՏՆԻ» նշումով։

Արքայական խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է անկեղծորեն արտայահայտել իր կարծիքը։ Համայն Հայոց Արքան պարտավոր է լսել նրան մինչև վերջ։ Բոլորին լըսելուց հետո միայն, Համայն Հայոց Արքան կընդունի իր որոշումը։ Վերջնական որոշումը Համայն Հայոց Արքայինն է։

Եթե Արքայական խորհրդի որևէ անդամ գտնում է, որ Համայն Հայոց Արքայի որոշումը հակասում է Արարչական ուսմունքին ու Սահմանադրության ոգուն, ապա նա պարտավոր է արտահայտել իր առարկությունը։ Առարկություն չարտահայտելը Համայն Հայոց Արքայի որոշման հետ համաձայնության նշան է։ Արքայի հետ և՛ համաձայնությունը, և՛ անհամաձայնությունը հավասարապես պատասխանատու քայլեր են, քանզի կարող են Արքայական խորհրդի անդամին պետական հանցանքի մեջ մեղադրանքի առջև կանգնեցնել։

Արքայական խորհրդի անդամները կարող են հրաժարական տալ։

Համայն Հայոց Արքայի օրենսդիր ու գործադիր հրովարտակները ստորագրվում են Արքայական խորհրդի անդամների կողմից։

Համայն Հայոց Արքայի իրավահաջորդը 18 տարեկանից հետո, նաև՝ թագուհին, իրավունք ունեն մասնակցելու Արքայական խորհրդի նիստերին, դիտորդի դերում և առանց քվեարկելու իրավունքի։

Համայն Հայոց Արքան է նշանակում բոլոր նախարարներին։ Նախարարները նշանակում են իրենց ենթակա կառույցների բոլոր ղեկավարներին։

Արքայական սոցիալական ապահովության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու բոլոր սոցիալական ապահովության գրասենյակների տնօրեններին։

Համայն Հայոց Արքան նշանակում է Արքայական արխիվի կառավարչին։ Բոլոր արխիվները Արքայի անձնական հրկողության տակ են։

Արքայական զինված ուժերի նախարարը նշանակում է իր հրամանատարներին (նախարարը պատասխանատու է Համակարգի պաշտպանության ու Համակարգի տարածքային ամբողջականության համար)։

Արքայական ոստիկանության նախարարը նշանակում է իր հրամանատարներին (նախարարը պատասխանատու է Համակարգի ներսում օրինականության պահպանման ու բընակչության անվտանգության համար)։

Ազգային անվտանգության ծառայության ընդհանուր հրամանատարը նշանակում է իր հրամանատարներին (նա պատասխանատու է երկրի ընդհանուր անվտանգության համար)։

Արքայական արդարադատության նախարարը նշանակում է դատախազներին։ Արքայական դատարանում որոշում է ընդունում 12 ատենակալների մարմինը (հպատակներից պատահականորեն ընտրված հատուկ որևէ դատավարության համար։ Ատենակալներին փոխհատուցում է տրվում Ազգային գանձարանից։ Այս ոլորտը կկարգավորվի

առանձին օրենսդրությամբ)։

Արքայական առողջապահության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին, հիվանդանոցների ու առողջապահական համակարգի շրջանային հիմնարկների գլխավոր բժիշկներին (առողջապահության նախարարը պատասխանատու է ժողովրդի ընդհանուր առողջության համար)։ Առողջապահության բոլոր ծախսերը կփոխհատուցվեն Ազգային գանձարանից։

Արքայական կապի նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին, հեռատակենտրոնի և զանգվածային լրատվության, հեռախոսային կապի ու համացանցի բոլոր հաստատությունների տնօրեններին։ Կապի նախարարը նաև միջնախարարական կապերի պատասխանատուն է։ Ազգաբնակչությունից ստացված որևէ առաջարկության կամ բողոքի ըստ արժանվույն չարձագանքելը համարվում է մեծագույն հանցանք ու խստագույնս պատժվում է։ Հպատակներն ունեն Արքայի, Արքայական խորհրդի, նաև՝ նախարարությունների կողմից տնտեսավարման կամ կառավարման վերաբերյալ իրենց կարծիքն ու բողոքն արտահայտելու ու այն Արքային հասցնելու իրավունք։

Ազգային գանձարանի գանձապահը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու դրամատների կառավարիչներին (երկրում արգելվում է տոկոսով վարկերի տրամադրումը)։

Արքայական տրանսպորտի նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու առանձին ճյուղերի (երկաթուղային, օդային, ծովային, ավտոմոբիլային տրանսպորտի, փոստի և այլն) կառավարիչներին։

Արքայական կրթության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին, բարձրագույն ուսումնական հաստատությունների նահապետներին, մասնագիտական ու հանրակրթական դպրոցների տնօրեններին (կրթության նախարարը պատասխանատու է ուսումնական համակար-

գի բոլոր դասագրքերի և ուսուցման ողջ գործընթացի համար)։

Ազգային արվեստի նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին, թանգարանների, թատրոնների, ազգային կինոստուդիայի, գրադարանների, տպարանների տնօրեններին (նախարարը պատասխանատու է ազգային արվեստի պահպանման ու զարգացման համար։ Հայերը չեն մասնակցում որևէ երգի կամ պարի մրցույթի ո՛չ միջազգային, ո՛չ, մանավանդ՝ ներազգային ասպարեզում։ Կերպարվեստի, երաժշտության, գրականության լավագույն նմուշները կփոխհատուցվեն Ազգային գանձարանից ու կդառնան ազգի սեփականությունը։ Վերջնական ընտրությունը, նաև փոխհատուցման չափն ու եղանակը կորոշվի ազգային արվեստի նախարարության կողմից)։

Արքայական առևտրի նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու հարևան երկրների հետ առևտրական գործառույթների պատասխանատուներին (Արքայական առևտրի նախարարությունը միայն արտաքին առևտրի պատասխանատուն է՝ երկրից արտադրանք արտահանելու ու անհրաժեշտ արտադրանք ներմուծելու պատասխանատուն։ Համակարգի ներսում ներքին առևտուրը կիրականացնի ազգաբնակչությունը՝ ընտանեկան առևտրական ձեռնարկությունների միջոցով կամ անհատապես)։

Արքայական ծանր արդյունաբերության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու գործարանների տնօրեններին (ծանր արդյունաբերության մեջ մտնում է ռազմական արդյունաբերությունը, նոր տեխնոլոգիաների մշակումն ու փորձարկումը և այլն)։

Արքայական թեթև արդյունաբերության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու գործարանների տնօրեններին (թեթև արդյունաբերության մեջ մտնում է սննդամթերքի մթերման ու պահածոյացման արդյունաբերությունը և այլն)։
Արքայական հողօգտագործման նախարարը նշանակում է

իր աշխատակազմի անդամներին ու մարզերում համապատասխան ներկայացուցիչներին (Արքայական հողօգտագործման նախարարության առաքելությունն է պահպանել պատմամշակութային նշանակություն ունեցող տարածքներն ու հողային հատկացումներ կատարել գյուղական համայնքներին՝ մշակվի հողատարածքներն ապահով կերպով ընդլայնելու համար)։

Արքայական բնապահպանության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու մարզերում նախարարության համապատասխան ներկայացուցիչներին (նախարարի առաքելությունն է ուսումնասիրել, մշակել ու գործի դնել ծրագրեր՝ բնության պահպանության ու վերականգնման համար)։

Արքայական սպորտի նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու բոլոր մարզադպրոցների տնօրեններին (Արքայական սպորտի նախարարությունը զբաղվում է միայն ռազմական գործին առընչվող մարզաձևերի ուսուցմամբ, նաև՝ շախմատով ու ֆուտբոլով։ Ֆուտբոլն, ի դեպ սպորտ չէ, այն խաղ է ու չի կարելի սպորտի վերածել։ Հայերը չպիտի մասնակցեն կոնտակտային ոչ մի սպորտաձևի մրցույթների, ո՛չ միջազգային, ո՛չ մանավանդ ներազգային ասպարեզներում։ Ներազգային ասպարեզում թույլատրվում են միայն այն մրցույթները, որոնք կոնտակտային չեն)։

Արքայական տուրիզմի նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին ու մարզերում իր ենթակայության գրասենյակների տնօրեններին (նախարարությունը պատասխանատու է երկրում գործող տուրիստական ծրագրերի կազմակերպման ու այդ ծրագրերի գովազդը հարևան երկրներում իրականացնելու համար)։

Արքայական հեղինակային իրավունքների պաշտպանության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին (նախարարը պատասխանատու է մարդկանց հեղինակային իրավունքների պաշտպանության համար.

այս ոլորտը կկարգավորվի առանձին օրենսդրությամբ)։

Արքայական հարկերի գանձման ծառայության նախարարը նշանակում է իր աշխատակազմի անդամներին (նախարարը պատասխանատու է հարկերի գանձման համար. այս ոլորտը կկարգավորվի առանձին օրենսդրությամբ)։

Բոլոր նախարարությունները պատասխանատու են միմյանց միջև տեղեկատվության փոխանակման համար։

Համայն Հայոց Արքային օտար պետություններում ու միջազգային կազմակերպություններում ներկայացնում է արտաքին գործերի նախարարը, իսկ երկրի ներսում՝ Արքայի անձնական քարտուղարության քարտուղարն ու խոսնակները։

Համայն Հայոց Արքան, Արքայական ընտանիքի անդամները, Արքայական խորհրդի անդամները, նախարարներն ու նրանց ընտանիքի անդամները ոչ մի դեպքում չեն կարող լքել երկրի տարածքը՝ նույնիսկ պաշտոնաթող լինելուց հետո։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Հայաստանի Թագավորությունում արգելվում են բոլոր տեսակի կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները ու արհմիությունները, բոլոր տեսակի խմբերն ու խմբակցությունները։

ԿՐՈՆ
Հայաստանի Թագավորությունում արգելվում են բոլոր տեսակի կրոնները ու կրոնական կառույցները։ Ավանդական կրոնական կառույցը վերածվում է Արարչական ուսմունքն ուսուցանող ուսումնադաստիարակչական համակարգի։

Համայն Հայոց Արքան, հանդիսանալով Արարչական ուսմունքի գերագույն ուսուցիչն ու ուսուցչապետը, նշանակում է Արարչական ուսմունքն ուսուցանող ուսումնադաստիարակչական համակարգի կառավարչին, որն էլ նշանակում

է համակարգի բոլոր ուսուցիչներին։

ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵԼԸ
Համայն Հայոց Արքան իրավունք ունի ներում շնորհել ցանկացած հանցագործի։

ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՑՆԵԼԸ
Միայն Համայն Հայոց Արքան իրավունք ունի պարգևների արժանացնել ցանկացած հպատակի՝ ազգի համար աչքի ընկած ծառայությունների համար։ Այդ պարգևները պետք է համազգային հրապարակում ստանան։ Պարգևները սակայն մարդուն չեն ազատում իրենց պարտականություններից ու արտոնյալ պայմաններ չեն ապահովում բարձր պաշտոններ զբաղեցնելու համար։

Ծառայությունից պատվով ազատված ավագ պաշտոնյաները պահպանում են իրենց վերջին տիտղոսն ու աստիճանը։ Սա չի վերաբերում Արքայական խորհրդի անդամներին ու նրանց քարտուղարներին։

Անձնական կամ ժառանգական արտոնություններ չեն կարող տրամադրվել ոչ մի հպատակի։

ԱՐՔԱՅԻ ՈՒ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ
Համայն հայոց Արքան, Արքայական խորհրդի անդամներն ու նրանց ընտանիքների անդամները բնակվում են Արքունիքում։

ԱՐՔՈՒՆԻՔԸ
Համայն Հայոց Արքան է ընտրում Արքունիքի տեղը, դիրքը ու ճարտարապետությունը։

Համայն Հայոց Արքան է նշանակում իր թիկնապահ գնդի հրամանատարին ու գնդի մարտիկներին, իր՝ անձնական քարտուղարության քարտուղարին, Արքունիքի պատասխանատուներին ու սպասավորներին։
Արքայազններն ու արքայադուստրերը, նաև՝ թագուհին,

պատասխանատու են միայն Արքայի առջև։

Արքայազններն ու արքայադուստրերը չեն կարող ամուսնանալ առանց Արքայի համաձայնության։ Առանց Արքայի համաձայնության ամուսնանալու դեպքում արքայազններն ու արքայադուստրերը, և նրանց սերունդները կորցնում են Հայոց գահի հանդեպ իրենց իրավունքները։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ
Համայն Հայոց Արքան է Համակարգի ազգային անվտանգության ծառայության, զինված ուժերի, ներառյալ՝ ջրային և օդային նավատորմի, գերագույն հրամանատարը։

Միայն Համայն Հայոց Արքան իրավունք ունի համատարած զորակոչ ու պատերազմ հայտարարել, զինադադարի ու խաղաղության պայմանագրեր կնքել։

Միայն Համայն Հայոց Արքան իրավունք ունի միջպետական պայմանագրեր կնքել ու չեղյալ հայտարարել։

Միայն Համայն Հայոց Արքան իրավունք ունի ուղարկել ու ընդունել դիվանագիտական պատվիրակություններ։

Համայն Հայոց Արքան է կամավորական զինված երկրապահ ջոկատների գլխավոր հրամանատարը։ Արքան է կամավորական երկրապահ ջոկատների կազմավորման, պարապմունքների կազմակերպման, հանդերձավորման, զենքով ու զինամթերքով ապահովելու պատասխանատուն։ Կամավորական երկրապահ ջոկատների գործունեության համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են ազգային գանձարանից։

Արքայական զինված ուժերը չեն կարող ծառայել օտար պետություններին։ Օտար պետությունների զինված ուժերը չեն կարող մտնել Հայաստանի Թագավորության տարածք՝ բացառությամբ դաշնակից օժանդակ ուժերի, ու միայն Արքայական զինված ուժերին թշնամու հարձակումնե-

րի դեմ ռազմական գործողությունների ընթացքում օժանդակելու համար։

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայաստանի Թագավորությունում ողջ իշխանությունը պատկանում է Համայն Հայոց Արքային։ Ոչ մի միջազգային կազմակերպություն ոչ մի դեպքում չի կարող միջամտել կամ իշխանություն ունենալ Հայաստանի Թագավորության Համակարգի որևէ ոլորտում։ Միայն Համայն Հայոց Արքայի թույլտվությամբ և հրավերով կարող են միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ այցելել ու ծանոթանալ Համակարգի գործունեությանը։ Միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և միայն Համայն Հայոց Արքայի թույլտվությամբ ու հրավերով կարող են միջազգային խաղաղապահ զինված ուժեր բերվել՝ որպես օժանդակ ուժեր ու տեղակայվել արտաքին սահմանի երկայնքով՝ օժանդակելու Արքայական զինված ուժերին թշնամու հարձակումները կանխելու կամ կասեցնելու համար։

Հայաստանի Թագավորությունը կարող է անդամակցել միջազգային կազմակերպություններին, եթե այդ կազմակերպությունների դրույթներն ու ծրագրերը չեն հակասում Հայաստանի Թագավորության հիմք հանդիսացող Արարչական ուսմունքի դրույթներին, Ազգային Սահմանադրությանն ու ծրագրերին։

ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Թագավորության հպատակ կարող է լինել նա, ով ծնվել է հայ ծնողներից Համակարգի սահմաններում կամ Համակարգի սահմաններից դուրս և դաստիարակվել է Արարչական ուսմունքի արժեքներով ու տիրապետում է հայոց լեզվին։

Հայաստանի Թագավորության հպատակությունն ավելի շատ պատասխանատվություն է ու պարտականություն,

քան՝ արտոնություն։

Առաջին հպատակության փաստաթղթերը՝ Հայաստանի Թագավորության հպատակի անձնագրերի տեսքով, կշնորհվեն Համայն Հայոց Արքայի կողմից։ Ամեն նոր հպատակության իրավունք կշնորհվի միայն երեք հպատակ երաշխավոր ունենալու դեպքում։

Ավտոմատ կերպով հպատակ կհամարվի հպատակներից սերված ամեն նոր սերունդ։

Համակարգի տարածքում ապրող մյուս բոլոր ազգությունների պատկանող անձիք կարող են առավելագույնը ունենալ միայն քաղաքացու կարգավիճակ։

ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ
Հայաստանի Թագավորությունում միայն Հայաստանի Թագավորության հպատակներն ունեն կառավարման համակարգում պաշտոններ զբաղեցնելու իրավունք։ Միայն Թագավորության հպատակները իրավունք ունեն ծառայելու Արքայական զինված ուժերում և Արքայական անվտանգության ծառայությունում։

Բարձրագույն կրթության, բուժ սպասարկման, արտադրության, առևտրի համակարգում կարող են աշխատել Թագավորության ոչ հպատակներ, պայմանով, որ տիրապետում են հայոց լեզվին։

ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
Հայաստանի Թագավորությունում գործելու են ներկա քրեական օրենսդրության այն դրույթները, որոնք չեն հակասում Արարչական ուսմունքի ու Հայաստանի Թագավորության Սահմանադրության ոգուն ու դրույթներին։

ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Հայաստանի Թագավորության բոլոր հպատակներն ու քա-

ղաքացիները հավասար են օրենքի առաջ։

Հայաստանի Թագավորությունում չկա հանցագործությունների վաղեմության ժամկետ։ Բոլոր անցյալի հանցագործությունները ենթակա են հետաքննության, իսկ հանցագործները՝ պատժի։

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԵՎ ԿՏՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԳԵԼՈՒՄԸ
Հայաստանի Թագավորությունում գործում է անմեղության կանխավարկածը՝ մարդն անմեղ է, քանի դեռ օրինական կարգով չի ապացուցվել նրա մեղքն ու համապատասխան դատավճիռ չի ընդունվել։ Հայաստանի Թագավորությունում չի կարելի դատավճիռ ընդունել, եթե մեղադրվողն օրինական ճանապարհով չի ձերբակալվել, չի բերվել դատարանի առջև ու հնարավորություն չի ունեցել բոլոր մանրամասնությամբ ներկայացնել գործն ու պաշտպանել ինքն իրեն։ Միայն օրինական ճանապարհով կարելի է որևէ մեկին մեղադրանք ներկայացնել։ Միայն Արքայական դատարանի որոշումից հետո կարելի է մարդուն պատժի ենթարկել։ Հայաստանի Թագավորությունում արգելվում է մարմնական, մտավոր և հոգևոր կտտանքների ենթարկել որևէ անձի։ Հայաստանի Թագավորությունում պատժամիջոցները պահվում են անհրաժեշտի սահմանում։

ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԱՐԳԵԼՈՒՄԸ
Հայաստանի Թագավորությունում արգելվում է օրենքի հետադարձ ուժը։

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԿԱԼԱՆՔ, ԶԻՆ ՈՒԺԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ
Հայաստանի Թագավորությունում արգելվում է անօրինական ձերբակալությունն ու կալանքը։ Ոչ ոք չի կարող ձերբակալվել կամ կալանավորվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի ու ձևի։ Ձարտոնված ու չարդարացված ձերբակալության կամ ապօրինի կալանքի դեպքում, ձերբակալող պաշտոնյան պատասխանատու է տուժողին իր արարքի համար։

Կառավարությունը չի կարող զինված ուժեր գործածել Համակարգի հպատակների ու քաղաքացիների դեմ՝ բացառությամբ օրենքով սահմանված այն դեպքերի, երբ նրանց հոծ զանգվածներ խաթարում են հասարակական կյանքն ու Համակարգի գործունեության ներդաշնակ ընթացքը, և այն բանից հետո, երբ օրինապահ մարմինների կամ կառավարական պաշտոնյաների կողմից երեք անգամ հրապարակավ ընթերցվել է օրենքն ու կարգազանցների բազմությունը զգուշացվել է կիրառվելիք ուժի մասին։

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Թագավորությունում ամեն ոք ունի Համակարգի կառավարման ու ընդհանրապես, Համակարգի ներքին կյանքի վերաբերյալ իր կարծիքն արտահայտելու իրավունք։ Ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել տեղեկություն, մտքեր և կարծիքներ փոխանակելու համար, եթե այդ բոլորն արվում է ճշմարտության բացահայտման նպատակով, նպատակ չունի միտումնավոր կերպով տարածելու հերյուրանքներ, անճիշտ ու չստուգված տեղեկություններ։ Արգելվում է Համակարգի անվտանգությանն ու ապահովությանն առընչվող տեղեկությունների ու ընդհանրապես Համակարգի ներքին կյանքին վերաբերող տեղեկությունների հաղորդումը Համակարգից դուրս։

Նախնական գրաքննություն կամ արգելք չի կարող կիրառվել բացառությամբ այն դեպքերի, երբ արտահայտված միտքը, տեղեկատվությունը կամ կարծիքը, շարժական կամ անշարժ պատկերներն ու երաժշտությունը համահունչ չեն Արարչական ուսմունքի դրույթներին ու վնասակար են աճող սերնդի աշխարհընկալման ու արժեքների ձևավորման համար։ Նամակագրության նախնական գրաքննություն թույլատրվում է միայն ազգային գանձարանից ֆինանսավորվող հաստատություններում։

Բոլոր հպատակներն իրավունք ունեն ծանոթանալու գյուղական, քաղաքային, գավառային, մարզային ու պետական կառավարման փաստաթղթերին, նաև՝ հետևելու Արքայական դատարանների վարույթներին՝ բացառությամբ օրեն-

քով սահմանված այն դեպքերի, երբ անհրաժեշտ է պաշտպանել որևէ անհատի անձնական կյանքի մասերը։

Կառավարման համակարգի պաշտոնյաների պարտականությունն է՝ ապահովել բաց ու թափանցիկ, լիարժեք տեղեկատվական հաղորդակցություն։

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ
Ոչ ոք չունի որևէ ստեղծագործական, արտադրական, սպասարկման կամ առևտրական արտոնություն։ Ոչ մի սահմանափակում չկա որևէ մեկի ստեղծագործական, արտադրական, սպասարկման կամ առևտրական գործունեության վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործունեությունը հակասում է Արարչական ուսմունքի դրույթներին ու վնասակար է աճող սերնդի աշխարհընկալման ու արժեքների ձևավորման համար։

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ
Հպատակին կամ քաղաքացիներին պատկանող կացարանը, արհեստանոցն ու անձնական կամ ընտանեկան ձեռնարկությունը չի կարող խուզարկության ենթարկվել՝ բացառությամբ հանցագործության մեջ կասկածի կամ մեղադրանքի դեպքերում։

ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ
Հայաստանի Թագավորությունում ոչ մեկի սեփականությունը չի կարող ազգայնացվել կամ վնասվել առանց սեփականատիրոջ համաձայնության՝ բացառությամբ այն դեպքի, երբ ազգի ընդհանուր շահն է պահանջում ու միայն ազգային գանձարանից արդար փոխհատուցման դեպքում։

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐ
Հայաստանի Թագավորությունում չկան ու չեն կարող ծագել իշխանական տներ կամ որևէ արտոնյալ խավեր։ Բոլոր հպատակները հավասար են իրենց ծագումով ու դիրքով։

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Համայն Հայոց Արքան է նշանակում բոլոր դատավորներին: Դատաիրավական ներկա համակարգին ավելանում է 12 ատենակալների ինստիտուտը:

Արքայական դատական համակարգում վերջնական դատավճիռն ընդունում է Համակարգի հպատակներից պատահականորեն ընտրված 12 ատենակալների մարմինը՝ ձայների 75% մեծամասնությամբ:

Արքայական Խորհրդի անդամների, նաև գերագույն դատարանի դատավորների հանդեպ քրեական գործերի վարույթը կիրականացնի պետական հանցագործությունների Արքայական դատարանը: Այդ դատարանի անդամները 7-ն են: Նրանք կնշանակվեն Համայն Հայոց Արքայի կողմից, յուրաքանչյուրը 5 տարի ժամկետով: Արքայական խորհրդի անդամները չեն կարող լինել պետական հանցագործությունների Արքայական դատարանի դատավորներ նույնիսկ պաշտոնաթողությունից հետո:

Պետական հանցագործությունների Արքայական դատարանի և գերագույն դատարանի որոշումները չեն կարող բողոքարկվել:

Պետական հանցագործությունների Արքայական դատարանի և գերագույն դատարանի դատավորներ կարող են լինել միայն 50 տարին լրացած անձիք:

Արքայական դատաիրավական համակարգը կկարգավորվի առանձին օրենսդրությամբ:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հպատակի սրբազան պարտքն է՝ ծառայել Արքայական զինված ուժերում: (Բացառությունները կարգավորող առանձին օրենսդրությունը կպահպանվի հետագա բարեփոխումներով):

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Թագավորությունում ազգային փոքրամասնություններն իրավունք ունեն պահպանելու ու զարգացնելու իրենց լեզուն, բանահյուսությունն ու ապրելակերպը: Ազգային փոքրամասնությունները ենթակա են Հայաստանի Թագավորության բոլոր օրենքներին ու Արքայական հրովարտակներին:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գթասիրտ ու հարգալից վերաբերմունքը Մայր Բնության նկատմամբ յուրաքանչյուրի պարտականությունն է: Մայր Բնության մաքրության ու բազմազանության պահպանումը բխում է յուրաքանչյուրի և հետագա սերունդների շահերից: Բոլորը հավասար իրավունք ունեն՝ օգտվելու Մայր Բնության տված բարիքներից, բավարարելու իրենց կենսական կարիքները: Բնական պաշարները պետք է օգտագործվեն խնամքով՝ հաշվի առնելով ներկա և բոլոր հետագա սերունդների կարիքները: Մայր Բնության անխնա շահագործման ու աղտոտման ցանկացած դեպքի կանխումն ու հայտնաբերման դեպքում հրապարակավ տեղեկատվությունը յուրաքանչյուրի պարտականությունն է: Բոլոր հպատակներն իրավունք ունեն լիարժեքորեն տեղեկություն ստանալ Մայր Բնության վիճակի և նախատեսվող կամ ընթացիկ շահագործումների, նաև՝ ապօրինի ոտնձգությունների մասին:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

Սահմանադրության բարեփոխում թույլատրելի է, եթե այդ բարեփոխումը չի հակասում Արարչական ուսմունքի էությանն ու սույն Սահմանադրության Հիմնարար Դրույթներին ու ոգուն: Բարեփոխումները կարող են վերաբերել միայն առանձին՝ ոչ հիմնարար, դրույթներին:

Սահմանադրական բարեփոխումները քննարկում է Արքայական Խորհուրդը: Վերջնական հաստատման իրավունքը Համայն Հայոց Արքայինն է:

ՀԱՐԿԵՐ
Հայաստանի Թագավորությունում, բացի շահույթի հարկից, չկա որևէ այլ տեսակի հարկ։ Շահույթի հարկի չափն ու վճարման կարգը կներկայացվի առանձին օրենսդրությամբ։

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Թագավորությունում տարրական, միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական ու բարձրագույն ուսումը անվճար է՝ ֆինանսավորված Ազգային գանձարանից (այս ոլորտը կկարգավորվի առանձին օրենսդրությամբ ու կիրագործվի կրթության նախարարության կողմից)։

ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄ
Հայաստանի Թագավորությունում Համայն Հայոց Արքայի կողմից երաշխավորված բժշկական անվճար սպասարկումից իրավունք ունեն օգտվել և՛ հպատակները, և՛ քաղաքացիները։ Բուժսպասարկումը ֆինանսավորվում է Ազգային գանձարանից (այս ոլորտը կկարգավորվի առանձին օրենսդրությամբ ու կիրագործվի առողջապահության նախարարության կողմից)։

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Թագավորությունում արդարադատությունն անվճար է՝ ֆինանսավորված Ազգային գանձարանից (այս ոլորտը կկարգավորվի առանձին օրենսդրությամբ ու կիրագործվի արդարադատության նախարարության կողմից)։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Համայն Հայոց Արքան նշանակում է գիտությունների ազգային ակադեմիայի կառավարչին։ Գիտությունների ազգային ակադեմիայի կառավարիչն անձամբ պատասխանատու է Համայն Հայոց Արքային։ Գիտությունների ազգային ակադեմիայի կառավարիչը նշանակում է գիտության առանձին ճյուղերի ղեկավարներին։

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ
Ազգի իմաստուն այրերը՝ նահապետները, իրենց ենթակա

կառույցների միջոցով կվերահսկեն Արարչական ուսմունքի, օրենքների ու մշակույթի պահպանումը գյուղական, քաղաքային ու մարզային մակարդակներում։ Երկրի ընդհանուր ու միջազգային հարաբերությունների պատասխանատուն կլինի ազգի ամենահմատուն, գերագույն նահապետը՝ Համայն Հայոց Արքան, Արքայական խորհրդի ու առանձին ստրատեգիական ոլորտների նախարարների խորհրդատվական աջակցությամբ։

Գյուղերում Արարչական ուսմունքի ու օրենքների պահպանման ու համապատասխան մշակույթի ձևավորման վերահսկողությունը, նաև համայնքի աշխարհիկ կյանքի ղեկավարումը կստանձնի գյուղի ամենատարեց նահապետը։ Նա նաև համայնքի ուսուցիչն է, խորհրդատուն, ներհամայնքային վեճերի քննիչն ու դատավորը։ Գյուղի նահապետն իր գործառույթները կիրագործի գյուղի մյուս ամենատարեց նահապետներից կազմված ավագների խորհրդի խորհրդատվական աջակցությամբ։ Ամեն ընտանիք կամ գերդաստան դրամական ներդրում կկատարի համայնքի գանձարան, առնվազն իր շահույթի 10%-ի չափով։ Այդ գումարները կօգտագործվեն հիմնականում գյուղական նըշանակության ճանապարհներ, ջրամատակարարման, ջրահեռացման գծեր կառուցելու, մշակովի հողատարածքներն ընդլայնելու, դժբախտ պատահարներից ու բնական աղետներից տուժած համայնքի անդամներին օգնելու, նաև գյուղի նահապետի ու նրա խորհրդականների աշխատավարձն ապահովելու համար։ Համայնքի կյանքը պիտի հիմնվի համագործակցության, այլ ոչ թե մրցակցության վրա։

Քաղաքներում, գյուղական համայնքների պես, Արարչական ուսմունքի ու օրենքների պահպանման ու համապատասխան մշակույթի ձևավորման վերահսկողությունը, նաև քաղաքային համայնքի աշխարհիկ կյանքի կառավարումը կստանձնի քաղաքի ամենատարեց նահապետը՝ քաղաքապետը։ Նա իր գործառույթները կիրագործի քաղաքի մյուս ամենատարեց նահապետներից կազմված խորհրդի ու իր կողմից նշանակված մասնագետների աշխատակազմի խորհրդատվական աջակցությամբ։ Ամեն ընտանիք կամ գեր-

դատան դրամական ներդրում կկատարի քաղաքի գանձարան առնվազն իր շահույթի 10%-ի չափով։ Մեծ քաղաքների քաղաքապետերը կնշանակեն թաղապետեր։ Թաղապետ կարող է լինել միայն թաղի ամենատարեց նահապետը։ Քաղաքի գումարները կօգտագործվեն հիմնականում տեղական նշանակության ճանապարհներ, ջրամատակարարման, ջրահեռացման գծեր կառուցելու ու նորոգելու համար, դժբախտ պատահարներից ու բնական աղետներից տուժած համայնքի անդամներին օգնելու համար, նաև քաղաքապետի, թաղապետերի ու նրանց խորհրդի ու աշխատակազմերի աշխատավարձերն ապահովելու համար։

Գավառներում Արարչական ուսմունքի ու օրենքների պահպանման ու համապատասխան մշակույթի ձևավորման վերահսկողությունը, նաև գավառի աշխարհիկ կյանքի կառավարումը կստանձնի գավառապետը։ Գավառապետերը կնշանակվեն Համայն Հայոց Արքայի կողմից իմաստնությամբ ու փորձով աչքի ընկած նահապետներից ու իրենց գործառույթները կիրագործեն իրենց կողմից ընտրված ավագների խորհրդի ու մասնագետների աշխատակազմի խորհրդատվական աջակցությամբ։ Քաղաքներն ու գյուղերը գավառի գանձարան կմուծեն իրենց շահույթի 10%-ը։ Այդ գումարները կօգտագործվեն հիմնականում գավառային նշանակության ճանապարհներ, ջրամատակարարման, ջրահեռացման գծեր, կենսական անհրաժեշտության այլ կառույցներ՝ կամուրջներ, նաև փոքր ջրամբարներ կառուցելու ու նորոգելու, դժբախտ պատահարներից ու բնական աղետներից տուժած գյուղական ու քաղաքային համայնքներին օգնելու համար, նաև գավառապետի, նրա խորհրդի ու աշխատակազմի անդամների աշխատավարձերն ապահովելու համար։

Մարզերում Արարչական ուսմունքի ու օրենքների պահպանման ու համապատասխան մշակույթի ձևավորման վերահսկողությունը, նաև մարզի աշխարհիկ կյանքի կառավարումը կստանձնի մարզպանը։ Մարզպանները կնշանակվեն Համայն Հայոց Արքայի կողմից իմաստնությամբ ու փորձով աչքի ընկած նահապետներից ու իրենց գործա-

ռույթները կիրագործեն իրենց կողմից ընտրված ավագների խորհրդի ու մասնագետների աշխատակազմի խորհրդատվական աջակցությամբ։ Գավառները մարզի գանձարան կմուծեն իրենց շահույթի 10%-ը։ Այդ գումարները կօգտագործվեն հիմնականում մարզային նշանակության ճանապարհներ, ջրամատակարարման, ջրահեռացման գծեր, կենսական անհրաժեշտության այլ կառույցներ՝ կամուրջներ, նաև ջրամբարներ կառուցելու ու նորոգելու, դժբախտ պատահարներից ու բնական աղետներից տուժած գավառների համայնքներին օգնելու համար, նաև մարզպանի, նրա խորհրդի ու մասնագետների աշխատակազմի աշխատավարձերն ապահովելու համար։

Երկրի ողջ տարածքում Արարչական ուսմունքի ու օրենքների պահպանման ու համապատասխան մշակույթի ձևավորման վերահսկողությունը, նաև երկրի աշխարհիկ կյանքի ու միջազգային հարաբերությունների ընդհանուր պատասխանատվությունը կստանձնի երկրի ամենախմաստուն նահապետը՝ Համայն Հայոց Արքան։ Արքան իր գործառույթները կիրագործի իր կողմից ընտրված Արքայական խորհրդի և նախարարների խորհրդատվական աջակցությամբ։ Մարզերն Արքայական գանձարան կմուծեն իրենց շահույթի 10%-ը։ Այդ գումարները կօգտագործվեն հիմնականում ռազմական, երկրի համար ստրատեգիական նշանակություն ունեցող արդյունաբերական համակարգեր, ճանապարհներ, ջրամատակարարման, ջրահեռացման գծեր, կենսական անհրաժեշտության կարևորագույն կառույցներ՝ էլեկտրակայաններ, կամուրջներ, նաև ջրամբարներ կառուցելու ու նորոգելու համար, դժբախտ պատահարներից ու բնական աղետներից տուժած համայնքներին օգնելու համար, նաև Արքայական խորհրդի անդամների ու նրանց աշխատակազմի աշխատավարձերն ապահովելու համար։

Շարունակելի...

©Դավիթ Միրզոյան 2012
www.davitmirzoyan.com

ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Վեպ
ապագա Հայաստանի Թագավորության մասին

Գիրք առաջին

երկրորդ հրատարակություն

Խմբագիր՝ Արշալույս Դավթյան
Ձևավորող՝ Դավիթ Միրզոյան
Սրբագրող՝ Սիրանուշ Միրզոյան

Գիրքը կա համացանցում անվճար ընթերցման համար՝
davitmirzoyan.com

Գրքից օրինակ ունենալու համար կարող եք դիմել հեղինակին՝
davitmirz@gmail.com

ՏՊԱՐԱՆ՝

ԵՐԵՎԱՆ - 2016